РЕГИОН И МИР

научно-аналитический журнал

том XI, № 2, 2020

Журнал включен
в реестр научных периодических изданий
Высшей аттестационной комиссии Республики Армения и
в базу данных Российского индекса научного цитирования (РИНЦ)

ИПСИЧКР

Общественный институт политических
и социальных исследований
Черноморско-Каспийского региона

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ

գիտավերլուծական հանդես
հատոր XI, № 2, 2020

REGION AND THE WORLD

scientific-analytical journal
volume XI, № 2, 2020

Սեվծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական
եվ սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ
Public Institute of Political and Social Research
of Blacksea-Caspian Region

РЕГИОН И МИР научно-аналитический журнал

Редакционный совет:
Андриасян Л.Г. (главный редактор), Погосян /Хахбакян/ Г.Г. (зам. главного редактора), Царукян Ж.А. (ответственный секретарь), Андриасян Т.Л., Ваградян М.Г., Исагулян Г.С., Манукян С.Ф., Меликсетян А.Ф., Паносян Н.Ж., Саргсян С.Т., Шакарянц С.Э.
Редакционная коллегия:
Аветисян Г.Г. (д.и.н., профессор, Ереванский государственный университет, Армения), ***Айвазян А.М.*** (д.п.н., Центр стратегических исследований "Арарат", Армения), ***Айвазян Н.А.*** (д.ю.н, профессор, Ереванский государственный университет, Армения), ***Аллен С.*** (д.п.н., профессор, Университет им. Дж. Мейсона, США), ***Багратян Г.А.*** (д.э.н., профессор, Армянско-Российский университет, Армения), ***Бостанджян В.Б.*** (д.э.н., профессор, Ереванский государственный университет, Армения), ***Григорян Э.Р.*** (д.ф.н., профессор, Армения), ***Демоян Г.А.*** (д.и.н., Армения), ***Дюбьен А.*** (Франко-российский аналитический центр "Обсерво", Франция), Егиазарян А.А. (д.э.н., Ереванский государственный экономический университет, Армения), ***Захаров В.А.*** (к.и.н., Институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, Россия), ***Кожокин Е.М.*** (д.и.н., профессор, Московский государственный институт международных отношений – университет, Россия), ***Корнилов А.А.*** (д.и.н., профессор, Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского, Россия), ***Кочарян Ш.М.*** (Министерство иностранных дел, Армения), ***Мелконян А.А.*** (д.и.н., профессор, академик НАН РА, Институт истории НАН РА, Армения), ***Миронов А.Н.*** (д.ю.н, профессор, Российская Академия Народного Хозяйства и Государственной Службы при Президенте РФ, Россия), ***Надеин-Раевский В.А.*** (к.ф.н., Институт политических и социальных отношений Черноморско-Каспийского региона, Россия), ***Пахомов В.Г.*** (д.ю.н, профессор, Российский государственный социальный университет, Россия), ***Петросян Г.М.*** (Нагорно-Карабахская Республика), ***Редкоус В.М.*** (д.ю.н., профессор, Институт государства и права Российской академии наук, Россия), ***Решетников Л.П.*** (к.и.н., председатель наблюдательного совета телекомпании "Царьград", Россия), ***Романовская В.Б.*** (д.ю.н., профессор, Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского, Россия), ***Сваранц А.А.*** (д.п.н., Россия), ***Сергунин А.А.*** (д.п.н., профессор Санкт-Петербургский государственный университет, Россия), ***Шалян Ж.*** (Центр анализа и прогнозов Министерства иностранных дел, Франция), ***Якушик В.М.*** (д.п.н., профессор, Национальный университет «Киево-Могилянская академия», Украина).

Адрес редакции:РА, Ереван, 3 пр. Тиграна Меца, д. 9,
Тел. (+37493) 944-440, (+37493) 868-797,
Сайт: www.geopolitika.am; эл.почта: blacksea-caspian@mail.ru

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ գիտավերլուծական հանդես

Խմբագրական խորհուրդ՝
Անդրիասյան Լ.Հ. (գլխավոր խմբագիր), Պողոսյան /Խաղբակյան/ Գ.Հ. (գլխ. խմբագրի տեղակալ), Ծառուկյան Ժ.Ա. (պատասխանատու քարտուղար), Անդրիասյան Թ.Լ., Վահրադյան Մ.Գ., Իսագուլյան Գ.Ս., Մանուկյան Ս.Ֆ., Մելիքսեթյան Ա.Ֆ., Փանոսյան Ն.Ժ., Սարգսյան Ս.Թ., Շաքարյանց Ս.Է.
Խմբագրական կոլեգիա՝
Ավետիսյան Հ.Գ. /պ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ, Հայաստան/, ***Այվազյան Ա.Մ.*** /բ.գ.դ., «Արարատ» ռազմավարական հետազոտությունների կենտրոն, Հայաստան/, ***Այվազյան Ն.Ա.*** /ի.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ, Հայաստան/, ***Ալլեն Ս.*** /բ.գ.դ., պրոֆեսոր, Ջ. Մեյսոնի անվ. համալսարան, ԱՄՆ/, ***Բագրատյան Հ.Ա.*** /տ.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական համալսարան, Հայաստան/, Բոստանջյան Վ.Բ. /տ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ, Հայաստան/, ***Գրիգորյան Է.Ռ.*** /փ.գ.դ., պրոֆեսոր, Հայաստան/, ***Դեմոյան Հ.Ա.*** /պ.գ.դ., Հայաստան/, ***Դյուբյեն Ա.*** /«Օբսերվո» ֆրանկո-ռուսական վերլուծական կենտրոն, Ֆրանսիա/, ***Եղիազարյան Ա.Ա.*** /տ.գ.դ., ԵՊՏՀ, Հայաստան/, ***Զախարով Վ.Ա.*** /պ.գ.թ., Սևծով-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ, Ռուսաստան/, ***Կոժոկին Ե.Մ.*** /պ.գ.դ., պրոֆեսոր, Միջազգային հարաբերությունների Մոսկովյան պետական ինստիտուտ-համալսարան, Ռուսաստան/, ***Կորնիլով Ա.Ա.*** /պ.գ.դ., պրոֆեսոր, Ն.Ի. Լոբաչևսկու անվ. Նիժնի Նովգորոդի պետական համալսարան, Ռուսաստան/, ***Քոչարյան Շ.Մ.*** /Արտաքին գործերի նախարարություն, Հայաստան/, ***Մելքոնյան Ա.Ա.*** /պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան/, ***Միրոնով Ա.Ն.*** /ի.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի ազգային տնտեսության և պետական կառավարման ակադեմիա, Ռուսաստան/, ***Նադեին-Ռաևսկի Վ.Ա.*** /փ.գ.թ., Սևծով-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ, Ռուսաստան/, ***Պախոմով Վ.Գ.*** /ի.գ.դ., պրոֆեսոր, Ռուսաստանի պետական սոցիալական համալսարան, Ռուսաստան/, ***Պետրոսյան Գ.Մ.*** /Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն/, ***Ռեդկոուս Վ.Մ.*** /ի.գ.դ., պրոֆեսոր, ՌԳԱ Պետության և իրավունքի ինստիտուտ, Ռուսաստան/, ***Ռեշետնիկով Լ.Պ.*** /պ.գ.թ., «Ցարգրադ» հեռուստաընկերության դիտորդական խորհրդի նախագահ, Ռուսաստան/, ***Ռոմանովսկայա Վ.Բ.*** /ի.գ.դ., պրոֆեսոր, Ն.Ի. Լոբաչևսկու անվ. Նիժնի Նովգորոդի պետական համալսարան, Ռուսաստան/, ***Սվարանց Ա.Ա.*** /բ.գ.դ., Ռուսաստան/, ***Սերգունին Ա.Ա.*** /բ.գ.դ., պրոֆեսոր, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարան, Ռուսաստան/, ***Շալյան Ժ.*** /Արտաքին գործերի նախարարության Վերլուծության և կանխատեսման կենտրոն, Ֆրանսիա/, ***Յակուշիկ Վ.Մ.*** /բ.գ.դ., պրոֆեսոր, «Կիև-Մոհիլյան ակադեմիա» ազգային համալսարան, Ուկրաինա/:

Խմբագրության հասցեն՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 3-րդ նրբ, տ. 9
Հեռ. (+37493) 944-440, (+37493) 868-797,
Կայք՝ www.geopolitika.am, էլ.փոստ՝ blacksea-caspian@mail.ru

Editorial council:
Andriasyan L.H. **(**Editor-in-chief), Poghosyan /Khaghbakyan/ G.H. (Vice-editor), Tsarukyan J.A. (Responsible secretary), Andriasyan T.L., Vahradyan M.G., Isagulyan G.S., Manukyan S.F., Meliksetyan A.F., Panosyan N.J., Sargsyan S.T., Shakaryants S.E.

Editorial team:
Avetisyan H.G. (Doctor of Historical Sciences, professor, Yerevan State University, Armenia), ***Ayvazyan A.M.*** (Doctor of Political Sciences, Center of Strategic Research "Ararat", Armenia), ***Ayvazyan N. A.*** (Doctor of Law, Professor, Yerevan State University, Armenia), ***Allen S.*** (Doctor of Political Sciences, professor, George Mayson University, USA), ***Bagratyan H.A.*** (Doctor of Economic Sciences, professor, Armenian-Russian University, Armenia), ***Bostanjyan V.B.*** (Doctor of Economic Sciences, Professor, Yerevan State University, Armenia), ***Grigoryan E.R.*** (Doctor of Philosophical Sciences, professor, Armenia), ***Demoyan H.A.*** (Doctor of Historical Sciences, Armenia), ***Dubien A.*** (Observatoire franco-russe, France), ***Eghiazaryan A.A.*** (Doctor of Economic Sciences, Yerevan State Economic University, Armenia), ***Zakharov V.A.*** (Candidate of Historical Sciences, Institute of Political and Social Research of Blacksea-Caspian Region, Russia), ***Kojokin E.M.*** (Doctor of Historical Sciences, professor, MGIMO-University, Russia), ***Kornilov A.A.*** (Doctor of Historical Sciences, professor, Lobachevsky University of Nijny Novgorod, Russia), Kocharyan Sh.M. (Ministry of Foreign Affairs, Armenia), ***Melkonyan A.A.*** (Doctor of Historical Sciences, professor, Academician of NAA RA, Institute of History, Armenia), ***Mironov A.N.*** (Doctor of Law, professor, The Russian Presidential Academy of National Economy and Public Administration, Russia), ***Nadein-Raevsky V.A.*** (candidate of Philosophical Sciences, Institute of Political and Social Research of Blacksea-Caspian Region, Russia), ***Pakhomov V.G.*** (Doctor of Law, professor, Russian State Social University, Russia), ***Petrosyan G.M.*** (Nagorno-Karabakh Rebublic), ***Redkous V.M.*** (Doctor of Law, professor, The Institute of State and Law of the Russian Academy of Sciences, Russia), ***Reshetnikov L.P.*** (Candidate of Historical Sciences, Chairman of the Supervisory Board of "Tsargrad" TV Station, Russia), ***Romanovskaya V.B.*** (Doctor of Law, professor, Lobachevsky University of Nijny Novgorod, Russia), ***Svarants A.A.*** (Doctor of Political Sciences, Russia), ***Sergunin A.A.*** (Doctor of Political Sciences, professor, St. Petersburg State University, Russia), ***Chaliand G.*** (Center for Analysis and Forecasts of the Ministry of Foreign Affairs, France), ***Yakushik V.M.*** (Doctor of Political Sciences, professor, National University of "Kyiv-Mohyla Academy", Ukraina).

Adress: RA, Yerevan, 3rd line of Tigran Mets, 9
Phone: (+37493) 944-440, (+37493) 868-797,
*Website**:** geopolitika.am; e-mail: blacksea-caspian@mail.ru*

Для перепечатки или перевода опубликованных в журнале материалов необходимо разрешение редакции. Публикуемые материалы могут не отражать точку зрения редакции. Публикации платные.

ПОЛИТИКА

Конгломераты и чеболи в КНДР и Республике Корея: сравнение через призму влияния на политические процессы

Бардакчян О. Х.
Магистр Регионоведения, Российско-Армянский Университет (Ереван, Армения)
hovobard@gmail.com

Ключевые слова: южнокорейский, северокорейский, чеболь, конгломерат, правительство, КНДР, компания, влияние, президент, лоббирование, интересов

Կոնգլոմերատները և չեբոլները ԿԺԴՀ-ում և Կորեայի Հանրապետությունում: համեմատություն քաղաքական գործընթացների վրա ազդեցության հիման վրա

Բարդակչյան Հ. Խ.
Տարածաշրջանագիտության մագիստրոս, Հայ-Ռուսական Համալսարան (Երևան, Հայաստան)
hovobard@gmail.com

Ամփոփում: Հոդվածում դիտարկվում է հարավկորեական չեբոլների և հյուսիսկորեական կոնգլոմերատների ազդեցությունը արտաքին և ներքին քաղաքական գործընթացների վրա: Ուսումնասիրվում է Կորեայի Հանրապետության և Կորեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետության կառավարությունների հետ չեբոլների և կոնգլոմերատների վերջին երեք տասնամյակների ընթացքում կատարվող փոխգործակցության պատմությունը: Կատարվում է այս երկու երևույթների համեմատություն, և տրվում է դրանց հետագա զարգացման կանխատեսումը:
Վճռորոշ բառեր՝ հարավկորեական, հյուսիսկորեական, չաեբոլ, կոնգլոմերատ, կառավարություն, ԿԺԴՀ, ընկերություն, ազդեցություն, նախագահ, լոբբինգ, շահեր

Conglomerates and chaebols in the DPRK and the Republic of Korea: a comparison through the prism of influence on political processes

Bardakchyan H. Kh.
Master of Regional Studies, Russian-Armenian University (Yerevan, Armenia)
hovobard@gmail.com

Abstract: The article considers the impact on the external and internal political processes of South Korean chaebols and North Korean conglomerates. The history of the interaction of chaebols and conglomerates with the governments of the Republic of Korea and the Democratic People's Republic of Korea over the past three decades is studied. A comparison of these two phenomena is carried out, and a forecast of their future development is given.
Keyword: South Korean, North Korean, chaebol, conglomerate, government, DPRK, company, influence, president, lobbying, interests

В современном мире, крупные транснациональные компании играют в политике ничуть не меньшую роль, чем состоявшиеся государства. Способы взаимодействия между государством и частным сектором мало отличаются друг от друга, несмотря на наличие определенных национальных особенностей, влияние которых зависит от того, где располагается основные промышленные объекты или руководство компании. Так, например, в некоторых развитых странах, принадлежащих Большой Двадцатке, существует легальный институт лоббирование интересов крупных компаний и корпораций со стороны специализированных агентств, привлекающих для этого политиков среднего и высшего уровня. Подобные случаи носят повсеместный характер и отличаются лишь, как уже было отмечено, местными особенностями. Самым явным примером подобного являются США, где лоббирование интересов крупных ТНК является не только законным, но и прибыльным бизнесом. Согласно опросу, проведенному агентством Gallup в 2016 году, 76% респондентов считают, что американские властные структуры коррумпированы [7]. Произошло увеличение вышеназванного показателя по сравнению с 2006 годом, когда на

вопрос «распространена ли коррупция в правительстве страны или нет?» положительный ответ дали лишь 59% респондента [**7**]. Мы не рискнем ставить знак равенства между лоббированием и коррупцией, однако статистика и данные, приведенные организацией Transparency International о том, что США вновь опустились в списке стран по индексу восприятия коррупции, заставляют нас задуматься [**20**].

Подобная практика так же существует и в азиатских странах. Особенно это касается «Четырех Восточных Тигров» вообще, и Республики Корея, в частности. О чем, собственно, довольно красноречиво свидетельствует следующая статистика. Например, в Южной Корее за последние 10 лет случилось как минимум шесть крупных политических скандалов, связанных с коррупцией в госаппарате и лоббированием интересов тех или иных компаний. Среди них особое место занимают скандалы с лоббированием интересов южнокорейских чеболей - крупных семейных ТНК, получивших свое влияние в годы правления так называемых армейских» президентов.

Взаимное влияние чеболей и южнокорейских властей является общепризнанным фактом. Это и не удивительно, учитывая, что именно южнокорейское правительство способствовало их усилению, видя в этих действиях возможность развития национальной экономики. До 80х годов двадцатого века Республика Корея была страной государственного капитализма, где именно власти контролировали чеболи и другие компании [**5,** стр.167-168]. Однако со временем, влияние и возможности чеболей настолько расширились, что правительству страны, начиная с 90х возглавляемому гражданскими, а не военными чиновниками, стало все труднее их контролировать. В конечном итоге, южнокорейскому руководству приходится постоянно лавировать между ставшими слишком сильными и независимыми чеболями, а порой и открыто выступать против них. Попытка реформы чеболей, с целью ослабить их влияние на экономику, предпринятая президентом Ким Дэ Джуном под давлением МВФ, были свернуты при правлении следующего президента Но Му Хена, пришедшего к власти благодаря покровительству чеболя SK Group [**5,** стр.169-170]. Начиная с него, Республикой Корея стали править президенты, которые были либо ставленниками чеболей, либо поддерживали их. Так, например, бывший генеральный директор Hyundai Construction Ли Мен Бак с 2002 по 2006 годы был мэром Сеула [**16**]. А с 2008 по 2013 занимал должность президента Южной Кореи [**16**]. Впоследствии он был обвинен в коррупции и в 2018 году приговорен 15 годам заключения и штрафу в 11 миллионов долларов [**17**]. Справедливости ради стоит отметить, что на занимаемых им должностях он успел совершить немало полезных начинаний, что не умоляет его вины как коррупционера и лоббиста крупных компаний. Не меньший резонанс вызвал относительно недавний скандал, связанный с президентом Пак Кын Хэ, которая, хоть и не являлась креатурой чеболей, так же была обвинена в лоббировании их интересов [**21**].

Впрочем, подобная ситуация в Южной Корее не является чем–то необычным. Обвинения в коррупции и аресты крупных политиков и предпринимателей происходят чуть ли не каждый год, являясь внешними признаками борьбы за власть в стране. Правда, чаще всего, попадая на скамью подсудимых, подобные люди либо избегают реального наказания, либо выходят из тюрьмы через некоторое время по состоянию здоровья или президентской амнистии во время крупных общенациональных праздников. Так в 2008 по амнистии были освобождены осужденные в 2007 году Чун Мон Ку, председатель Hyundai Motor и Ким Сен Ен, председатель совета директоров Hanwha Group [**6**, стр.10]. В 2015 по амнистии покинул тюрьму руководитель чеболя SK Group Чой Тхэ Уон, осужденный в 2013 [**1**].

Избрание кандидата от Совместной Демократической Партии Мун Чжэ Ина президентом Республики Корея можно назвать поворотным моментом во взаимодействии государства и чеболей. Придя к власти на волне всенародного возмущения, в том числе, и засильем чеболей, президент Мун уже предпринял ряд мер по борьбе с ними. Это привело к самой настоящей волне судебных разбирательств по отношению к некоторым высокопоставленным сотрудникам чеболей LG, Samsung, Hyundai и других [**2**]. Кроме того, были приняты меры по стимулированию малого и среднего бизнеса, которые должны составить конкуренцию чеболям в будущем [**3**]. Правда, чеболи, за последние десятилетия, приобрели достаточное влияние для того, чтобы весьма успешно бороться с правительством. Показателен пример судебного разбирательства по отношению к фактическому главе Samsung, Ли Чже Ёну, который был осужден в 2017, но уже в 2018 году был отпущен на свободу. Как пишет The Korea Herald, аппеляционный суд посчитал его заложником обстоятельств, а вся вина за коррупционные схемы целиком и полностью лежит на бывшем президенте Пак Кын Хэ и ее подруге [**11**].

При изучении чеболей, нельзя забывать и о том, какое влияние они имеют на отношения с северным соседом Республики Корея, Корейской Народно-Демократической Республикой. С этой точки зрения, показателен пример основателя Hyundai, Чон Чжу Ёна. Этот, без преувеличения, выдающийся корейский предприниматель, вероятно, сделал гораздо больше, для улучшения отношений между странами, чем очень многие политики. Он стал одним из первых не только южнокорейских, но и вообще иностранцев, который вложил деньги в совместные с КНДР экономические проекты. Среди объектов, созданных при его поддержке и посредничестве можно вспомнить Оздоровительный комплекс Кымгансан, совместное предприятие, где до 2008 года отдыхали южнокорейские туристы [**4**]. Позже, благодаря оставленному им заделу, его сын стал одним из основателей Промышленного района Кесон(ПРК).

Другие чеболи так же вложили деньги в ПРК. В общей сложности, на территории ПРК находилось 123 предприятия, принадлежавших южнокорейским компаниям [**8**]. Сам ПРК, был одним из немногих проектов взаимодействия Северной и Южной Кореи, которые увенчались определенным успехом. Дело в том, что при правлении президента Ким Дэ Джуна, которого называют южнокорейским Нельсоном Манделой, началось проведения разработанной им беспрецедентной политики по улучшению отношений между КНДР и КР. Данная политика получила название «Солнечное тепло», к осуществлению которой, кроме государственных, были привлечены и частные средства. С 2003 по 2016 год, в ПРК вложили деньги такие компании как Hyundai, SJ Tech, Shinvon, Daewoo и другие [**18**]. К 2016 году в ПРК работало свыше 50 тысяч северокорейских сотрудников, управляемых несколькими сотнями южнокорейских менеджеров [**22**].

Несмотря на закрытые ПРК в 2016 году, южнокорейские предприниматели разного уровня, продолжают сохранять интерес к инвестициям в северокорейскую экономику. Подобный интерес южнокорейских компаний связан с трудолюбием северокорейских рабочих и дешевизной рабочей силы на севере. Согласно опросу, проведенному Федерацией малых и средних предприятий Кореи, 7 из 10 опрошенных корейских компаний предпочли бы использовать северокорейскую рабочую силу, поскольку она дешевле и отсутствует проблема языкового барьера [**12**].

Промышленный район Кесон не единственное место в Северной Корее, где разрешено частное предпринимательство. В 90е и нулевые появилось четыре особых районов, где можно было инвестировать и заниматься предпринимательством, среди которых ПРК - самый известный. Впрочем, в последние десятилетия в Северной Корее все активнее происходит процесс отхода от ряда идеологических установок, касающихся предпринимательства. Этому способствовал как жесточайший экономический кризис, усугубленный прекращением экономической помощи со стороны СССР и сокращением ее объемов со стороны КНР, но и природным фактором.

В девяностые годы прошлого века, на территории Северной Кореи, после масштабных наводнений, случился беспрецедентный голод, в результате которого по разным оценкам погибло от 500 до 600 тысяч человек [**9**]. Причиной голода, кроме наводнения, еще и считают разрушения централизованной системы поставок продовольствия и неспособности руководства страны быстро восстановить ее [**15**, стр.166]. Именно к этому времени относятся сообщения о появлении в КНДР первых частных предпринимателей. В первое время, частные сделки в КНДР осуществлялись преимущественно через бартер, в обход официальных процедур закупки. Например, зафиксирован случай, когда руководство шахтерского городка, где добывали уголь, напрямую вело переговоры с руководством кооперативной фермы из другого района [**15**, стр.166-167]. Также известен случай, когда рабочие табачного завода обменивали продукцию на еду у военнослужащих местной военной части [**15**, стр.166-167].

Позже, когда ситуация в стране нормализовалась, правительство, преимущественно, продолжало закрывать глаза на работу образовавшегося в девяностые черного рынка, понимая, что это, скорее всего, приведет к недовольству населения и разрушению и так ослабленной экономики. Со временем, появилась ощутимая прослойка частных предпринимателей, в руках которых оказалась сосредоточена значительная часть легкой промышленности и сельского хозяйства, при том, что официально, эти предприятия остаются государственными [**10**, стр.4].

Легализация капиталов и вывод их из тени в Северной Корее начался в 2012 году, с появления крупных экономических конгломератов, создаваемых по примеру южнокорейских чеболей. Эти конгломераты, создающиеся на основе уже зарекомендовавших себя государственных компаний, таких как Air Koryo, очень быстро стали производить обширную номенклатуру товаров широкого потребления. Например, конгломерат Naeghoyang, изначально табачная

компания, на сегодняшний день, кроме табачных изделий, производит брендовый соджу и спортивную одежду [**19**]. Контролируемые рыночные реформы в Северной Корее, включающие в себя деколлективизацию и фактическое разрешение на предпринимательскую деятельность привели к тому, что общее благосостояние населения, по сравнению с прошлыми десятилетиями, ощутимо выросло. Благодаря этому, так же выросла популярность Ким Чен Ына, как автора проводимых реформ [**14**].

Кроме того, есть информация о том, что кроме легкой промышленности и сельского хозяйства, конгломераты занимаются так же строительством и поставкой вооружения союзникам северокорейского режима. Так, компания Korea Mining Development Trading Corporation (KOMID), на основе которой был создан конгломерат Green Pine Associated Corporation (Green Pine), была ответственна за поставки ракетных технологий и конвенционального оружия в Иран. А конгломерат Mansudae, который оперировал в 14 африканских странах, как отмечено в докладе аналитического агентства при ООН Compliance and capacity skills international (CCSI): «строит все, от заводов по производству боеприпасов, до президентских дворцов и жилых домов» [**13**].

Таким образом, можно констатировать, что северокорейские конгломераты пока еще далеки от той роли в государстве, которую играют их южнокорейские аналоги. Они не влияют на процесс принятия решений, и являются эффективным инструментом правящей политической элиты. Если взять как эталон развития чеболи и провести сравнение, можно заметить, что конгломераты находятся лишь в самом начале своего становления. Точно так же, при правлении генерала Пак Чон Хи, нескольким избранным компаниям была оказана государственная поддержка и до девяностых годов, они находились в подчиненном положении южнокорейского военного правительства. Как мы можем заметить, похожая ситуация наблюдается и с северокорейскими конгломератами. Правда, существенным различием здесь выступает то, что чеболи с самого начала принадлежали частным лицам, в то время как конгломераты изначально находятся в государственной собственности. Достигнут ли они того же влияния, что и чеболи, покажет время, однако их влияние на уровень жизни населения уже велико и, скорее всего, будет увеличивается по мере развития институтов рыночной экономики в КНДР. Кроме того, не вызывает сомнение и то, какую важную роль играют конгломераты КНДР в деятельности северокорейских спецслужб.

Можно сделать два основных прогноза по развитию конгломератов в КНДР.

1. Южнокорейский вариант: полноценная трансформация конгломератов в самостоятельные акторы северокорейской внутренней политики и возрастание их влияния в геометрической прогрессии.
2. Китайский вариант: окончательное встраивание конгломератов в партийно-бюрократическую машину, управляющей КНДР, как, в свое время, произошло с руководителями крупных китайских компаний.

Подводя итоги исследования, мы можем с уверенностью сказать, что влияние конгломератов, как на Севере, так и на Юге, является высоким и имеет тенденцию к увеличению. Особенно это касается северокорейских конгломератов, которые только-только начали свой путь и делают первые шаги в мире бизнеса. На Севере, они встроены в партийно-бюрократический аппарат и находятся под жестким контролем правительства КНДР. На Юге все сильнее разгорается борьба чеболей с правительством за сохранение и приумножения тех привилегий, которые достались им от генерала Пака. Борьба между чеболями и правительством сейчас находится в самом разгаре и неизвестно, как она завершится. В любом случае, возвращение к временам, когда чеболи были подконтрольны правительству и всячески демонстрировали свое подчиненное положение, вряд ли возможно.

Список используемой литературы

1. В Южной Корее помиловали 6,5 тысячи осужденных// Информационное агентство Lenta.ru, 2015// [V Južnoj Koree pomilovali 6,5 tysjači osuždennyh// Informacionnoe agentstvo Lenta.ru, 2015]// Доступ к ресурсу- https://lenta.ru/news/2015/08/13/southkorea/ (29.02.2020)
2. **Громов А.** Вице-президент Samsung вышел из тюрьмы с улыбкой на лице и $2,1 млрд. в кармане// Информационное агентство ТАСС, 2018// [**Gromov A.** Vice-prezident Samsung vyšel iz tjur'my s ulybkoj na lice i $2,1 mlrd. v karmane// Informacionnoe agentstvo TASS, 2018]// Доступ к ресурсу- https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4031473 (29.03.2020)
3. **Ли Х., Ким Т.В.** Администрация Мун Чжэ Ина создала министерство малого, среднего и венчурного бизнеса// Информационно агентство KOREA.net, 2017// [Li H., Kim T.V. Administracija Mun Čžè Ina sozdala ministerstvo malogo, srednego i venčurnogo biznesa// Informacionno agentstvo KOREA.net, 2017] // Доступ к ресурсу- http://russian.korea.net/NewsFocus/Policies/view?articleId=151700 (29.02.2020)

4. Пхеньян предложил Сеулу обсудить снос южнокорейских построек в Кымгансане// Информационное агентство ТАСС, 2019// [Phen'jan predložil Seulu obsudit' snos južnokorejskih postroek v Kymgansane// Informacionnoe agentstvo TASS, 2019]// Доступ к ресурсу- https://ria.ru/20191025/1560197623.html (29.02.2020)
5. **Сигида Ю.С**. Трансформация роли финансово-промышленных групп(чеболь) в экономической и политической жизни Южной Кореи в период с 1998 по 2013 г.//Вестник Томского Государственного Университета, №397, 2015 // [**Sigida Ju.S.** Transformacija roli finansovo-promyšlennyh grupp(čebol') v èkonomičeskoj i političeskoj žizni Južnoj Korei v period s 1998 po 2013 g.//Vestnik Tomskogo GOsudarstvennogo Universiteta, №397,2015]// Доступ к ресурсу- https://cyberleninka.ru/article/n/transformatsiya-roli-finansovo-promyshlennyh-grupp-chebol-v-ekonomicheskoy-i-politicheskoy-zhizni-yuzhnoy-korei-v-period-s-1998-po-2013-g/viewer (29.02.2020)
6. **Хвостик Е**. Южнокорейский бизнес помилован: Амнистированы главы крупнейших корпораций страны// Газета "Коммерсантъ", №144, 2008// [**Hvostik E.** Južnokorejskij biznes pomilovan: Amnistirovany glavy krupnejših korporacij strany// Gazeta \"Kommersant\", №144, 2008]// Доступ к ресурсу- https://www.kommersant.ru/doc/1011636 (29.02.2020)
7. **Clifton J**. Land of the free?// Gallup inc., 2017// Доступ к ресурсу https://news.gallup.com/opinion/gallup/212627/land-free.aspx(29.02.2020)
8. **Choe Sang-Hun**. South Korea to Shut Joint Factory Park, Kaesong, Over Nuclear Test and Rocket// The New York Times, 2016// Доступ к ресурсу- https://www.nytimes.com/2016/02/11/world/asia/north-south-korea-kaesong.html (26.02.2020)
9. **Goodkind D., West L., Johnson P.** A Reassessment of Mortality in North Korea, 1993-2008// Washington, D.C.: U.S. Census Bureau, Population Division, Paper to be presented at the annual meeting of the Population Association of America, 2011// Доступ к ресурсу- https://paa2011.princeton.edu/papers/111030 (29.02.2020)
10. **Hanssen U., Ji-Won Song**. Marketization in North Korea: Scenarios for economic, political and social change// Stockholm: The Swedish institute of international affairs, 2019// Доступ к ресурсу- https://www.ui.se/globalassets/ui.se-eng/publications/ui-publications/ui-paper-no.-1-2019.pdf (29.02.2020)
11. **Jo He-rim.** Lee Jae-yong gets suspended sentence, released in appeals trial// The Korea Herald, 2018 // Доступ к ресурсу- http://www.koreaherald.com/view.php?ud=20180205000666 (29.03.2020)
12. **Ju-min Park, Yang H.** After tragedies and big losses, Hyundai looks to reverse North Korea fortunes // REUTERS, 2018// Доступ к ресурсу- https://www.reuters.com/article/us-hyundai-northkorea-insight/after-tragedies-and-big-losses-hyundai-looks-to-reverse-north-korea-fortunes-idUSKCN1OQ0HF (29.02.2020)
13. **Kranz K.** North Korean Conglomerates: Their Arms Connection, and Sanction Busting Activities// New York: Compliance and capacity skills international"(CCSI), 2019// Доступ к ресурсу- https://www.comcapint.com/north-korean-conglomerates/ (29.02.2020)
14. **Kwaak J.S.** North Korean Escapees Say They Perceive Solid Support for Dictator// The Wall Street Journal, 2015// Доступ к ресурсу- http://www.nkeconwatch.com/2015/08/28/a-new-defector-survey-about-market-trade-in-north-korea-and-what-it-says-maybe-about-kim-jong-un/ (29.02.2020)
15. **Kwon X, Byung-Ho Chung**. North Korea: Beyond Charismatic Politics// Plymuth, Rowman & Littlefield Publishers., 2012, p. 232// Доступ к ресурсу- https://books.google.am/books?id=PGKJeXLSM3EC&pg=P159&redir_esc=y#v=onepage&q&f=false (29.02.2020)
16. Lee Myung-Bak// Brittanica Encyclopedia// Доступ к ресурсу- https://www.britannica.com/biography/Lee-Myung-Bak (29.02.2020)
17. Lee Myung-bak, S. Korea ex-president, jailed for 15 years// BBC, 2018// Доступ к ресурсу- https://www.bbc.com/news/world-asia-45756561 (29.02.2020)
18. **Manyin M. E., Nanto D. K.** The Kaesong North-South Korean Industrial Complex// Washington D.C.. Congressional Research Service (CRS), 2011 // Доступ к ресурсу- https://fas.org/sgp/crs/row/RL34093.pdf (29.03.2020)
19. **Nah T.** Naegohyang: a North Korean company branches out// NK News, 2018// Доступ к ресурсу- https://www.nknews.org/2018/07/naegohyang-a-north-korean-company-branches-out/?c=1532399328060&utm_content=bufferc3457&utm_medium=social&utm_source=twitter.com&utm_campaign=buffer (29.02.2020)
20. U.S. hits new low in global corruption index// Официальный веб-сайт Transparency International, 2020// Доступ к ресурсу- https://www.transparency.org/news/pressrelease/2019_CPI_US_hits_new_low (29.02.2020)
21. **Shin H.** South Korean prosecutors seek 30 years' jail for ousted Park as supporters demand her release// REUTERS, 2018// Доступ к ресурсу- https://www.reuters.com/article/us-southkorea-politics-park/south-korean-prosecutors-seek-30-years-jail-for-ousted-park-as-supporters-demand-her-release-idUSKCN1GB0FJ (29.02.2020)
22. What is the Kaesong Industrial Complex? // BBC, 2016// Доступ к ресурсу- https://www.bbc.com/news/business-22011178 (29.02.2020)

Сдана/Հանձնվել է՝ 28.01.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 02.02.2020
Принята/Ընդունվել է՝ 04.02.2020

Պաշտպանության կազմակերպումը ՀՀ կառավարման համակարգում

Նորիկյան Ն. Գ.
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, հայցորդ /Հայաստան, Երևան/
norikyanpastaban@mail.ru

Վճռորոշ բառեր՝ պետություն, անվտանգություն, պաշտպանություն, քաղաքականություն, կառավարում, ռազմական կազմավորում, զինված ուժեր

Организация обороны в системе правления Республики Армения

Норикян Н. Г.
Институт философии, социологии и права Национальной Академии Наук РА, соискатель (Армения, Ереван)
norikyanpastaban@mail.ru

Резюме: В статье исследуются суть оборонной функции государства и основная методология ее осуществления. Автором представляются регулирования управления оборонительной сферы Республики Армения, в данном контексте обращается внимание на новые подходы в процесе конституционных реформ. В заключение делается вывод, что приоритетом оборонных реформ является обеспечение превосходства боеспособностью вооруженных сил РА над вооруженными силами противника, создание и внедрение в вооруженных силах такиь критерий, которые полноценно соответствуют особенностям национальной безопасности Армении.
Ключевые слова: государство, безопасность, оборона, политика, управление, военная организация, вооруженные сил.

Organization of defense in the system of government of the Republic of Armenia

Norikyan N. G.
Applicant at the Philosophy, Sociology and Law Institute of the National Academy of Sciences of RA (Armenia, Yerevan)
norikyanpastaban@mail.ru

Abstarct: In this article are discussed the essence of the protection function of the state and the methodology of its implementation. The author presented management rules and regulations of the defense sphere, in this context, attention is drawn to the proposed new approaches in the pattern during the constitutional reform. As the conclusion concludes, that the top priority of defence reform of of the Republic of Armenia is the ensuring excellence combat readiness of armed forces RA with the enemy's armed forces, to have development and implementation of standards in armed forces fully comply with Armenia's national security features, completely solve the problems of military security.
Keywords: state, security, defense, policy, management, military unit, armed forces.

Յուրաքանչյուր անձ, կազմակերպություն, սոցիալական համակարգում առաջնորդվում է իր սեփական շահերով: Կառավարման էությանն առավել համապատասխանող, դրան առավել մոտ բնութագրումը հանդիսանում է «ներգործության» միջոցով բնութագրումը, որը մատնանշում է կառավարման մեջ գլխավոր հատկանիշը՝ մարդկանց գործունեության և վարքագծի, գիտակցության վրա ազդեցությունը: Կառավարում հասկացությունը լայնորեն գործածվում է տարբեր բնագավառներում և բոլոր դեպքերում խոսքը վերաբերվում է կազմակերպված և կանոնակարգվող գործառույթին [13] : Չնայած որ տարբեր ոլորտներին վերաբերող մասնագիտական գրականության մեջ առկա են «կառավարում» հասկացության տարբեր բնորոշումներ, սակայն բոլորն էլ կառավարումը համարում են մի գործառույթ, որն ապահովում է որոշակի կառուցվածքային համակարգերի և դրանց գործունեության ընթացքի պահպանումը, վերահսկողությունը, նպատակների և ծրագրերի իրագործումը: Կառավարումն իր մեջ պարունակում է կազմակերպչական տարր, ուղղորդում և գործնականում իրագործում է փախազդեցություններ մարդկանց միջև: Ուստի, այն առավելապես

բնութագրելի է որպես նպատակադրված, կազմակերպված և կարգավորվող ազդեցություն հասարակական և մարդկանց խմբային կենսագործունեության վրա, որն իրականացվում է ինչպես անմիջականորեն, այնպես էլ հատուկ կառուցակարգերի միջոցով: Ավելին, կառավարման արդյունավետությունը գնահատվում է նպատակադրման ու նվաճված արդյունքի տարբերությամբ (որքան փոքր է այդ տարբերությունը, այդքան ավելին է արդյունավետության գործակիցը) [**6**, էջ 68-69]:

Բազմաթիվ հանգամանքների հաշվառմամբ՝ կառավարումը կարելի է բաժանել մի քանի տեսակների: Ըստ կառավարման սուբյեկտների, առանձնացվում են կառավարման վեց տարատեսակ. պետական կառավարումը (սուբյեկտը պետությունն է՝ որպես հասարակության կազմակերպման ձև), տեղական ինքնակառավարումը (որպես ստորին և պետական կառավարման առանձնապես ժողովրդավարական ենթատեսակ, որի սուբյեկտը վարչատարածքային միավորներն են), սեփականության կառավարումը (սեփականատիրոջ կողմից իր սեփականաության կառավարումը), հասարակական կառավարումը (սուբյեկտը հասարակական միավորումներն են՝ հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ, որտեղ բացակայում է շահույթ ստանալու նպատակը), խմբային ինքնակարգավորումը (սուբյեկտներ են մարդկանց խմբերը, որոնք միավորվում են որոշակի, կարճաժամկետ նպատակի շուրջ) և առանձին անհատի նպատակաուղղված գործունեությունը (այս դեպքում փոքր ինչ դժվար է խոսել կառավարման մասին, քանի որ բացակայում է կազմակերպական միասնությունը, ինչպես նաև ներգործական ազդեցությունն այդ կազմակերպական միավորի նկատմամբ) [**9**, էջ 57]:

Պետական կառավարումը հիշատակված բոլոր ձևերի մեջ գրավում է յուրահատուկ դեր և ընդգծվում է նպատակաուղղված, կազմակերպված և կարգավորվող ներգործության բնույթով, որն իրականացվում է դրա սուբյեկտի՝ պետության կողմից: Պետական կառավարումը, ամենաընդհանուր բնորոշմամբ, պետության նպատակաուղղված և կազմակերպական ներգործությունն է հասարակության զարգացման վրա՝ իր իշխանական մարմինների միջոցով [**8**, էջ 3]:

Պետական կառավարումն անմիջականորեն պայմանավորված է դրա սուբյեկտի՝ պետության գործառույթներով և խնդիրներով: Փոխադարձաբար, վերջիններս էլ պայմանավորված են պետության էությամբ, այն դերով և նշանակությամբ, որն ունի պետությունը: Այս կապակցությամբ երբեք միասնական մոտեցում գոյություն չի ունեցել: Առանձին մասնագետներ պետության խնդիրն էին համարում քաղաքացիներին բարեկեցության ապահովումը (Պլատոն, Վոլֆ) [**10**, էջ 3], ոմանք՝ միայն պետության քաղաքացիների անվտանգության ապահովումն արտաքին թշնամիներից, ինչպես նաև հասարակության ներսում իրավակարգի ապահովումը (Կանտ) [**11**, էջ 82-89], իսկ մյուսները՝ պետության անվտանգության, և քաղաքացիների բարեկեցության ապահովումը [**12**]: Ոմանք գտնում են, որ պետության խնդիրը մի կողմից մարդու իրավունքների և ազատությունների ապահովումն է, նրա գործունեության համար ազատ միջավայրի ստեղծումն է, իսկ մյուս կողմից՝ հասարակության մեջ որոշակի կանոնակարգվածություն մտցնելը: Պետությունը չի լուծում խնդիրներ, այլ ստեղծում է կազմակերպական և իրավաքաղաքական պայմաններ այն խնդիրների լուծման համար, որոնք վերաբերում են հասարակության տարբեր՝ նյութական արտադրության, հոգևոր, սոցիալական ոլորտներում մարդկանց հիմնական պահանջմունքներին: Այլ կերպ ասած, պետությունը, հանդիսանալով առավելապես սոցիալական կոմպրոմիսի գործիք, հոգում է հասարակության կոլեկտիվ կարիքները, ինչպիսիք են՝ առողջապահության կազմակերպումը, կապի և տրանսպորտի միջոցների կանոնակարգումը, ճանապարհաշինությունը, հանցավորության դեմ պայքարը, անվտանգության ու խաղաղության ապահովումը և այլն:

Այդպիսով, պետական կառավարումը սոցիալական կառավարման տարատեսակ է, որի բնույթն ու առանձնահատկությունը սահմանվում են միայն կառավարման այդ տեսակին հատուկ որակներով: Այլ իմաստով՝ պետական կառավարում հասկացությունը բնութագրում է պետական իշխանության մարմինների և տեղական ինքնակառավար-

ման մարմինների գործունեությունը, որոնք լիազորված են իրականացնելու պետական-իշխանական գործառույթներ:

1991 թվականից Հայաստանում պետական կառավարման համակարգը ենթարկվել է էական փոփոխությունների, այն է՝ կազմավորումից մինչ օրս Հայաստանի Հանրապետության կատավարման ձևը փոփոխությունների է ենթարկվել արդեն չորս անգամ: 1991 թվականին սահմանադրական օրենքների հիման վրա խորհրդային կառավարման ձևից անցում կատարվեց կառավարման նոր ձևի, որը ներառում էր իր մեջ ինչպես խորհրդային, այնպես էլ նախագահական և կիսանախագահական կառավարման համակարգին բնորոշ տարրեր: 1995 թվականի Սահմանադրությամբ ձևավորվեց կիսանախագահական կառավարման ձևը, որով հաստատված կիսանախագահական կառավարման ձևով նախագահին վերապահված էր լայն լիազորություններ: Օրենսդիր և դատական իշխանությունների կողմից սահմանված էր չափազանց թույլ վերահսկողություն: Այս ամենն առիթ հանդիսացավ, որպեսզի 2005 թվականին փոփոխություններ կատարվեն սահմանադրությունում: Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները՝ մոդելի բարեփոխման հիմնական ուղղությունը պետք է լիներ պետական իշխանության համակարգում նախագահի և իշխանության երեք՝ օրենսդիր, գործադիր և դատական թևերի միջև հավասարակշռվածության ապահովմանը: 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում էականորեն սահմանափակվեցին ՀՀ նախագահի լիազորությունները և ընդլայնվեցին խորհրդարանի ու կառավարության իրավասությունների շրջանակները: Արդյունքում, ձևավորված կիսանախագահական կառավարման մոդելը կարելի էր բնորոշել արդեն որպես խորհրդարանական-նախագահական:

2015 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում անցում կատարվեց խորհրդարանական կառավարման մոդելին: Այստեղ իշխանության կենտրոնը խորհրդարանն է, քանի որ հենց խորհրդարանի կողմից են ձևավորվում իշխանության գործադիր և դատական թևերի մարմինները: Ազգային ժողովի գերիշխող դերը պետական իշխանության համակարգում յուրահատուկ արդիականություն է տալիս այդ մարմնում կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդրին: Խորհրդարանական կառավարման համար խորհրդարանական կայուն մեծամասնության ապահովման հիմնախնդիրները յուրահատուկ նշանակություն են ձեռք բերում: Հետևաբար, գործադիր իշխանություն իրականացնող կառավարությունը պատասխանատու է խորհրդարանի առջև, որն արձակվում է իրավունքի ուժով, եթե չի կարողանում ընտրել վարչապետ կամ հավանություն տալ կառավարության ծրագրին: Որպես օրինակ կարելի է նշել 2018 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանի հրաժարականը [**4**], որից հետո Ազգային ժողովի կողմից երկու անգամ՝ հոկտեմբերի 24-ին [**3**] և նոյեմբերի 1-ին [**5**] հավանություն չտրվեց վարչապետի պաշտոնում նշանակվելու վերաբերյալ կրկին ներկայացված նույն՝ Ն.Փաշինյանի թեկնածությանը, որի արդյունքում Սահմանադրության 149-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վեցերորդ գումարման Ազգային ժողովն արձակվեց իրավունքի ուժով [**1**]: Ահա այս պատճառով էլ շատ տեսաբաններ և գործնական մասնագետներ գտնում են, որ 2015 թվականի ՀՀ Սահմանադրությունը կրում է վարչակենտրոն բնույթ:

Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ապահովվում է նրա տրամադրության տակ եղած բոլոր ուժերի, միջոցների ու ռեսուրսների համընդհանուր և ամբողջական կիրառմամբ [**7**, էջ 167]: Կառավարման մոդելի փոփոխության արդյունքում երկրի պաշտպանական-անվտանգային համակարգում էականորեն նվազեց Նախագահի դերը, փոխարենը բավականին մեծ լիազորություններ տրվեցին Վարչապետին, ինչը տրամաբանական է և բխում է խորհրդարանական կառավարման մոդելի էությունից: Այսպես՝ նոր Սահմանադրությամբ Նախագահը շարունակում է մնալ պետության գլուխը և հետևել սահմանադրական նորմերի պահպանմանը, սակայն ի տարբերություն նախորդ Սահմանադրության՝ այդ լիազորությունների իրականացման համար Նախագահին բավարար լծակներ չեն տրամադրվում: Տվյալ պարագայում Նախագահի լիազորությունների իրականացումը կապվում է Վարչապետի կամ Կառավարութ-

յան առաջարկությունների կամ համաձայնության հետ:

Փոփոխված Սահմանադրությամբ զինված ուժերի բնագավառում Նախագահի լիազորությունները սահմանվում են 133-րդ հոդվածում, որը Նախագահին իրավասություն է տալիս օրենքով սահմանված դեպքերում և կարգով նշանակել և ազատել զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմին, ինչպես նաև շնորհել բարձրագույն զինվորական կոչումներ, սակայն Նախագահն իր այդ իրավունքը կարողանում է իրացնել միայն Վարչապետի առաջարկների հիման վրա: Այսինքն՝ Նախագահը կաշկանդված է Վարչապետի կողմից ներկայացված առաջարկով, իսկ դրա բացակայության պարագայում առհասարակ սեփական նախաձեռնությամբ չի կարող նշանակումներ կամ ազատումներ կատարել, կամ շնորհել կոչումներ [1]:

Պետության պաշտպանության համակարգում (ռազմական կազմավորման մեջ) համակարգում, մեր կարծիքով, ներառվում են ինչպես տվյալ պետության զինված ուժերը, որոնք կազմում են վերջինիս ռազմական անվտանգության ապահովման հիմքը, այնպես էլ այլ զորքեր՝ ռազմական անվտանգության խնդիրների ռազմական մեթոդներով լուծելու համար նախատեսված ռազմականացված մարմիններն ու կազմավորումները, ինչպես նաև ռազմական կառավարման մարմինները: Պետության պաշտպանության համակարգում ընդգրկում են նաև երկրի արդյունաբերական և գիտական համալիրների որոշ կառույցներ, որոնց առաջադրված խնդիրներում ներառված են ռազմական անվտանգության ապահովման հարցերը: Պետության գործունեության այս ոլորտում խստորեն կարևորվում են ռազմական անվտանգության խնդիրներին և դրանց լուծման համար անհրաժեշտ ռազմական մեթոդներին վերաբերող հարցերը: Այս առումով որպես հիմնական խնդիր ներկայացվում է ռազմական անվտանգության ապահովումը խաղաղ ժամանակ, սպառնալիքի առկայության դեպքում և պատերազմական ժամանակաշրջանում (զինված հակամարտության դեպքում):

Ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման մեթոդների համակարգում հիմնարար դեր ունեն ռազմական մեթոդները: «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը բավականին ընդգրկուն ձևով ներառելով երկրի պաշտպանության կազմակերպման միջոցառումների ցանկը, ոչ մի դրույթ չի նախատեսում ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման ռազմական մեթոդների մասին: Առանց այդ մեթոդների օրենսդրական ամրագրման, փաստորեն, անհնար է դառնում այն չափանիշների որոշումը, որոնցով կլուծվի պետական այս կամ այն մարմինը երկրի ռազմական կազմավորման համակարգում ընդգրկելու հարցը: Ռազմական մեթոդների բնորոշման հարցում հիմնախնդիրը նաև այն է, որ եթե ռազմական գործողություններն իրականացնելիս (պատերազմական դրության կամ ռազմական հակամարտության վիճակներում) դրանք համարվում են բացահայտ, ապա խաղաղ պայմաններում անհրաժեշտ է հստակորեն որոշել, թե որոշակիորեն որոնք են համարվում ռազմական, այսինքն՝ որ մեթոդները կարող են կիրառել միայն պետական ռազմական կազմավորման մեջ եղած կառույցները և չեն կարող օգտագործել ոչ պետական այլ մարմիններն ու կազմակերպությունները, հատկապես՝ ոչ պետական կազմակերպությունները: Ռազմական մեթոդների վերջիններիս կիրառումը և ընդհանրապես դրանց օգտագործումը ռազմական անվտանգության ապահովման հարցերի չառնչվող խնդիրներ լուծելիս անխուսափելիորեն առաջանում են պետության պաշտպանության համակարգի (ռազմական կազմավորման) և դրանց գործառնության աննպատակահարմարության հարցը:

Ռազմական մեթոդները, վերջին հաշվով, որոշում են զինված ուժերի գործունեության առանձնահատուկ բովանդակությունը, որն էլ իր հերթին արտահայտվում է այդ գործունեության իրականացման կոնկրետ ձևերում (մարտական գործողություններ, ռազմավարական պլաններ և այլն):

Պատերազմի ժամանակ զինված ուժերի գերագույն հրամանատարը վարչապետն է: Պատերազմի ժամանակ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա է զինված ուժերի գերագույն հրամանատարին: Միևնույն ժամանակ, օրենքում շեշտվում է, որ «այդպիսի ուղիղ ենթակայությունը չի ձևափոխում զինված ուժերի գերագույն հրամա-

նատարի կողմից չկարգավորված հարցերում զինված ուժերի ղեկավարումն իրականացնող և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ապահովող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ենթակայությունը»: Այսպիսով՝ պատերազմի ժամանակ ԶՈՒ-ի ԳՇ պետը մի խումբ հարցերով ենթակա է վարչապետին, մյուսով՝ պաշտպանության նախարարին: Պատերազմի ժամանակ ՀՀ ռազմական կառավարման մարմինների միջև շղթան կարելի է արտահայտել հետևյալ կերպ. Վարչապետ (գերագույն հրամանատար) – ԶՈՒ-ի ԳՇ պետ, պաշտպանության նախարար – ԶՈՒ-ի Գլխավոր շտաբ, պաշտպանության նախարարություն:

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ 2015թ. իրականացված սահմանադրական բարեփոխումների արդյունքում պաշտպանական-անվտանգային համակարգի կառավարումը կենտրոնացվեց Կառավարության, Վարչապետի և Անվտանգության խորհրդի ձեռքում: Սահմանադրության փոփոխությունների արդյունքում զինված ուժերի գերագույն հրամանատարի իրավունքը վերապահվեց վարչապետին: Կարծում ենք, որ նման մոտեցումն արդարացված է, քանի որ խորհրդարանական կառավարման համակարգում Նախագահի դերը պաշտպանական համակարգի կառավարման գործում բավականին սահմանափակված է, իսկ ունեցած բոլոր լիազորությունները բխում են վարչապետի ներկայացրած առաջարկներից: Նման մոտեցումը արդեն իսկ ունի գործնական կիրառում և բավականին արդյունավետ է գործում խորհրդարանական կառավարման ձև ունեցող Իսրայելում, որը նույնպես գտնվում է աշխարհաքաղաքական զարգացումների բարդ տարածաշրջանում և մշտապես գտնվում է պատերազմական գործողությունների վերսկսման վտանգի տակ:

Հայաստանի Հանրապետությունում անցումը խորհրդարանական հանրապետության կառավարման մոդելին պաշտպանական-անվտանգային համակարգի համար պետք է լինի առանց ավելորդ ցնցումների և երկրի անվտանգության համար սպառնալիքների ստեղծման, քանի որ այս առումով ևս Սահմանադրության փոփոխությունները կատարվել են միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ: Սահմանադրական փոփոխությունների նոր կարգավորումները կոչված են նպաստելու պաշտպանական-անվտանգային համակարգի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է պետական ռազմական կազմավորման մեջ եղած տարրերի և ռազմականացված այլ կազմավորումների միջև, թեկուզ ձևական, տարբերակում կատարել: Նախ, ծառայողական պարտականությունների՝ զինվորական ծառայության իրականացման հատուկ կարգը, երկրորդ, այդ գործունեության կարգավորման ամրագրումը ռազմական ոլորտային օրենսդրության մեջ, որը չի տարածվում գործունեության այլ ձևերի վրա, երրորդը և հիմնականը, ռազմական անվտանգության ապահովման հատուկ խնդիրների լուծումը հատուկ (ռազմական) մեթոդներով: Ի դեպ, ըստ վերոգրյալի, եթե անհրաժեշտ է որևէ ռազմականացված մարմին ընդգրկել ռազմական կազմավորման մեջ, պետք է կատարվի որոշակի ընթացակարգով: Նախ, օրենսդրական հիմունքով՝ իրավական ակտով, այդպիսիք պետք է ընդգրկվեն որոշակի զինվորական ստորաբաժանման կազմում, ենթարկվեն որոշ պաշտոնատար անձանց, դրանով իսկ լինեն զինվորական կառավարման ներքո և դառնան մարտական գործողություններին պատրաստ կազմավորման բաղկացուցիչ մաս: Միաժամանակ, դրանց յուրահատուկ նշանակության նկատառմամբ, վերջիններիս կարելի է հանձնարարել սահմանափակ խնդիրների իրականացում, օրինակ՝ որոշակի տարածքի պահպանությունն ու հսկողությունը: Այդպիսի ռազմականացված կառույցի՝ պետության պաշտպանության համակարգի (ռազմական կազմավորման) մեջ ներգրավվելու դեպքում դրա անձնակազմի անդամները պետք է ձեռք բերեն զինծառայողի կարգավիճակ (իրավունքներով, պարտականություններով, պատասխանատվությամբ, ներառյալ՝ քրեական և կարգապահական): Եվ վերջապես, ըստ նախորդ երկու պայմանների՝ տվյալ կազմավորումները պետք է ֆինանսավորվեն, իսկ մյուս ապահովումներն իրականացվեն պետության տվյալ ոլորտին վերաբերող ծախսերից:

Դրան հակառակ նշենք, որ ռազմական անվտանգության խնդիրների ապահովման համար գործում են նաև արդյունաբերական և գիտական համալիրների որոշակի կառույցներ, որոնք ընդգրկված են ՀՀ պաշտպանության համակարգում[1], քանզի վերջիններս ոչ ուղղակիորեն, բայց ռազմական մեթոդներով գործող մարմինների և կազմակերպությունների հետ նույնպես մասնակցում են ռազմական անվտանգության ապահովմանը: Այդ կազմակերպություններն իրենց գործունեության ժամանակ չեն կիրառում նշված հատուկ մեթոդները, բայց ապահովում են այլ մարմինների՝ դրանց կիրառումը: Պետական ռազմական կազմավորման նշված համալրումն արդարացված է համարվում, քանզի ռազմական մեթոդներով գործող մարմինների համար են ստեղծվում ավելի օպերատիվ և արդյունավետ գործելու պայմաններ: Այդպիսի կազմակերպություններից ձեռնարկությունները (ռազմաարդյունաբերական համալիրի գործարաններ, արհեստանոցներ և այլ հիմնարկներ), գիտաուսումնական և այլ հաստատություններ:

Վերջին տարիներին միջազգային կազմակերպություններում Հայաստանը սատարել էր Հնդկաստանի թեկնածությանը օրինակ՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ում, Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունում (ICAO) և ՄԱԿ-ի առդիտորների խորհրդում, Հեռահաղորդակցության միջազգային միության խորհրդում, Յոգայի ընդգրկմանը «ՅՈՒՆԵՍԿՕ-ի ոչ նյութական մշակութային ժառանգության ներկայացուցչական ցուցակում»: Հնդկաստանը աջակցել է Հայաստանին 2015թ.-ին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մեր ազգային հացը՝ լավաշը, որպես ոչ նյութական մշակութային ժառանգություն հռչակելու պահանջի հարցում:

Երկկողմ հարաբերություններում բարձր է գնահատվում Հնդկաստանի օգնությունը Հայաստանին: Դեռևս 1988թ.-ի երկրաշարժի հետ կապված՝ Հնդկաստանը Հայաստանին նվիրաբերել է 2,2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք կանխիկ ՀՀ դրամ և 1,1 մլն ԱՄՆ դոլար, 2000թ.-ի երաշտից հետո 750 տոննա ցորեն և 250 տոննա բրինձ, 2006 թ.-ին նվիրել է 5 միլիոն դոլար արժողությամբ 300 հնդկական տրակտոր, 215,000 ԱՄՆ դոլարի օգնություն է ցուցաբերել Լոռու մարզում ավերված դպրոցների վերականգնմանը և 2011թ.-ին Տավուշի մարզի 72 դպրոցներին տրամադրել է համակարգչային լաբորատորիաներ [**2**]:

Քաղաքական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց զարգացում են ապրել նաև տնտեսական հարաբերությունները, որում կարևոր դեր ունի երկկողմ առևտուրն ու ապրանքաշրջանառությունը: Նշեմ, որ Հնդկաստանից Հայաստան հիմնականում ներմուծվում է մսամթերք, թեյ, բրինձ, թանկարժեք քարեր, դեղամիջոցներ, գործվածքներ, զարդեր, պլաստիկից և լինոլեումից պատրաստված ապրանքներ, էլեկտրոտեխնիկա, և իր հերթին արտահանում է թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, պղինձ և պղնձե իրեր, ալյումին և ալյումինե արտադրանքներ, քիմիական արտադրանք, գունավոր մետաղներ, մետաղի ջարդոն և ռետինե հումք [**3**]:

Երկու երկրների միջև տնտեսական համագործակցության զարգացման կարևորագույն հեռանկար է նաև ԵԱՏՄ-ի և Հնդկաստանի միջև 2017թ.-ի հունիսի 3-ին ազատ առևտրի գոտի ստեղծելու բանակցությունները մեկնարկելու մասին համատեղ ստորագրված հայտարարությունը: Վերոհիշյալ համատեքստում ազատ առևտրի գոտու ստեղծումը ոչ միայն կբարձրացնի արտահանման և առևտրի ցուցանիշը, այլ նաև կնպաստի Հնդկաստանի և ԵԱՏՄ-ի առանձին անդամ երկրների առևտրային հարաբերությունների զարգացմանը: Ապագա ազատ առևտրի գոտու ստեղծման շահագրգիռ կողմերը կարող են ակնկալել, որ հետագայում կզարգանան և կխորանան Հնդկաստանի հետ արդեն իսկ հաստատված առևտրային հարաբերությունները: Այս առումով Հայաստանը նույնպես բացառություն չէ, քանզի հայ-հնդկական առևտրային հարաբերությունները ամուր հիմքեր ունեն, որի մասին են վկայում տարեցտարի աճող առևտրի ցուցանիշները (աղյուսակ 1):

Հնդկաստանը 01-11-2016 թվականից մինչև 24-11-2016թ.-ն ընկած ժամանակահատվածում արտահանել է 325872.88 ԱՄՆ դոլար արժեքով ապրանքատեսակներ՝ 109 առաքմամբ [**5**]: Մինչդեռ 2017 թվականի տվյալներով

Հնդկաստանի արտահանումը Հայաստան կազմել է 19,8 միլիոն դոլար, իսկ ներմուծումը՝ 2,8 միլիոն դոլար:

Աղյուսակ 1.
*Հայ-հնդկական առևտրային հարաբերությունների մակարդակը [**4**]*

Տարի	Արտահանում (ԱՄՆ դոլար)	Ներմուծում (ԱՄՆ դոլար)
2004	13 200	17 346
2005	18 100	19 231
2006	1 264	41 850
2007	10	26 245
2008	152	58 456
2009	2 708	43 541
2010	5 464	48 007
2011	2 981	70 766
2012	1 232.9	69 565.2
2013	203.4	67 421.4
2014	225.3	3 456.6
2015	426.3	51 889.7

Քաղաքական և տնտեսական բարեկամական հարաբերությունները նպաստել են նաև տարեցտարի մշակութային ավելի խորը համագործակցության զարգացմանը, որոնցից հատկանշական են՝ պարբերաբար կազմակերպվող հնդկական ապրանքների ցուցահանդես-վաճառքները, բոլիվուդյան ֆիլմերի փառատոնները, պարային ներկայացումները (օրինակ՝ 2017թ.-ի հոկտեմբերի 30-ին Մանջարի Չատուրվեդին Երևանում ցուցադրել է Սուֆի Կաթակ պարային ներկայացումը, 2017 թ.-ի հոկտեմբերի 12-ին Պադամ Շրի Պրադիբա Պրահլադի ղեկավարած խումբը Երևանում անցկացրեց «Բհարաթնաթյամ» պարային ներկայացում), 2015թ.-ի հունիսի 21-ին Հայաստանում առաջին անգամ նշված Յոգայի միջազգային օրը, 2017 թ.-ի հունվարի 14-ին Երևանում կազմակերպված «Հնդկաստանի օրը», 2018 թ.-ի օգոստոսի 4-ին Հնդկաստանի դեսպանատան մասնակցությունը Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «Տարազ» փառատոնին, 2018-ի օգոստոսի 29-ին Երևանում թողարկված «Հնդկաստան Հայաստան» համատեղ փոստային կնիքը, և բազմաբնույթ այլ միջոցառումներ կազմակերպված ինչպես մայրաքաղքաում այնպես էլ այլ մարզերում [**2**]:

Այս ամենին անմասն չի մնում նաև կրթության ոլորտը, որտեղ կարևորագույն ձեռքբերումներից է 2010 թ.-ի հունվարից Երևանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի համագործակցությունը հնդկական ICCR ծրագրին, որի շրջանակներում Հնդկաստանից հրավիրյալ դասախոս է դասավանդում ԲՈՒՀ-ում [**6**]: Եվ ամեն տարի վերոնշյալ համալսարանում նշվում է «Հինդի լեզվի օրը (Vishwa Hindi Diwas)», որի շրջանակներում կազմակերպվում են բանաստեղծությունների և ասմունքի մրցույթներ, իսկ հաղթողներին տրվում են դրամական պարգևներ [**7**], ինչպես նաև տարբեր ոլորտների բազմաթիվ հայ մասնագետներ ITEC ծրագրի շրջանակներում հնարավորություն են ունենում վերապարտաստվել Հնդկաստանում [**8**]:

Այսպիսով, հայ-հնդկական հարաբերությունները՝ ունենալով դարավոր բարեկամության պատմություն, մշակութային ընդհանրություններ այժմ զարգացման մեծ հեռանկարներ ունեն այնպիսի ոլորտներում ինչպիսիք են աղամանդագործությունը, բարձր տեխնոլոգիաների ոլորտը, գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը, համատեղ տարաբնույթ բիզնես ծրագրերի շրջանակներում հնդկական ներդրումային քաղաքականությունը, առևտրի ընդլայնումը:

Հնդկաստան-Հայաստան ներմուծման/արտահանման ցուցանիշներն ըստ 2016թ.-ի տվյալների (աղյուսակ 2-3)՝

Աղյուսակ 2.

Ապրանքի նկարագիր	**Ներմուծման ընդհանուր արժեք (ԱՄՆ դոլար)**	**Ներմուծման (%)**	**Փոխադրման քանակը**
Հագուստ, բնական և արհեստական կաշի	235848.04	72.37	20
Ացիկլիկ միկրոկարբոնաթթուներ, ցիկլիկ միկրոկարբոնաթթուներ, նրանց անհիդրիդները,պերոքսիդ, նրանց հալոգենացված, սուլֆադացված, նիտրացված, նիտրիդացված ածանցյալները	19264.99	5.91	4
Բժշկության մեջ օգտագործվող գործիքներ և տեխնիկա, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական,ներառյալ տեսողության ստուգման, բժշկական այլ էլեկտրոնային տեխնիկաներ	15607.18	4.79	17
Սպասք լվացող մեքենաներ,շշեր կամ այլ տարաներ մաքրելու կամ չորացնելու սարքեր, շշեր, տուփեր, կամ այլ տարաներ լցնելու, փակելու, փաթեթավորելու կամ պիտակավորելու սարքավորումներ, շշեր ապակե տարաներ, խողովակներ և նման տարաներ փակելու համարնախատեսված սարքավորումներ	8585.92	2.63	5
Օրթոպեդիկ տեխնիկա ներառյալ՝հենակներ, վիրահատական գոտիներ և ամրակներ, սպլինտներ և կոտրվածքների համարչ նախատեսված սարքավորումներ, պրոթեզներ,իմպլանտներ, փոխհատուցման ենթակա լսող սարքավորումներ կամ իմպլանտներ օգտագործված և վնասված վիճակում	7383.56	2.27	11
Թուղթ խպատրաստող սարքավորումներ,Թուղթ կամ թղթե տախտակներ ներառյալ բոլոր տեսակի կտրող սարքավորումները	7000	2.15	1
Սինթետիկ օրգանական գունազարդման և նմանատիպ այլ պարագաներ	5147.48	1.58	8
Սուլֆոդամիդներ	4840.58	1.49	1
Թերապեվտիկ, պրոֆիլակտիկ օգտագործման համար նախապատրաստված մարդու, կենդանական արյուն, իմունոլոգիական արտադրանքներ նախատեսված արյան համար,վակցինաներ, պատվաստանյութեր, տոքսիններ և այլն:	4679.98	1.44	12
Հիդրավլիկ արգելակային հեղուկներ և հիդրավլիկ փոխանցման տուփերի համար այլ հեղուկներ, բենզին չպարունակող կամ ավելի քիչ քան 70% բենզին պարունակող հանքանյութեր:	3982.61	1.22	4

Աղյուսակ 3.

Նավահանգստ	Ներմուծման ընդհանուր արժեք (ԱՄՆ դոլար)	Ներմուծման (%)	Փոխադրումների քանակը
Չեննայ Էյր	9722.95	100	1
Չեննայ Սի	235848.04	72.37	20
Սահար Էյր Կարգո	36894.65	11.32	32
Չեննայ Էյր	16813.73	5.16	6
Ահմեդաբադ Էյր	14259.99	4.38	2
Դելի Էյր	9105.41	2.79	27
Նհավա Շեվա Սի	5147.48	1.58	8
Հայդարաբադ Էյր	4840.58	1.49	1
Բանգալոր Էյր	1750	0.54	2
Կոչին Էյր	1213	0.37	11

Օգտագործված գրականության ցանկ

1. Armenia-India bilateral relations. https://web.archive.org/web/20111028080319/http: // www.indianembassy.am/relation.html
2. Bilateral Brief on India- Armenia Relations.https://mea.gov.in/Portal/ForeignRelation/India_-_Armenia_Bilateral_Brief__-__Dec_2018.pdf
3. Հայաստանը պետք է լուծի Հնդկաստան արտահանվող ապրանքների դիվերսիֆիկացման խնդիրը: https://armedia.am/eng/news/48823/ armenia- should-solve-the-problem-of-diversification-of-exported-goods-to-india.html
4. ЕАЭС и Индия начали официальные переговоры по заключению соглашения о свободной торговле. http://www.eurasiancommission.org/ru/nae/news/Pages/3-06-2017.aspx
5. Հնդկաստանի և Հայաստանի երկկողմ առևտրի զեկույց: http://www.indiatradedata.com/what-india-import-export-armenia
6. ԵՊԼՀ ուղեցույց:https://brusov.am/website/ documentation/files/4ebd57c8.pdf ԵՊԼՀ 2013-2017 ռազմավարական ծրագրի գործողությունների պլան: https://brusov.am/website/documentation/ files/d73ce9a4.pdf
7. Հինդիի օրը Երևանում: https://www.aravot.am/2010/09/17/342912/
8. Հնդկական ITEC ծրագրի 50-ամյակը Երևանում: https://armedia.am/arm/news/24848/hndkakan-itec-tsragri-50-amyaky-erevanum.html

Сдана/Հանձնվել է՝ 21.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 26.02.2020
Принята/Ընդունվել է՝ 29.02.2020

Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության հիմնավորումը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում

Գրիգորյան Ն. Հ.
ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի ավագ գիտական-վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ ասպիրանտ (Երևան, Հայաստան)
nkgrigoryan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ խորհրդարանականություն, կառավարման համակարգ, քաղաքական ռեժիմ, ժողովրդավարություն, կոնսոցիատիվիզմ, հասարակություն, լավ կառավարում

Обоснование эффективности системы парламентского правления в контексте консоциональной демократии

Григорян Н. Г.
Старший научный аналитик Национального оборонно-исследовательского университета МО, РА, аспирант НАН РА (Ереван, Армения)
nkgrigoryan@gmail.com

Резюме: В данной статье обсуждаются концептуальные основы осмысленного понимания демократии. В частности, на разных уровнях представлены как цивилизационные и ценностные основы демократии, так и демократия как политический режим, где обсуждается вопрос роли гражданина в институционализации демократии.
В основном изучаются возможности введения и применения консоциативной демократии в условиях парламентаризма. В контексте парламентских демократий представляются сравнительные анализы различных моделей представительских демократий начиная от греческой агоры до наших дней. С точки зрения парламента, как высшего представительского законодательного органа, важны легитимность законодательного процесса и обеспечение отношений между парламентом и обществом, а также вопросы, связанные с культурой парламентаризма.
В конце работы делается ссылка на теоретико-практические положения правильного правления в попытке представить применение консоциативизма в контексте эффективности в системе парламентского правления.
Ключевые слова: парламентаризм, система правления, политический режим, демократия, консоциализм, общество, хорошее управление

Reasonong the Efficiency of the Parliamentary Government System in the Context of Consociational Democracy

Grigoryan N. H.
Senior Research Analystat National Defense Research University, MOD, RA
PhD Student at NAS RA (Yerevan, Armenia)
nkgrigoryan@gamil.com

Abstract: This article discusses the conceptual basis for a thorough understanding of democracy. In particular, the civilization and value foundations of democracy are presented in separate levels, as well as democracy as a political regime, the role of the citizen in the institutionalization of democracy is discussed.
The possibilities of introducing and practicing consociational democracy under parliamentary government system are mainly explored. In the context of parliamentary democracies, comparative theories of different models of representative democracy have been introduced from Greek Agora up to now. Legislative process and the provision of parliament-society relations and issues related to the political culture of parliamentarism are of paramount importance in terms of the parliament as a supranational legislative body.
To conclude, reference is made to the hands-on principles of good governance in pursuit of presenting the application of conservatism in the context of effectiveness and within the framework of parliamentary system.
Keywords: parliamentarism, system of government, political regime, democracy, consociationalism, society, good governance.

Քաղաքական գործընթացներում զարգացումները ցույց են տալիս, որ կառավարման համակարգի ընտրությունը դեռևս արդյունավետության և բարենպաստ քաղաքականություն իրականացնելու գրավական չէ: Պատահական չէ, որ պետական վարչակարգերի կամ քաղաքական կառավարման համակարգերի հաստատմանը նախորդում է տվյալ համակարգին բնորոշ նախադրյալներ, որոնց հիման վրա երկրները մշակում են լավ կառավարման հայեցակարգեր: Խորհրդարանականության պարագայում այս խնդիրն առավել քան ակներև է՝ կառավարման համակարգը պետք է զուգամիտել խորհրդարանականության մշակույթին: Կոնսոցիատիվ ժողովրդավարության մոդելով խորհրդարանական կառավարման համակարգը նպաստում է ինչպես խորհրդարանում, այնպես էլ քաղաքական համակարգի մյուս ինստիտուտների ներսում բազմակարծության ապահովմանը [**1**, pp. 23-81]: Անշուշտ, հաշվի առնելով քաղաքական գործընթացներում բոլորի ներգրավման և հասարակության մեջ դժգոհությունների կտրուկ նվազեցման հանգամանքները, պետք է նշել, որ սա լիովին լավ կառավարման մոտեցում է, որն ունի համապատասխան քաղաքական մշակույթ [**2**, pp. 45-71]: Խորհրդարանական կառավարման համատեքստում կարևորվում է դրա արդյունավետության հիմնավորումը ոչ միայն կառավարման համակարգերի միջև, այլև ժողովրդավարության կոնկրետ տեսության, տվյալ դեպքում կոնսոցիատիվիզմի տեսանկյունից:

Խորհրդարանական կառավարման համակարգի և ժողովրդավարական արժեհամակարգի ընտրությունը, պայմանավորված է տվյալ պետության պատմամշակութային և քաղաքակրթական հարցերով: Ժողովրդավարության և խորհրդարանականության պատմությունը մեկնարկում է անտիկ ժամանակաշրջանից, երբ Հին Հունաստում և Հռոմում զարգանում էին խորհրդարանական և հանրապետական մշակույթը: Ուստի, պատահական չէ, որ շատերը խոսելով խորհրդարանական ժողովրդավարությունների մասին, առաջին հերթին հղում են անում պատմությանը և քաղաքակրթական ակունքներին: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալբերտ Ստեփանյանը իր «Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան», գրքում դեռևս Արտաշիսյանների արքայատոմի ժամանակաշրջանում խոսում է Հայաստանում առկա ժողովրդավարական սկզբունքների մասին [**3**, էջ 112-135]: Անշուշտ, այդ ժամանակաշրջանում պետությունները միապետական էին, սակայն այստեղ ոչ թե խոսվում է կառավարման ձևերի, այլ այդ ժամանակաշրջանում նրանց կողմից իրականացված քաղաքականության ժողովրդավարական սկզբունքերի մասին: Ընդհանրապես, երբ խոսում ենք «ժողովրդավարություն» հասկացության մասին պետք է նշել, որ իրականում այն բովանդակում է երկու կարևոր և փոխկապակցված հիմնայուներ՝ ժողովրդավարությունը որպես մշակույթ և ժողովրդավարությունը որպես ինստիտուտ [**4**, pp. 187-196]: Ժողովրդավրությունը որպես արժեհամակարգ հնուց մինչ օրս եղել է պետությունների կողմից վարված քաղաքականության հիմքում, սակայն ասել, որ բոլոր պետությունները հնում ունեցել են ընդգծված ժողովրդավարական արժեհամակարգ և, որ ժողովրդավարությունը պետության մեջ ինստիտուցիոնալացված էր, չի արտահայտի հարցի համակողմանի ընկալումը: Այլ բան է, որ ժամանակակից քաղաքական գործընթացներում ժողովրդավարությունը ավելի իրավաքաղաքական բնույթ ունի և պետությունները խորհրդարանի, որպես ժողովրդավարական կարևորագույն ինստիտուտի միջոցով, իրականցնում են պետության քաղաքականության ժողովրդավարական ընթացքը:

Խորհրդարանականության և կոնսոցիատիվիզմի փոխհամադրելիությունը մասնավորապես պայմանավորված է խորհրդարանականությանը բնորոշ ներկայացուցչական գործառույթներով: Խորհրդարանը իր գործունեությամբ հանդիսանում է հանրային խավերի (քաղաքացիական հասարակության) ներկայացուցիչների ամբողջացված ինստիտուտ: Այլ բան է, երբ ներկայացուցչական մակարդակների և դրա արդյունավետության հարցերը խնդրահարույց են: Հենց այստեղ է կարևորվում կոնսոցիատիվ ժողովրդավարության դերը որպես հասարակության բոլոր շերտերի (ստրատաների) միջև իշխանության բաշխման միջոց: Եվ, ըստ հասարակության պատկերի իշխանության բոլոր մարմիններում համամասնորեն ներկայացուցչականության ապահովման քաղաքական գործընթաց [**5**, pp. 52-67]: Իշխանության կիսման և արդյունավետ կառավարման հարցերը մերօրյա քաղաքական գործընթացներում ժողովրդավարական պետությունների համար կարծես հրամայական է դարձել: Իհարկե միայն հասարակության շրջանում իշխանության բաշխմամբ առկա խնդիրները չեն լուծվում, նաև հարկավոր է քաղաքական ինստիտուտներում կատարել ներկայցուցչական պատվիրակում, որի վառ օրինակներից է՝ խորհրդարանը: Մարդկության պատմությանը հայտնի են խորհրդարանական ժողովրդավարության այնպիսի օրինակներ, ինչպես հունական Ագորան էր, երբ հասարակության տարբեր հատվածները որոշումների կայացման գործընթացին մասնակցելու համար ներկայացուցչական մակարդակում պատվիրակվում էին քաղաքի կենտրոնում գտնվող ժողով [**6**, pp. 40-52]: Իհարկե հարց է առաջանում թե

ինչպես կարող է իշխանության կիսումը նպաստել հասարակության բոլորի շերտերի շահերի բավարարմանը և արդյո՞ք դժգոհողներ կամ արհամարվածներ չեն լինում: Պատասխանելով այս հարցադրմանը նշենք, որ իհարկե նման դրսևորումը մասնավոր դեպքերում չի բացառվում, բայց նաև սխալ կլինի համարել, որ նման բացասական փորձը կիրառելի է բոլոր քաղաքականացված ստրատաների դեպքում: Ուստի, կարծում ենք, որ դա քիչ հավանական է, քանի որ կոնսոցիատիվիզմի բուն նպատակը պետական կառավարման և որոշումների կայացման գործընթացում բոլորի ներգրավումն է, այլ ոչ թե բաժանարար գծերի խորացումը:

Խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետության տեսանկյունից կարևոր գործոն է օրենդսրական գործընթացի լեգիտիմացումը և ներկայացուցչականության մակարդակի բարձրացումը [**7**, pp. 203-215]: Խնդիրը քննարկվում է երկու մակարդակներում: Նախ՝ ներկայացվում է օրենսդիր իշխանության որպես բարձրագույն օրենսդիր մարմնի լեգիտիմության հարցը: Այնուհետև խորհրդարանում բուն օրենսդրական գործունեության իրականացման լեգիտիմությունը, թե որքանով են ընդունված օրեսդրական ակտերը պատականանպաստ: Խոսելով բարձրագույն օրենսդիր մարնի լեգիտիմությունից կարևոր է հասկանալ, որ խնդիրը միայն ընտրական գործընթացների արդյունքում ազատ, արդար և թափանցիկ ընտրված իշխանություն կամ ընդդիմություն ունենալը չէ [**7**, p. 226-228]: Խնդիրները ավելի արմատական է և կարիք կա մասնագիտական լուրջ հետազոտությունների: Միևնույն ժամանակ, լեգիտիմության հարցը կարևոր է հասկանալու, թե որքանով է օրենսդիր մարմնում պատգամավորների մանդատ զբաղեցնելը արտահայտում հասարակության սեգմենտային կամ-ասարտահայտութաան պատկերը: Ահա այստեղ է, որ կարևրովում են կոնսոցիատիվզիմի և խորհրդարանականության փոխահամդրելիությունը, որպես արդյունավետ պետական կառավարման և որոշումների կայացման միջոց: Մասնավորապես, էական է կոնսոցիատիվիզմի մեծ կոալիցիայի և համամասնության սկզբունքները, որոնք խորհրդարանում համամասնության սկզբունքով նախատեսում են բոլոր պաշտոններում հասարակության շերտերի ներկայացվածություն: Սա զուտ սոցիալական արդարության խնդիր չէ: Այստեղ կարևոր գործոն կարող է լինել բաձրագույն օրենսդիր մարնում սեփական ապագան տնօրինելու նպատակով որոշումների կայացման գործընթացին չմասնակցելը և հասարակության շերտերին օտարելը [**8**, pp. 73-75]: Ուստի, կարող ենք ասել, որ օրենսդրական գործընթացի լեգիտիմացումը և արդյունավետությունը բավականին բարդ գործընթաց է, որը նախատեսում է վերոնշյալ երկու հայեցակետերի փոխհամադրելիություն:

Խորհրդարանական կառավարման արդյունավետության հաջորդ խնդիրը խորհրդարանականության մշակույթի և կուսակցական համակարգի կայացումն է [**9**, pp. 107-136]: Կայացած կուսացական համակարգը բնորոշ է կառավարման բոլոր համակարգերին, սակայն երբ խոսում ենք խորհրդարանականության մասին, պետք է նկատի ունենալ, որ այստեղ անհատների գործոնը, ի տարբերություն նախորդ երկու կառավարման համակարգերի հանարավորինս նվազեցված է: Եթե նախագահական կամ կիսանախագահական կառավարման համակարգերում կուսակցական համակարգը կարող է թերանալ, ապա խորհրդարանականի դեպքում այդ բացը լուրջ խնդիր է լավ կառավարման դիտանկյունից: Կուսակցական համակարգի չկայացվածության բնորոշիչներից են՝ կուսակցության ինստիտուցիոնալացված չլինելը, ներկուսակցական համակարգում որոշումների միանձնյա ընդունումը, կուսակցական գաղափարախոսության բացակայությունը և այլն: 2018 թվականին անցում կատարելով խորհրդարանական կառավարման համակարգի, Հայաստանում մինչ օրս լուծված չէ կուսակցական համակարգի կայացվածության և խորհրդարանականության մշակույթի խնդիրները: Այսօր մեզանում շատ են միապետական գործելաոճ և քաղաքական գաղափարախոսություն չունեցող կուսակցությունները, որոնք քաղաքական որոշումներ են կայացնում, ելնելով նեղ անձնական շահերից: Նման կուսակցությունները հիմնականում սերում են բիզնես առաջնորդների շահերից և բովանդակությամբ նման են բիզնես նախագծերին: Կայացած կուսակցական համակարգերի դեպքում նախատեսվում է ինստիտուցիոնալացված կուսակցությունների առակայություն [**10**, էջ 134-143]: Մասնավորապես, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեպքում մենք գործ ունենք կայացած երկկուսակցական համակարգի հետ: Օրինակ՝ ԱՄՆ-ի դեպքում, բազմաթիվ մեծահարուստներ, ինչպիսին՝ Դոնալդ Թրափմն է, երկրի նախագահ կամ պատասխանատու այլ պաշտոններ են զբաղեցնում կուսակցության միջոցով, այլ ոչ թե սեփական շահերի համար ստեղծում են կուսակցություններ և երբ ցանկանում լուծարում են դրանք: Սա փաստում է այն մասին, որ ԱՄՆ-ում կուսակցական համակարգը կայացած է և թե° հանրապետական և թե° դեմոկրատական կուսակցությունները քաղաքական գործընթացների մասնակցության առումով կարևոր դերակատորություն ունեն: Կայացած խորհրդարանականության մշակույթը առանցքային նշանակություն ունի պետական կառավարման գործընթացում [**11**,

pp. 22-33]: Հարց է առաջանում, եթե պետությունը նոր է անցում կատարել խորհրդարանականության ինչպես կարող է ունենալ կայացած խորհրդարանականության մշակույթ: Լիովին կիսելով այդ մոտեցումները միաժամանակ նշենք, որ երկրի նախագահական կամ կիսանախագահական կառավարման նախորդումը չի նշանակում, որ պետությունը չունի խորհրդարանի մշակույթ: Ավելին կայացած խորհրդրանի մշակույթը կարևոր նախադրյալ է համարվում խորհրդարանականության մշակույթ ձևավորելու գործում: Օրինակ՝ ներկայիս Հայատանի Հանրապետության խորհրդարանականության պայմաններում համապատասխան մշակութի ձևավորման գործընթացին կարող են նպաստել Հայաստանի շուրջ 100-ամյա խորհրդարանական մշակույթի փորձը: Ընդհանրանցելով նշենք, որ թե° կուսակցական համակարգի և թե° խորհրդարանականության մշակույթի առկայությունն ու փոխհամադրելիությունը ապահովում են խորհրդարանական կառավարման համակարգի արդյունավետությունը:

Խորհրդարանականության համատեքստում, թերևս, ամենաէական հարցերից մեկն արդյունավետ կամ լավ կառավարման (good governance) հիմնախնդիրն է: Խորհրդարանական կառավարման համակարգում լավ կառավարում ասելով առաջին հերթին պետք է հասկանալ խորհրհրդարանի՝ որպես ժողովրդավարական հիմնական ինստիտուտի արդյունավետությունը: Լավ կառավարման գաղափարը ընկած է կառավարությունների և կառավարման մարմինների պատասխանատվության հիմքում, որն էլ ուղղված է մարդկային զանգվածների և դրանց ներսում սոցիալական շերտերի, խմբերի կարիքների բավարարմանը: «Լավ կառավարումն անորոշ հասկացություն է, որը հիմնականում վերաբերվում է պետական ինստիտուտների (տվյալ դեպքում խորհրդարանին) և հանրային միջոցների կառավարմանը» [**12**, pp. 525-548]: Կառավարումը որոշումների կայացման և իրականացման գործընթաց է: Իսկ կառավարման ոլորտները կարող են ընդգրկել ինչպես ազգային, այնպես էլ միջազգային հարաբերությունների ոլորտը [**13**, c. 240-248]: Լավ կառավարումը հնարավոր է միայն արհեստավարժ և կիրթ անձնակազմի ներգրավմամբ [**14**, p. 48]: Լավ կառավարումը խորհրդարանական կառավարման համակարգում ունի մի շարք առանձնահատկություններ: Դասական առումով խորհրդարանի դերը եղել է հին օրենքները բարեփոխելը և նոր օրենքներ ընդունելը: Ուստի խորհրդարանական կառավարման համակարգի պայմաններում կարևորվում են 1. արդյունավետ և արդար օրենքներ ստեղծելու փորձը, 2. պետական կարևոր հարցերի լուծման նպատակով գործադիր մարմնի (կառավարության) հետ աշխատելու ունակությունը: Շատ օրենքներ գրվում, մշակվում և ներկայացվում են կառավարության ոլորտային գերատեսչությունների կողմից: Անդրադառնալով խորհրդարանական կառավարման համակարգում օրենսդիր մարմնի արդյունավետ գործունեությանը՝ կարող ենք վստահաբար ասել, որ այստեղ հիմնական պայմանը հնարավորինս թափանցիկ գործելն է, ինչն իր հերթին նախատեսում է անարդյունավետ գործելաոճից հրաժարում [**15**, pp. 511-518] :

Խորհրդարան-հասարակություն փոխգործակցությունն լավ կառավարման և խորհրդարանականության մշակույթի յուրահատուկ դրսևորում է: Խորհրդարանականության արդյունավետության հիմնական դրսևորումներից կարող է լինել հասարակության բոլոր շերտերի ակտիվ ներգրավվածությունը խորհրդարանական կառավարման գործընթացներին և նրանց խնդիրների արագ և արդարացի սկզբունքով լուծումը: Առկա խնդիրների լուծման և արդյունավետ խորհրդարանական կառավարում իրականացնելու նպատակով շատ կարևոր են նաև խորհրդարանի ինստիտուցիոնալացումը, որը նախատեսում է հանձնաժողովների, մասնագիտացված խմբերի, խորհրդարանական լսումների և անհրաժեշտության դեպքում նաև իրավասու աշխատանքների իրականացում: Խորհրդարանականության պայմաններում լավ կառավարման գործընթացին էական նպաստում է հաշվետվողականությունը: Դա թափանցիկության և ապագայում խնդիրների կանխման արդյունավետ միջոց է: Լավ կառավարման նպատակով օրենսդիր մարմնում ձևավորվող հանձնաժողովները (կամ հատուկ մարմինները) նպատակաուղղված են քննարկումներով պարզելու 1. կառավարության օրինագծերը, 2. ուսումնասիրել և պարզել, թե ինչպես է կառավարությունը տնօրինում պետական բյուջեն և անհրաժեշտության դեպքում պահանջել, որպեսզի ներկայացնի արդար և թափանցիկ հաշվետվություն: Եվ, վերջապես, արդյունավետ խորհրդարանական կառավարման գործում էական գործոն է միջխորհրդարանական համագործակցությունը և խորհրդարանական դիվանագիտության իրականացումը:

Արդյունավետ խորհրդարանական կառավարման մարտահրավերները բազմաթիվ են, սակայն փորձենք անդրադառնալ դրանցից կարևորներին:

- Սոցիալ-տնտեսական զարգացման նպատակով անհրաժեշտ օրենսդրական պայմանների ստեղծում և կառավարության գործունեության վերահսկողություն:
- Մարդու իրավունքների պաշտպանության նպատակով խորհրդարանի գործունեու-

թյան հաշվետվողականություն և թափանցիկություն:

- Ռեսուրսների և կարողությունների բացակայություն, որը թույլ չի տալիս օրենսդիրն գործադիրի նմանությամբ իրական իշխանություն իրականացնել:
- Իշխանության միասնականություն: Սա նախատեսում է էլիտա-ժողովուրդ հարաբերությունների մակարդակի ստուգում, քանի որ հաճախ ժողովրդի կողմից ընտրված պաշտոնյաները, և նրանց կողմից կայացված որոշումները չեն արտահայտում հասարակության կամքը և շահերը:
- Խորհրդարանը, լինելով ժողովրդավարական ինստիտուտ և ներկայացնելով հասարակության կամքը, պետք է ամեն ինչ անի, որ հասարակության սպասելիքներն արդարանան, հակառակ դեպքում կարող են տարաբնույթ արհավիրքներ լինել:

Հատկանշական են նաև լավ կառավարման վերաբերյալ գիտահետազոտական մոտեցումներն: Ըստ գիտնական Սեմ Ազերացիի՝ լավ կառավարման վերաբերյալ տրված ոչ հստակ սահմանումն այն հարցի շուրջ, թե ի՞նչն է ընդգրկում կառավարման համակարգը, օգտատիրոջը թույլ է տալիս սահմանել իր սեփական պարամետրերը: Իսկ համահեղինակ հետազոտողներ Եվա Պոլուխայի և Մոնա Ռոզենդալի «Վիճարկելով լավ կառավարումը» գրքում, որտեղ ներկայացված դրույթներն արևմտյան ժողովրդավարությունների համար չափանիշներ են, սահմանված են երկրների միջև մրցակցության իրականացման հիմնական ստանդարտներն ու օրինակները [**16**, pp. 237-270]: Օգտագործելով քաղաքական մարդաբանության մեթոդները՝ նրանք եզրակացնում են, որ որոշումների ընդունման գործընթացում, կիրառելով լավ կառավարման սկզբունքը, այն անկախ ղեկավարի կառավարման մոտեցումներից միջազգային հարաբերություններում կարող է առաջացնել մշակութային հիմքով տարասեռ (heterogeneous) չափանիշների բախումներ: Հետաքրքրական է հնդիկ պրոֆեսոր, սոցիոլոգ Սուրենդա Մունշիի (1922-2013) «Խելացի մարդուն լավ կառավարման» ուղեցույցը, որն անդրադառնում է լավ կառավարման առեղծվածին: Այստեղ նա նշում է, որ շատերը ձանձրանալով «լավ կառավարումից» կամ չցանկանալով հասկանալ աշխարհում դրա գոյությունը թողնում հեռանում են մեր իրականությունից և փնտրում է այլ ուղիներ: Նա իր գրքում անդրադառնում է նաև լավ կառավարման նպատակներին, ներկայացնելով, թե ինչպես են դրանք ծառայում հասարակությունում: Իսկ ֆրանսիացի սոցիոլոգ Մայքլ Կրոզիեն ներկայացնելով կառավարման համակարգի վերաբերյալ իր հայացքները իր հոդվածում քննարկում և վերլուծում է կապի համակարգում մի շարք ակտիվ փոփոխություններ և դրանց ազդեցությունը կառավարման գործընթացի վրա: Սա նրան հնարավորություն է տալիս տարբեր դիտանկյուններից տեսնելու թե ինչ է իրենից ներկայացնում ժամանակակից կառավարումը: Արդյունքում Կրոզիեն մտահանգում է նրան, որ երբ հասարակությունում կառավարումը և քաղաքականությունը իրականացվում են լայնախոհ մոտեցումներով, դրանք մշտապես օրեցօր փոփոխվում են [**17**] :

Օգտագործված գրականության ցանկ

1. **Palonen K., Rosales J.**, The Politics of Dissensus: Parliament in Debate, Cantabrina University Press, 2014.
2. **Brunclik M., Kubat M.**, Semi-presidentialism, Parliamentarism and Presidents: Presidential Politics in Central Europe, Routledge, 2018.
3. **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան, Սարգիս Խաչենց. - Երևան. Փինթինֆո:
4. **Held D.**, Models of Democracy, Standford University Press, California, 2006.
5. **Bogaards M.**, Democracy and Social Peace in Divided Societies, Palgrave Macmillan, London.
6. **InozemtsevV.**, **Dutkiewicz P**., Democracy Versus Modernization: A Dilemma for Russia and for the World, Routledge, London, 2013.
7. **Grigsby E.**, Analyzing Politics: An Introduction to Political Science, WADSWORTH CENGAGE Learning, 2009.
8. **Stone D.**, Policy Paradox: The Art of Political Decision Making, W.W. Norton, 2001.
9. **Sartori G.**, Parties and Party Systems: A Framework for Analysis, ECPR press, 2005.
10. **Քեռյան Գ.**, Քաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Վան Արյան հրատ., Երևան, 2002:
11. **Schmitt C.,** The Crisis of Parliamentary Democracy, The MIT press, Massachusetts, 1988.
12. **Grindle M.**, Good Enough Governance: Poverty Reduction and Reform in Developing Countries, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, 17 (4),2004,.
13. **Ланцова С., Ачкасова В.**, Мировая Политика и Международные Отношения, ПИТЕР, Москва, 2005.
14. **Dimond L.**, Three Paradoxes of Democracy, II journal of democracy,Vol. 1,No 3, 1990.
15. **Rotberg R.**,Good Governance Means Performance and Results, Governance: An International Journal of Policy, Administration, and Institutions, 27 (3), 2014.
16. **Poluha E.**, Rosendahl M., Contesting "Good" Governance: Crosscultural Perspectives on Representation, Accountability and Public Space, Routledge, 2002.
17. **Crozier M.**, Rethinking Systems: Configurations of Politics and Policy in Contemporary Governance, http://journals.sagepub.com/doi/10.1177/0095399710377443, (13.10.2018).

Сдана/Հանձնվել է՝ 21.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 27.02.2020
Принята/Ընդունվել է՝ 29.02.2020

Observations on Explication of Content of "Political Manipulation" Notion

Vardanyan L. G., Ph.D.
Yerevan State University, Chair of Theory and History of Political Science (Yerevan, Armenia)
Poghosyan V. V., Master's student
Yerevan State University, Faculty of International Relations, Department of Regional Policy (Yerevan, Armenia)
vahepoghosyan7@gmail.com

Keywords: manipulation, political manipulation, psychological influence, political consciousness, explication, manipulator, skill, management, hidden character, subject of manipulation, object of manipulation

Դիտարկումներ «քաղաքական մանիպուլյացիա» հասկացության բովանդակության էքսպլիկացիայի վերաբերյալ

Վարդանյան Լ. Գ.
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Երևանի պետական համալսարանի քաղաքական գիտության և տեսության ամբիոն (Երևան, Հայաստան)
Պողոսյան Վ. Ռ.
ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Տարածաշրջանային քաղաքականություն բաժնի մագիստրանտ (Երևան, Հայաստան)
vahepoghosyan7@gmail.com

Ամփոփում: Ներկայացված հոդվածում մանիպուլյացիան դիտարկվում և քննարկվում է քաղաքագիտական ուղղվածության համատեքստում: Ներկայացվում են «մանիպուլյացիա» հասկացության ծագումնաբանական-հասկացութային քննարկումները, սահմանման և մեկնաբանությունների էքսպլիկացիոն մոտեցումները: Բացահայտվում և վերլուծվում են զանգվածային քաղաքական գիտակցության և զանգվածային քաղաքական վարքագծի մանիպուլյացիայի բնորոշ առանձնահատկությունները սոցիալ-քաղաքական հետազոտությունների տեսանկյունից: Քաղաքագիտական էքսպլիկացիան թույլ է տալիս մանիպուլյացիան դիտարկել որպես բարդ գործընթաց՝ իր տարբեր բնութագրումներով: Իհարկե, առանձին անհատների միջև կարող են լինել մանիպուլյատիվ փոխհարաբերություններ, բայց որպես կանոն մանիպուլյատիվ գործողություններն այսպես կամ այնպես ընկած են սոցիալ-քաղաքական ծրագրավորված և իրացվող նպատակների, գաղափարների հիմքում՝ պայմանավորված լինելով իշխանությամբ, կարգավիճակով, ռեսուրսներով և այլ գործոններով:
Վճռորոշ բառեր՝ մանիպուլյացիա, քաղաքական մանիպուլյացիա, ազդեցություն, հոգեբանական ազդեցություն, քաղաքական գիտակցություն, էքսպլիկացիա, մանիպուլյատոր, հմտություն, կառավարում, թաքնված բնույթ, մանիպուլյացիայի սուբյեկտ, մանիպուլյացիայի օբյեկտ

Некоторые наблюдения по поводу экспликации содержания понятия «политическая манипуляция»

Варданян Л. Г.
Кандидат философских наук, Ереванский государственный университет, кафедра теории и истории политологии (Ереван, Армения)
Погосян В. В.
Ереванский государственный университет, факультет международных отношений, отдел региональной политики, магистрант
vahepoghosyan7@gmail.com

Резюме: В представленной статье манипуляции рассматриваются и обсуждаются в контексте политологической направленности. Представляются генеалогические и концептуальные обсуждения понятия "манипуляция", экспликационные подходы к определению и интерпретации. Выявляются и анализируются характерные

особенности массового политического сознания и манипуляции массовым политическим поведением с точки зрения социально-политических исследований. Политологическая экспликация позволяет рассматривать манипуляции как сложный процесс с его различными характеристиками. Конечно, могут быть манипулятивные взаимоотношения между отдельными лицами, но, как правило, манипулятивные действия так или иначе лежат в основе запланированных и реализуемых социально-политических целей, будучи связанным с властью, статусом, ресурсами и т.д.

Ключевые слова: манипуляция, политическая манипуляция, психологическое влияние, политическое сознание, экспликация, манипулятор, умение, управление, скрытый характер, субъект манипуляции, объект манипуляции.

Introduction

In the present article manipulation is viewed and discussed in the context of the political science. The genealogical-conceptual discussions of the concept of "manipulation", as well as the explication[1] approaches to the definition and comments have been presented. The peculiarities of manipulation of political consciousness and mass political behavior have been revealed and analyzed from the viewpoint of the socio-political studies.

Regardless of the fact that the issue of the manipulation, including the political manipulation, has been repeatedly discussed in the scientific and publicist literature by various approaches, interest in it especially conditioned by the factors of topicality has been steadily increasing. At present, the scientific community (political scientists, sociologists, psychologists, linguists and others) are attempting to penetrate into the essence of this complex and contradictory process. It should be noted that there is no common approach to the manipulation as a socio-political phenomenon by various social sciences.

The political manipulation of the mass political behavior, the mass political consciousness and masses, which is considered to be as one of the topical issues of nowadays, is not only a widespread phenomenon, but it has also become a daily political practice. That is to say, the study of the political manipulation has become more relevant in terms of its theoretical and practical issues. The study of these issues is also important because if the victims of interpersonal manipulation may be individuals, the victims of the political manipulation may also be some groups of people, large masses (sometimes the whole peoples). And in general, the manipulation of consciousness is nowadays deeply reinforced in such areas of social interaction as advertising, public relations, political PR, etc., which, of course, are of great interest to researchers dealing with these issues. The importance of the study of the political manipulation issues is also conditioned by the widespread use of manipulation technologies in the modern world as one of the primary means of regulating relations in the spheres of economy and business, politics and public communication.

Our prediction is that the political manipulation or the manipulation of the mass political consciousness with all its variety of means, methods, techniques and technologies is conditioned by the fact what features are being used in the given process, what is the purpose and what results are being recorded. At the same time, political manipulation performs as a special form of political process, expressing the socio-political interaction between the subject and the object of manipulation.

Substantial Issues of Political Manipulation and Explication

The term “manipulation” (from latin *manipulus*) has two connotations. In its translation it is understood and presented as a fist, a palm, a handful (*manus* is h*and* and *ple* is to *fill*). It is translated into Armenian as *ձեռնածություն*. [**1**, p. 935], *ձեռնա-վարություն*. In the dictionaries of the European languages, this word is interpreted as an attitude towards an object conditioned by some purpose (for example, management with a hand, physician's examination of a patient with a hand, etc.) [**16**, pp. 133-134]. Presenting these circumstances, it is taken into account that such cases require skill, ingenuity and training. Manipulators are the amenities created for the management of mechanisms in the technique, which are in some way considered as the continuation of the hand through the processes (levers, bars, etc.). The modern metaphorical meanings of this word appeared from here as a skillful and witty attitude towards people, the ability to manage behavior, the purposeful influence on the consciousness and spiritual world that pursue the fulfilment of certain goals.

The term “manipulation” in its secondary meaning is understood as a small group of people (a handful). In this meaning the term originated from the Ancient Rome and implies "a small, very mobile detachment of soldiers" - the meaning of “manipulus”. In the military art history the

[1] **Explication** [from latin *explication* - explanation, clarification, interpretation] - 1. An explanatory text, clarification. 2. A process that reveals the content of some unity, the whole, and its constituents become independent and may differ from one another.

manipulative phalanx [2] occupied an important place, which was discussed in detail by the military historians. Thus, German military historian Hans Delbrück (1848-1929) notes that each manipulus consisted of 120 people. The Legion consisted of 30 manipulus... and the manipulative order with its organizational tasks required strict discipline, which was executed by the management and influence of the commanding staff, who guided and psychologically organized the members of the manipulus [**10**, pp. 204-205]. We agree with some researchers that the manifestations of the manipulation can be seen in the presented process, which have been widely used in today's political and public practice, especially in the electoral period, particularly through the advertisements and through the mass media [**19**, p. 19].

The presented psychological impact or psychological manipulation has existed at different times of the public life, also substantiating different political processes, and the transition to the information society only contributes to the transformation of psychological manipulation [3] by spreading it across the different spheres of the public life, i.e. politics, diplomacy, commerce and so on. That is to say, the modern conditions, in essence, have given common nature to the information-psychological influence and the use of political manipulation in communication processes.

We think that these two studies and explanations of the term "manipulation" can be also applied unequivocally while discussing the various issues related to the political manipulation.

The 20th century became a century of masses and mass actions. The discoveries made by Gustav Lebon (1841-1931), Gabriel Tardy (1843-1904), Jose Ortega i Gasset (1883-1955), Wilfredo Pareto (1848-1923), Serge Moskvich (1925-2014) and other researchers in the field of the political psychology have given a new impetus to the study of mass movements. It was conditioned by the conceptualization of different models of management, from the totalitarian model of management (which turned the unification of masses into an organizational power through threats and ideological elaborations) up to the propaganda of individual values, the process of the "atomization" of the society, etc. And it is no coincidence that the manipulation as a scientific concept was put into circulation in the 40s-50s of the 20th century by the western political scientists and psychologists. As is well known, the phenomenon of manipulation has been the subject of a serious debate in the works of political science as this term was used in its metaphorical meaning was used just in the political sphere, gradually spreading on the issues related to mass consciousness. The political manipulations include both interpersonal relationships and mass manipulations. In the first case, the manipulator uses certain techniques for their implementation, i.e. the manipulation techniques operating on the interpersonal level. In the second case, the manipulator uses the manipulation technologies, which, with the help of managerial results, attempt to influence the public opinion to achieve certain goals. In this case, communication problems with the masses are primarily regulated through the mass media (radio, press, television, internet, etc.), which simultaneously act as manipulative tools.

The following scholars can be mentioned among the western authors presenting the researches on the issues of the political manipulation: Herbert Frank (1920-1986), Herbert Schiller (1919-2000), Everett Shastrom (1921-1992), Robert Goodin (born in 1950) and others. The two primary issues have been discussed in detail in the political literature since the 1960s. The first was dedicated to the discovery of the manipulative nature of the mass media (in the Soviet literature this criticism was presented with bourgeois or imperialist definitions and analyzes). The second one was related to the brain washing practice (in the Soviet Union and in China this process concerned the propaganda conducted by the government and the party and the work carried out by the special services). Of course, as we have mentioned, many works (especially in the 80s) were of a bourgeois propaganda nature [**6**; **7**; **8**]. From the professional point of view, the problems related to the political manipulation in the Soviet era have not been raised in the professional literature. Various scientific and publicist studies of different nature on the phenomenon of "manipulation" have started emerging after the collapse of the Soviet Union. They have covered the spheres of the political science, psychology, philosophy, public management, socio-economic and other spheres [**4**; **5**; **11**; **12**; **13**; **15**; **28**]. At the same time, it should be noted that each of them, having its own peculiarities, at the same time complements one another, making the mentioned studies more comprehensive and complex.

---

[2] Phalanx / Falange (from Greek φάλαγγα [falanga]) – an Ancient Greek regiment, a heavily linear infantry. Phalanx has been well known since in the Trojan War. It was improved by Philip the Macedonian. The Spanish fascist party and the community projected by utopian-socialist Charles Fourier were also called phalanx (the latter would have 1600-1800 people).

[3] **Transformation** (from latin *transformatio* - conversion, transformation, conversion, reformation, modification). 1. A model mutually promoting to the changes of social act. 2. The function (functionality) of social institutions, which is conditioned by the targeted influence of nominal affirmations. 3. The transformation of the different spheres or processes of the public life.

In the modern Armenian society such processes are also available and have unique forms of manifestation. Many of the current crisis phenomena are based on the fact that the manipulation of the mass consciousness makes the citizens' free and conscious choice a formal act, a pre-programmed process of the formation of mass consciousness by professionals.

It is generally accepted that the political manipulation is defined as *hidden modes and means of the social management of political consciousness and behavior of a social subject (an individual, a social group, masses, a society) which are aimed at the psychologically influence (affect) and force them to act (or to be inactive) contrary to their own interests.* In other words, the political manipulation is the skill and psychological influence (affect) on the political consciousness of the citizens as a latent form and processing of management. The following components are taken into account in terms of the explication of the content of the concept of "manipulation": the main feature of the manipulation (psychological influence), the subject, the object, the purpose, the method.

The manipulation used as regards the people is a social, psychological, political influence, whose purpose is to change other people's perceptions or behavior through the hidden, false, or ingenious practices. As a rule, these methods are based on the interests of the manipulator, so they can be considered as exploitative, unfair, out of ethics and so on. The manipulation can be applied in different areas: family, business, work or among friends, in interpersonal relations, public life, mass media.

Aristotle, the greatest Ancient Greek thinker (384-322 BC), stated that the man is a social being, and that all the beings living outside the Polis community have been either higher than human, i.e. superhuman beings, gods, or they have been lower than human, i.e. morally underdeveloped beings, or animals [**3**, c. 382]. This means that people's interactions in the society are very diverse and can be presented and perceived differently. Thus, the individuum, as an independent individual and a separate unit, in its informative sense is an abstract, which was formed in the 17th century, during the emergence of the modern Western society. The Latin word "individuum" is the translation of the Greek word "atom", which means "inseparable", because man originates and exists only as a result of interactions with other people and their influences. A child, who was brought up by wild animals (such cases have been known and studied) cannot be a human and cannot survive. The biological program of behavior put inside us is not enough for us to be a human. It is supplemented by cultural signs and corresponding symbols, the registered and associated programs. And it is viewed as a program of collective work [**12**, c. 14]. It follows from this that our behavior always depends on the influence of other people, and it is in principle impossible to protect us from that influence through some severe barriers. *The question arises what type of influence can be considered as manipulation.*

The explication of the term "political manipulation" has first of all negative connotation. By using it, we are referring to the impact (and first of all, the psychological impact) that drives us to perform some actions that are perceived as a failure or an inaccurate action by the evaluation of the results. To follow the process of the formation and development of the manipulation phenomenon, we think it is necessary to refer to the notion of "influence" and especially "psychological influence", which, as mentioned above, is a key feature of manipulation. In the modern Armenian explanatory dictionary, the word "influence" is presented as an action (to affect, to influence), an impression, an action aimed at someone to achieve something [**1**, c. 7]. Without considering it as necessary to deepen into the discussions of the notions of "influence" and "psychological influence" [**11**; **14**; **24**; **25**], it should be noted that influence is understood as a purposeful transfer of information and movement between interacting participants [**18**]. There are several strategies of influence: imperative (ordering, commanding, demanding, dictating), developing and manipulative.

An imperative strategy does not touch upon the deep structures of the individual, it rather supports the cognitive structures and as far as possible operates in extreme situations.

A developing strategy is oriented to the long-term outcome, the measurements of an individual, and is implemented in the process of long-term interpersonal communication with the people [**20**, c. 46].

The third of the considered strategies, i.e. the manipulative strategy, is the most interesting one, because it remains secretive and unnoticed by those to whom this manipulative influence is directed. Of course, not every influence we are subjected to can be considered as the manipulation. One of the first books dedicated to the manipulation is the work of German sociologist Herbert Franke "Manipulated Man" (1964). In this book, the author gives the following explanation to the manipulation: it can be understood as a secretly conducted psychological influence, therefore, it is harmful for the people to whom it is directed [**26**, c. 7]. Russian scientist Sergey Kara-Murza (born in 1939) also gives a similar characterization in his "Manipulation of Consciousness" work. According to him, in the

modern sense, the manipulation is understood as such a behavior of the masses' aspirations and opinions, their moods and even mental state planning, which is needed to those who possess manipulative tools [**13**, c. 24].

Other features of the manipulation of consciousness are also distinguished: ingenuity and concealment as ways of programming of human behavior [**12**, c. 14]. So, the person subjected to manipulation even should not know what kind of behavior the manipulator is trying to achieve. The ingenious actions applied by humans are presented as manipulative principles, management tools. And when all of these manipulative principles began to be applied in the human management technology, a modern manipulation process emerged and was formed as the programming of people, groups, aspirations, and opinions that are needed by those who possess the manipulation tools.

There are two main models of political manipulation: psychological and rational. The main characteristic of the first model is the use of an individual's mechanical response to one or another psychological motivation. In this case the essence of manipulation is conditioned by the selection of impulses acceptable for the operation of psychological mechanisms that are capable of producing the desired response for the manipulator.

Manipulation of the rational model is conducted rather through deception and deceit than through the use of psychological motivation.

The manipulation forms related to this model include the following:

a) reducing the amount of information accessible to an ordinary citizen;

2014թ. սեպտեմբերին Աստրախանում տեղի ունեցավ ափամերձ պետութ-յունների IV գագաթնաժողովը, որտեղ ստորագրվեց հայտարարություն Կասպից ծովի կարգավիճակը որոշելու հիմնական սկզբունքների մասին: Կնքվեցին միջկառավարական համաձայնագրեր ծովի շրջակա միջավայրի պահպանության և հիդրօդնրևութաբանության շուրջ: Քննարկման առարկա դարձան նաև հյուսիս-հարավ տրանսպորտային և երկաթուղային միջանցքի մասին մի շարք հարցեր: Գագաթնաժողովի ավարտական արձանագրության մեջ ամրապնդվեց նաև Կասպիական տարածաշրջանում երրորդ պետությունների ռազմական ուժերի ներկայության անթույլատրելիության հարցը, որը հատկապես բխում է Ռուսաստանի և Իրանի շահերից: Հարկ է նշել, որ գագաթնաժողովի ընթացքում երկկողմանի համաձայնագրեր կնքվեցին Ռուսաստանի, Ղազախստանի և Ադրբեջանի միջև, սակայն իրենց կարևորությամբ չեն կարող աչքի ընկնել, մինչև դրանց չմիանան Իրանը և Թուրքմենստանը:

2018թ. օգոստոսի 12-ին Ղազախստանի Ակտաու քաղաքում Կասպիական երկրների V գագաթնաժողովի ժամանակ հաստատվեց Կասպից ծովի շուրջ իրավական կոնվենցիա՝ 24 կետից բաղկացած, որն ապահովում էր ծովի նկատմամբ իրավական փաթեթ: Կոնվենցիայի II և III հոդվածներով կողմերը պարտավորվում են հարգել միմյանց ինքնիշխանությունը, Կասպից ծովի տարածքում բացառիկ իրավունքները, ինչպես նաև պահպանել ծովի շրջակա միջավայրը, անդրծովյան կյանքը: Առանձին կետերով անդրադարձ է կատարվում տարածաշրջանային կայունությանը նպաստելը, համաչափ զինմանը, միայն ափամերձ պետությունների դրոշի ներքո գտնվող նավերի ազատ և անվտանգ նավագնացությանը, քաղաքացիական օդանավերի անվտանգ և ազատ տեղաշարժին՝ համաձայն ՄՔԱԿ[16] օերնքների (հոդված III կետ 1, 2, 3, 4, 8, 9, 16): Հատկապես կարևոր է III հոդվածի 6-րդ կետը, որով հաստատվում է կողմերի համաձայնությունը բացառելու ոչ կասպիական՝ երորդ պետության զինված ուժերի ներկայությունը տարածաշրջանում: Ըստ կոնվենցիայի՝ Կասպից ծովի ջրային տարածքները պետք է բաժանվեն ներքին, տարածքային, ձկնորսական և ընդհանուր ծովային հատվածների (հոդված V): Պայմանագրի համաձայն՝

- Յուրաքնչյուր պետության ինքնիշխանությունը տարածվում է իր ցամաքային գոտուց մինչև տարածքային ջրեր՝ ընդգրկելով նաև օդային տարածքը (հոդված VI):
- Յուրաքանչյուր պետության տարածքային ջրերի խորությունը հաշվում է բնական ելակետից 15 մղոն խորությամբ դեպի ծով՝ ողջ տարածքի երկարությամբ: Կասպիական ավազանի հատակի բաժանումը պետք է տեղի ունենա երկրների միջև երկկողմանի պայմա-

[16] Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպություն:

նագրերի կնքման միջոցով՝ համաձայն միջազգային իրավունքի և օրենքների՝ հնարավորություն տալով այդ պետություններին իրականացնելու իրենց տարածքում էներգետիկ ռեսուրսների հետազոտումը և արդյունահանումը (հոդված VIII կետ 1)։

- Ձկնորսության համար սահմանվում է 10 մղոն խորությամբ տարածք՝ հաշվարկված տարածքային ջրերի սահմանի ելակետից։ Պետությունների միջև ձկնորսական գոտիների բաժանումը պետք է իրականացվի առանձին համաձայնագրերով՝ հիմք ընդունելով միջազգային իրավունքի նորմերը (հոդված IX կետ 1)։

Կասպից ծովի հատակի բաժանման հարցը միջկառավարական համաձայնությունների թողնելով՝ բավարարվում են իրանական կողմի որոշ սպասելիքներ։ Մեկ այլ կարևոր կետ է որևէ երրորդ պետության ռազմական ներկայության բացառումը կասպիական տարածաշրջանում՝ ակնարկելով ԱՄՆ և ՆԱՏՕ ուժերը, ինչը կարևոր է հատկապես Ռուսաստանի և Իրանի համար։ Կոնվենցիայով, փաստորեն, Կասպից ծովին որևէ կարգավիճակ չի տրվում, այսինքն՝ այն չի սահմանվում ո՛չ լիճ, ո՛չ էլ ծով, այլ անվանվում է «ներքին ջրային տարածք»։ Սա հնարավորություն է տալիս կոնվենցիայի շրջանակներում օրինականության ապահովմամբ շրջանցել ՄԱԿ-ի որոշ կանոնադրական դրույթներ։

Վլադիմիր Պուտինը պայմնագիրը ստորագրելիս նշեց, «…որ կասպիական տարածաշրջանը կարևոր ազդեցություն ունի Աֆղանստանի, Մերձավոր Արևելքի անվտանգության համար»։ Իրանի նախագահ Հասսան Ռոուհանին նշեց, «… որ պետությունները կասպիական համաձայնագրով կարևոր քայլեր են ձեռնարկել, սակայն պետք է փաստել, որ կան ավելի կարևոր հարցեր, որոնք պետք է արժանանան ուշադրության»։

Կասպից ծովի ջրային տարածքների բաժանման մեկ այլ խնդիր է ձկնորսության կազմակերպումը։ Համաշխարհային շուկայում վաճառվող սև խավիարի 80-90% արտահանվում է հենց այս շրջանից։ Հատկապես մեծ քանկությամբ խավիար են արտահանում Ադրբեջանը և Ղազախստանը։ Ինչպես նկատում ենք, կոնվենցիային այս հարցով ևս անդրադարձ կա՝ կարևորելով նաև լճում ջրերի մաքրության, բնական միջավայրի պահպանման հարցը։

Կասպից ծովի իրավական կարգավիճակի հարցը անընդհատ պատճառ է դառնում կոնֆլիկտների՝ հատկապես նավթագազային հանքերի շահագործման ոլորտում։ Հատկապես սուր են վեճերը Ադրբեջանի, Թուրքմենստանի և Իրանի միջև։

Կարճ ակնարկով անդրադառնանք նաև Կասպից ծովի տարածքում իրականացված և իրականացվող նավթագազային ծրագրերին և ԻԻՀ դիրքորոշմանը։ Նախապես նշենք, որ ԻԻՀ-ն Կասպից ծովի տարածքում դեռևս նավթագազային արդյունահանում չի իրականացնում։ Սրա հիմնական պատճառներից մեկը երկրի հարավում բավականին մեծ պաշարներ ունեցող հանքերն են, որոնց շահագործումը շարունակվում է առ այսօր։ Մյուս կարևոր պատճառը տեխնիկական հնարավորությունների սղությունն է՝ հատկապես ԱՄՆ կողմից միջազգային պատժամիջոցներից հետո, երբ Իրանը դժվարություններ ունի իր տնտեսական կյանքում, և բացի այդ դժվարանում է գնել ժամանակակից տեխնիկական միջոցներ, քանի որ պետության նավթագազային ոլորտը գտնվում է միջազգային պատժամիջոցների տակ։

Կասպից ծովի տարածքում առկա նավթագազային պաշարների նկատմամբ հետաքրքրությունները ձևավորում են ափամերձ պետությունների արտաքին օրակարգը։ Հատկապես սուր են Իրան-Ադրբեջան և Ադրբեջան-Թուրքմենստան հարաբերությունները լճի պաշարների յուրացման տեսանկյունից։

ՄԱԿ-ի ծովերի մասին կոնվենցիայի համաձայն՝ մայրցամաքային ելուստի նկատմամբ ափամերձ պետության իրավունքների մասին LXXVII հոդվածի I կետում նշվում է. «Ափամերձ պետությունը մայրցամաքային ելուստի նկատմամբ իրականացնում է ինքնիշխան իրավունքներ՝ դրա բնական պաշարների հետախուզման և շահագործման նպատակով» (Մաս VI, հոդված LXXVII, կետ I)։ Նույն հոդվածի II կետում նշվում է. «I կետում նշված իրավունքները բացառիկ են այն իմաստով, որ եթե ափամերձ պետությունը մայրցամաքային պետության հետախուզում չի իրականացնում կամ չի շահագործում դրա

բնական պաշարները, ոչ ոք չի կարող դա անել առանց ափամերձ պետության՝ որոշակիորեն արտահայտված համաձայնության» (Մաս VI, հոդված LXXVII, կետ II): «Ափամերձ պետությունն ունի բացառիկ իրավունք՝ թույլատրելու և կարգավորելու մայրցամաքային ելուստի վրա ցանկացած նպատակով կատարվող հորատման աշխատանքները» (Մաս VI, հոդված LXXXI):

1998թ. Ադրբեջանի և Իրանի միջև խնդիր առաջացավ Ալով (ադր)-Ալբորզ (պրս) հանքի շուրջ, որի նավթային պաշարները գնահատվում են շուրջ 2,6 մլրդ բարել, իսկ գազային պաշարները՝ շուրջ 2,4 մլրդ խորանարդ մետր: Ադրբեջանական կողմը նավթային կազմակերպություններից մեկի՝ Բրիթիշ Փեթրոլիումի (այսուհետ ԲՓ) հետ պայմանգիր է կնքում Ալով-Ալբորզի հանքաշերտը ուսումնասիրելու ուղղությամբ, սակայն սա առաջացնում է իրանական կողմի դժգոհությունը: Իրանը պահանջում է դադարեցնել ծովի այդ հատվածի ուսումնասիրմանը միտված որևէ տեսակի գործողություն՝ թողնելով այն մինչև կասպիական հարցի վերջնական կարգավորմանը: Ի պատասխան ադրբեջանական քայլերի՝ իրանական հետախու-զական նավերը նույնպես սկսեցին Ալով-Ալբորզի ուսումնասիրությունները: Իրավիճակը հատկապես սրվեց, երբ իրանական ռազմական ուղղաթիռները սպառնացին հարվածել ԲՓ-ի համար ուսումնասիրություններ անող նավերին, որից հետո ԲՓ-ն հրաժարվեց շարունակել ուսումնասիրությունները: Ալով-Ալբորզի հարցը շարունակվում է առկախ մնալ: Միայն 2016թ. Իլհամ Ալիևը և Հասսան Ռոուհանին Իրանում հայտարարեցին, որ իրենք հասել են որոշակի համաձայնությունների, սակայն որևէ մանրամասնություն չհրապարակեցին:

Տարածաշրջանային խոշոր նավթագազային ծրագրերից է Տրանս-կասպիական գազամուղը, որը հաճախ անվանում են «Հարավային գազային միջանցք»: Բանն այն է, որ եվրոպական պետությունները, ռուսական գազին այլընտրանք փնտրելով, կասպիական տարածաշրջանը ընկալում են որպես այլընտրանք: Դրան հատկապես նպաստում է Ադրբեջանի կողմից կառուցվող և գովազդվող Բաքու-Թբիլիսի-Էրզրում, Տրանսանատոլիական և Տրանսադրիատիկ գազամուղները[17]: Նպատակն է Ադրբեջանական գազը հասցնել Իտալիայի հարավ, որտեղից այն եվրոպական միացյալ գազամուղային համակարգի միջոցով կփոխադրվի ԵՄ անդամ մյուս պետություններ: Գազամուղը անցնելու է Ադրբեջանի, Վրաստանի, Թուրքիայի, Հունաստանի, Բուլղարիայի, Ալբանիայի, տարածքներով և Ադրիատիկ ծովի տակով հասնելու է Իտալիա: 2019. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը և Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը Էդիրնեում հանդիսավոր կերպով բացեցին TANAP գազամուղը, որը ձգվում է թուրք-վրացական սահմանից մինչև թուրք-հունական սահման: Գազային այս հսկայական ծրագիրը իրականացնելիս Ադրբեջանին հատկապես անհրաժեշտ կլինի բավարար քանակությամբ գազ ուղարկել Եվրոպա, որպեսզի մրցունակ լինի շուկայում: Քանի որ Ադրբեջանի արդյունաբերական հնարավորությունները չեն բավարարում եվրոպական շուկա անհրաժեշտ քանակությամբ գազ տեղափոխելու համար, Ադրբեջանը փորձում է այլընտրանքներ փնտրել, որոնցից մեկը հանդիսանում է էժան թուրքմենական գազը:

Տրանս-կասպիական գազամուղի ծրագրի իրականացման գաղափարը ծագել է դեռևս 90-ական թթ. երկրորդ կեսին, երբ Քլինթոնի վարչակարգը հայտարարեց տրանս-կասպիական գազամուղի ստեղծման նախաձեռնության մասին: Սկզբում Թուրքիան և Թուրքմենստանը ստորագրեցին գազը Թուրքիայի տարածքով փոխադրելու մասին հուշագիր, սակայն ֆինանսական և մի շարք այլ պատճառներով բանակցությունները այդպես էլ որևէ արդյունքի չհանգան: 2015թ. Աշխարհում Ադրբեջանի և Թուրքմենստանի նախագահները հանդես եկան հետաքրքրությամբ Կասպից ծովի տարածքով գազամուղ անցկացնելու շուրջ, որը ողջունեցին ԵՄ-ն և Թուրքիան:

Տրանս-կասպիական գազամուղի նախագիծը տնտեսապես և քաղաքականապես չի

[17] Սրանք մեկ ընդհանուր գազամուղի հատվածներ են, որը ձգվելու է Բաքվից մինչև Հարավային Իտալիա:Նախատեսվումէ սկզբնական շրջանում Եվրոպա արտահանել տարեկան մոտ 16 միլիոն խոր. մետր գազ, որի ծավալները հետագայում կընդարձակվեն ընդհուպ մինչև 31 միլիոն խոր.մետրի: Սկզբնական 16 միլիոն խոր. մետրի 6 միլիոնը կմնա Թուրքիայում, իսկ մնացած հատվածը կուղղվի դեպի Եվրոպա:

համապատասխանում Ռուսաստանի և ԻԻՀ հետաքրքրություններին, որոնք շարունակ բարձրացնում են կասպիական տարածաշրջանի վրա գազամուղի էկոլոգիական հետևանքների հարցը: Տնտեսության տեսանկյունից եթե ադրբեջանական գազը հասնի Եվրոպա, նրա հիմնական մրցակիցը լինելու է ռուսական գազը, ինչը Ռուսաստանի համար անընդունելի է: Իրանական կողմի համար անընդունելի է այն փաստը, որ տարածաշրջանային խոշոր նավթագազային ծրագիրը շրջանցում է իր տարածքը: Հայտնի «Նաբուկո» ծրագրի տապալումից հետո Իրանը ցանկանում է իր տարածքը՝ որպես տրանզիտային գոտի, տրամադրել թուրքմենական գազը Ադրբեջան հասցնելու և այնտեղից Եվրոպա փոխադրելու համար:

Կարելի է եզրակացնել, որ Իրանը ապագայում ևս շարունակելու է կասպիական քաղաքականության մեջ նվազագույն զիջումներով հասնել որոշակի արդյունքների: Կասպից ծովի հարցի շուրջ շարունակական բանակցությունները ցույց են տալիս, որ հարցի՝ բոլորի կողմերի համար հավասարապես ընդունելի լուծում այս պահին չկա: Ռուսաստանի և Ղազախստանի հետ այս հարցում Իրանը սկզբունքային որևէ հակասություն չունի: Մինչդեռ Ադրբեջանի և Թուրքմենստանի հետ տարվող բանակցություններում Իրանը ձգտում է ոչ միայն անմասն չմնալ տարածաշրջային նավթագազային ծրագրերից, այլ նաև ձգտում է ամեն կերպ սահմանափակել այս երկրների կողմից նոր հանքահորերի շահագործումը:

Ներկայումս Իրանը գտնվում է չափազանց ծանր տնտեսական պատժամիջոցների տակ, ԱՄՆ դուրս գալուց հետո միջուկային համաձայնագիրը գրեթե ձախողման եզրին է, շարունակական քաղաքական ճգնաժամերը Լիբանանում և Իրաքում, պատերազմները՝ Սիրիայում և Եմենում ստիպում են Իրանին իր ողջ ուժերը կենտրոնացնել այս ուղղություններով: Սրանից կարող ենք եզրակացնել, որ կասպիական տարածաշրջանում ստատուս քվոի պահպանումը այս պահին կենսական նշանակություն ունի Իրանի համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Chufrin G.**,"The Security of the Caspian Sea Region", Oxford, UK, 2001, pp.64-69
2. **Jenkins W. B.**, "Tariffs, Treaties, Trade: Integrating Tsarist Russian and Qajar Persian Markets under the Nineteenth Century Global Condition", London, 2019.
3. **Parker J. W.**, "Persian Dreams: Moscow and Tehran since the Fall of the Shah", Potomac Books, 2009, p 152.
4. **Васильева О. А.**, "Советско-Иранский Договор 1921 года", Елец, 2014. № 16 (187). Выпуск 29.
5. Ежемесячный аналитический дайджест Восточного партнерства, "Статус Каспийского моря. Долгожданная конвенция", N 4, 2018
6. **Բայբուրդյան Վ.**, «Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)», Երևան, 2005:
7. **Bahman Agha Diba**, "Baku Summit and New Policy of Iran in the Caspian Sea", 2010 http://www.payvand.com/news/10/nov/1211.html
8. Conference of Plenipotentiaries. http://www.tehranconvention.org/spip.php?article33
9. Convention on the Legal Status of the Caspian. http://en.kremlin.ru/supplement/5328
10. General Information on the First Caspian Economic Forum. https://www.mfa.gov.tm/en/cef
11. General Information on the First Caspian Economic Forum. https://www.mfa.gov.tm/en/cef
12. **Israelyan A.**, "Caspian Sea Summit", Orbeli Center, 2019. https://www.orbeli.am/en/post/107/2019-01-17/Caspian+Sea+Summit
13. Landmark Caspian Sea Deal Signed by Five Coastal Nations. https://www.theguardian.com/world/2018/aug/12/landmark-caspian-sea-deal-signed-among-five-coastal-nations
14. Turkey, Azerbaijan Inaugurate Gas Pipeline Project. https://www.aa.com.tr/en/europe/turkey-azerbaijan-inaugurate-gas-pipeline-project/1660062
15. UN Convention on the Law of Sea, Article 2 https://www.un.org/depts/los/convention_agreements/texts/unclos/closindx.htm
16. Месторождение Кашаган https://www.kbv.kz/project/
17. Договор о торговле и мореплавании между Союзом Советских Социалистических Республик и Ираном. http://docs.cntd.ru/document/901861932
18. Туркманчайский мирный договор http://doc.histrf.ru/19/turkmanchayskiy-mirnyy-dogovor/

Сдана/Հանձնվել է՝ 11.03.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 14.03.2020
Принята/Ընդունվել է՝ 19.03.2020

ПРАВО

Ազգային Ժողովի կողմից պետական բյուջեի ընդունման և կատարման նկատմամբ իրականացվող ֆինանսական վերահսկողության որոշ խնդիրներ 2015 թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում

Նալչաջյան Ռ. Գ.
ՀՀ պետական կառավարման ակադեմիա
Իրավագիտության ամբիոն, ասպիրանտ (Երևան, Հայաստան)
raffi.nalchajyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Ֆինանսական իրավունք, պառլամենտական ֆինանսական վերահսկողություն, պետական բյուջե

Некоторые вопросы финансового контроля за принятием и исполнением государственного бюджета со стороны Национального Собрания в контексте конституционных изменений 2015 года

Налчаджян Р. Г.
Академия государственного управления РА, кафедра юриспруденции, аспирант (Ереван, Армения)
raffi.nalchajyan@gmail.com

Резюме: В статье представлены некоторые вопросы финансового контроля за принятием и исполнением государственного бюджета Национальным Собранием в контексте изменений в Конституции РА 2015 года. Также проводится сравнительно-правовой анализ между изменениями в Конституции РА за 2005 год и 2015 год к принятию и реализации государственного бюджета, подчеркивая, что поправки 2015 года к Конституции Республики Армения расширили полномочия Национального Собрания по финансовому надзору над Правительством.
Ключевые слова: Финансовое право, парламентский финансовый контроль, государственный бюджет

Some Issues On Pariamentary Financial Control Over Adoption And Implemnetation Of State Budget In The Context Of The 2015 Constitutional Amendments

Nalchajyan R. G.
Public administration academy of RA, Chair of Law (Yerevan, Armenia)
raffi.nalchajyan@gmail.com

Abstract: The article presents some issues of financial control over the adoption and execution of the state budget by the National Assembly in the context of 2015 amendments to the Constitution of the Republic of Armenia. A comparative legal analysis is also carried out between the amendments to the Constitution of the Republic of Armenia for 2005 and 2015 for the adoption and implementation of the state budget, emphasizing that the 2015 amendments to the Constitution of the Republic of Armenia expanded the powers of the National Assembly for financial supervision of the Government.
Keywords: Financial law, parliamentary financial control, state budget

Պետական ֆինանսական վերահսկողություն իրականացնող մարմինների համակարգում իր ուրույն տեղ ու դերն ունի ՀՀ օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը, որը պայմանավորված է վերջինիս ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխություններով վերապահված վերահսկողական լիազորությունների բնույթով: Ըստ էության խորհրդարանական վերահսկողությունը հանդիսանում է երկրում սահմանադրական կարգի կայունության անմիջական պայման, պառլամենտարիզմի ինքնուրույն ինստիտուտ, որի միջոցով օրենսդիր մարմինը ոչ միայն ապահովում է օրենքների կատարումն ու պահպանումը, այլև վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ:

Հարկ է ընդգծել, որ խորհրդարանական վերահսկողության լիազորությունների շարքում անշուշտ իր կարևորությամբ առանձնանում է

վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ, որն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների 88-րդ հոդվածի 3-րդ մասում: Ըստ էության պետության ներսում օրենսդիր և գործադիր իշխանությունների իրական հարաբերակցությունն արտացոլվում է խորհրդարանական ֆինանսական վերահսկողության կառուցակարգի միջոցով, որն արտացոլում է նաև պետական ֆինանսների կառավարման վիճակը: Արդի ժամանակաշրջանում պետությունների խորհրդարանների հիմնական գործառույթների թվին է պատկանում պետության հիմնական ֆինանսական իրավական ակտի՝ պետական բյուջեի մասին օրենքի ընդունումը, ավելին՝ այն օրենսդիր մարմինների բացառիկ իրավասությունն է, ինչպես նաև դրա կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը:

ՀՀ Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների 88-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը ընդունում է պետական բյուջեն, իսկ 111-րդ հոդվածի համաձայն՝ վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման նկատմամբ, քննարկում և որոշում ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ: Հարկ է ընդգծել, որ Սահմանադրության փոփոխություններով պահպանվել է Կառավարության կողմից պետական բյուջեի կատարման մասին Ազգային ժողովին տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջը, սակայն ի տարբերություն ՀՀ Սահմանադրության 2005 թվականի փոփոխություններով սահմանված կարգավորման, ըստ որի բյուջետային վերահսկողության այս գործառույթը սահմանափակվում էր միայն պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը քննարկելով և հաստատելով[1], ապա բարեփոխված Սահմանադրությամբ առավել ուժեղացվել է Ազգային ժողովին վերապահված վերահսկողական այս գործառույթը՝ ամրագրելով պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության վերաբերյալ ցանկացած որոշում ընդունելու իրավունք: Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ այս գործառույթի ուժեղացումը նպաստում է պետական բյուջեի կատարման թափանցիկությանը և գործադիր իշխանության պատասխանատվության բարձրացմանը:

Արտասահմանյան պետությունների մեծամասնության օրենսդրությամբ ամրագրված է խորհրդարանի կողմից պետական բյուջեի նախագծի քննարկման և այն ընդունելու առանձնահատուկ ընթացակարգեր, այսինքն՝ բյուջետային գործընթացի կարգավորման ընթացակարգեր:

Առաջիններից էր Անգլիան, երբ XVI-XVII դարում համայնքների պալատի նիստերի ավարտին գանձապետարանի կանցլերը իր պայուսակից հանում էր համապատասխան օրինագիծը, և այս գործողությունը պայմանականորեն անվանում էին «բյուջեի բացում»[2]: Եվ արդեն XVII դարի վերջում Անգլիայում այն սկսեցին ներկայացնել որպես եկամուտների ու ծախսերի փաստաթուղթ, որը պետք է հաստատեր խորհրդարանը: 1791 թ. հետո բյուջետային օրենքի ընդունման գործընթացը լայն տարածում ստացավ, երբ Ֆրանսիայի Սահմանադրությունն ամրագրեց պառլամենտի կողմից բյուջեի հաստատման ընթացակարգ:

ՀՀ Սահմանադրության 110 հոդվածի համաձայն, Ազգային ժողովը, կառավարության ներկայացմամբ ընդունում է պետական բյուջեն, որը օրենքով սահմանված կարգով ներառում է պետության բոլոր եկամուտները և ծախսերը[3]: Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ներկայացումը, քննարկումը և ընդունումը տեղի է ունենում հատուկ բարդեցված ընթացակարգով, որը կարգավորվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով[4]:

Այսպես, ՀՀ կառավարությունը պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն ինսուն օր առաջ: ՀՀ-ում բյուջետային տարին սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին: Տվյալ բյուջետային տարվա համար բյուջետային գործընթացը սկսվում է ՀՀ վարչապետի կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում՝ տվյալ բյուջետային տարվա բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու օրը, ընդ որում ՝ նշված որոշման հիման վրա այդ որոշմամբ նախատեսված ժամկետերում կառավարությունը կազմակերպում է պետական բյուջեի նախագծի մշակման աշխատանքները: Այսինքն՝ պետական բյուջեն ընդունվում է մինչև բյուջետային տարին սկսվելը: Ի դեպ, այդ ժամ-

[1] Տե՛ս 2005 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդված:

[2] Տե՛ս հղումն ըստ համացանցի՝ https://finance.rambler.ru/other/40979798-kak-formiruetsya-federalnyy-byudzhet/:

[3] Նշված դրույթը բացառում է այսպես կոչված «արտաբյուջեների» գոյությունը, որը, սակայն լայնորեն կիրառվում է ՀՀ պետական կառավարման համակարգում, նույնիսկ 2015թ. սահմանադրական բարեփոխումներից հետո: Նշված խնդիրը դուրս է սույն հետազոտության առարկայի շրջանակներից, քանի որ այն պետական բյուջեի մաս չի կազմում:

[4] Տե՛ս [7, 20-րդ գլուխը] (ընդունվել է 16/12/2016թ)

կետում պետական բյուջեն չընդունվելու դեպքում, մինչև պետական բյուջեի ընդունումը, ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով[5]:

Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը քննարկվում է ընդհանուր կարգով, առանց տևողության սահմանման՝ օրենքով սահմանված ընթացակարգով[6]: Ի դեպ հարկ ենք համարում նշել նաև, որ պետական բյուջեի մասին օրենքում լրացում կամ փոփոխություն կատարելու մասին օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է հատուկ ընթացակարգով:

Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի չընդունման դեպքում Կառավարությունն Ազգային ժողով պետական բյուջեի նախագիծ է ներկայացնում քվեարկությունից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, որը քննարկվում և քվեարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված կարգով՝ մեկ ամսվա ընթացքում: Պետական բյուջեի հաստատման առնչությամբ, ՀՀ Սահմանադրության 157 հոդվածին համապատասխան, կառավարությունը կարող է Ազգային ժողովում դնել իր վստահության հարցը: Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշման նախագիծը քվեարկության է դրվում այն ներկայացվելուց ոչ ուշ, քան յոթանասուներկու ժամվա ընթացքում և ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ անվանական քվեարկությամբ: Կառավարությունն օրենքի նախագծի առնչությամբ իր վստահության հարցը նույն նստաշրջանի ընթացքում կարող է դնել ոչ ավելի, քան երկու անգամ: Եթե Կառավարությանը վստահություն հայտնելու մասին որոշումը ընդունվում է, ապա պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը համարվում է ընդունված որպես օրենք, իսկ եթե չի ընդունվում, ապա պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվում նոր Կառավարության ծրագիրը հաստատվելուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իսկ քվեարկության է դրվում ներկայացվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

Հարկ է ընդգծել, որ առ այսօր Ազգային ժողովի կողմից պետական բյուջեի մասին օրենքի նախագծի կապակցությամբ կառավարությանն անվստահություն հայտնելու որոշում չի ընդունվել: Միևնույն ժամանակ պետք է նկատել, որ երկշաբաթյա ժամկետում[7] պետական բյուջեի նախագիծը Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելը իրատեսական ժամկետ չէ, քանի որ պետական բյուջեի նախագիծը կազմվում է բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով կարգավորվող պետական բյուջեի նախագծի կազմման բավականին բարդ և մի քանի փուլերից բաղկացած գործընթացի արդյունքում: Ուստի եթե նախորդ կառավարության անվստահություն է հայտնվել պետական բյուջեի մասին օրենքի նախագծի կապակցությամբ, ապա առնվազն այն նշանակում է, որ **պետք է ներկայացվի նոր նախագիծ:**

Հարկ է ընդգծել, որ երկշաբաթյա ժամկետում պետական բյուջեի մասին օրենքի նախագծի ներկայացնելու այս կարգավորումը սահմանված է բացառապես պետական բյուջեի նախագծի մասին օրենքի առնչությամբ, ավելին՝ այս կարգավորումը սահմանված է բացառապես «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, ուստի անհրաժեշտ օրենքում այս մասով կատարել համապատասխան փոփոխություններ:

Ֆինանսական վերահսկողության բնագավառում ինչպես նշեցինք կարևորվում է խորհրդարանական (պառլամենտական) վերահսկողությունը, որն, առաջին հերթին, իրականացվում է ինչպես պետության հիմնական ֆինանսական իրավական ակտի՝ պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման և հաստատման, այնպես էլ դրա կատարման փուլերում, այսինքն՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվությունը քննարկելիս և հաստատելիս: Հետևաբար չափազանց կարևոր է նաև **պետական բյուջեի կատարման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության իրականացումը և այս համատեքստում հարկ է ընդգծել, որ այն որպես կանոն իրացվում է պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության ներկայացմամբ պառլամենտ:**

Պառլամենտի կողմից ֆինանսական վերահսկողության այս ձևը, մասնավորապես կառավարության կողմից պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության ներկայացում խորհրդարանի և վերջինիս կողմից քննարկման արդյունքներով դրա հաստատումը կամ մերժումը՝ համապատասխան իրավական հետանքներով նախատեսված է նաև Էստոնիա-

[5] Տե՛ս 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 110-րդ հոդվածի 3-րդ մաս:

[6] Պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման կարգը մանրամասն կարգավորված է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 88-90-րդ հոդվածներով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակարգը հաստատելու մասին» Ազգային ժողովի որոշման 66-րդ կետով

[7] 2002 թվականի փետրվարի 20-ին ընդունված և 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ուժը կորցրած «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածի համաձայն նախատեսված էր 10-օրյա ժամկետ:

յի, Ղազախստանի, Բուլղարիայի, Բելառուսի և այլ պետությունների սահմանադրական նորմերով: Այսինքն, որպես կանոն պետական բյուջեի կատարման պատասխանատուն կառավարությունն է, ու եթե հսկողությունը բյուջեի կատարման նկատմամբ իրականացնում է գործադիր իշխանությունը՝ ի դեմս կառավարության[8], ապա վերահսկողությունն իրականացնում է խորհրդարանը՝ պառլամենտ պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկմամբ և հաստատմամբ, ինչպես նաև քաղաքական գնահատականի տրմամբ կառավարության գործունեությանը պետական բյուջեի կատարման կապակցությամբ, հետևաբար պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը ժամանակակից երկրների օրենսդիր մարմինների կարևոր գործառույթներից է:

ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային Ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացած փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ բյուջեների կատարումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ համապատասխանաբար պետական և համայնքների բյուջեների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է: Այսինքն՝ պետական բյուջեի կատարումը՝ պետական մարմինների պետական բյուջե մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեությունն է, որի նկատմամբ է Ազգային Ժողովն իրականացնում վերահսկողություն:

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում՝ ա) «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված պահանջների կատարման նկատմամբ, բ) օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ, գ) բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության և հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությամբ:

Նշված օրենքի պահանջները, որը տարածվում է Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի բոլոր մակարդակների (առաջին մակարդակ՝ պետական բյուջե, երկրորդ մակարդակ՝ համայնքների բյուջեներ) բյուջեների վրա, ինչպես նաև բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության և հաստիքանախահաշվային կարգապահությունը վերահսկողության գործառույթի շրջանակներում ավելի լայն է, քան ՀՀ Սահմանադրության 111-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային Ժողովին պետական բյուջեի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Իսկ ըստ ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասի Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են բացառապես ՀՀ Սահմանադրությամբ, ուստի օրենքով սահմանված վերահսկողական լիազորության ընդլայնումը չի կարող բխել սահմանադրական վերը նշված նորմից: Այնուհանդերձ, պետական բյուջեի կատարման նկատմամբ Ազգային ժողովի վերահսկողությունը ըստ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ գլխի իրավակարգավորումների իրականացվում է հետևյալ միջոցառումների իրականացմամբ՝ 1) պետական բյուջեի կատարման, այդ թվում՝ նպատակային վարկային և դրամաշնորհային ծրագրերի, ընթացքի վերաբերյալ տեղեկանքների քննարկում, 2) պետական բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկում և որոշման ընդունում, 3) Հաշվեքննիչ պալատի ընթացիկ եզրակացությունների (պետական բյուջեի երեք, վեց և ինն ամիսների կատարման վերաբերյալ) քննարկում, 4) օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ, 5) բյուջետային պարտավորությունների կատարման, բյուջետային միջոցների ծախսման օրինականության և հաստիքանախահաշվային կարգապահության պահպանման ուղղությամբ:

Այսպես, ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 40 օրվա ընթացքում տեղեկանք է ներկայացնում Ազգային ժողով պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ[9]: Տեղեկանքը (նաև էլեկտրոնային տարբերակով)՝ ներկայացվում է բյուջետային դասակարգման և տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքի կառուցվածքին համապատասխան: Իրավասու մշտական հանձնաժողովն[10] իր նիստում քննարկում է պետական բյու-

[8] Պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանված է [**8**] որոշմամբ:

[9] Տե՛ս, [**7**, 20-րդ գլուխ] (ընդունվել է 16/12/2016թ):

[10] «ՀՀ Ազգային ժողովի յոթերորդ գումարման մշտական հանձնաժողովներ ստեղծելու մասին» ՀՀ ԱԺ որոշման համաձայն իրավասու մշտական հանձնաժողովը Ազգային ժողովի ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովն է:

ջեի կատարման ընթացքի վերաբերյալ Կառավարության ներկայացրած տեղեկանքը[11]: Հարկ է նշել, սակայն, պետական բյուջեի կատարման տարեկան վերահսկողությունը կենտրոնանում է պետական բյուջեի կատարման հաշվետվության քննարկման, այն հաստատման կամ չհաստատելու խնդրի վրա: Ազգային ժողովում տարիներ շարունակ որոշ իմաստով անտեսվել է ընթացիկ վերահսկողությունը, ինչն աշխարհում, երբեմն ավելի կարևոր է համարվում, քանի որ այն հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով հետևել կատարման ընթացքին և անհրաժեշտության դեպքում օպերատիվ և արագ արձագանքել ի հայտ եկած խնդիրներին: Կարծում ենք, պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ վերահսկողության գործառույթի կիրարկման անհրաժեշտությունը կա պայմանավորված վերը նշված հանգամանքներով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 116-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կառավարությունը յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը՝ պաշտոնապես և էլեկտրոնային տարբերակով, ինչպես նաև դրա վերաբերյալ Կենտրոնական բանկի կողմից Կառավարություն ներկայացրած պաշտոնական եզրակացությունն Ազգային ժողով է ներկայացնում մինչև հաջորդ տարվա մայիսի 1-ը: Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներկայացվում է Հաշվեքննիչ պալատի եզրակացության և Կենտրոնական բանկի կողմից[12] Կառավարություն ներկայացրած պաշտոնական եզրակացությունն առկայությամբ[13]: Ազգային ժողովը քննարկում և որոշում է ընդունում պետական բյուջեի կատարման մասին Կառավարության կողմից ներկայացվող տարեկան հաշվետվության վերաբերյալ, որը Ազգային ժողովում քննարկվում և քվեարկության է դրվում մինչև հերթական նստաշրջանի ավարտը[14]:

Պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը ներառում է՝

1. տեղեկություններ հաշվետու տարում հարկաբյուջետային քաղաքականության և համապատասխան օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ, որոնք ազդել են պետական բյուջեի կատարման արդյունքների վրա.
2. պետական բյուջեի եկամուտների, ծախսերի և դեֆիցիտի (հավելուրդի) հիմնավորվածությունը, դրանց համեմատական վերլուծությունը հաշվետու տարվան նախորդող տարվա փաստացի, ինչպես նաև հաշվետու տարվա համար հաստատված և փաստացի կատարված համապատասխան ցուցանիշների նկատմամբ.
3. տեղեկություններ հաշվետու տարում կառավարության պահուստային ֆոնդից կատարված ծախսերի ուղղությունների և չափերի մասին՝ համապատասխան հիմնավորումներով.
4. տեղեկություններ հաշվետու տարում պետության արտաքին և ներքին պարտքերի և դրանց սպասարկման վերաբերյալ[15].
   4.1. պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանված բյուջետային ելքերը ծրագրային ձևաչափով ներկայացնող՝ ՀՀ կառավարության հաստատած փաստաթղթի մաս կազմող գերատեսչական տարեկան ծրագրերով նախատեսված արդյունքների կատարման վերաբերյալ[16].
   4.2. պետական մարմինների կողմից պետական լիազորված մարմին ներկայացված տարեկան հաշվետվությունների համապատասխան տեղեկություններն այդ մարմինների գծով հաշվետու բյուջետային տարվա պետական բյուջեի մասին օրենքով նախատեսված ծրագրերի և ծրագրերի միջոցառումների գծով կառավարության սահմանած արդյունքային (կատարողական) ցուցանիշների կա-

[11] Տե՛ս, [**7**, 114-րդ հոդվածը] (ընդունվել է 16/12/2016թ):

[12] «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված:

[13] Վերջիններիս առավել մանրամասն կանդրադառնանք հաջորդ պարագրաֆներում:

[14] Տե՛ս [**7**, «116-րդ հոդվածի 2-րդ մաս] (ընդունվել է 16/12/2016թ), Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների 111-րդ հոդվածի 2-րդ մաս:

[15] Տե՛ս [**9**] (ընդունվել է 2008 թվականի մայիսի 26-ին): Ըստ նշված օրենքի՝ պետական պարտքը՝ Հայաստանի Հանրապետության անունից և ՀՀ կենտրոնական բանկի անունից (բացառությամբ ռեզիդենտների հանդեպ Կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է: Այն լինում է արտաքին՝ ՀՀ անունից և Կենտրոնական բանկի անունից ՀՀ ոչ ռեզիդենտների և օտարերկրյա պետությունների հանդեպ ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը, և ներքին՝ ՀՀ անունից՝ կառավարության լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտների հանդեպ փոխառության կամ վարկային պայմանագրերի հիման վրա ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարը:

[16] ***«4.1.» կետի դրույթներն իրենց ուժը կորցնում են Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հաստատելու օրը:***

տարման վերաբերյալ.

5. այլ տեղեկություններ, որոնք կառավարությունն անհրաժեշտ է համարում պետական բյուջեի կատարման արդյունքները ներկայացնելու և հիմնավորելու համար [**10**]:

Հաշվի առնելով վերոշարադրյալը պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը, կարծում ենք, պետք է հիմնված լինի մի շարք սկզբունքների վրա՝ 1) ***անընդհատությունը և հետևողականությունը***, *2)* ***էականությունը,*** *այսինքն՝ տեղեկատվությունը պետք է ազդի կայացրած տնտեսական որոշումների վրա., 3)* ***միասնականությունը,*** *այսինքն՝ գործառույթներով (ֆունկցիաներով) նման հաշիվների հաշվետվությունում պետք է միավորվեն, եթե դրանց առանձին ներկայացումը չի պարունակում էական տեղեկատվություն, 4)* ***արժանահավատությունը,*** *այսինքն՝ տեղեկատվությունը պետք է լինի չեզոք՝ զերծ լինի կանխակալ արդյունք ստանալու նպատակով տեղեկատվության ընտրվի ներկայացումից, օբյեկտիվորեն ներկայացնել փաստերը, 5)* ***ամբողջականությունը,*** *այսինքն՝ տեղեկատվությունը պետք է ներառի պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը լրիվ ծավալով և դրանց օրինականության հիմնավորվածությունը, 6)* ***հստակությունը,*** *այսինքն՝ հաշվետվության լեզուն պետք է լինի ըմբռնելի և հասկանալի, պետական բյուջեի կատարման վերաբերյալ տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի այն օգտագործողներին և ընթերցողներին, 7)* ***հրապարակայնությունը:***

Հարկ է ընդգծել, որ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումը իրականացվում է երկու փուլով՝ նախնական քննարկում և բուն քննարկում:

Ազգային ժողովի նիստում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկման կարգը սահմանված է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 118-րդ հոդվածում: Քննարկումից հետո քվեարկության է դրվում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը: Որոշման ընդունման դեպքում հաշվետվությունը համարվում է հաստատված, իսկ չընդունման դեպքում՝ մերժված:

Հարկ է ընդգծել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքը չի կարգավորում այն հարցը, երբ քվեարկության դրված պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում և արդյունքում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համարվում է մերժված: Այսինքն՝ ինչ իրավական հետևանքներ են առաջանալու, երբ պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համարվում է մերժված կարգավորված չէ օրենսդրությամբ, իսկ դա չի ապահովում Ազգային ժողովի կողմից վերահսկողության լիարժեք իրացում:

Նախկին «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 89-րդ հոդվածի 5-7-րդ մասերի դրույթների համաձայն՝ եթե բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին առաջարկությունը քվեարկության արդյունքում չէր ստանում ընդունման համար անհրաժեշտ թվով ձայներ, ապա ՀՀ կառավարությունը կարող է բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման առնչությամբ դնել իր վստահության հարցը: Հատկանշական է սակայն այն, որ եթե ՀՀ կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ չի ներկայացվում, կամ նման որոշում չի ընդունվում, ապա ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված, իսկ եթե ՀՀ կառավարությանն անվստահություն է հայտնվում, ապա ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված: Այսինքն՝ երկու դեպքում էլ ներկայացված հաշվետվությունը համարվում է հաստատված, և փաստորեն, օրենսդիրը նախկինում նույնիսկ չի սահմանել հաշվետվությունը չհաստատելու հնարավորություն: Խնդիրը չի կարող լուծվել պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատման առնչությամբ Կառավարության կողմից վստահության հարցը դնելու կարգավորում սահմանելով, քանի որ նման օրենսդրական կարգավորումը, անշուշտ, կհակասի սահմանադրական նորմերին, քանի որ ՀՀ կառավարության կողմից վստահության հարցը դնելու նման ընթացակարգ կամ հիմք ՀՀ Սահմանադրությունը չի նախատեսում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք Ազգային ժողովի կանոնակարգ» ***ՀՀ սահմանադրական օրենքում սահմանել դրույթ, ըստ որի, եթե պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը չի ընդունվում և արդյունքում պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը համարվում է մերժված, ապա այն հետ է ուղարկվում Կառավարություն առնվազն մեկ ամսյա ժամկետում վերացնելու հաշվետվությունում առկա անարժանահավատ, թերի կամ ոչ լիարժեք տեղեկատվությունը և կրկին այն ներկայացնելու Ազգային ժողով:***

Օգտագործված գրականության ցանկ

1. **Anthony Comfort**, 1999 "Parliamentary control of budget implementation", working document for European Parliamnet.
2. **Ian Lienert**, 2010 "Role of the Legislature in Budget Processes", technical notes and manuals for International Monetary Fund.
3. **Joachim Wehner**, 2010 "Effective Financial Scrutiny: The Role of Parliament in Public Finance" World Bank Parliamentary Staff Training Program,
4. ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխությունների 77-րդ հոդված,
5. ՀՀ Սահմանադրության 2015թ. փոփոխությունների 110-րդ հոդվածի 3-րդ մաս,
6. https://finance.rambler.ru/other/40979798-kak-formiruetsya-federalnyy-byudzhet,
7. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք:
8. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 11-ի N 1112-Ն որոշում,
9. «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս,
10. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված 2-րդ մաս:

Сдана/Հանձնվել է՝ 21.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 25.02.2020
Принята/Ընդունվել է՝ 29.02.2020

Մասնավոր անձի կողմից իրականացվող մեղադրանքը մայրցամաքային քրեադատավարական համակարգի երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա)

Ղազարյան Ա. Ա.
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական դատավարության ամբիոնի ավագ դասախոս (Երևան, Հայաստան)
artakghaz@gmail.com

Վճռորոշ բառեր՝ մասնավոր մեղադրանք, ժողովրդական մեղադրանք, մասնավոր անձի կողմից իրականցվող մեղադրանք, պետական մեղադրանք մայրցամաքային քրեադատավարական համակարգ

Обвинение, осуществляемое частным лицом, в континентальной уголовно-процессуальной системе (Германия, Франция)

Казарян А. А.
Кафедра уголовного процесса Академии Образовательного комплекса полиции РА (Ереван, Армения)
artakghaz@gmail.com

Резюме: в статье обсуждаются вопросы обвинения, осуществляемого частным лицом, в государствах континентальной уголовно-процессуальной системы. Автор, в частности, анализирует доктринальные взгляды на внедрение обвинения, осуществляемого частным лицом, в Германии и Франции, а также влияние данного процесса на позитивное право этих стран.
Ключевые слова: частное обвинение, народное обвинение, обвинение, осуществляемое частным лицом, государственное обвинение, континентальная уголовно-процессуальная система

Prosecution Carried Out by a Private Person in the Continental Criminal Procedure System (Germany, France)

Ghazaryan A. A.
The Criminal Procedure Department of the Academy of the Educational Complex of RA Police (Yerevan, Armenia)
artakghaz@gmail.com

Abstract: In the article discusses the issues of prosecution carried out by a private person in the countries of the continental criminal procedure system. The author, in particular, analyzes the doctrinal views on the implementation of prosecution carried out by a private person in Germany and France and reveals how they influenced the positive law of these countries.
Keywords: private prosecution, actio popularis, public prosecution, prosecution carried out by a private person, continental criminal procedure system

Գերմանիա

Պետական մեղադրանքի մենիշխանության վտանգները[1] Գերմանիայում շատ վաղուց էին

[1] Պետական մեղադրանքի մենիշխանությունը որոշակի բացասական հետևանքներ է ունենում: Նախ՝ առաջանում է մեղադրանքի «քաղաքականացվածության» վտանգը, որը կարող է արտահայտվել ինչպես «դրական», այնպես էլ «բացասական» եղանակով (օրինակ, երբ քրեական հետապնդում իրականացվում է որոշակի քաղաքական դրդապատճառներից ելնելով, կամ հակառակը՝ նույն դրդապատճառներից ելնելով՝ քրեական հետապնդման հիմքերի առկայության դեպքում քրեական հետապնդում չի իրականցվում և/կամ այն դադարեցվում է): Երկրորդ՝ պետական մեղադրանքի մենիշխանությունը փաստացիորեն «դուրս է մղում» հանրությանը հանցագործությունների և դրանք կատարած անձանց բացահայտման և հետապնդման գործից. Այդպիսով հասարակությունը (դրա անդամները) քրեական հետապնդման գործում սկսում է զբաղեցնել «երկրորդական», «պասիվ» դեր՝ հանցագործությանն արձագանքելու ակտիվ դերակատարի գործառույթը վերապահելով պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց: Քրեական հետապնդման գործում «դերերի» այդպիսի բաշխումն իր հերթին ձևավորում է ընդհանուր այն մտայնությունը, որ հանցագործությանը արձագանքելը ոչ թե հանրության, այլ պետության, դրա առանձին մարմինների և ոչ թե հասարակության անդամների գործն է: Այդպիսի մտայնությունը նպաստում է հասարակության անդամի մոտ հանցագործության (այն կատարած անձի) բացահայտման ու հետապնդման (պատասխանատվության ենթարկելու) հանդեպ «անտարբերության» գիտակցության ձևավորմանը և որպես հետևանք

հասկացել: Արդեն 1800-ականների երկրորդ կեսերից գիտական մի մեծ շարժում սկսվեց պետական մեղադրանքի մենիշխանությունը զսպելու համար՝ քրեական հետապնդմանը մասնավոր անձանց մասնակցությունը ապահովելու եղանակով:

Այս առումով տեղին է հիշատակել գերմանացի նշանավոր իրավաբան Լ. Բարի՝ դեռևս 1875 թ.-ին արված արձանագրումը, համաձայն որի պետական մեղադրանքի մենիշխանության վերացումը և քրեական հայցի իրավունքի վերապահումը մասնավոր անձանց պետք է դառնա առաջնային անհրաժեշտություն այն պետության համար, «որը ցանկանում է այսուհետ կոչվել իրավական և ոչ թե ոստիկանական պետություն» [**5**, էջ 8]: Ե՛վ պրակտիկ աշխատողների, և՛ գիտնականների շրջանում ծավալվեցին քննարկումներ այն մասին, թե ի՞նչ կերպ պետք է կազմակերպվի մասնավոր անձանց կողմից իրականացվող քրեական հետապնդումը՝ մասնավոր մեղադրանքի (տուժողի (նրա ընտանիքի անդամների և այլն) կողմից իրականացվող մեղադրանքը, որով վերջինս ուղղակիորեն պաշտպանում է իր մասնավոր շահերը), թե՞ ժողովրդական մեղադրանքի (հանրության (քաղաքացիների, նրանց միավորումների) կողմից իրականացվող մեղադրանքը, որն անմիջականորեն ուղղված է հանրային շահի պաշտպանությանը) ձևով[2]:

Իրավաբանների այն խումբը, ովքեր պնդում էին, որ պետք է ներդնել մասնավոր մեղադրանքը, գլխավորում էր ավստրիացի նշանավոր իրավաբան Հ. Գլազերը: Վերջինս գտնում էր, որ իր դեմ կատարված հանցագործությամբ տուժողը ձեռք է բերում մասնավոր շահ, այն է՝ հանցանք կատարած անձին պատասխանատվության ենթարկելու շահը: Եվ պետությունը կարող է արգելել մասնավոր վրեժը, բայց չի կարող արգելել տուժողի շահի «արդարացի բավարարումը», ինչը հանդիսանում է պատժի կարևորագույն տարրերից մեկը, և որի կիրառման համար տուժողն ունի բոլոր քաղաքացիների՝ հասարակական կարգի պահպանության ապահովման ընդհանուր շահից ամբողջովին տարբերվող առանձնահատուկ մի իրավունք [**5**, էջ 3]: Այս հիմքերից էլ բխեցվում էր մասնավոր լրացնող և մասնավոր սուբսիդիար մեղադրանքների ներդրման անհրաժեշտությունը [**5**, էջ 3-4]:

Մյուսները, կողմնակից լինելով ժողովրդական մեղադրանքի ներդրմանը, իրենց հերթին քննադատում էին պետական մեղադրանքի մենիշխանությունը մասնավոր մեղադրանքով հաղթահարելու տեսակետը: Նրանք նկատում էին, որ հենց այն դեպքերում, երբ կարող է առաջանալ պետական մեղադրողի՝ քաղաքական դրդապատճառներով պայմանավորված կողմնակալության վտանգ, ապա հենց այդ հանցագործությունների դեպքում «տուժող» սուբյեկտ որպես կանոն չի լինում: Այս առումով Ռ.Գնեյստը հռետորական հարց էր բարձրացնում. արդյո՞ք կարող է ինքը տուժող համարվել, երբ դատախազը իր քաղաքական ընկերների համար օրենքը չի կիրառում: Արդյո՞ք կարող է ինքը տուժող համարվել, երբ օրենքը իր նկատմամբ կիրառվում է, բայց մեկ այլ՝ հովանավորություն վայելող անձի նկատմամբ՝ ոչ [**5**, էջ 11]:

Այս և այլ պատճառներով էլ առաջարկվում էր գերմանական դատավարությունում ներդնել ոչ թե մասնավոր, այլ ժողովրդական մեղադրանքը, որն, առավել արդյունավետ կերպով է լուծում իր առջև դրված խնդիրը՝ պետական մեղադրանքի մենիշխանության վերացումը՝ դրա բացասական հետևանքներով հանդերձ:

Սակայն իրավաբանների մի այլ խումբ, ովքեր հակադրվում էին ժողովրդական մեղադրանքի ներդրման մտքին, գտնում էին, որ ժողովրդական մեղադրանքի չարաշահման վտանգը կարող է ավելի մեծ վնասներ բերել, քան դատախազական կողմնակալությունը [**5**, էջ 20; **7**, էջ 448]:

Արդյունքում, ինչպես պնդում է պրոֆեսոր Ջ. Լանգբեյնը, լուծումը եղավ այն, որ որոշվեց քրեական դատավարությունում պահպանել

հանգեցնում է հասարակության ընդհանուր իրավագիտակցության անկմանը:

Երրորդ՝ հանցավորության աճի համընդհանուր միտումների և պետական ռեսուրսների սահմանափակվածության պայմաններում պետական մեղադրանքի դեպքում դժվար, իսկ շատ դեպքերում օբյեկտիվորեն անհնար է դառնում ապահովել կատարված յուրաքանչյուր հանցագործություն անպատասխան չթողնելու, յուրաքանչյուր հանցագործությամբ քրեական հետապնդում հարուցելու ու իրացնելու, որպես արդյունք՝ հանցանք կատարած անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարցերը:

[2] Մասնավոր անձի կողմից իրականացվող երկու մեղադրանքների՝ մասնավոր և ժողովրդական մեղադրանքների սահմանազատման մասին առավել մանրամասն [**1**, էջ 65-75]:

հանրային (պետական) մենիշխանությունը [**7**, էջ 448]:

Մեր ժամանակներում արդեն վիճակը որոշակիորեն այլ է:

Թեև Գերմանիայի Դաշնային Հանրապետության (այսուհետ՝ Գերմանիա) քրեական դատավարության օրենսգրքի[3] 152-րդ հոդվածի առաջին մասով ամրագրվում է պաշտոնականության սկզբունքը (*Offizialprinzip*), ըստ որի՝ հանրային հետապնդման առաջադրման (հարուցման) լիազորությունը վերապահված է դատախազությանը, սակայն այնուամենայնիվ այսօր որոշակիորեն *հաղթահարված է դատախազական մենիշխանությունը*:

Բանն այն է, որ այդ սկզբունքից արված են բացառություններ, և տուժողը ունի առանց դատախազին նախապես դիմելու որոշակի շրջանակի գործերով (Գերմանիայի քր. դատ. օր. 374-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով[4]) մասնավոր քրեական հետապնդում իրականացնելու իրավունք: Այս դեպքերում մասնավոր մեղադրողն ունի հանրային մեղադրանքի գործերով դատախազին վերաբերելի կարգավիճակ (Գերմանիայի քր. դատ. օր. 385-րդ հոդված): Նա ունի նաև քրեական հայցը տնօրինելու լիազորություն՝ դրանից հրաժարվելու միջոցով (երբ առկա է մեղադրյալի համաձայնությունը (Գերմանիայի քր. դատ. օր.391-րդ հոդված)):

Սակայն, մյուս կողմից, պետք է նշել, որ անգամ այս նեղ շրջանակի հանցագործություններով չի սահմանափակվում դատախազի՝ քրեական հետապնդման իրավասությունը. վերջինս ցանկացած պահի գործին ներգրավվելու լիազորություն ունի (Գերմանիայի քր. դատ. օր.377-րդ հոդված)[5]:

Բացի այդ Գերմանիայի քր. դատ. օր.-ում տեղ է գտել նաև մասնավոր անձանց քրեական հետապնդման մասնակցության մի այլ տեսակ՝ լրացնող մասնավոր մեղադրանքի տարատեսակը:

Այս դեպքում արդեն, թեև քրեական հետապնդումը հարուցվում է պետական պաշտոնատար անձի կողմից, սակայն որոշակի շրջանակի գործերով[6] («մասնավոր մեղադրանքի գործերի» ինստիտուտ (antragsdelikte) – Ա.Ղ.) տուժողը (նաև այլ անձինք[7]) իրավունք է ստանում ցանկացած պահի (395-րդ հոդվածի 4-րդ մաս) ներգրավվելու քրեական վարույթ՝ իբրև համամեղադրող:

Ու թեև այս պարագայում իբրև հիմնական մեղադրող հանդես է գալիս դատախազը, և տուժողը զրկված է լինում մեղադրանքը տնօրինելու լիազորությունից, սակայն վերջինս չի գտնվում դատախազից կախվածության մեջ: Ավելին՝ այս ինստիտուտի միջոցով նա փաստացի հնարավորություն է ստանում իր ակտիվ գործունեությամբ հսկողություն իրականացնել պետական մեղադրանքի վրա:

Վերոգրյալը թույլ է տալիս փաստելու, որ այսօր արդեն Գերմանիայում պետական մեղադրանքի բացարձակ մենիշխանությունը որոշակիորեն հաղթահարված է քրեական դատավարությունում մասնավոր մեղադրանքի տարբեր տեսակների ներդրմամբ:

Մյուս կողմից՝ նրանց մոտ բացակայում է ժողովրդական մեղադրանքի ինստիտուտը (կարելի է արձանագրել, որ «հաղթեցին» գլազերյան հայացքների համակիրները), և այս պայմաններում կարծես չլուծված է մնում քաղաքական կամ այլ դրդապատճառներով դատախազության կողմնակալության հարցը[8]:

---

[3] Այսուհետ նաև՝ Գերմանիայի քր. դատ. օր. https://bit.ly/2QOFXon [**10**].

[4] Օրինակ՝ բնակարանի անձեռնմխելիության խախտման, գույքը վնասելու, մարմնական վնասվածք հասցնելու, մասնավոր նամակագրության անձեռնմխելիության խախտման և այլ հանցագործություններով: Գերմանիայի քր. դատ. օր-ի 374-րդ հոդվածով թվարկված հանցագործություններով հանրային (պետական) մեղադրանք հարուցվում է դատախազության կողմից միայն այն ժամանակ, երբ գնահատվում է, որ հարուցումը բխում է հանրային շահից (376-րդ հոդված):

[5] Ինչպես պնդում են հենց իրենք՝ գերմանացի իրավաբանները, այս տեսակի մասնավոր մեղադրանքը փաստացի ունի առավելապես պետական ռեսուրսների տնտեսման նպատակ [**2**, էջ 333], հետևաբար նման մասնավոր մեղադրանքով, պետք է փաստել, որ չի կարող լուծվել պետական մեղադրանքի մենիշխանության վտանգները չեզոքացնելու խնդիրը:

[6] Գերմանիայի քր. դատ. օր-ի 395-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններով:

[7] Գերմանիայի քր. դատ. օր-ի 395-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով նախատեսվում է նաև որոշակի այլ անձանց՝ որպես համամեղադրող յուրահատուկ դեպքերում հանդես գալու հնարավորություն: Սակայն այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե ժողովրդական մեղադրանքի, այլ մասնավոր մեղադրանքի հետ, քանի որ իբրև համամեղադրող հանդես գալու պայմանը հանցագործությամբ վերջիններիս շահերի պատճառված վնասն է (օրինակ՝ իբրև լրացնող մասնավոր մեղադրող հանդես են գալիս սպանված տուժողի ծնողները, զավակները և այլ), և հետապնդումն այդ անձանց կողմից իրականացվում է հենց միայն իրենց շահերի պաշտպանության նպատակով:

[8] Այս խնդրի լուծումը նրանք փորձում են գտնել քրեական հետապնդման հարուցման օրինականության սկզբունքի (*Legalitätsprinzip*) ներդրմամբ (152-րդ հոդվածի 2-րդ մաս),

Ֆրանսիա

[133] **Эрбиль** (араб. اربيل; курд. Hewlêr; ново-ассирийск. Arbīl, аккадск. Arba-Ilu, др.-греч. Ἄρβηλα, англ. Erbil), также Арбиль и Ирбиль – административный центр одноименной мухафазы, столица Иракского Курдистана.

94.	колокольня	прицерковная	Находится перед церковью Св. Креста, **Erbil**	04.2019	
95.	пасторат		Находится рядом с церковью Св. Креста, **Erbil**	04.2019	
96.	ограда и ворота		Находится вокруг церкви Св. Креста, **Erbil**	2019	

Мухафаза Дахук (15) [134]

97.	комплекс	Духовно-образовательный	**Dohuk**[135]	2009	
98.	церковь	Св. Нерсес Шнорали	Находится в центре духовно-образовательного центра, **Там же**	Осн. 4.09.2008 Осв. 2009	
99.	мемориальная доска	С двадцатистрочной надписью на армянском[136] языке	Закреплена на стене внутри церкви Св. Нерсес Шнорали, **Там же**	2008	
100	колокольня	прицерковная	Находится перед входом в церковь Св. Нерсес Шнорали, **Там же**	2008	

[134] **Мухафаза Дахук** (курд. دهۆکی پارێزگای, араб. محافظة دهوك, арам. ܢܘܗܕܪܐ, Nohadra, англ. Dohuk Governorate) – мухафаза делится на 4 округа. Административный центр – город Дахук

[135] **Дахук** (курд. دهۆک, араб. دهوك асир. ܢܘܗܕܪܐ, Nohadra, англ. Duhok, Dohuk, Dehok или Dahok) – город, административный центр одноименной мухафазы.

[136] ՅՈՒՍՈՎՆ ԱՆՄԱՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ / Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ / ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ / ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ / Տ. ԱՒԱԳԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ, / ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ / ԱՐԴԵԱՄԲ ՏԻԱՐ ՍԱՐԳԻՍ ԱՂԱՃԱՆԻ / Ի ՀԱՄԱՆԷ ԿԱՌՈՒՑԱՒ / ՍԲ. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԵԿԵՂԵՑԻՍ / Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԱՋԳԻՍ ՀԱՅՈՑ / ՕՇՈՒՄՆ ԿԱՏԱՐԵՑԱՒ ՁԵՌԱՄԲՔ / Տ. ԱՒԱԳԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ, / ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՈՑ ԻՐԱՔԻ / Տ. ԱՇՈՏԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄՆԱՑԱԿԱՆԵԱՆ, / ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՈՑ ԵԳԻՊՏՈՍԻ / Տ. ԱՐՄԱՇՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ, / ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՅՈՑ ԴԱՄԱՍԿՈՍԻ / 5 ՍԵՊՏԵՄԲԵՐ 2008 / ՏՀՈՔ, ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔ

101	мемориал	В память 100-летия жертв Геноцида 1915 г.	Находится слева от входа в церковь Св. Нерсес Шнорали, **Там же**	2015	
102	хачкар	В память 100-летия жертв Геноцида 1915 г.	Находится в центре композиции мемориала, **Там же**	2015	
103	лапидарная надпись	Четырехстрочная на армянском[137] яыке	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	2015	
104	здание	Трехэтажное содержит офисы, общественный центр, воскресную школу и жилье (для нуждаю-щихся семей и молодоженов).	Находится во дворе духовно-образовательного центра, **Там же**	2009	
105	молельня		**Zakho**[138]	1926	Не сохранилась
106	церковь	Св. Богоматери	**Zakho**	1932 Рест. 1960 Осв. 1969	
107	мемориал	В память 100-летия жертв Геноцида 1915 г.	Находится во дворе церкви Св. Богоматери, **Там же**	2015	
108	хачкар	В память 100-летия жертв Геноцида 1915 г.	Находится в центре композиции мемориала, **Там же**	2015	
109	лапидарная надпись	Четырехстрочная на армянском[139] яыке	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	2015	
110	ограда и ворота		Находится вокруг церкви Св. Богоматери, **Там же**		

[137] Խաչքար / Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան / 100 ամեակին / 1915 - 2015

[138] **Захо** (араб. زاخو; курд.:,زاخو, англ. Zakho) – город, административный центр одноименного района в мухафазе Дохук, на границе с Турцией.

[139] Խաչքար / Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան / 100 ամեակին / 1915 - 2015

111	здание	Детский сад и начальная школа	Находится рядом с церковью, **Там же**	1968	
112	мемориальная доска	С надписью трехстрочной на арабском, четырехстрочной на армянском[140] и пятистрочной на английском[141] языках	Закреплена на стене здания детского сада и начальной школы, **Там же**	1968	
113	кладбище		**Там же**	XIX-XX вв.	
114	церковь	Св. Сергия	**Havrezc**[142]	1928	
115	школа	старая	Находилась на кращ селения, **Havrezc**	1958	
116	церковь	Св. Сергия	Находится рядом со старой школой, **Там же**	2010[143]	
117	хачкар	В память 100-летия жертв Геноцида 1915 г.	Находится рядом с церковью Св. Сергия, **Там же**	2015	
118	лапидарная надпись	Четырехстрочная на армянском[144] яыке	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	2015	
119	кладбище		Находится на окраине деревни, **Там же**		
120	церковь	Св. Вардан	Находится на холме на западной окраине села, **Avzrog Miri**[145]	2001[146]	

[140] ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ / ՍՈՅՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ ԵՒ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԸ / ՇԻՆՈՒԱԾ Է ԳԱԼՈՒՍՏ ԿԻԼԻՊԷՆԿԵԱՆ / ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ 1968 ին

[141] GULBENKIAN SCHOOL / PRIMARY & KINDERGARTEN / THIS SCHOOL BUILDING WAS CONSTRUCTED IN 1968 / BY KING DONATION OF / PHYLANTHROPIC CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

[142] **Хаврезк** (арм. Հաւրեզք, англ. Havrezc) – поселок в мухафазе Дохук (англ. Dohuk). Населен армянами, общей численностью ок. 120 семей. Село было основано в 1928 г. армянскими беженцами. В 1947 г. некоторые репатриировали. В 1974 г. село было уничтожено. В 2003 г. вновь было заселено бывшими жителями уехавшими в Багдад, Басру и Мосул.

[143] Построена при финансовой поддержке немецких церквей и CAPNI (Программа христианской помощи Северному Ираку).

[144] Խաչքար / Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան / 100 ամեակին / 1915 - 2015

[145] **Авзрук** (араб. أفزروك, арм. Աւզրուկ, курд. Avzarok, англ. Avzrog) – поселок в районе Дохук (англ. Dohuk) одноименного мухафаза. Основано в 1933 г. армянскими беженцами из села Газнар близ Вана. Ныне в селе проживает 55 армянских семей..

[146] Построена при финансовой поддержке благотворительной организации Каритас.

121	мемориальная доска	С двенадцати-строчной надписью на армянском[147] языке			
122	колокольня	прицерковная	Находится перед входом в церковь Св. Вардан, **Там же**	2001	
123	ограда и ворота	прицерковные	Находится вокруг церкви Св. Вардан, **Там же**		
124	мемориал	В память жертв Геноцида в 1915 г. с надписью по четыре строки на армянском[148] и арабском языках	Установлен во дворе церкви Св. Вардан, справа от ворот на кладбище, **Там же**	24.04.1962	
125	хачкар	В память 100-летия жертв Геноцида 1915 г.	Установлен во дворе церкви Св. Вардан, слева от ворот на кладбище, **Там же**	2015	
126	лапидарная надпись	Четырехстрочная на армянском[149] яыке	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	2015	
127	кладбище		Находится на окраине деревни, **Там же**	XX-XXI вв.	

Использованные шрифты: Estrangelo Edessa – сирийский.

Список использованной литературы

1. **Աբրահամյան Ա. Գ.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության: Հ. Բ: *Իրաքի հայ գաղթավայրը,* էջեր 34-53: – Եր.: Հայաստան հրատարակչություն: 1967: –424 էջ:
2. **Ալպոյաճեան, Արշակ**. Իրաքի հայերը: / խմբագրեց և հրատարակութեան պատրաստեց Վարդան Գրիգորեանը: – Եր.: 2003: – 202 էջ:

[147] *Է / ՅՈՒՍՈՎՆ ԱՆՄԱՀԻՆ ԱՍՏՈՒԾՈՅ / Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. / ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ / ԵՒ ՅԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ Տ. ԱՒԱԳԻ / ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍԱՏՈՒՐԵԱՆ / ԿԱՌՈՒՑԱԻ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ / Ի ԳԵՂՋՍ ԱՒԶՐՈՒԿԻ, Ի ՀԻՍԻՍԱՅԻՆ ԻՐԱՔ / ԱՐԴԵԱՄԲ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵՂԲԱՅՐԱԿՑՈՒԹԵԱՆ / Ի ԳԵՐՄԱՆԻԱ / ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 2000 _ 2001 թթ. / Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ*

[148] *ԱՊՐԻԼԵԱՆ /ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ /ՀՈՒՇԱՐՁԱՆԸ / 24 ԱՊՐԻԼ 1962*

[149] Խաչքար / Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան / 100 ամեակին / 1915 - 2015

3. **Ալպոյաճեան, Արշակ.** Պատմութիւն հայ գաղթականութեան: Հայերու ցրումը աշխարհի զանազան մասերը : Հատոր Բ : (Քրիստոսի ԺԱ. դարէն մինչեւ միջին դարու վախճանը): – Գահիրէ: տպ. Նոր Աստղ, 1955: – 724 էջ:
4. [**Աճառյան Հ.**]. Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի / Կազմ.՝ Հր. Յ. Աճառեան: – Վիեննա: տպ. Մխիթարեան, 1910: – 155 էջ:
5. **Գասպարյան, Սերգեյ Տ.** Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր: Մշակութային կյանքի ուրվագիծ: – Եր.: Հայպետհրատ: 1962: – 248 էջ:
6. **Դալլաքյան Կ.** Հայ սփյուրքի պատմություն (համառոտ ակնարկ): / Երեվանի «Հրաչյա Աճարան» համալսարանի մատենաշար: – Եր.: 2004: – 287 էջ:
7. **ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**: / Նյութեր հայ ժողովրդի պատմության: Գիրք 2. / Կազմ.՝ Լ.Ս. Խաչիկյան; ՀՍՍՌ ԳԱ Պատմ. ին-տ. – Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1950: – 758 էջ:
8. **ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ**: Մ. II (1451-1480թթ.) / Նյութեր հայ ժողովրդի պատմության; Գիրք 8. / Կազմ.՝ Լ.Ս. Խաչիկյան: ՀՍՍՌ ԳԱ Պատմ. ին-տ. – Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958: – 600 էջ:
9. **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան , հ. 3 [-] (խմբ. Մանուկյան Լ. Գ.): – Երևան, «Երևանի Համալսարանի Հրատարակչություն», 2001: – 992 էջ:
10. **Հայ եկեղեցի.** նվիրապետական աթոռներ, թեմեր: *Իրաքի թեմ:* էջ 144-146: – Եր.: Հայկ. հանրագիտարանի գլխ. խմբ.: 2001: – 220 էջ:
11. **Հայ Սփյուռք** հանրագիտարան: *Իրաք*, էջ 268-273: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2003: – 732 էջ:
12. [**Հովսեփյան Գ.**] Գարեգին Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո: Ցիշատակարանք ձեռագրաց: Չորս հատորով: Հ. Ա - Ե. դարից մինչեւ 1250 թ.: – Անթիլիաս: տպ. Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1951. =ՌՆ:
13. **Մայր դիւան Մխիթարեանց Վենետիկոյ** ի Ս. Ղազար 1707-1773 ի ծագմանէ ուխտիս մինչեւ ցբաժանումն Թրեստեան հարց / Ղեւոնդ Հ. Տայեան: – Վենետիկ: Ա. հ, 1930: – 352 էջ:
14. **Մալխասյան Մ.** Հայերն աշխարհում: – Եր., Հեղինակային հրատարակություն: 2007: – 144 էջ:
15. **Մանանդյան Հ.** Տիգրան Բ և Հռոմը *նոր լուսաբանությամբ ըստ սկզբնաղբյուրների*: / ԽՍՀՄ գիտությունների ակադեմիա - Հայկական ֆիլիալ; Պատմության յեվ հնագիտության ինստիտուտ: ԱՐՄՖԱՆ–ի հրատարակչություն: – Երևան, 1940: – 250 էջ:
16. **Մելքոնյան Վ.** Իրաք և հայերը: // «Հայրենիք» ամսագիր, 1946, հմ. 4.
17. **Սայեղեան, Ներսես Ծ. Վ.** Պատմական Ակնարկ Մը Հայ-Կաթողիկէ Հասարակութեան Վրայ յԻրազ: Էջեր 55-61: // «Աւետիք» Ամսական Պաշտօնաթերթ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան Տանն Կիլիկիոյ: – Պէյրութ: ԺԴ. Տարի, մայիս-օգստոս, 1945, թիւ 5-8:
18. **Տիշոեան Ե.** Հեթանոս Արշակունեաց Օրով: Էջեւ 737-738: // «Հայաստանի կոչնակ»: – Նիւ Եորք: ԼԹ տարի, Օգոստոս 5, 1939; թիվ 31:
19. **Քրիստոնյա Հայաստան** հանրագիտարան: *Իրաքի թեմ*: Էջ 407-408: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2002: – 1076 էջ:
20. **Геродот**. История в девяти книгах. / Перевод и примечания Г. А. Стратановского, под общей редакцией С. Л. Утченко. Редактор перевода Н. А. Мещерский. – Ленинград: изд-во «Наука», 1972. – 600 с. + карта.
21. **Елише**. Слово о войне армянской. / Перевод с древнеармянского академика И.А. Орбели, подготовка к изданию, предисловие и примечания К.Н. Юзбашяна. – Ереван, изд-во АН Арм. ССР, 1971.
22. **Киракос Гандзакеци**. История Армении. (Пер. Л. А. Ханларян). – М. Наука. 1976.
23. **Меликишвили Г. А.** Мусасир и вопрос о древнейшем очаге урартских племен. // ВДИ, 1948, нн 2
24. **Меликишвили Г. А.** Урартские клинообразные надписи . – Москва: Издательство АН СССР, 1960.
25. **Мовсес Каланкатуаци**. История страны Алуанк (в 3-х книгах). Перевод с древнеармянского Ш. В. Смбатяна. Институт древних рукописей им. Маштоца — Матенадаран. – Ереван. 1984.
26. **Пиотровский Б. Б.** Ванское царство (Урарту). / Отв. ред. И. А. Орбели. – Москва: Издательство Восточной литературы, 1959. – 286 с.
27. [**Себеос**]. История императора Иракла. Сочинение епископа Себеоса, писателя VII века (пер. К. Патканьяна). – М. 1862.
28. **Страбон**. География в 17 книгах. / Перевод, статья и комментарии Г. А. Стратановского под общей редакцией проф. С. Л. Утченко. Редактор перевода проф. О. О. Крюгер. – Ленинград: изд-во «Наука», 1964. – 944 с.
29. **Тер-Мкртичян Л. Х.** Армяне в странах Арабского Востока на современном этапе. *Научно-популярный очерк.*/ АН СССР Институт народов Азии, АН АрмССР сектор Востоковедения. – М.: Изд. Наука. Главная редакция восточной литературы. 1965. – 60 с.
30. [**Фавстос Бузанд**] История Армении Фавстоса Бузанда /пер. М. А. Геворгяна. – Ереван. Академия Наук Армянской ССР. 1953.
31. **Флавий Филострат**. Жизнь Аполлония Тианского = ΤΑ ΕΣ ΤΟΝ ΤΥΑΝΕΑ ΑΠΟΛΛΩΝΙΟΝ / Изд. подг. Е. Г. Рабинович; Отв. М. Л. Гаспаров. – М.: «Наука», 1985. – 328 с. – (Серия «Литературные памятники»).
32. **Bar-Hebraeus**, Barhebraei chronicon ecclesiasticum. 3 vols, ed. and transl. J.B. Abbeloos, T.J. Lamy. – Paris: Maisonnieuve, 1872–1877.

33. [**Tavernier**]. Les Six Voyages de JEAN BAPTISTE TAVERNIER, écuyer baron d'Aubonne, qu'il a fait en Turquie, en Perse, et aux Indes, pendant l'espace de quarante ans, & par toutes les routes que l'on peut tenir : accompagnez d'observations particulieres sur la qualité, la religion, le gouvernement, les coutumes & le commerce de chaque païs; avec les figures, le poids, & la valeur de monnoyes qui y ont court, Gervais Clouzier. – Paris, 1676.
34. [**Teixeira, Pedro**]. Relaciones de PEDRO TEIXEIRA d'el Origen, Descendencia y Succesión de los Reyes de Persia, y de Harmuz, y de un Viage hecho por el mismo Autor dende la India Oriental hasta Italia por tierra. En Amberes. En case de Hieronymo Verdussen. M.DC.X. (=1610). *Con Priuilego*.
35. **Times Printing and Publishing Co**. *Historial Mesopotamia.* – Basra: Times Printing and Publishing Co. 1922.
36. [**Valle, Pietro della**]. Viaggi di PIETRO DELLA VALLE, il pellegrino : descritti da lui medesimo in lettere familiari all'erudito suo amico Mario Schipano, divisi in tre parti cioè : La Truchia, La Persia, e l'India, colla vita dell'autore. – Brighton: G. Gancia, 1843. — Volume primo. – 896 p. Volume secondo. – 968.

Иордания (араб. الأردن, англ. Jordan), официальное название **Иорданское Хашимитское Королевство** (араб. المملكـــة الأردنيـــة الهاشـــمية, англ. Hashemite Kingdom of Jordan) – арабская страна на Ближнем Востоке. Столица и крупнейший город – Амман. Государство разделено на 12 мухафаз (губернаторств), которые в свою очередь делятся на 52 района.

История. **География**.

Территория сегодняшней Иордании будучи диффузионной территорией по отношению к автохтонной территории, армянам была знакома с древнейших времен. Возникшие на территории страны общины периодически пополнялись, особенно после возникновения Киликийского армянского царства и появления в регионе крестоносцев.

Тем не менее общины были не большие и каких-либо существенных следов не оставили.

В XX в. общины значительно пополнились в следствии трагических событий геноцида в Османской империи, а затем после создания государства Израиль, с последующими за тем арабо-израильскими войнами. К тому времени в Иордании проживало ок. 6 тыс. армян, из коих ок. 4 тыс. проживало в столице. Во второй половине XX в. в следствии перманентных арабо-израильских конфликтов армяне стали покидать неблагонадежный регион.

Основным центром сосредоточения был и остается Амман[150]. Значительно более мелкие общины имелись также в других городах страны, таких как Маан[151], Эль-Карак[152], Эт-Тафила[153], ныне сохранились малочисленные общины лишь в городах Акаба[154], Ирбид[155], Эз-Зарка[156] и Эр-Русейфа[157] (общей численностью ок. 400 чел.).

---

[150] **Амман** (араб. عمان, англ. Amman) – город, административный центр одноименной провинции (мухафазы) и столица страны

[151] **Маан** (араб. معان, англ. Maan) – город, административный центр одноименного мухафаза.

[152] **Эль-Карак** (араб. الكـرك, англ. Karak) – город, административный центр и крупнейшим населённым пунктом одноимённой мухафазы.

[153] **Эт-Тафила** (араб. الطفيلـــة, англ. At Tafilah) – маленький городок, административный центр одноименного мухафаза.

[154] **Акаба** (араб. العقبـــة, англ. Aqaba) – город-порт

[155] **Ирбид** (араб. إربد, англ. Irbid), город, административный центр одноименного мухафаза.

[156] **Эз-Зарка** (также **Зарка**) (араб. الزرقـاء, англ. Zarqa) – город, административный центр одноименного мухафаза.

[157] **Эр-Русейфа** – пригород Аммана.

В середине XX в. в Иордании проживало ок. 8 тыс. армян [**5**, с. 60; **8**, с. 39]

Ныне в Иордании проживает ок. 3 тыс. армян, из коих в столице ок. 2,6 тыс. [**5**, с. 61]

Церковь. **Образование**.

Армяно-апостольская община Иордании находится под юрисдикцией армянского Иерусалимского патриаршества ААЦ. При церкви функционировали две школы, одна из которых, Гетумян (состояла из детского сада и подготовительных классов), закрылась в следствии эмиграции.

В стране действует также армяно-католическая община, имеющая одну церковь со школой.

Действует также армяно-евангелистская община содержащая одну школу.

Организации.

В Аммане действуют несколько общественных, благотворительных и спортивных организаций, таких как: “Национальный спортивный союз”, “Армянский молодежный союз”, “Культурный союз”, филиал “Общеармянского благотворительного союза” (ՀԲԸՄ) и т. д.

СМИ.

В столице страны издаются два наименования периодики: “Андрадарц” (арм. Անդրադարձ) (1993, орган Национального спортивного союза) и “Св. Фаддей” (арм. Սուրբ Թադեոս) (1997, орган кафедры ААЦ) [**4**, с. 368].

Таблица-перечень памятников архитектуры и топонимики в Иордании

№	Объект	Наименование	Адрес и контакты	Год	Вид
1.	*квартал*	Армянский	Djebel Ashrafieh, Hay al-Armani quarter, **Amman** 11118		
2.	здание	Пасторат, епархиальный центр	P.O. Box 186, Djebel Ashrafieh, Hay al-Armani quarter, **Eastern Amman** 11118 Tel.: (962-6) 47-53000 Fax: (962-6) 47-40550		
3.	церковь	Св. Фаддея	P.O. Box 186, Djebel Ashrafieh, Hay al-Armani quarter, 4 **Amman** 11118 Tel.: (962-6) 47-75261 Fax: (962-6) 47-40550	1968	
4.	памятник	Хачкар [**2**, с.79]	Во дворе церкви Св. Фаддея, Djebel Ashrafieh, **Amman**	2005	
5.	мемориальная доска	С шестистрочной надписью на армянском[1] языке	Установлена перед хачкаром, **Там же**	2005	

[1] ԿԱՌՈՒՑԱՒ ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ԾԱԽԻՒՔ / Գէորգ եւ Մարի Տաքէսեաններու / Ի Ցիշատակ իրենց Ծնողաց / Յարութիւն եի Արեւալուս Տաքէսեաններու / Սուրեն եւ Արփինէ Էթեէմէղեաններու / ԱՄՄԱՆ 2005

6.	ограда и ворота	прицерковные	Установлена вокруг епархиального центра, **Amman**		
7.	школа	Гетумян	**Amman**		до 1965
8.	школа	Юзбашьян-Гюльбенкян	Находится рядом с церковью Св. Фаддея, Djebel Ashrafieh, **Amman** Тел.: 4775261	1962	
9.	мемориальная доска	Надпись на трех языках: трестрочная на арабском, и по две строки на английском[2] и армянском[3]	Установлена на ограде, **Там же**		
10.	здание	Клуб “Национального спортивного союза”	Находится рядом с церковью Св. Фаддея, Djebel Ashrafieh, **Amman**		
11.	мемориальная доска	Билингва по четыре строки на армянском[4] и английском[5] языках	Находится в здании Клуба “Национального спортивного союза”, **Там же**	2001	
12.	кафедральная церковь	Армянская католическая	P.O. Box 10046 Djebel Ashrafieh, Hay al-Armani quarter, **Amman** Tel.: (962-6) 77-1331	Осв. 1952	
13.	школа	Свв. Саак-Месроб	При католической церкви, **Amman** Tel.: (962-6) 77-1321		

[2] Armenian Orthodox School and Kinders wrten / Established in 1962
[3] Իւզպաշեան Կիւլպէնկեան Ազգ. Վարժարան / Հիմնադրուած 1962
[4] ՓԱՆՈՍԵԱՆ ՍՐԱՀ / ՍՈՒՅՆ ՍՐԱՀԸ ԿԱՌՈՒՑՈՒԵՑԱՒ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԵԱՄԲ / ՏԷՐ ԵՒ ՏԿՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՒ ՀԵՐՄԻՆ ՓԱՆՈՍԵԱՆՆԵՐՈՒ / 2001 ԹՈՒԱԿԱՆ
[5] PANOSSIAN HALL / BUILT BY DONATION FROM / MR. & MRS. HAVHANNES & HERMIN PANOSSIANS / IN THE YEAR 2001

14.	здание	Национальный Местный Совет	Armenian Community Council Hashemite Kingdom of Jordan, **Amman**		
15.	кладбище	Армянское	Djebel Ashrafieh, **Amman**		

Эль-Балка (محافظة البلقاء)[6]

26.	церковь	Св. Иоанна Крестителя	Находится на берегу р. Иордан в 600 м к востоку от предположительного места крещения Иисуса. Baptismal Church of St. Garabed, Shuna al-Janibiyya, **Baptism Site**[7]	Осн. 16.10.2009 Осв. 31.10.2014	31°50'1.35"С 35°33'23.17"В
27.	колокольня	прицерковная	Находится перед входом в церковь с западной стороны, **Там же**	2010-2014	
28.	лапидарная надпись	Строительная 9-строчная надпись на армянском и 13-строчная на английском языках[8]	Находится при входе во двор комплекса с восточной стороны, **Там же**	2010	

[6] **Эль-Балка** (араб. محافظة البلقاء, англ. Balqa Governorate) – мухафаза на западе Иордании. Административный центр – Ас-Сальт (араб. السلط). Мухафаза разделена на 5 районов: Al-Balqa, Ardhah, As-Salt, Dair Alla, Shuna al-Janibiyya.

[7] **Место крешения** (англ. Baptism Site) – находится на берегу реки Иордан в 8 км к северу от озера “Мертвое море” в районе Shuna al-Janibiyya мухафазы Эль-Балка (محافظة البلقاء).

[8] Ктитор церкви – доктор Каро Е. Карапетян, построил его сын – доктор Виген К. Карапетян, в память о родителях – Рабели и Арутюна. Архитектор – Артак Гулян.

Սբ Կարապետ եկեղեցիս / կառուցաւ ձեռամբ տօքթոր / Վիգէն Կ. Կարապետեանի. / ուխտիւ եւ բարարարութեամբ / իւր հօր՝ տօքթոր / Կարօ Յ. Կարապետեանի. / ի յիշատակ ծնողաց / Ռաքէլի եւ Յարութիւնի. / յամի տեառն 2010

This St. Garabed / Armenian Apostolic / Church was built / by Dr. Vicken G. Garabedian / according to / the oath and through / the generous donation / of his father / Dr. Garo H. Garabedian / in loving memory of his parents / Rakel and Haroutoune / in the year of the Lord 2010

29.	лапидарная надпись	Строительная надпись по 8 строк на армянском и английском языках	Находится при входе во двор комплекса с восточной стороны, **Там же**	2010	
30.	надпись	Строительная 10-строчная надпись на арабском и 11-строчная на английском языках	Находится во дворе комплекса на восточной стороне между предыдущей надписью и церковью, **Там же**	2014	
31.	ворота		Находятся перед церковью в 65 м на восток, **Там же**	2010-2014	

Список использованной литературы

1. **Աճեմյան Հ.** Յորդանան: Հայերը Յորդանանի մեջ: – Լոս Անճելըս, 1989:
2. **Աշխարհի հայկական հուշարձանները**. Մաս 3: – Եր.: Անտարես, 2013: – 128 էջ:
3. **Դալլաքյան Կ.** Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ): / Երեվանի «Հրաչյա Աճարան» համալսարանի մատենաշար: – Եր.: 2004: – 287 էջ:
4. **Հայ Սփյուռք** հանրագիտարան: *Հորդանան*, էջ 367-368: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2003: – 732 էջ:
5. **Ղանալանյան Տ.** Հայերի արտագաղթը Հորդանանից, (1950-1970-ական թթ.), էջեր 48-65: // «Արեվելագիտության հարցեր» (Գիտական հոդվածների պարբերական ժողովածու): Երեվանի պետական համալսարան արեվելագիտության ֆակուլտետ: № 13: – Երեվան: ԵՊՀ հրատարակչություն: 2017:
6. **Մալխասյան Մ.** Հայերն աշխարհում: – Եր., Հեղինակային հրատարակություն: 2007: – 144 էջ:
7. **Ներսեսյան Ն.** Հորդանանի հայ գաղութի դեմքեր և Հորդանանի հայկական եկեղեցիները: // «Յորդանանի հայերը» գիտաժողովի նիւթեր (22-24 Մայիս 2016): Հայկազեան համալսարան: Հայկական Սփյուռքի Ուսումնասիրութեան Կեդրոն: – Բեյրութ, 2019: – 519 էջ:
8. **Тер-Мкртичян Л. Х.** Армяне в странах Арабского Востока на современном этапе. *Научно-популярный очерк.*/ АН СССР Институт народов Азии, АН АрмССР сектор Востоковедения. – М.: Изд. Наука. Главная редакция восточной литературы. 1965. – 60 с.

Сдана/Հանձնվել է՝ 02.04.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 06.04.2020
Принята/Ընդունվել է՝ 07.04.2020

«Զարթօնք» օրաթերթը

Սարգսյան Ս. Թ.
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)
sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ սփյուռքահայ մամուլ, Ռամկավար-ազատական կուսակցություն, «Զարթոնք» օրաթերթ

Газета “Зартонк”

Саргсян С. Т.
Институт истории НАН РА (Ереван, Армения)
sargsyansuren@yandex.ru

Резюме: За последние 225 лет изданные в разных частях света более чем 4000 периодические издания на армянском языке являются неотъемлемой частью нашего народа и весма важно изучение их истории. Армянская периодика тесно связана со всеми сторонами армянской жизни – общественно-политической мысли, культуры, армянского языка и литературы. В свою очередь, историческая судьба армянского народа оставила неизгладимы след на периодические издания.
Положение и уровен прессы армянской диаспоры 1920-ые годы были прямо пропорциональны уровню духовно-культурного развития и жизни страны. В процессе поиска, формирования и становления армянской периодики, в 1937 году по инициативе М. Таматяна и под редакцией В. Текеяна в Бейруте начинает выохить в свет официальный орган Партии рамкавар-азатакан газета “Зартонк”. Гдавной задачей газеты являлось служение делу сохранения армян, обеспечение связи с родиной и стремление к справедливому решению Армянского вопроса (Ай дата). Преодолевая многие трудности, за все годы своего существования газета с честью выполниоа свою миссию.
Ключевые слова: пресса армянской диаспоры, Партия рамкавар азатакан, газета “Зартонк”

Newspaper “Zartonk”

Sargsyan S. T.
Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)
sargsyansuren@yandex.ru

Abstract: Over the past 225 years, more than 4000 periodicals published in different parts of the world in Armenian are an integral part of our people and it is important to study their history. Armenian periodicals are closely connected with all aspects of Armenian life - socio-political thought, culture, the Armenian language and literature. In turn, the historical fate of the Armenian people has left an indelible mark on periodicals.
The position and level of the press of the Armenian diaspora of the 1920s were directly proportional to the level of spiritual and cultural development and life of the country. In the process of searching, forming and establishing the Armenian periodicals, in 1937, on the initiative of M. Tamatyan and edited by V. Tekeyan, the official organ of the Ramkavar-Azatakan Party “Zartonk” newspaper began to be published in Beirut. The newspaper’s main task was to serve the cause of preserving the Armenians, ensuring communication with the motherland and striving for a fair solution to the Armenian issue (Hay Dat). Overcoming many difficulties, for all the years of its existence, the newspaper has fulfilled its mission with honor.
Keywords: press of the Armenian diaspora, Ramkavar Azatakan party, “Zartonk” newspaper

Աշխարհի բոլոր քաղաքակիրթ ժողովուրդների նման, XVIII դարից սկսած հայերի գոյության անբաժանելի մաս է եղել մամուլը: 1794թ. հոկտեմբերի 16-ին լույս տեսած Հ. Շմավոնյանի «Ազդարար» թերթով սկզբնավորված հայ պարբերական մամուլի պատմությունը բազմատեսակ է և բազմաշերտ: Անցած 225 տարիների ընթացքում Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել են 4000-ից ավելի պարբերականներ, որոնք անգնահատելի նպաստ են բերել հայ ժողովրդի, հայ հասարակական-քաղաքական կյանքի ու հոգեկերտվածքի ձևավորման գործում:

Հայ ժողովրդի մտավոր ու հասարակական կյանքի զարգացման գրեթե բոլոր փուլերում՝ XVIII դ. վերջից մինչև մեր օրերը, հայ մամուլը սերտ աղերսներ ունի հայ հասարակական-քաղաքական մտքի դրսևորումների ու զարգացման հետ: Բացի լրատվամիջոցի իր գործառույթից, այն եղել է որոշակի գաղափարախոսություններ կրող և քարոզիչ: Լայն իրազեկությամբ, հասարակական կյանքի, մշակույթի,

հայոց լեզվի ու հայ գրականության վերաբերյալ հրատապ ու հարուստ հրապարակումներով մամուլը մշտապես կարևոր տեղ է գրավում հատկապես վերջին երեք հարյուրամյակների պատմության մեջ:

Իր հերթին, հայ ժողովրդի պատմական ճակատագիրն էլ անջնջելի դրոշմ է դրել մամուլի բնույթի վրա: Նվաճողների անմարդկային վերաբերմունքն ու կոտորածները, շարունակական թալանը, գաղթօջախների և դրան հաջորդած Սփյուռքի առաջացումը հայության տնտեսական ու քաղաքական կյանքի, մշակութային արժեքների ստեղծման համար տարբեր պայմաններ են ստեղծել:

Մամուլը սերտ առնչություններ ունի պատմության, փիլիսոփայության, մանկավարժության, արվեստի, տնտեսագիտության և այլ հասարակական բնագավառների հետ, որոնք կազմում են մամուլի պատմության բաղադրիչները: Մամուլի պատմության հետազոտական տարածքը՝ պայմանավորված աշխարհագրական և քաղաքական բաժանման սկզբունքներով հանդերձ, ունի նաև համազգային ընդգրկումներ: Միշտ մեկնակետ ունենալով բնաշխարհը հայ մշակույթը, հասարակական-քաղաքական միտքը և մամուլը, պատմական մի շարք իրողությունների արդյունքում իրենց հետագա զարգացումն ապրեցին բնաշխարհից դուրս՝ Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Ռուսաստանում, Ամերիկայում և այլուր:

Ճակատագրի բերումով գաղթաշխարհն ու Սփյուռքը ծնվել և մեծ ի մասամբ սնվել են արևմտահայության հաշվին: Սփյուռքահայ մամուլն էլ, ըստ էության, լինելով արևմտահայության օրգանական ժառանգորդը, ավանդույթների կրողն ու շարունակողը՝ միշտ եղել է հայրենիքի կողքին և սատարել նրան: Սակայն 1920-ական թթ. երկրորդ կեսից, բոլշևիկյան կոպիտ մերժողականության հետևանքով Սփյուռքը գրեթե զատվեց նրանից և այդ վիճակը որոշ տատանումներով պահպանվեց մինչև 1960-ական թվականները:

Գաղթաշխարհի սփյուռքահայ վերափոխված մամուլի և հայ գաղթավայրերի սփյուռքացված իրականությունը հայ ժողովրդի պատմության անքակտելի, այն ամբողջացնող և նրա առանձնահատկությունը բնութագրող կարևոր բաղադրիչ է: Տասնամյակներ շարունակ Սփյուռքն ու մամուլը մեկը մյուսով են ապրել, որովհետև «առանց մամուլին՝ հայը չէր կրնար այլևս հայ մնալ» [**1**]: Մամուլի ուսումնասիրությունը «օժանդակում է ամբողջացնելու մեր ժողովրդի պատմությունը, մասնավորապես սփյուռքահայության պատմությունը» [**2**], զանի որ Սփյուռքի թելադրած հարցերն ու խնդիրներն իրենց արտահայտությունը գտան մամուլի օրգաններում:

Հին ու նորաստեղծ թերթերը, հանդեսներն ու ամսագրերը «մեր ժողովուրդը կապեցին իր մայրենի լեզուին, Կոմիտասեան երաժշտութեան, Անդրանիկի յեղափոխականութեան, Էջմիածնի սրբութեան, իր պատմութեան ու մշակույթին» [**3**]: Դարձան Սփյուռքի նոր իրականության արտացոլողները. «անոնք կերպով մը ընդհանուր հսկիչն են կեանքին, եւ յաճախ ալ կարապետը» [**1**]: Մամուլի էջերում շոշափվում ու արծարծվում էին կարևորագույն՝ դավանաբանական, ազգային, կենցաղային և սոցիալական հարցեր, ասպարեզ էին գալիս ազգային և սոցիալ-բարոյական այուժեներով ստեղծագործություններ: Գաղութահայ մամուլի օրգանական շարունակությունը լինելով՝ Սփյուռքում ձևավորվում էր նորը, որը ո՛չ ժամանակակցին էր նման, ո՛չ արևմտահայ մամուլին:

Սփյուռքահայ մամուլը ձևավորեցին աշխարհագրական, քաղաքական, տնտեսական ու հոգեբանական նոր պահանջներն ու գործոնները: Սկզբնական շրջանում իրենց ուրույն դերը խաղացին հատկապես ֆրանսահայ և ամերիկահայ գաղթօջախները: Այդ շրջանում ձևավորվել էր լրագրողական սերունդ, որը եկել էր ոչ միայն շարունակելու նախորդ՝ եղեռնից «վերապրող» սերնդի ավանդույթները, այլև ստեղծելու ժամանակի հրամայականն ու արտահայտությունը հանդիսացող նոր արժեքային լրագրություն: Այդ շրջանի մամուլին հատուկ էր մեծաթիվ գրողների, ուսուցիչների և այլ մտավորականների մասնակցությունը թերթերի խմբագրմանը: Ռամկավար մամուլի դեպքում նրանց թվում էին Վահան Թեքեյանը, Վահե Վահյանը, Միքայել Կյուրճյանը, Վահե Հայկը, Անդրանիկ Ծառուկյանը, Սիմոն Սիմոնյանը, Մինաս Թեոլեոլյանը և ուրիշներ:

Ընդհանուր առմամբ, սփյուռքահայ մամուլի վիճակն ու մակարդակը, չնչին բացառություններով, ուղիղ համեմատական էին տվյալ երկրի հոգևոր-մշակութային զարգացածության աստիճանին ու կենսամակարդակին: Զանգվածային լրատվության կարևորությունն ի հայտ եկավ այն ժամանակ, երբ սփյուռքահայ կյանքի խնդիրները, իրենց զանազան կողմերով ու տարողությամբ, արծարծվեցին դրա միջոցով և համարժեք արձագանք ստացան գաղութահայության կողմից:

XX դարի 20-30-ական թթ. աստիճանաբար արագացավ ինչպես Սփյուռքի, այնպես էլ սփյուռքահայ մամուլի ձևավորման ու կայացման գործընթացը: **Սփյուռքահայ մամուլի պատմությունը** պայմանականորեն **բաժանվում է երեք՝** ա) Սփյուռքահայ մամուլի փնտրտուքի, ձևավորման ու կայացման, բ) ինքնա-

հաստատման, գ) համընդհանուր զարթոնքի **փուլերի**:

Սփյուռքահայ մամուլի փնտրտուքի, ձևավորման ու կայացման փուլում գաղութահայ մամուլի հենքի վրա տեղի ունեցավ մամուլի սփյուռքացման, վերարժևորման գործընթաց: Ժամանակագրական առումով այս փուլը ներառում է 1920-1940-ական թթ. վերջերը՝ տևական մի ժամանակահատված, երբ հայ ժողովրդի համար «փակվեցավ արտագաղթի եւ պանդխտության ողբալի շրջանը եւ ծնեցավ հույսը Մայր Հայաստանի խանդակաթ գիրկը վերադառնալու» [**4**]: Ավելի առանձնահատուկ էին հատկապես 1930-1940 թվականները, որոնք «կը նմանին պայթելու աստիճան լեցուն, սեղմուած ու ծանր պարկի մը, որուն մէջ խառն ի խուռն թխմուած են անհաւասար արժէքով հակասական գոյքեր, պիտանի եւ անպէտ իրեր, ոսկին ու ժանգոտ թիթեղը, թանկագին մետաքսն ու անմաքուր լաթը, տեղ տեղ՝ չորցած արիւնի հետքերով…» [**3**]: Այդ շրջանում էր, որ նախկինների կողքին սկզբում զուսպ ու վախվորած, հետագայում ավելի համարձակ ու հավակնոտ սկսեցին լույս տեսնել զգալի թվով նոր պարբերականներ: Անկախ ուղղվածությունից, նպատակներից և տպագրության վայրից, դրանք հիմնականում բաժանվում էին վեց խմբի՝ կուսակցական, եկեղեցական, չեզոք, հայրենակցական, երգիծական և մանկական:

Համեմատաբար մեծ թիվ էին կազմում կուսակցական՝ ՌԱԿ, ՍԴՀԿ, ՀՅԴ և համայնավարական պարբերականները: Բավական է նշել, որ մեր օրերում հայ ավանդական կուսակցությունների կարևորագույն և գլխավոր համարվող պարբերականների մեծ մասը հիմնադրվել է հենց այս շրջանում: Դրանցից մեկը Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ) պաշտոնական օրգան, ազգային, հասարակական-քաղաքական և գրական **«Զարթօնք»** օրաթերթն էր[1]:

Հայ ժողովրդի «մտածումներուն, մարտընչումներուն, իտէալներուն հարազատ մարմնացում» [**5**] ՌԱԿ-ը կազմավորվեց 1921թ. հեղափոխական, գաղափարական ու մշակութային հարուստ ժառանգության տեր Հայ սահմանադրական ռամկավար, Ժողովրդական և Վերակազմեալ հնչակյան կուսակցությունների ու 1919թ. ամռանը Փարիզում կազմավորված Հայ ազգային ազատական միության միավորման արդյուքում: Դա ուղղակի շարունակությունն էր այն վեհ գործի, որի ճանապարհին շատ հայորդիներ էին զոհվել և հիմնադրությանը հաջորդած տարիներն այդ միության կենսականության վկաները դարձան:

Լիբանանում ապաստանած հայրենաբաղձ, շինարար ու վեհանձն հայ ժողովուրդը կարողանալով թոթափել ցեղասպանության մղձավանջը և ուղղելով մեջքի գոյատևման պայքարում և «կը փափակէր հայ կեանքէն ներս, այլեւս հրամայական պահանջ մըն էր ազդու ձայներ արձակել, այսինքն խօսքը, մանաւանդ տպագիր խօսքը թերթի, այն էլ օրաթերթի էջերէն պէտք է երթար հասնելու հայ ընթերցողներուն» [**6**]: Այդ թերթերից էր «հերոսական պայքարներու եւ անհամար զոհողութիւններու ծնունդ «Զարթօնքը», որ «հրատարակութեան առաջին օրէն ի վեր, հպարտօրէն կը շարունակէ իր յաղթական ընթացքը, եւ լիովին կը կատարէ իրեն վստահուած ազգանուեր առաքելութիւնը» [**7**]: Այն շատ զրկանքներ ու հարձակումներ հաղթահարելով հիմնադրվեց ճշմարիտ խոսք ասելու, մամուլի բարոյական վարկը բարձր պահելու, ազգային շահերը և «հայ բարոյականը, ճշմարիտ խօսքին իրաւունքը պաշտպանելու, առաքելությամբ: Ինչպես նաև՝ իրականացնելու համար չորս գլխավոր նպատակներ՝ «հայութիւնը դարձնել իր բնական երկրին հաւատարիմ քաղաքացի. երկրորդ՝ հայութիւնը հայ պահել, երրորդ՝ հայութիւնը սրտով կապել Հայաստանի, իսկ չորրորդ՝ հետապնդել անկորնչելի ու արդար Հայ Դատը» [**5**]:

Որոշ ընդհատումներով թերթը լույս է տեսնում 1937 թվականից Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում: Սփյուռքում օրաթերթը «հանրային ծառայութեան ձեռնարկ մըն է եւ ճշմարտութեան խուզարկումի միջոց մը», որը հանրությանը տեղյակ է պահում տեղական ու համաշխարհային անցուդարձերին [**8**]: «Զարթօնքը» հրատարակելու նախաձեռնողներն են եղել «հայ ազատագրական պայքարի ամենէն տիրական, յանդուգն, կորովի դեմքերէն՝ Միհրան Տամատեանը» [**5**] և Հովսեփ Սեքսենյանը: Արտոնատերը և առաջին պատասխանատու տնօրենը՝ Բարունակ Թովմասյանը: «Պատգամավորականին հաջորդած եռամյա ժամանակահատվածը նշանավորվեց մի քանի ձեռքբերումներով, որոնցից ամենաէականը Լիբանանի շրջանակի ստեղծումն էր և «Զարթօնք» թերթի հիմնադրումը»,-գրում է ՌԱԿ-ի կենսագիրներից Կ. Դալլաքյանը, ապա ավելացնում. «հետագա մի քանի տասնյակ տարիների ընթացքում ՌԱ կուսակցության ճակատագրում այդ թերթին կարևորագույն պատմական դերակատարություն վիճակվեց» [**9**]:

«Զարթօնքը» հրատարակելու նախաձեռնողներն են եղել «հայ ազատագրական պայքարի ամենէն տիրական, յանդուգն, կորովի դեմքերէն՝ Միհրան Տամատեան» [**5**], որն իր Իր

[1] Մոտ ապագայում նախատեսում ենք «Զարթօնք» թերթին նվիրված ծավալուն ուսումնասիրություն հրատարակել, ուստի կան հարցեր և հիմնախնդիրներ, որոնց չենք անդրադարձել այս հոդվածում:

փառաւոր անցյալով, մտքի լայն ու խորունկ պաշարով, զորավոր ու համակրելի անհատականությամբ, բոլորին վստահություն էր ներշնչում և Հովսեփ Սեքսենյանը: Թերթի առաջին խմբագիրն է եղել արևմտահայ նշանավոր բանաստեղծ, մեր ժամանակների հայ հոգու մեծագույն երգիչ և «հայ լրագրութեան ամէնէն կշռադատ աշխատաւորներէն» Վահան Թեքեյանը: Լայնախոհ մտավորական, որը ոչ միայն խորապես զգում էր ժամանակը, այլև դրա միջով ու միջոցով ընդհանուր գծերով տեսնում կամ առնվազն կանխազգում էր գալիք օրը: Տարբեր տարիների ընթացքում թերթի խմբագիրներ են եղել Լևոն Թյությունճյանը, Երվանդ Քեշիշյանը, Հովհաննես Պողոսյանը, Հակոբ Դավիթյանը, Միքայել Նաթանյանը, Գրիգոր Բեքերեջյանը, Համբարձում Գումրույանը, Գերսամ Ահարոնյանը, Հակոբ Ավետիքյանը, Պարույր Աղպաշյանը, Պայծիկ Գալաջյանը, Սևակ Հակոբյանը [**8**]:Նրանց մեծ մասը Սփյուռքի պայմաններում «ամէնէն զոհաբերող, ամէնէն տարապարհակ աշխատանք կատարող անձ է, որ ամէն օր կը սպառէ իր աչքին լոյսը եւ կը հալեցնէ իր միտքին իւղը…» [**5**]:

Սեփական ժողովրդին ողջ կյանքը նվիրաբերած Մ. Տամատեանը, գրում է թերթի հիմնադիր անդամներից Բ. Թովմասյանը, «Հակառակ իր յոգնած մարմնին եւ յառաջացած տարիքին, ընդունեց շարունակել ազգային նուիրումի գործը՝ ձեռնարկելով թերթի հրատարակութեան», սակայն «չկրցաւ իրականացնել իր ծրագիրը հիւանդութեան պատճառով» [**5**]: Սակայն ժամանակի հետ գնալով ավելի էր զգացվում այդպիսի հրատարակության անհրաժեշտությունը: Գաղափարակիցների խորհրդակցական ժողովում, որին մասնակցում էին «Հմայեակ Գրանեանը, Յովհաննէս Սեքսենեանը, Միքայէլ Նաթանեանը, Յակոբ Թորոսեանը, Ներսէս Շիրինեանը, Կարապետ Ապաճեանը, Մկրտիչ Մսըրլեանը, Տոքթ. Տ. Պեզիրճեանը, Տոքթ. Յովսէփ Եոզոպթլեանը եւ Բարունակ Թովմասեանը» [**5**] որոշում են հրատարակել թերթը:

Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերք «Զարթօնքի» կոչման ու ապագայում ծավալելիք գործունեության մասին լավագույնս պարզաբանվում է Վ. Թեքեյանի հեղինակած անդրանիկ խմբագրականում [**10**]: Երկար քննարկումների արդյունքում ծնվեց թերթը կոչված է «նախ լուր տալու, յետոյ լոյս տալու և խաղաղութիւն բերելու հայ ժողովուրդին, օգնելու համար խաղաղութեան և ոչ թէ կռիւի գործին, որմէ կշտացած և ուժասպառ է Հայ կեանքը», ասված է խմբագրականում [**11**]: Թերթը պետք է ճշմարտության հենքի վրա ի մի հավաքի հայությանը և առողջացնի, շարունակում է թերթը:

Հայության ազգային դաստիարակությունը, գրում է հեղինակը, կիսատ մնաց մեր կամքից անկախ, պետք է շարունակվի, որպեսզի ժողովուրդն ապագա ունենա: Կարևոր է սակայն գիտակցել, որ ունենք այդ դաստիարակության պահանջը և չդիմադրենք դրան: Պակաս կարևոր չէ նաև այն, որ մեր սեփական կամքով ազատորեն ընդունենք, մարսենք և գործածենք մեր այնքան դժվարությամբ ձեռք բերած դաստիարակությունը և խուսափենք առաջնորդվել ուրիշների կարծիքներով: Նկատի առնելով, որ այդ դաստիարակությանը նպաստող հանգամանքներն են՝ մեր հերոսական պատմությունը, աշխարհընկալումները, հայերի տեղն ու դերը աշխարհում, քրիստոնեական օրենքները, մասնավորապես պատվիրանները, մեր ավանդույթներն ու ազգային արժեքները, լեզուն, գրականությունը, կրթական հաստատությունները և այլն:

Հարկավոր է նաև չգոհանալ այս արժեքների լոկ պահպանությամբ, ասված է այդ նույն խմբագրականում, այլ անհրաժեշտ է մաքրել դրանք և հոկել, «նորոգել ու թարմացնել, զօրացնել ու քալեցնել ժամանակին հետ, մէկ բառով՝ զանոնք երիտասարդացնել» [**11**]: Նոր, երիտասարդ մարդկանց ներգրավել ազգային գործերում և դրանով սահուն ապահովել սերնդափոխությունը: Հեղինակն ընդգծում էր նաև հյուրընկալ Լիբանանի հանդեպ «հաւատարիմ և ուղղամիտ քաղաքացիի, անոր ամբողջ ժողովուրդներուն հանդէպ սրտակից բարեկամի», ինչպես նաև Խորհրդային Հայաստանի «բարիքին ու մեծութեան միայն ցանկացողի դիրքը» պահպանելու անհրաժեշտությունը:

Այնուհետև պարզաբանվում է, որ «Զարթօնքը» երկու տարի առաջ պետք է լույս տեսներ «մեր մեծանուն առաջնորդին և բարեկամին Պ. Մ. Տամատեանի կողմէ», սակայն նրա կրկնված հիվանդության պատճառով դա հնարավոր չեղավ անել:

Թերթի անդրանիկ համարում տպագրվեց նաև Մ. Տամատյանի այդ առիթով գրված նամակը, որում հեղինակը նշում է, թե դա իր և իր բարեկամների համատեղ նախաձեռնությունն է եղել, որպեսզի հնարավոր դառնա գաղութում գաղափարական մենատիրության հաղթահարումը: Այնուհետև մեծ հեղափոխականն ու ազգային գործիչը բոլոր բարեկամ-գաղափարակիցներին ուղղում է իր շնորհավորական ուղերձն ու թերթի լույսընծայման առիթով մաղթում, որ թերթը գաղութի «ստուար մեծամասնութեան ներքին կեանքի մէջ շինարար անդորրութեան եւ արտաքին աշխարհի հանդէպ

խոհեմ ու արժանավայել ընթացքի մը ուղղութիւնը» հաստատի [**12**]:

«Զարթօնքը» ավելորդ պերճանքի թերթ չէր, այլ «**ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՔԻ**» ծնունդ, որ կոչուած էր հակադարձելու «Հայրենիքի դէմ արձակուած սուտն ու զրպարտութիւնը», հեղաշրջել այն տխուր կացությունը, որ «Հայաստանը աւելի ատելի կը ներկայացուէր քան Թուրքիան, խափանել չարիքը եւ երեւվան բերել ճշմարտութիւնը» [**13**] (ընդգծումը հեղինակինն է):

Թերթն առաջին իսկ օրվանից դրական դիրքորոշում որդեգրեց Խորհրդային Հայաստանի նկատմամբ և պայքար ծավալեց հակախորհրդային դիրքորոշում ունեցող քաղաքական ուժերի դեմ: Հրատարակությունը ձեռնարկելու շրջանում Սփյուռքում տիրող իրավիճակի, այն բարելավելուն և ազգային միաբանություն ստեղծելուն ուղղված ջանքերի ու թերթի անցած բեղմնավոր ուղու մասին ճիշտ պատկերացում կազմելուն լավագույնս կնպաստի անդրանիկ համարում տեղ գտած անժամանցելի «Հաճոյք է պատասխանել «Զարթօնք»-ի կոչին» հրապարակումը [**13**]:

Այդ շրջանում հայ միտքը հիմնականում թերթերով էր սնվում և որ դրանք ժողովրդին դիմելու գլխավոր ամբիոներն էին, միաժամանակ՝ գրականության անդաստանը և գիտելիքների գլխավոր աղբյուրը: Հիրավի, «որքան աւելի ծանր պիտի ըլլար մեր պանդուխտի առօրեան, որքան մութ պիտի ըլլար մոր երդիքը եւ որքան պիտի մսէր մեր հոգին, եթե չլլար Հայ Թերթը» [**8**] և իր հիացմունքն է արտահայտում «թուղթի փառքին»: Հայկական հարցն ու հայ դատն անգամ հեղինակի կարծիքով նահանջել ու ամփոփվել էին թերթերի էջերում: Որևէ ազգօգուտ գաղափար, գրում է հեղինակը, որ «կը ծնի հայ մտքի մը մէջ, երբ դժուար է որ վերածուի գործի, փութով կը վերածուի յօդուածի մը կամ խմբագրականի մը՝ գտնելու համար իր վերջը» [**8**]:

Լուրջ գրականությունն ու արվեստը նահանջում էինն, արձանագրում էր հեղինակը, որովհետև դժվար ու ժամանակատար էր դրանք լույս աշխարհ բերելը: Այդ պատճառով թերթեր հրատարակելն ավելի էր կարևորվում, քանի որ «անոր մատակարարած սնունդէն կախում ունի ժողովուրդին մտքի առողջութիւնը» [**8**]:

Մեր սերնդակիցները, կարդում ենք հոդվածում, ինչպես հանապազօրյա հացը վաստակելուց երկար չէր կարող մտածել, այնպես էլ՝ իր մշակութային պաշարն ապահովելու և «կացութեանց անորոշութիւնը եւ վիճակներու անապահովութիւնը զմեզ բոլորս ալ դարձուցած են պատեհապաշտ» [**8**]: Իրենք՝ հեղինակի ասելով, վաղվա օրվա նկատմամբ չունեին այն վստահությունը, որ ունեցել էին իրենց նախորդները: Ակնհայտ էր, որ յուրաքանչյուր գաղութ պարտավոր էր իր միջավայրի պայմաններին համապատասխան առաջ ընթանալ, քանի որ դրանք միմյանցից տարբերվում էին: Այդ տարիներին նրանք առաջ էին ընթանում որպես հայեր, բայց լավ չէին պատկերացնում իրենց հիմնական ուղղությունը: Նույնիսկ չէին կարողանում համաձայնության հանգել հիմնական ու էականի հարցերում: Հետևաբար հայ մամուլն էլ շատ դեպքերում ավելի շատ անմիջական նպատակներ էր հետապնդում, քան «թէ ազգային համայն կեանքի զօրացման եւ միօրինակ հասունութեան կրնայ նպաստել» [**8**]:

Միտք զարգացնել և հոգին ազնվացնել, այսինքն՝ նախորդ սերունդների նման ազգն առաջնորդել, գրում է հոդվածագիրը, մաշած բարոյախոսության պես էր հնչում: Ժողովուրդի մեջ թափանցելը, պարզաբանում էր հեղինակը, նրա ներքին ապրումների վերլուծությունը և գրականության միջոցով «կեանքը ինչպէս որ է», ներկայացնելու համար ամենապակասը Զոհրապ պետք էր լինել, ապա ցավով ավելացնում, որ հայոց լեզվի հարստացման և ոճի գեղեցկացման ուղղությամբ ճիգերն էլ էին մոռացվել: Պեղումների միջոցով հայ մտքի ստեղծագործությունները և ցեղային արժեքները հայտնաբերելը, որ կատարեցին նախորդ դարի պատմաբան-բանասերները, «այսօր անշահ աշխատանք մը միայն կը կարծուի» [**8**]:

Պատմական էքսկուրս կատարելով հեղինակը գրում էր, որ XIX դարն ազգային առաջադիմության և մշակութային զարգացման շրջան էր, որը հաճախ անվանում էին «Ազգային Սահմանադրութեան» կամ պարզապէս՝ Պոլսական շրջան: Երբ կարևոր դեր ունեն հայ մամուլը, դպրոցը, թատրոնն ու երաժշտությունը: Անգին գանձեր էին պարունակում այդ շրջանում հրատարակված «Արեւելեան մամուլ»-ի, «Արեւելք»-ի, «Մասիս»-ի, «Հայրենիք»-ի, «Լոյս»-ի «Բիւզանդիոն»-ի հավաքածուները, գրում էր հեղինակը, որոնցից արտատպումներ կատարելը հիանալի դաստիարակչական արդյունք կարող են տալ մեր ժողովուրդի զարգացման համար: Դրանք բազմապատիկ ավելի արժեքավոր էին, քան աղքատ ոգով գրված մերօրյա խղճուկ շարադրանքները, որոնցով լցված էր հայ մամուլը:

Այդ շրջանի թերթերում, շարունակում է հոդվածագիրը, հայհոյանք ու ոչնչացնող քննադատություն չկար: Բոլորը լծված էին ազգային աշխատանքի, ամենուրեք առաջդիմություն կար և վերելք, որն, ավաղ, երբեմն ժողովրդի լուրջ հակակշռի պակասից մինչև խենթության էր հասնում: Այդ շրջանում ավելի է հղկվում աշխարհաբարը: Դարերով մոռացված գավառի հայությունը սկսում էր հարաբերվել մշակույթի կենտրոնների հետ: Հայ ժողովրդի

ձեռքբերումներն ու բարձրագույն արժանիքները ներկայացվում էին օտարներին: Նոր սերունդն անցյալից վերագտնում էր իր ցեղի մայր երակը և սկսում դրանից «նոր կեանք ըմպել»: Աստիճանաբար հստակեցվում էր ազգային իդեալը և հայն սկսում էր առաջ ընթանալ վստահ ուղիներով: Անցյալի կամ ներկայի «վրայ ափսոսանքի մը համար չէ որ կը գրուին այս տողերը» [**8**], պարզաբանում էր հոդվածագիրը ապա շարունակում. «Մեր սերունդին մէջ ալ քիչ-քիչ երեւան կու գան ուժեր» [**8**]: Միայն թե առողջ կորովի որոշ պակաս կար, արձանագրում էր հոդվածագիրը, որը միայն քաղաքական և նյութական պայմանների հետևանք չէր, այլ այն որ դեռ հստակ չէր մեր ազգային գերագույն իդեալը հանուն որի ներդրվեր համազգային ուժն ու կորովը:

Նախկինում այդ իդեալը ազգային ազատության գաղափարն էր, որի դրական լուծման գործին «լծուած էր Ազգին ուժը ամբողջութեամբ՝ արդիւնաբեր ստեղծագործ աշխատանքով» [**8**]: Այսօր, եզրակացնում էր հեղինակը, մեր «թոյլ վիճակին պատասխանատուն միաւորիչ համազգային իտէալի պակասն է: Չունինք բոլորին կողմէ ընդունելի միութեան գետին մը» [**8**]: Եկեղեցի՞ն, արդի Հայաստա՞նը, թրքահայ դա՞տը, զուտ մշակութային աշխատա՞նքը, թե աշխարհաքաղաքացու և համայնական գաղափարները, հարցնում էր հեղինակը: Դրանցից որի՞ն պետք է նախապատվություն տար հայ ժողովուրդը, խիստ կարևոր է: Քանի որ ամեն թերթ մի բան էր ջատագովում, գրում է հոդվածագիրը, դրա համար էլ «դեռ չէ ընտրուած գաղթահայութեան մեծագոյն շահերուն ուղեգիծը, որուն հետեւին բոլորը» [**8**]:

Կարելի չէր հանդուրժել այս կացութիւնը: Պէտք էր «յեղաշրջել կացութիւնը և երեւան բերել ճշմարտութիւնը» և այդ դերն ստանձնեց ՌԱԿ-ն իր պաշրոնաթերթով. «Մեծ ճիգերու եւ զոհողութիւններու երկունքէն ծնաւ «Զարթօնքը», որուն կոչումն ու առաքելութիւնը հայ ժողովուրդին եւ հայրենիքին շահերուն ծառայելն էր» [**7**]:

Հարկավոր էր ավելի ընդլայնել հիմնախնդիրները, որպեսզի հնարավոր դառնար ազգային միության հիմքը գտնելու համար, քանի որ ազգը պատեհապաշտությամբ միշտ չի կարող ապրել և մի օր պիտի գտնի իր հաստատուն խարիսխը: Պետք էր հավատալ դրան, հավատալ հայ ժողովուրդի իմաստությանը, նրա մնայուն արժեքներին, նրա վերազարթումի կարողությանը և ստեղծագործելու ուժին: Իսկ գաղթահայ մամուլը պիտի դադարեր ներքին պայքարից և կարողանար ազգային դաստիարակության հիանալի դեր կատարել: Կարող էր կորուստից փրկել հայրենի աշխարհից բերված հիշատակները: Աշխարհի բոլոր կողմերում ցրված հայությանը տեղյակ պահել միմյանցից: Սորվեցնել տեղի ժողովուրդների հետ բարիդրացիական հարաբերություն հաստատել: Այնպես որ, եզրակացնում է հոդվածագիրը, «Կ՚արժէ հրատարակել թերթ, եթէ ան այս ճամբաներով պիտի ջանայ մօտեցնել հայ միտքը քիչ մը աւելի դէպի ազգային ամբողջականութիւն»: Մի բան, որ իսկապես կատարում էր «Զարթօնքը» երկար ժամանակ:

Հիրավի, օրվա հրամայականի ծնունդ էր թերթը, որը կոչված էր գաղութը փրկել հայրենադավությունից: Եվ իսկապես էլ արաբական տպարանում մեծ դժվարությամբ լույս տեսած «Զարթօնքը» ռումբի տպավորություն թողեց: Դրա հրատարակությունը «օրինաբեր զարթօնք եղաւ ամբողջ գաղութին, որ սուտի ու կեղծիքի թմբիրի մեջ թաղուած էր» [**7**]: Այն քաջամարտիկ առաջապահը եղավ պայքարի առաջին գծի վրա և անվարան պաշտպանեց հայրենիքը: Հայրենասիրության դրոշակակիրը եղավ և հայրենիքի իրականությամբ ջերմացրեց ու խանդավառեց հայ զանգվածների սրտերը: Գունաւոր ակնոցով չնայեց հայրենիքին. «առանց բաժնելու հայրենիքին տիրող ռեժիմը, հռչակեց, որ բոլոր ժամանակներու համար հայրենիքը գերագոյն և անսակարկելի սրբութիւն է»[2]:

Հայրենական պատերազմի տարիներին «Զարթօնքը» լուսաբանել է խորհրդային, ինչպես նաև դաշնակից բանակների ռազմական գործողությունները, մերկացրել գերմանական ֆաշիստների նվաճողական և հակամարդկային գործողությունները: Եոպատերազմյան տարիներին ջատագովել և լավագույնս նպաստել է հայրենադարձությանը, օժանդակել Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը, էջեր տրամադրել գիտության, մշակույթի, լուսավորության և այլ բնագավառներում հայրենիքի բարգավաճումը պատկերող նյութերին, տպագրել հայ և խորհրդային հեղինակների գեղարվեստական ստեղծագործություններն ու տարաբնույթ հոդվածները: Առաջին օրվանից «Զարթօնքը» կարողացավ ըմբռնել, որ պատմական անողոք իրադարձությունների հետևանքով հայ ժողովուրդը «կը ներկայացնէ երկու անջատ գոյավիճակ, Հայրենիքի եւ Սփիւռքի մէջ» [**14**]: Որ դրանցից յուրաքանչյուրն ունի իրենց ուրույն հարցերը, որոնց լուծումը կարելի է ապահովել միայն սեփական միջոցներով: Առօրյան, անցողականն ու մանրուքը չմոլորեցրին թերթին, որի գոյության փաստը կազմեց առանցքը կազմեցին հզորացող Հայրենիքը և մեր ժողովրդի «միավորումն ու

[2] Բոլոր ժամանակներու համար հայրենիքը գերագոյն և անսակարկելի սրբութիւն է:

քաղաքական ճակատագրին ապահովումը» որպես վերջնական նպատակ:

Հայոց պատմության տարողությամբ և նշանակությամբ կարևորագույն իրադարձություններից **Հայրենադարձության շարժման** հավատավոր ջատագովը եղավ թերթը և «խոսեց խիզախորեն ու նաև խոհեմությամբ: Չդադարեց դատապարտել եղեռնը և միացավ եղեռնագործների ժառանգներից հատուցում պահանջող հավաքական ձայնին» [**14**]:

«Զարթօնքը» «**կորսված հողերի** իրավատեր համարեց համայն հայությանը» և որպես արդարացի պահանջ համարեց կորսված նահանգների վերամիացումը Հայաստանին: Միաժամանակ չտարվեց պատրանքներով, թե հոդվածներով ու հուշագրերով կարելի շահել մի դատ, որի լուծումն աշխահի հզորներից է կախված: Պարկեշտորեն նշեց, որ իրենց ճիգերն ուղղված են հարցը մոռացությունից փրկելուն: Մյուս տեսակետը, որ հետևողականորեն պաշտպանեց թերթը այն էր, որ պատմականորեն հայապատկան և հայահոծ մի շարք շրջաններ պիտի միացվեին Հայաստանին (վրացահայ տարածքները, Նախիջևանն ու ԼՂՀ-ն): Թերթը շեշտում էր նաև, որ անժամանակ ու աղմկարար ամեն մի միջամտություն արտասահմանից կարող էր վտանգել հարցի դրական լուծումը:

Հայաստանյայց եկեղեցու միասնականության պահպանումը ջերեռանդորեն դրսևորվեցին թերթի էջերում: **Ազգապահպանումը նույնպես** եղել և մնում է թերթի առաջնային հիմնախնդիրը: Հայրենասիրության դրոշակակիրը եղավ այն և մեծ գործ կատարեց ազգապահպանության գործում: Հետագայում էլ «Զարթօնքը» եղավ Սփյուռքի ազգապահպան բոլոր ուժերին ու ձեռնակներին խրախուսողը, հրահանգողն ու տարածողը: Ավելին, ինքն էլ հաճախ նախաձեռնեց նոր նախագծեր և սատարեց դրանց իրականացմանը: Մշակույթը, գրականությունը, մամուլն ու դպրոցը վայելում էին թերթի գուրգուրանքը, ցուցմունքներն ու գնահատանքը:

Գաղութահայ բարքերում ազատախոհ ոգու, հանդուրժողականության և ժողովրդավար սկզբունքների տարածումը եղան թերթի ժողովրդին ծառայելու միջոցներից մեկը: Զրպարտիչ կրքի, կռվազան բնազդների, անսանձ լեզվազարության, կարգ ու կանոնի հանդեպ բիրտ արհամարհանքի ամենօրյա տիրապետության մեջ թերթի զգաստ հանդարտամտությունը, նուրբ ճաշակը, հարգանքն օրենքի նկատմամբ, գաղութի մեջ հաստատեցին մի չափանիշ, որն ինքնին պիտի բավարեր արդարացնելու դժվար պայմաններում թերթի գոյությունը:

Թերթն ուշադրության կենտրոնում էր պահում միջազգային և սփյուռքահայության ազգային կյանքը: Ազգային շահերի նկատմամբ անզիջող նախաձեռնությունից և մեր հնարավորություններից թելադրված, այն եղավ իրապաշտ ու պարկեշտ այնքան, որքան համեստ, հասարակական հրատապ խնդիրներին իր մոտեցումներում, խուսափելով միշտ անպատասխանատու ճամարտակություններից և թեթևամիտ ցուցամոլությունից: Թերթն ակտիվորեն մասնակցում էր ազգապահպանման, եկեղեցական, դպրոցական, մշակութային, երիտասարդական հարցերին և չնայած 1960-ական թվականների առաջին կեսից սկսած ՀԲԸՄ-ն ուներ իր ինքնուրույն և համակիր մամուլը, լուսաբանում էր նաև այդ կառույցի գործունեությունը: Ուներ գրական, մարզական ու գիտական բաժիններ:

«Զարթօնքը» բավականին լուրջ դժվարություններ ունեցավ **լիբանանյան անիմաստ պատերազմի տարիներին:** Բեյրութի արևելյան մասում գտնվող Թեքեյան կենտրոնի շենքը, որտեղ էին նաև թերթի խմբագրությունն ու տպարանը, աշխարհագրական այդ դիրքի պատճառով հայտնվել էր կռիվների սահմանամերձ շրջանում: Այն հաճախ էր փամփուշտների և հրթիռների թիրախ դառնում և այդ պատճառով թերթի հրատարակությունը երբեմն ընդհատվում էր: Հատկապես 1976 թվականին թերթը լույս տեսավ խիստ անկանոն. «Տագնապի սուր օրերուն՝ Զարթօնք յաճախ լոյս տասաւ երկու էջով, փոխան չորսի»,-գրում է այդ իրադարձությունների ականատես, արևմտահայ ժամանակակից մտավորական Ժիրայր Դանիելյանը [**15**]: Հատկանշական է նաև, որ այդ տարիների ընթացքում փոփոխություններ եղան, մի քանի երիտասարդներ միացան խմբագրակազմին: «Զարթօնքի» այդ տարիների գլխավոր կորուստը եղավ բազմամյա խմբագրապետ (1948-ի նոյեմբեր-1981 թ. հունվարի) Գերսամ Ահարոնյանի մահը: Նրան փոխարինեց 1977 թվականից խմբագրազմին միացած երիտասարդ Հակոբ Ավետիքյանը:

Թերթն ունեցել է կանանց, մանկապատանեկան, մարզական ու գրական բաժիններ: Նոր տարվա և կուսակցական հոբելյանների առիթով լույս է ընծայել բացառիկ համարներ: 1955-1957 և 1959 թվականներին Վարուժան Պետիկյանի խմբագրությամբ առանձին հրատարակությամբ լույս է ընծայել «Զարթօնք սփոր», «Զարթօնք Գրական», «Զարթօնք Մարզական», «Զարթօնք Պարսատիկէն»ը, եւ «Զարթօնք Գիտական» և արաբերեն «ալ-Ցաքզա» (1957- 1958 թթ.) հավելվածները: Ինչպես նաև «Հուշամատեան մեծ եղեռնի» (1965 թ.) և այլ «Զարթօնք Բացառիկ» (1962, 1986, 2015, 2017, 2019թթ.) ստվարածավալ հատորները:

1995 թվականից «Զարթօնքի» պատասխանատու տնօրենն էր լիբանանահայ աչքի ընկնող մտավորական Պարույր Աղպաշյանը: Թերթը մշտապես իր ուշադրության կենտրոնում էր պահում և շարունակաբար պարզաբանում ՌԱԿ աշխարհայացքն ու տեսակետները կարևոր իրադարձությունների վերաբերյալ, լուսաբանում՝ ծրագիրն ու կանոնագիրը և Հայաստանի ու միջազգային քաղաքական, տնտեսական ու մշակութային անցուդարձը: Լայն տեղ էր հատկացնում հայ գաղութների ազգային կյանքին, անդրադառնում ազգապահպանման, եկեղեցական, երիտասարդական հարցերին, ջատագովում հայրենադարձությունը, օժանդակում Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդմանը:

Մշտապես «Զարթօնքի» հմնական սկզբունքներն են եղել անաչառությունը և օբյեկտիվությունը, որոնց պահպանումը տասնամյակներ շարունակ եղել է թերթի կարևորագույն գործառույթներում: Գոյության առաջին օրվանից թերթն անխոնջ ծառայել է իր երկրին ու ժողովրդին: Անկախ նրանից, թե ինչ ու ինչպիսի ժամանակաշրջաններ են եղել, թերթը մշտապես կանգնած է եղել Հայաստանի ու հայ ժողովրդի կողքին: Կարևոր չի եղել նաև, թե ովքեր են եղել թերթի խմբագիրները, թղթակիցները, ինչ համաշխարհային տեղաշարժեր են գրանցվել, «Զարթօնք»-ը հավատարիմ է մնացել իր որդեգրած սկզբունքներին և դրանով լավ օրինակ է եղել այլ լրատվամիջոցների համար:

«Զարթօնք» օրաթերթի գոյությունը պարզապես տեղեկատվություն հաղորդելը չի եղել, այն շատ ավելի լուրջ գործ է կատարել հայ համայնքում. «Ան կրցած է իր վրայ նոյնացնել հանրային կարծիքի ուղեցոյցի եւ թարգմանի կրկնակ ու դժուարին դերերը, առաջնորդուելով առողջ ու հարօգուտ սկզբունքէն» [**1**]: Դրանցից նշենք հիմանական երկու ուղղությամբ կատարած աշխատանքները՝ ազգային գիտակցության բարձրացումը և մշտապես ազգային արժեքների դաստիարակությունը: Իսկ այդ ամենը ենթադրում է հայեցի կրթություն, հայոց լեզվի պահպանում և զարգացում: Այս տարիների ընթացքում թերթն առանձնացել է նաև ապագայի նկատմամբ լավատեսություն դրսևորելու տեսանկյունից. «Մասնաւոր գուրգուրանք եւ գիտակից շահագրգռութիւն ցոյց տուաւ նորահաս երիտասարդութեան հանդէպ եւ տեւականօրէն շեշտեց առաջնորներու «քատր»եր պատրաստելու գործին անհրաժեշտութիւնը» [**8**]:

Հեշտ ու խաղաղ չի եղել թերթի անցած ճանապարհը, այն անցել է բազմաթիվ դժվարությունների միջով: Քանի որ Սփյուռքում ընթերցողին հայալեզու մամուլի կողքին պահելն արդեն շատ բարդ գործ էր: Հետո էլ մամուլ պահելու գործում մեծ դերակատարություն ունեին ֆինանսական միջոցները, որոնց սղությունը մշտապես լուրջ դժվարություններ էր հարուցում, իսկ երբեմն էլ՝ արգելակում սփյուռքյան մամուլի զարգացմանը: Դրանից բացի, էլեկտրոնային մամուլի զարգացմանը զուգահեռ տպագիր մամուլը որոշակի հետընթաց է ապրում: Այնպես որ, օտար երկրում «Զարթօնքի» նման հաջողված օրաթերթ հրատարակելն արդեն հերոսություն էր, տաժանակիր աշխատանք՝ նյութեր հավաքել, խմբագրել, սրբագրել, շարել, թղթակիցների, ընթերցողների հետ աշխատանք տանել և դա ամեն օր: Եվ այդ ամենն արվում էր օտար երկրում հանուն հայ մարդկանց հայեցի դաստիարակության: Իսկ փորձը ցույց է տալիս, որ այն համայնքներում, որտեղ գործել է հայեցի մամուլը, հայոց լեզվի պահպանումը շատ ավելի բարձր մակարդակի վրա է եղել:

«Զարթօնքը» լույս տեսած բոլոր տարիներին ուշադրության կենտրոնում է պահել ինչպես հայերին առնչվող խնդիրները, այնպես էլ միջազգային կարևոր իրադարձությունները: Հեւողականորեն արծարծել է Հայկական հարցը, առանց էժանագին ցուցամոլության պայքարել մեծ երազի իրականացման համար: Աներկյուղ պաշտպանել հայ հոգու ու եկեղեցու միասնականության, կրթական ու այլ կառույցների անաղարտ պահպանության համար, առանձնակի գուրգուրանքով պաշտպանել ՀԲԸ-ն: Ամենադժվար պայքարի ընթացքում անգամ դատողության հավասարակշռությունն ու ձևի պարկեշտությունը մնացին «Զարթօնքին» բնորոշող հատկանիշներ, որն իր վայելած արդար հեղինակության խարիսխներն էին: Օրենքի ու չափի այդ գիտակցությունն էր, որ իրեն դարձրեց միշտ օրինապահ և ընդունելի գաղթաշխարհում և երախտագետ հարգանք՝ այդ երկրների ժողովուրդների ու նրանց սրբությունների նկատմամբ: Պարբերաբար ջատագովեց հայ-արաբական եղբայրակցությունը, մշտապես հայտնելով իր երախտագիտությունը հյուրընկալ արաբ ժողովրդին: Այն հիմնեց ու պահպանեց ՌԱԿ-ը, որպես կամավոր տուրք՝ ազգին ու Հայրենիքին:

Արձանագրենք, որ «Սփյուռքում 83 տարի բազմաթիվ իրադարձությունների արձագանքող և օբյեկտիվությունն ու անաչառությունը հիմնականում պահպանող «Զարթօնք» հայերեն թերթի գոյությունն արդեն իսկ հաղթանակ կարելի է համարել [**16**]: Եվ որքան էլ 1970-ականների ռմբակոծություններն ու դրանց հետևանքը հանդիսացող ապակիների «շխրտոցներն ու աւելի ահաւոր շէնքերու քանդումին յառաջացուցած անագորոյն ժխորը» փորձեն խանգարել «Զարթօնքը» շարունակում էր իր գործը [**15**]:

Թերթն «անշեղօրէն հաւատարիմ մնաց մամուլի իր սկզբունքներուն, առանց ազդուելու քաղաքական աշխարհի տարուբերող ընթացքէն, նիւթական դժուարութիւններէն, և աստիճանաբար մագլցեցաւ ժողովրդական վստահութեան և գաղափարական խօսքի այն բարձրունքին, որ տենչանքին առարկայ է ամէն հայ թերթի սփիւռքի մէջ» [**8**]: «Զարթօնքը» լիբանանահայ կյանքն ազատագրեց հանրային կարծիքի միահեծան տիրապետությունից և ազգային-քաղաքական մտածումը առաջնորդեց դրական և ազգօգուտ ճանապարհ: Ջատագովեց օրենքի ու ժողովրդի անկաշկանդ արտահայտվելու գործելակերպը, բռնության, սպառնալիքի և հալածանքի փոխարեն բարձր դասեց ազգային ու համայնքային շահերը կուսակցական ու հատվածական «յաղթանակ»ներից:

Ընթերցողների սրտերում վառ պահեց ճշմարիտ հայրենասիրության կրակը, հայացքն հառեց «Մասիսի փէշերուն վրայ ծաղկող Հայրենի Երկրին, քաղաքամայր Երեւվանը ընդունելով իբր կորիզը, միակ երաշխիքը, վաղուան մեծ Հայաստանի մը» [**8**]: Եղավ լիբանանահայութեան պահապան հրեշտակը, նրանց բարեկամը, խորհրդատուն, ընկերն ու առաջնորդը, շահերի պաշտպանը, առաջադիմական և դեմոկրատական լուսավոր գաղափարների քարոզիչը, հայ ժողովրդի բոլոր ներքին թշնամիների հարձակումները ետ մղողը: Թերթի խմբագրականները գլուխգործոցներ եղան հայրենասիրության ճանապարհին, զգալի թվով սփյուռքահայեր «Զարթօնքով» ու «Զարթօնք-Սփորով» կապվեցին մայր հայերենիքին և սիրեցի մայրենին [**17**]: Նրանցից շատերը «Զարթօնք»-ով ոչ միայն ավելի էին հայանում, այլև՝ նրանց մեջ նոր ուժով էր վառվում հայրենասիրության կրակն ու հայրենաբաղձ ձգտումները, որոնք ավելի հզոր թափ առան արցախյան շարժման օրերին. «Անկախ նրանից, թե ինչ ժամանակաշրջան է, այս թերթը կանգնած է եղել Հայաստանի, հայ ժողովրդի կողքին: Կապ չի ունեցել, թե ովքեր են եղել խմբագիրները, թղթակիցները, ինչ համաշխարհային տեղաշարժեր են գրանցվել, «Զարթոնք»-ը հավատարիմ է մնացել իր սկզբունքներին» [**18**]:

Սփյուռքահայ մամուլի համար Համընդհանուր զարթոնքի փուլը՝ 1960-1970թթ., գրեթե վերջնական ձևավորված մի շրջան եղավ, քանի որ հետագա տասնամյակներում՝ մինչև Հայաստանի վերանկախացումը, Սփյուռքում արմատական փոփոխություններ չարձանագրվեցին: Անցյալ տասնամյակները, որոնք «կը նմանին բարդ հաշիւներով եւ անհաւասար ելք ու մուտքով կազմուած մայր տոմարի մը» [**3**], հուշում են, որ այս տասնամյակը տոմարի այն մասն է, «որուն վերջին տեղին տակ քաշուած են հաշուեփակի ճակատագրական երկու գիծերը» [**3**]: Ամենամեծ փոփոխությունն այն եղավ, որ տասնամյակի կեսին, Մեծ եղեռնի հիսնամյակին, Հայաստանն էլ հանկարծ պոռթկաց և պետական որոշումով և արժանավայել հուշարձաններով նվիրագործեց նահատակների հիշատակը: Մյուս կարևոր փոփոխությունն այն եղավ, որ «կուսակցական ակնոցը տեղ տուաւ պետական ակնոցին», երկաթյան վարագույրը տեղի տվեց և ցանկացողը կարող էր այցելել Հայրենիք: Աստիճանաբար տեղի ունեցավ հայրենիքի հայաստանացման գործընթացը, որն անչափ կարևոր շրջադարձ էր Սփյուռքի կյանքում: Այլևս Սփյուռքն ու Հայաստանն սկսեցին խոսել «հայու պես, հայերէն լեզուով եւ Հայկական ոգիով»:

Այս բոլոր գործընթացներն իրենց անմիջական դրսևորումներն ունեցան սփյուռքահայ մամուլում: «Զարթօնքը» մշտապես եղավ Հայրենիքի կողքին, պայքարեց բոլոր խոտոր ուղի ընտրած ուժերի ու նրանց թերթերի դեմ: Թիվ մեկ հարցը՝ օտար հողի վրա հայ մնալ և հայեցի սերունդ մեծացնել, եղավ թերթի հիմնական մտահոգության առարկան: Ամենադրական տեղաշարժն այն եղավ, որ կուսակցություններն ըստ էության աստիճանաբար վերածվեցին մշակութային կազմակերպությունների և միմյանց նկատմամբ որդեգրեցին համեմատաբար հանդուրժողական կեցվածք և ամբողջովին լծվեցին հայապահպանության դժվարին ու պատվաբեր գործին:

Կարծում եմ, որ **արժանին պետք է մատուցել «Զարթօնքի»** բոլոր գաղափարապաշտ կամավորներին, որոնք երեսունական թուականներից մինչև վերջին տարիները շարունակում են կանգուն պահել թերթը: Սփյուռքահայությանը ծառայող թերթը, որ դպրոց եղավ և դարբնոց, «փարոս եւ մոմ, որ տուաւ եւ կը շարունակէ տալ շողեր իր լոյսէն, որուն դիմաց ան քիչ առ քիչ կը փոքրանայ, կը հալի: Կը հալի, բայց չի հատնիր, որովհետեւ «Զարթօնքը» եւ անոր դրօշակակիրները կը հաւատա՛ն Հայաստանին ու Արցախին, Սուրբ Էջմիածնին ու Արարատին, Երեւանին ու Վանին» [**19**]:

Մերօրյա «Զարթօնքը», ցավոք, այլևս նախկինը չէ: Մի շարք իրադարձություններ՝ ԽՍՀՄ փլուզումը և երկաթյա վարագույրի անհետանալը, լիբանանյան, ապա սիրիական պատերազմները և քաղաքական ու տնտեսական մի շարք գործոնների հետևանքով տարածաշրջանի հայաթափումը, խմբագրակազմի չգոյությունը (թերթը հիմնականում լույս է տեսնում «խմբագրի» որոշ գրչախաղերի և Copy past-երի արդյունքում), ՌԱԿ-ում անառողջ մթնոլորտը և այլ գործոններ այն դարձրել են համեմատաբար անգույն ու անասելիք պարբերական: Հուսանք, որ մոտ ապագայում իրավիճակը կփոխվի,

«Զարթօնքը» կվերազարթնի և կրկին կստանձնի իր երբեմնի կարևոր դերակատարությունը հայության կյանքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Մարտիրոս Գօչ**, 25-ամեակի մը առթիւ, «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 21:
2. **Դալլաքյան Կ**., Լիբանանի հայ դեմոկրատական մամուլի պատմությունից, Ե., 1964, էջ 4:
3. **Ծառուկեան Ա**., Սփիւռքի տասնամեակները, 60-ամեայ Սփիւռքը, Անհետացած դէմքեր, Հալեպ, 2000, էջ 9:
4. Տէր Խաչատուրեան Ա., Հայ մամուլի մատենագիտական գործեր, htt:// aztagdaily.com/archive:
5. **Թովմասեան Բ.**, Ինչու եւ ինչպէս հիմնուեցաւ «Զարթօնք»ը /«Զարթօնք»ի 25 ամեակին եւ ՌԱԿ-ի 40 ամեակին առիթով/, «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 7:
6. **Մանվելյան Ս.**, Պահակներ, արթու'ն կեցեք, «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 29:
7. Յաղթական 25-ամեակը, «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 33-34:
8. **Փոլատեան Ա.**, Մտաւորական երիտասարդութեան թերթը, «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 27:
9. **Դալլաքյան Կ**., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, Ե., 1999, էջ 25
10. **Սարգսյան Ս.**, Հայ մամուլը 217 տարեկան, http://nakhshkaryan.blogspot.com/2012/10/217.html
11. «Զարթօնք» թերթ, թիվ 1, 26 սեպտեմբերի 1937:
12. **Տամատեան Մ.**, Երկու խօսք «Զարթօնք»ին, «Զարթօնք» թերթ, թիվ1, 26 սեպտեմբերի 1937:
13. Հաճոյք պատասխանել «Զարթօնք-ի կոչին, «Զարթօնք» թերթ, թիվ 1, 1937:
14. **Վահէ-Վահեան**, «Զարթօնք»ը հայ կեանքէն ներս, «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 14:
15. **Դանիելյան Ժ.**, Լիբանանահայ մամուլը պատերազմի տասնամեակին (1975-1984), «Զարթօնք» բացառիկ, 1986, էջ 37-38:
16. **Գասպարյան Ս.**, «Զարթոնք»- բացառիկ, Բեյրութ, 1962, Պատմաբանասիրական հանդես, թիվ 63-2(247), տե'ս նաև՝ http://hpj.asj-oa.am/513/1/63-2(247).pdf:
17. **Գույումճեան Յ.**, Լիբանանահայ «Զարթօնքը», «Զարթօնք» բացառիկ, Պէյրութ, 1962, էջ 19:
18. Ազգային գրադարանում «Զարթօնքի» 80-ամյակին նվիրված միջոցառմանը Սփյուռքի փոխնախարար Սերժ Սրապիոնյանի ելույթը, https://armenpress.am/arm/news/905995/anacharutyan-ev-obyektivutyan-pahpanum-libanani-zartonq.html:
19. **Kevork Yazdjian**, Lebanese-Armenian press in 2002, Yerevan, 2004, 47 p:

Сдана/Հանձնվել է՝ 19.03.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 22.03.2020
Принята/Ընդունվել է՝ 24.03.2020

Վազգեն Ա Վեհափառը և հայկական սփյուռքը

Պողոսյան Լ. Ա.
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԵՊՀ Հայ եկեղեցու պատմության և եկեղեցաբանության ամբիոն (Երևան, Հայաստան)
lilithpoghosyan@yahoo.com

Վճռորոշ բառեր- սփյուռք, եկեղեցի, հովվական այցելություն, համայնք, կաթողիկոս, օտարերկրյա պետություններ, թեմ, հայ ազգ

Католикос Вазген I и армянская диаспора

Погосян Л. А.
Кафедра истории церкви и экклезиологии ЕГУ (Ереван, Армения)
lilithpoghosyan@yahoo.com

Резюме: Целью данной статьи является освещение визитов Католикоса Всех Армян Вазгена I в армянские колонии, а также наиболее важных результатов этих путешествий. В ходе изложения в основном использованы описательно-исторический и аналитический методы. В качестве одного из важных заключений следует отметить, что пастырские визиты католикоса имели большое значение как для укрепления позиций Армянской Апостольской Церкви, так и для обращения взора армянской диаспоры на родину, на Св. Эчмиадзин. В результате были реорганизованы и открыты несколько епархий, была упрочена связь действующих епархий с Первопрестолом, установлены новые отношения с церквями-сестрами и деноминациями. Его Святейшество внес большой вклад в восстановление армянской государственности, а также стоял у истоков Арцахской войны и освобождения Арцаха.
Ключевые слова: диаспора, церковь, пастырский визит, община, католикос, иностранные государства, епархия, армянский народ

The Activity of Vazgen A Catholicos in the Armenian Communities

Poghosyan L. A.
YSU, Department of Armenian church history and ecclesiology (Armenia, Yerevan)
lilithpoghosyan@yahoo.com

Abstract: The purpose of this article is to present the visits of Vazgen A catholicos to the Armenian communities. We used the descriptive-historical and analytical methods to present the article. As a summary, we should note that that Catholicos' visits had great importance to strengthen the Armenian Apostolic Church and to capture the eyes of the armenians of the Diaspora to the Motherland and Holy Etchmiadzin. As a result, a number of dioceses were reopened and opened, it was strengthened the relationship between the existing dioceses with the Mother See, re-established new relationship with the Sister Churches. His Holiness contributed to the restoration of Armenian statehood and he stood on the base of the war and the liberation of Artsakh.
Keywords*:* diaspora, church, pastor visit, community, catholicos, foreign states, diocese, armenian nation

Վազգեն Ա Պալճյանի կյանքի ուսումնասիրությունը հայ եկեղեցու պատմության առանցքային թեմաներից է: Ուշադրության է հատկապես արժանի նրա գործունեության լուսաբանումը ոչ միայն հայրենիքում այլ նաև հայկական սփյուռքում: Նա իր իմաստությամբ կարողանում է հայրենիքում ի շահ հայ առաքելական եկեղեցու օգտագործել խորհրդային իշխանությունների վարած քաղաքականությունը, իսկ Սփյուռքում՝ օտարերկրյա պետություններինը: Վեհափառն իր երկարատև գահակալության ընթացքում ընդհանրապես բացառիկ ավանդ ունեցավ Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման գործում. դրա խոսուն վկայություններն են չորս տասնամյակների ընթացքում նրա կատարած շուրջ 30 հովվապետական այցելությունները: Հատկանշական է, որ խորհրդային իշխանությունների վարած «երկաթե վարագույրի» ու կաղապարված գաղափարախոսության պայմաններում վեհափառի խելացի գործելակերպի շնորհիվ «Մայր աթոռ» և «հայրենիք» հասկացությունները դարձել էին հոմանիշներ:

1956 թ. փետրվար-մայիս ամիսները վեհափառ հոր հովվապետական այցելությամբ էական իրադարձություններ եղան սփյուռքահայության ազգային-եկեղեցական կյանքում: Նորին վեհափառության այցի նպատակն էր

նաև առավել մոտիկից ծանոթանալ սփյուռքահայության ազգային-եկեղեցական կյանքին՝ ամրապնդելով նրա կապը ս. Էջմիածնի հետ: Հովվապետական այդ այցելության ընթացքում վեհափառը եղավ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանում՝ մասնակցելով հովվապետական ընտրության և օծման հանդիսություններին: Հակառակ իր գործադրած մեծ ջանքերի՝ Վազգեն Ա-ին չհաջողվեց լուծել Կիլիկիո կաթողիկոսության համախոհական թեկնածուի ընտրությամբ, որից հետո հայ եկեղեցու պառակտումը դարձավ դառն իրողություն, մի անբնական վիճակ, որը շարունակվում է մինչ օրս, թեև անհամեմատ նվազ լարվածությամբ կաթողիկոսական երկու աթոռների միջև:

Հարցի լուսաբանման տեսակետից չափազանց կարևոր վավերագիր է Հայկ Առաքելյանի՝ Կրոնական պաշտամունքների գործերի խորհրդի նախագահ Ի. Վ. Պոլյանսկուն 1956 թ. մայիսի 12-ին առաքված թիվ 27 զեկուցագիրը, որը հանգամանորեն ներկայացնում է Վազգեն Ա-ի արտասահմանյան ուղևորության մանրամասները և որոշ չափով լուսաբանում է Անթիլիասում կաթողիկոսական ընտրությունների ժամանակ ստեղծված իրավիճակը[1]:

Անթիլիասից անմիջապես հետո Վեհափառն այցելում է Կահիրեի, Հռոմի, Միլանի, Վենետիկի, Լոնդոնի, Փարիզի և Մանչեստրի հայ եկեղեցիներ, այդ երկրների աշխարհիկ և հոգևոր բարձրաստիճան առաջնորդներին[2]: 1957 թ. հունվար ամսին, վեհափառ հոր շնորհիվ, Մայր աթոռին է վերադարձվում Ալեքսանդր Մանթաշյանի միջոցներով կառուցված նոր վեհարանի շենքը:

Հետաքրքրական է վեհափառ հայրապետի՝ ԱՄՆ հայկական գաղթօջախներ կատարած հովվական այցելությունները: Դրանցից առաջինը՝ 1960թ. մայիսի 20-ից հոկտեմբերի 3, միասնական է դիտարկվում Հյուսիսային և Հարավային Ամերիկաներ և Ֆրանսիա կատարած այցով: Պաշտոնական հրապարակումից մեզ հայտնի է դառնում այն, որ պաշտոնական հանդիպում ԱՄՆ-ում Վազգեն Ա ունեցել է Վաշինգտոնի քաղաքագլուխ Ռոբերտ Մեկլատոնին:

Այդ տարվա Էջմիածին հանդեսի հունիս ամսվա պաշտոնական հատվածում նշվում է, որ ԱՄՆ հայ գաղութը համախմբվել է երկու թեմերի շուրջ՝ Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևելյան թեմ, կենտրոն ունենալով Նյու-Յորքը, և Հյուսիսային Ամերիկայի հայոց Արևմտյան կամ Կալիֆոռնիայի թեմ՝ կենտրոն ունենալով Ֆրեզնոն:

Վազգեն Ա-ի հաջորդ այցը ԱՄՆ հայկական գաղթօջախ տեղի է ունեցել 1968թ.-ին, հետևյալ կերպ՝ ուղևորություն արտասահման, հովվական այցելություն տալու Ավստրիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Ֆրանսիայի հայկական համայնքներին:

Այս հովվական այցելության ժամանակ էլ նույն թվականի ապրիլի 26-ին Նյու-Յորքում քաղաքապետ Ջոն Ֆ. Լինիտզիին պաշտոնական ընդունելություն է կազմակերպում վեհափառ հայրապետի համար: Վազգեն Ա-ին Միացյալ նահանգներում ամենաջերմ ընդունելությունն են կազմակերպում հայկական գրեթե բոլոր համայնքներում և եկեղեցիներում:

Շատ է հիշատակվում Վազգեն Ա վեհափառ հայրապետի 1987թ.-ին ԱՄՆ կատարած հովվական այցելությունը, որի ժամանակ ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանի հետ հանդիպումը լուսաբանվել է ժամանակի հայտնի պարբերականներում և հանդեսներում, ինչպես նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ: Մինչ այժմ, նաև համացանցում պահպանվում է նրանց ջերմ հանդիպումը լուսաբանող տեսաժապավենը:

Այս հովվական այցելությունը տևեց 1987թ.-ի հոկտեմբերի 5-ից մինչև նոյեմբերի 28-ը[a] անվանվելով որպես Ամերիկայի Միացյալ Նահանգների և Կանադայի հայկական եկեղեցական համայնքներին հայրապետական այցելություն: Հայրապետը «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթի թղթակցի այն հարցին, թե ինչ է մաղթում ամերիկահայությանը պատասխանել է. «Մեր ամենաջերմ ցանկությունն է, որ նոր աշխարհի տարածքի վրա մեր ազգի զավակները մնան անշարժորեն հավատարիմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, սրբությամբ պահպանեն իրենց ազգային ինքնությունը և

[1] Մանրամասն տես «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության», գիրք ԺԶ, էջ 262-290:

[2] **Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց,** Ժամանակագրություն, Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, 1990, էջ 21-22:

մեր մայրենի անուշ լեզուն ու իրենց հայացքը միշտ սևեռած պահեն դեպի հավերժական Արարատը և դեպի լույսերը Երևանի»[3]:

Վազգեն Ա-ն մեծ ներդրում է ունեցել քրիստոնյա մյուս եկեղեցիների և կրոնական այլ կենտրոնների հետ հայ եկեղեցու հարաբերությունների ամրապնդման գործում. Հայաստանյայց Եկեղեցին 1962 թվականին դարձավ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ, եղբայրական հարաբերություններ հաստատվեցին նաև հայ կաթողիկե և հայ ավետարանական եկեղեցիների և նրանց առաջնորդների միջև:

Նախորդ հայրապետների այցերից բավական երկար դադարից հետո 1970թ. մայիսի 8-12-ը Վազգեն Ա Պալճյանը այցելեց կաթոլիկ եկեղեցու առաջնորդանիստ Վատիկան և հանդիպում ունեցավ Հռոմի պապ Պողոս VI-ի հետ: Սբ. Պետրոսի տաճարում Հռոմի քահանայապետի պատարագին ներկա է լինում նաև Վազգեն Ա-ն: Հռոմում կաթողիկոսն այցելում է նաև տեղի Լևոնյան վարժարան, որտեղ նրա պատվին մեծ ընդունելություն էր կազմակերպել կարդինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ Աղաջանյանը: Մեծ ոգևորությամբ են նաև վեհափառին ընդունում իտալահայ համայնքը, որի ներկայացուցիչների հետ, մոտ չորս հարյուր հոգի, հանդիպումը տեղի է ունենում Վատիկանի «Կանչելլարիա» պալատի դահլիճում[4]: Վազգեն Ա-ի այցը Վատիկան նոր մակարդակի վրա դրեց հայ առաքելական եկեղեցու և կաթոլիկ եկեղեցու հարաբերությունները: Այս պատմական հանդիպումից տարիներ անց 2001թ. Հռոմի պապ Հովհաննես Պողոս Բ-ն հովվապետական այցելություն կատարեց Հայաստան և հանդիպում ունեցավ Գարեգին Բ Ամենայն հայոց հայրապետի հետ:

Վազգեն Ա-ն զգալի ավանդ ունի նաև աշխարհասփյուռ հայության և նրա մշակութային արժեքների հայրենադարձման գործում: Կաթողիկոս ընտրվելուց հետո խորհրդային ղեկավարների հետ իր հանդիպումներում և նրանց ուղղված նամակներում նա միշտ արծարծել է 1948 թ. ընդհատված հայրենադարձությունը վերականգնելու հարցը, ինչպես և ՍՍՀՄ-ում հայկական բռնախլված տարածքների՝ Նախիջևանի, Արցախի և Ջավախքի՝ Սովետական Հայաստանին միացնելու գերխնդիրը:

Վեհափառի արտասահմանյան այցելությունների արդյունքում հատկապես նշելի է նորաբաց թեմերի հանգամանքը, որով նկատելի է Նորին Վեհափառության վերաբերմունքն ու սևեռուն ուշադրությունն աշխարհի տարբեր մասերում ձևավորվող հայկական նոր համայնքների նկատմամբ: Այս առումով վեհափառը նախաձեռնել էր այդ տարածաշրջաններում ստեղծել հոգևոր կենտրոններ ու թեմական վիճակներ: Այսպես, 1958 թ. հայրապետական կոնդակով կազմավորվում է Հնդկաստանի և Ծայրագույն Արևելքի հայրապետական պատվիրակությունը, 1968թ.՝ Ավստրալիայի և Նոր Զելանդիայի թեմը, 1974-ին՝ Անգլիայի թեմը, 1984թ. վեհափառը կոնդակով հայտարարում է Կանադայի հայկական նոր թեմի բացումը, նույն տարում կազմավորվում են նաև Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի թեմերը, 1989 թ.՝ Արցախի թեմը: 1991-ին հիմնվում է Ուկրաինայի թեմը, 1992-ին՝ Գերմանիայի և Շվեյցարիայի թեմերը:

Այսպիսով, ինչպես տեսանք, վեհափառ հայրապետի եկեղեցական գործունեության մաս է կազմել Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդումը և հայկական գաղթօջախներում հայ առաքելական եկեղեցու ամրապնդումը: Բազմաթիվ հովվապետական այցելությունների արդյունքում նոր թեմեր բացվեցին կամ վերաբացվեցին, բազմաթիվ հանդիպումներ կազմակերպվեցին տարբեր երկրների պետական այրերի և հոգևոր առաջնորդների հետ և որ ամենակարևորն է՝ հայորդիների սրտերում բոցավառվեց դեպի հայրենիք անշեջ կրակը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության, գիրք ԺԶ, էջ 262-290:
2. Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ժամանակագրություն, Մայր Աթոռ սուրբ Էջմիածին, 1990:
3. «Էջմիածին» հանդես, 1970, Ը:
4. «Էջմիածին» հանդես, 1987, ԺԱ-ԺԲ:

Сдана/Հանձնվել է՝ 19.03.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 22.03.2020
Принята/Ընդունվել է՝ 24.03.2020

[3] **«Էջմիածին» հանդես,** 1987, ԺԱ-ԺԲ, էջ 5:
[4] **«Էջմիածին» հանդես,** 1970, Ը, էջ 24:

«Ստեղծագործական միությունների» ձևավորումը, գործունեությունը և փոխակերպումները Հայաստանի խորհրդային և անկախության շրջանում

Մուրադյան Հ. Մ.
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
մշակութաբանության ամբիոնի ասիստենտ (Երևան, Հայաստան)
haykuhi.muradyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ Խորհրդային Հայաստան, ստեղծագործական միություն, պրոլետարական/խորհրդային մշակույթ, սոցռեալիզմ, կապիտալների փոխակերպում, խորհրդային մտավորականություն, հետխորհրդային փոխակերպումներ

«Творческие союзы»: формирование, деятельность и трансформация в советской и постсоветской Армении

Мурадян А. М.
Исторический факультет Ереванского государственного университета
Ассистент кафедры культурологии (Ереван, Армения)
haykuhi.muradyan@gmail.com

Резюме: Творческие союзы были созданы для наблюдения за деятельностью «советской интеллигенции» и для того, чтобы все сферы культуры развивались по предсказуемому пути с точки зрения государственной идеологии. Формирование творческих союзов в 1930-х и 40-х годах стало инструментом установления тоталитарной системы Советского Союза. В любом обществе интеллигенция является важным фактором развития общества, поэтому советские власти использовали этот фактор в политических интересах.
Целью данной статьи является представление политической, социокультурной роли и функций творческих союзов, а так же их преобразований в Советской и постсоветской Армении.
Реализация этой цели предполагает изучение следующих вопросов:
Первое: формирование и функции творческих союзов в Советской Армении (предпосылки создания творческих союзов, формирования инфраструктур, их роль и значение в создании советской (пролетарской) культуры, возможные трансформации форм "капитала" и методов творческого и их административная деятельность).
Второе: идеологические и функциональные преобразования творческих союзов в постсоветской Армении (изменение социального статуса от государственных институтов к общественным организациям, свободные от государственного контроля демократические отношения, новые условия для выживания, новый опыт культурного рынка и т. д.).
Ключевые слова: Советская Армения, творческий союз, пролетарская / советская культура, соцреализм, конвертация «капиталов», советская интеллигенция, постсоветские трансформации

“Creative Unions”: formation, activity and transformation in Soviet and post-Soviet Armenia

Muradyan H.M.
YSU, Facultuy of History, Department of Cultural Studies (Yerevan, Armenia)
haykuhi.muradyan@gmail.com

Abstract: The creative unions were set up to oversee the activities of the "Soviet intelligentsia" and to keep all branches and spheres of culture developing on a predictable path from a state ideology standpoint. The formation of the Creative Unions in the 1930s and 40s became the tools for the establishment of a totalitarian system of the Soviet Union. In any society, the intelligentsia is an important factor for the development of society, so the Soviet authorities used this factor for political interests.
The purpose of this article is to present the political, socio-cultural role, functions and transformations of Creative Unions in Soviet and post-Soviet Armenia.
Implementation of this goal involves examining the following issues:

First: formation and functions of Creative Unions in the Soviet Armenia (preconditions for the creation of creative unions, formation of infrastructures, their role and importance in creating Societ (proletarian) culture, possible transformations of forms of "capital" and methods of creative and administrative activities).
Second: The ideological and functional transformations of Creative Unions in post-Soviet Armenia (change of social status from state institutions to non-governmental organizations, free democratic relations from state control, new conditions for surviving, new cultural market experiences, etc).
Key words: Soviet Armenia, Creative Union, proletarian / soviet culture, social realism, covertations of “capitals”, Soviet intelligentsia, post-Soviet transformations

Մուտք

Ստեղծագործական միությունները[1] ձևավորվեցին «խորհրդային մտավորականության[2]» գործունեությունը վերահսկելու և մշակույթի բոլոր ճյուղերի ու ոլորտների զարգացումը պետական գաղափարախոսության տեսանկյունից կանխատեսելի ճանապարհի վրա պահելու համար: Ստեղծագործական միությունների ձևավորումը 1930-40-ական թվականներին Խորհրդային միության ամբողջատիրական համակարգի կայացման գործիքները դարձան: Ցանկացած հասարակությունում մտավորականությունը հասարակության զարգացման կարևոր գործոն է, ուստի խորհրդային իշանությունները այդ գործոնը «պետականացնելով» սկսեցին այն օգտագործել քաղաքական շահերից ելնելով:

Հոդվածի նպատակն է ներկայացնել ստեղծագործական միությունների քաղաքական և սոցիալ-մշակութային դերակատարությունը, գործառույթները և դրանց փոխակերպումները խորհրդային և հետխորհրդային Հայաստանում:

Սույն նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների քննությունը.

առաջին. ստեղծագործական միությունների ձևավորումը և գործունեությունը խորհրդային շրջանում (ստեղծագործական միությունների ձևավորման նախադրյալները, ենթակառուցվածքների կազմավորումը, հիմնական նպատակը, կանոնադրությունը, «կապիտալների»[3] հնարավոր փոխակերպումները, ստեղծագործական և վարչական գործունեության ձևերը և մեթոդները),

երկրորդ. հետխորհրդային Հայաստանում ստեղծագործական միությունների բովանդակային և գործառութային փոխակերպումները (սոցիալական ստատուսի փոփոխությունը՝ պետական կառույցներից մինչև հասարակական կազմակերպություններ, պետական անմիջական վերահսկողությունից ազատ դեմոկրատական հարաբերություններ, գործունեության նոր պայմաններ, շուկայական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ մշակութային նոր շուկայի ձևավորման փորձեր):

Ստեղծագործական միությունների ձևավորումը

Որպես կանոն, ամբողջատիրական համակարգերը մշակույթն իր տարբեր ճյուղերով դիտարկում են պետական-քաղաքական գաղափարների քարոզչական գործիք, ուստի մշտապես պահում են տեսանելի և վերահսկելի դաշտում: Մշակույթի միջոցով նոր գաղափարների տարածումը, պարտադրումը, նոր արժեքների ստեղծումը, պետական քաղաքականության անքակտելի մասն են կազմում: Կենտրոնացված մշակութային քաղաքականությունը ավտորիտար համակարգերում պետական քաղաքականության անբաժան մասն է և մշտապես իշխանությունների ուշադրության կենտրոնում է գտնվում [**13**]: Նմանատիպ քաղաքականություն էր տարվում նաև Խորհրդային միությունում հատկապես «ստալինյան

[1] Տվյալ հոդվածում «ստեղծագործական միություններ»-ի տակ նկատի են առնված ստալինյան քաղաքականության արդյունքում ձևավորված ստեղծագործական միությունները, որոնք իրենց գոյությունը պահպանեցին մինչ մեր օրերը՝ դեմ առնելով բազմաթիվ ներքին և արտաքին խնդիրների: Հայաստանի երրորդ հանրապետությունում ձևավորված նոր ստեղծագործական կազմակերպություններին նպատակ ունենք անդրադառնալ մեկ այլ առիթով:

[2] Խորհրդային մտավորականությունը ձևավորվեց երկու փուլով. առաջին փուլն ընդգրկում է 1920-25 թվականները, երբ Ալ. Մյասնիկյանի ջանքերով Խորհրդային Հայաստան վերադարձան հայ մշակույթի այնպիսի նշանավոր գործիչներ, ինչպիսիք էին Մարիտրոս Սարյանը, Հակոբ Կոջոյանը, Արամ Խաչատրյանը, Հակոբ Մանանդյանը, Լեոն, Հր. Աճառյանը, Գր. Ղափանցյանը, Մ. Աբեղյանը, Ալ. Թամանյանը, Թ. Թորոմանյանը ա այլոք (մանրամասն տե՞ս՝ Հարությունյան Ա., Ալեքսանդր Մյասնիկյանը և երկրորդ հանրապետության կայացումը, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (59), 2015 թ., էջ 38): Հին մտավորականներից բոլորը չէ, որ ընդունում էին խորհրդային կարգերը և նրա գաղափարախոսությունը, բայց Ալ. Մյասնիկյանի քարոզչության շնորհիվ նրանցից շատերը վերադարձան հայրենիք այստեղ աշխատելու և ստեղծագործելու նպատակով: Խորհրդային մտավորականության ձևավորման երկրորդ փուլն սկսվեց 1925 թվականից և հստակ դիմագիծ ստացավ հատկապես 1928 թվականից սկսած, երբ խորհրդային իշխանությունների գլուխ անցավ Ի. Ստալինը: Խորհրդային ամբողջատիրական համակարգը թելադրում էր, թե ինչպիսին պետք է լինի խորհրդային գրողը, խորհրդային նկարիչը, ինչի մասին պետք է ստեղծագործի, ինչ գաղափարներ պետք է արմատավորի հայ հասարակության մեջ: Խորհրդային մշակույթի առաջին պրոլետար գրողը դարձավ Հակոբ Հակոբյանը (Suny G. R., Looking toward Ararat, p. 25):

[3] «Կապիտալ» եզրույթի տակ նկատի ունենք Պ. Բուրդեի առաջարկած կապիտալի տեսակները՝ սոցիալական, նյութական և սիմվոլիկ: Մանրամասն տե՞ս՝ [**9**, с. 60-75].

շրջանում» (1928-1953 թվականներ)[4]: Այս համատեքստում էլ ձևավորվեցին ստեղծագործական միությունները. մասնավորապես՝ ԽՄԿԿ Կենտկոմի 1932 թվականի ապրիլի 23-ի «Գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» [**12**, стр. 172-173] որոշման համաձայն, որում նշվում է. «Կենտրոնական կոմիտեն հայտարարում է, որ վերջին տարիներին սոցիալիստական շինարարության մեջ զգալի հաջողությունների շնորհիվ ձեռք է բերվել գրականության և արվեստի քանակական և որակական մեծ աճ: Մի քանի տարի առաջ, երբ գրականության մեջ օտար տարրերի զգալի ազդեցություն կար, հատկապես ՆԷՊ-ի առաջին տարիներին, պրոլետարական գրականության կադրերը դեռևս թույլ էին, կուսակցությունը ամեն կերպ նպաստում էր ստեղծել և ամրապնդել հատուկ պրոլետարական կազմակերպություններ գրականության բնագավառում և պրոլետարական գրողների և արվեստագետների դիրքերը: Այսօր, երբ պրոլետարական գրականության և արվեստի կադրերն արդեն աճել են, առաջ են եկել նոր գրողներ և նկարիչներ գործարաններից, կոլխոզներից, գործող պրոլետարական գրական-գեղարվեստական կազմակերպությունների շրջանակները նեղացել են և խոչընդոտում են գրական և գեղարվեստական գործունեությանը: Այս հանգամանքը ստեղծում է վտանգ, որ այս կազմակերպությունները կարող են մեկուսացվել և չներառել այն գրողներին և նկարիչներին, ովքեր աջակցում են սոցիալիստական շինարարությանը»:

Սույն որոշման մեջ նշվում է, որ անհրաժեշտություն է դարձել վերակազմել գրական և գեղարվեստական կազմակերպությունները, ստեղծել նոր միություններ, որոնք կներառեն բոլոր արվեստագետներին: «Այդ հիմքով կենտրոնական կոմիտեն որոշում է.

- լուծարել պրոլետարական գրողների միությունը,
- միավորել բոլոր գրողներին, որոնք սատարում են խորհրդային իշխանության քաղաքականության կայացմանը և ձգտում են մասնակցել սոցիալիստական շինարարությանը, խորհրդային գրողների միասնական միության մեջ ընդգրկելով կոմունիստական խմբակցության մեջ.
- նման այլ փոփոխություն կատարել արվեստի այլ ճյուղերում (երաժիշտների, կոմպոզիտորների, արվեստագետների, ճարտարապետների եւ այլն) կազմակերպություններ;
- գործնական միջոցներ մշակել՝ այս որոշման կատարման համար» [**12**, стр. 173]:

Այս որոշմանը հետևեց 1932 թվականի մայիսի 7-ի ԽՄԿԿ Կենտկոմի կազմբյուրոյի որոշումը «Գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակզմմանն ուղղված միջոցառումների մասին» [**12**, стр. 175-176], որտեղ սույն որոշման տարածումը միութենական հանրապետություններում, այդ որոշման իրականացմանն ուղղված քայլերի մշակումը դարձավ կարևորագույն խնդիր:

Խորհրդային Հայաստանում գրական-գեղարվեստական միությունների վերակազմման մասին համապատասխան որոշումն ընդունվեց նույն թվականի մայիսի 12-ին [**4**] : Սույն որոշման բովանդակությունը բառացիորեն կրկնում էր ԽՄԿԿ Կենտկոմի 1932 թվականի ապրիլի 23-ի «Գրական և գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին» [**12**, стр. 172-173] որոշման հիմնավորումները՝ ստեղծագործական միությունների ձևավորման անհրաժեշտության առաջնային հանգամանք համարելով արդեն գործող նախկին մշակութային կառույցների անօգտակարությունը[5]: Այս որշման հիման վրա ստեղծվեցին Խորհրդային Հայաստանի ստեղծագործական միությունները՝ գրողների[6] (1934), նկարիչների

---

[4] Խորհրդային մշակութային քաղաքականության առաջին փուլը, որն ընդգրկում է 1920-ական թվականները, բնորոշվում են ազատական մոտեցումներով, փորձ էր արվում զարգացնել խորհրդահայ մշակույթը խրախուսելով և աջակցելով հայ մշակույթի գործիչներին (օր. Ալ. Մյասնիկյանի ջանքերով լուսավորության ժողկոմատին կից ստեղծվեց գրական-գեղարվեստական ֆոնդ՝ մշակույթի գործիչների նյութական հարցերը լուծելու համար): Այս շրջանը որոշ տեսաբաններ (Փանոսյան, Գր. Սյունի) բնորոշում են որպես խորհրդային մոդեռնիզացիայի փուլը, որը ավարտվեց Ի. Ստալինի իշխանության գալով:

[5] «Խորհրդային Հայաստանի արվեստի և գրականության պրոլետարական կազմակերպությունները պրոլետ-գրականության և արվեստի զարգացման, գրական նոր կադրերի առաջքաշման և թշնամի իդեոլոգների ազդեցության դեմ պայքարելու գործում նշանակալից աշխատանք են կատարել: Սակայն եթե մինչև վերջին տարիները պրոլետ□ գրական կադրերիը քիչ էին և թույլ, առկա էր գրական խորթ տարրերի աչքի ընկնող ազդեցությունը□□□, և կուսակցությունը ամեն կերպ նպաստում էր պրոլետարական գրողների և արվեստագետների հատուկ կազմակերպությունների ստեղծմանը և ամրացմանը, ապա այժմ, երբ ավարտված է սոցիալիզմի հիմքի կառուցումը Խորհրդային միության մեջ, սոց. տնտեսության և կուլտուրայի բնագավառներում տեղի են ունեցել հսկայական տեղաշարժեր, աճել են գրական նոր կադրեր բանվոր դասակարգի և կոլտնտեսությունների առաջավոր ջոկատներից, □□□-զարգացման ներկա շրջանում պրոլետ-գրականության և արվեստի գոյություն ունեցող կազմակերպությունների շրջանակներն արդեն իսկ նեղ են դառնում և արգելակում են գրական գեղարվեստական ստեղծագործությունների նոր թափի ծավալմանը: Այս հանգամանքը վտանգ է ստեղծում գոյություն ունեցող կազմակերպությունները վերածել խմբակային ինքնամփոփ միջոցի:

[6] Թեև խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո Հայաստանում հիմնվել ու գործել են բազմաթիվ գրական կազմակերպություններ («Հայ գրողների

(1932), կոմպոզիտորների (1932), ճարտարապետների (1932)[7] և նրանց կից պետական մամուլը, որը պետք է լուսաբաներ այս միությունների գործունեությունը:

Ստեղծագործական միությունների նպատակները և խնդիրները, կանոնադրությունը և գործունեությունը

Ստեղծագործական միությունների ձևավորումը Ի. Ստալինի իշխանության տարիներին կապված էր «կոմունիստական շինարարության» հետ, խորհրդային մշակույթի ձևավորման և խորհրդային «ինտելիգենցիայի» գործունեությունը վերահսկելի դարձնելու համար:

Յուրաքանչյուր ստեղծագործական միություն գործում էր առաջնորդվելով համապատասխան կանոնադրությամբ: Համաձայն ստեղծագործական միությունների կանոնադրության՝ ստեղծագործական միությունների գործունեությունը կապված էր քաղաքացիների մշակութային ակտիվության, «ինքնուրույն» գործունեության և նրանց ստեղծագործական պահանջմունքները բավարարելու հետ:

Ստեղծագործական միությունների գործունեության մեջ էր մտնում իր անդամների համար ստեղծագործական մրցույթների կազմակերպումը: Կանոնադրության մեջ էր ներառված ստեղծագործական միությունների հիմնական գործունեության ձևերը՝ բաց մրցույթներ, ստեղծագործական զրույցքննարկումներ, զեկույցներ և բանավեճեր, նոր ստեղծագործությունների քննարկումներ և այլն: Ստեղծագործական միություններ ընդունում էին դիմումի հիման վրա, որին կցված էր տվյալ միության երեք անդամների կարծիքները: Գրողների միության անդամ դառնալու համար գրողը պետք է երկու տպագրված գիրք ունենար, նկարչի դեպքում նա պետք է ներկայացներ իր գեղարվեստական ստեղծագործությունները կամ արվեստի գործերը, ճարտարապետը պետք է ունենար իր կողմից կառուցված շինություն կամ հետազոտություն ճարտարապետության ոլորտում[8]:

Ստեղծագործական միությունների անդամները պարտավոր էին ստեղծագործել պետական պատվերի մեխանիզմով, նպաստել մասսայական գիտակցության ձևավորմանը և ստեղծել «ձևով ազգային, բովանդակությամբ խորհրդային (պրոլետարական) մշակույթ»: Ստեղծագործական միությունների անդամներին կարող էին հեռացնել ստեղծագործական կանոնադրության, նպատակներին և խնդիրներին չհամապատասխանող գործունեություն ծավալելու համար, հակախորհրդային կամ հակահասարակական գործունեության համար, նաև այն դեպքում, եթե միության անդամը երկար ժամանակ չէր մասնակցում միության գործունեությանը:

Ստեղծագործական միությունների անդամ արվեստագետներն ունեին որոշակի լիազորություններ և օգտվում էին իշանությունների՝ իրենց տրված «բարիքներից», դրա փոխարեն լոյալ մնալով խորհրդային գաղափարներին և հաստատված սկզբունքներին: Այդ արտոնություններն իրենց մեջ ներառում էին ստեղծագործելու համար բարվոք պայմանների ստեղծում, արհեստանոցների ձեռք բերում անվճար հիմունքներով, հանգստյան տների ցանցի ձևավորում, նյութական աջակցություն, հրատարակությունների աճ և այլն [**10**]:

Կանոնադրության համաձայն ստեղծագործական միությունները ձեռք էին բերել իրավաբանական անձի կարգավիճակ: Նրանք կարող էին ձեռք բերել տարածքներ, շինություններ և այլ գույք, կնքել պայմանագրեր, ստանալ ֆինանսական միջոցներ, ունենալ հաշիվներ: Ստեղծագործական միությունները ազատված էին պետական և տարածքային հարկերից, տուրքերից և գույքահարկից: Ստեղծագործական միություններն ունեին իրենց մարզային մասնաճյուղերը: Ստեղծագործական միությունների ձևավորման անհրաժեշտությունը, այս կառույցների իրական նպատակները և խնդիրները տարբերվում են վերջիններիս կանոնադրության մեջ սահմանված նպատակներից և խնդիրներից:

Ստեղծագործական հիմնական մեթոդը՝ սոցռեալիզմ

Գրողների և նկարիչների միությունների կանոնադրության մեջ իբրև հիմնական ստեղծագործական մեթոդ էր ներկայացվում սոցիա-

միություն», «Հոկտեմբեր», «Նոյեմբեր», Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիա», «Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիա»), Հայաստանի գրողների միությունը, որպես բաղկացուցիչ մաս, ստեղծվել է ԽՍՀՄ գրողների միության հետ միաժամանակ՝ 1934 թվականի օգոստոսին: Հիմնադիր համագումարում վարչության նախագահ է ընտրվել Դրաստամատ Սիմոնյանը: Հայ գրողների պատվիրակությունը Մոսկվայում մասնակցել է ԽՍՀՄ գրողների միության առաջին հիմնադիր համագումարին: 1939 թվականի սեպտեմբերին Հայաստանում նշվել է «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը, այդ կապակցությամբ Երևանում տեղի է ունեցել ԽՍՀՄ գրողների միության վարչության համագումար (պլենում): 1941 թվականի մայիսի 10-ից 20-ը Մոսկվայում կայացել է հայ գրականության տասնօրյակ: Հայրենական պատերազմին մասնակցել են 50-ից ավելի հայ գրողներ: 1930-ական թվականներին խորհրդահայ մշակույթի զարգացման տեսանկյունից իր ներդրումն է ունեցել ԽՍՀՄ Կենտկոմի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունովը (Հարությունյանը), ով իր պաշտոնը ստանձնել էր 1937 թվականին:

[7] Հետագայում հավելվեցին կինեմատոգրաֆիստների (1957) և թատերական գործիչների միությունները (1940):

[8] Նույն տեղում:

լիստական ռեալիզմը [**14**]: Սոցիալական ռեալիզմի հաստատումն անհրաժեշտ էր խորհրդային պետության ղեկավարությանը, առաջին հերթին իր քաղաքականությունն առավել հիմնավորված, նպատակաուղղված, փաստարկված քարոզելու համար, երկրորդը 1920-30-ական թվականներին ստեղծված մշակութային կառույցների գործունեությունը համակարգելու և վերահսկելու անհրաժեշտությամբ:

«Սոցիալիստական ռեալիզմ» եզրույթն առաջին անգամ հայտնվել է 1923 թվականին «Լիտերատուրնայա գազետա» թերթի համարներից մեկում: Թերթը զետեղել է «Ապահովենք գրական խմբակների ստեղծագործական գործունեության բոլոր պայմանները» տեղեկատվությունը, որտեղ նշվել է, որ Մոսկվայի գրական խմբակների կազմակերպության նիստերին գրողների միության կազմկոմիտեի նախագահ Իվան Գրոնսկին[9] իր ելույթում մասնավորապես ասել է. «Մեթոդի մասին հարցն անհրաժեշտ է վերացականորեն չներկայացնել, այդ գործին չմոտենալ այնպես, որ գրողը նախ պարտադրաբար անցնի դիալեկտիկական մատերիալիզմի դասընթացները, հետո նոր ստեղծագործի: Գրողներին առաջադրվող հիմնական պահանջն է՝ գրել ճշմարտության մասին, ճշմարտացիորեն արտացոլել մեր իրականությունը, որ ինքնին դիալեկտիկական է: Ուստի խորհրդային գրականության հիմնական մեթոդը սոցիալիստական ռեալիզմն է» [**8**, c. 76]: Սոցռեալիզմը որպես ստեղծագործական մեթոդ ենթադրում էր, որ մշակութային գործիչները, արվեստագետները պարտավոր են իրենց արվեստի միջոցով ներկայացնել սոցիալիստական իրականությունը, որն ապացուցում էր, թե պրոլետար խավը ինչքան լավ պայմաններում է ապրում, ինչ կատարյալ համակարգ է սոցիալիզմը, ներկայացնել սոցիալիզմի «լուսավոր» գծերը:

Խորհրդային միության յոթ տասնամյակի գոյության ընթացքում սոցռեալիզմը մնաց հիմնական ստեղծագործական մեթոդը, բայց առավել խիստ գրաքննության էր ենթարկվում հատկապես 1930-1940-ական թվականներին, երբ իշխանության գլուխն էր Ի. Ստալինը: Ստալինը հիմք դրեց մշակույթի միջոցով քաղաքական-գաղափարական խնդիրներ լուծելու խորհրդային պրակտիկային, որը շարունակվեց Հայաստանում նաև խորհրդային կարգերի փլուզումից հետո:

Ստեղծագործական միությունների գործունեությունը Հայաստանի անկախության շրջանում

Խորհրդային միության փլուզմանը հաջորդած տնտեսական և սոցիալական ճգնաժամը Հայաստանում ուղեկցվում էր տարատեսակ մշակութային հաստատությունների քայքայմամբ, ապալեգիտացմամբ, հեղինակազրկմամբ: 1990-ական թվականների երկրորդ կեսին սկսված գլոբալ զանգվածային մշակույթի ներխուժմանը, ժամանցի արդյունաբերության առաջացումը և սպառողական արժենքների ու նորմերի տարածումն ուղեկցվում էր նոր տիպի մշակութային հաստատությունների ձևավորմամբ [**3**]:

Խորհրդային միության փլուզումից հետո արմատական փոփոխությունների ենթարկվեցին հասարակական, քաղաքական և մշակութային կյանքի կազմակերպման սկզբունքները: Անկախություն ձեռք բերելուց անմիջապես հետո կառավարությունը՝ երկրի նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ որդեգրեց ազատական քաղաքականություն: Տնտեսության անցումը պլանայինից շուկայականի ընթացավ մասնավոր սեփականության ձևավորման գործընթացով: Կենտրոնացված պետական մշակութային քաղաքականությունից անցումը լիբերալ-ազատական մոդելի ընթացավ մի շարք բարդություններով և խնդիրներով: ԽՍՀՄ փլուզումից հետո մշակութային օջախները գտնվում էին բարձիթողի վիճակում: Գործարաններն այլևս չէին աշխատում, ուստի դադարել էին գործել նաև նրանց կից մշակույթի ակումբները, խմբակները: Երկրում տարվող ազատականացման և անհատականացման քաղաքականությունը ուղեկցվում էր մշակութային հաստատությունների սեփականաշնորհման և մշակութային կառույցների ապապետականացման գործընթացներով: Սույն փոփոխությունների արդյունքում ստեղծագործական միությունները մի շարք խնդիրների առաջ կանգնեցին, ինչը խանգարում էր նրանց վերակազմմանն ու վերակառուցմանը՝ անկախության սկզբունքներին համապատասխան:

Խնդիր 1. Առաջին խնդիրը վերաբերում է ստեղծագործական միությունների կարգավիճակին. ՀՀ անկախացումից մինչ օրս առանձին օրենքի միջոցով չի ամրագրվել ստեղծագործական միությունների կարգավիճակը: Այսօր ստեղծագործական միությունները գործում են իբրև հասարակական կազմակերպություններ և նրանց գործունեությունը կարգավորվում է

[9] Գրոնսկի Ի. Մ. (1884-1985) – խորհրդային հասարակական գործիչ, լրագրող, գրականագետ: 1930-ական թվականներին Ի. Ստալինի վստահված անձն էր, Խորհրդային գրողների միության կազմկոմիտեի նախագահը: 1939 թ. ամռանը ձերբակալվել է: 16 տարի անցկացրել է ճամբարներում և աքսորում:

«Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով[10]: Սույն օրենքով (հոդված 4) ամրագրված են հասարակական կազմակերպությունների գործունեության սկզբունքները, այդ թվում՝ օրինականությունը, հրապարակայնությունը, անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը: Օրենքը (հոդված 15) մասնավորեցնում է, թե նման կազմակերպությունները ինչ գործունեություն կարող են ստանձնել իրենց նպատակներն իրականացնելու համար, այդ թվում՝ իր գործունեության մասին տեղեկատվություն տարածել, կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր, օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերը[11]: Ստեղծագործական միությունների նախագահները, անդամներ պարբերաբար բարձրացնում էին իրենց գործունեությունը օրենսդրորեն կարգավերլու անհարժեշտությունը: Նման փորձ եղավ 2003 թվականին. ԱԺ ներկայացվեց «ստեղծագործական աշխատողների և ստեղծագործական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը[12]: Օրենքի նախագիծը սահմանում էի ստեղծագործական աշխատողների, ստեղծագործական միությունների կարգավիճակը, նրանց գործունեության հասարակական բնույթը, կանոնադրությունը, անվանակոչումը և այլն: Սույն օրենքը վերաբերում էր, ոչ միայն խորհրդային կաղապարով ձևավորված ստեղծագործական միություններին, այլ ընհանրապես անկախության շրջանում ձևավորված և ապագայում ձևավորվող բոլոր ստեղծագործական կազմակերպություններին: Սույն օրենքի նախագիծը չընդունվեց, ուստի ստեղծագործական միությունների գործունեությունը կարգավորվում է «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով:

Խնդիր 2. Երկրորդ խնդիրը կապված է կարգավիճակի փոփոխության հետ: Ստանալով հասարակական կազմակերպության կարգավիճակ՝ ստեղծագործական միությունները զրկվեցին պետական հովանավորչությունից, պետական ֆինանսավորումից և այլևս պետք է մշակեին իրենց ինքնաֆինանսավորման մոդելը, որը թույլ կտար ստեղծված պայմաններում բովանդակային փոփոխությունների ենթարկվել: Ինքնաֆինանսավորման մեխանիզմը ստեղծագործական միություններում առաջացրեց խնդիրներ. չկարողանալով հարմարվել նոր շուկայական հարաբերությունների թելադրանքին, զանազան այլ մշակութային կառույցների ձևավորման արդյունքում ստեղծված մրցակցության պահանջներին, ստեղծագործական միությունների անդամները սկսեցին լքել անդամակցությունը և անհատապես ներգրավվել մշակույթի ոլորտ և «մշակութային շուկա»[13]:

Խնդիր 3. Հաջորդ խնդիրը կապված է ստեղծագործական միությունների կանոնադրական փոփոխությունների հետ: Հայաստանի անկախացումից հետո միությունները չկարողացան վերակազմավորվել ստեղծված նոր պայմանների համաձայն և կանոնակարգել իրենց գործունեությունը[14]: Ներկայիս ստեղծագործական միությունների կանոնադրությունները զուտ տեխնիկական շտկումների ենթարկված, խորհրդային շրջանից «ժառանգված» կանոնադրություններն են: Այսօրվա ժողովրդավարական պայմաններում ստեղծագործական միությունների դերակատարությունը, նրանց ունեցած գործառութային կարևորությունը հստակ ձևակերպում չունի. նրանք կորցրեցին իրենց՝ մշակույթի ոլորտը, մշակութային մտավորականությանը կարգավորելու և վերահսկելու հիմնական մեխանիզմները, ինչն էլ խորհրդային շրջանում նրանց տալիս էր արտոնություններ:

Խնդիր 4. Ստեղծագործական միությունների շուրջ ծավալված պետական հիմնական խոսույթը կապված է եղել այս հաստատությունների անվան փոփոխության հետ: Թե° պետական, թե° հանրային քննարկումներն ավելի շատ ֆորմալ բնույթ ունեն, քան բովանդակային: Խորհրդային միության փլուզումից հետո պետական ստատուսը կորցրած այս հաստատություններն օրենքով ամրագրվեցին որպես հասարակական կազմակերպություններ:

[10] Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենք // https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=110802

[11] Նույն տեղում:

[12] ՀՀ օրենքի նախագիծը «ստեղծագործական աշխատողների և ստեղծագործական միությունների մասին», Պ-694-23.09.2005-ԳԿ,ՊԻ-010/0 // http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=1334&Reading=0&lang=arm&enc=utf8

[13] ԴԱՆ, հարցազրույց նկարիչների միության անդամների հետ, 25.02.2018:

[14] Ըստ նկարիչ, քանդակագործ Տիգրան Արզումանյանի՝ «... ստեղծագործական միությունների ձևն ու աշխատանքի որակը հիմնովին պետք է փոխվի: Գրողներին, կոմպոզիտորներին, մյուս ստեղծագործողներին վերև բարձրացնելու միջոցը միայն ստեղծագործական միություններն են, մշակույթի նախարարությունը պետք է նրանցից սնվի, նրանցից իմանա՝ ովքեր են լավ, արժանի ստեղծագործողները, որպեսզի ուշադրության արժանան»// առավել մանրամասն տես՝ Ստեղծագործական միությունների ձևն ու աշխատանքի որակը պետք է փոխվի // https://www.panorama.am/am/news/, 26.09.2016:

2014 թվականի հուլիսի 26-ից ուժի մեջ են մտնել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում Ազգային ժողովի կողմից նույն թվականի հունիսի 20-ին ընդունված փոփոխությունները, որոնք միտված են ավանդական ստեղծագործական և մշակութային կազմակերպությունների նպատակային գործունեության խթանմանը: Ստեղծագործական միությունները, որոնք «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի ընդունմամբ վերակազմակերպվեցին որպես հասարակական կազմակերպություններ, կորցնելով հանրային ճանաչում և հեղինակություն ձեռք բերած իրենց «ստեղծագործական միություն» անվանումը կրելու մենաշնորհային իրավունքը, օրենքում ընդունված փոփոխություններից հետո հնարավորություն ստացան իրենց անվանման մեջ օգտագործել «միություն» բառը: Մեկ այլ փոփոխությամբ ՀԿ-ներին, այդ թվում՝ ստեղծագործական միություններին, հնարավորություն ընձեռնվեց իրենց հերթական ժողովները հրավիրել չորս տարին մեկ պարբերականությամբ՝ մինչ այժմ գործող երկու տարին մեկի փոխարեն [**7**]:

Խնդիր 5. ՀՀ անկախացումից ի վեր ազատ դեմոկրատական հարաբերությունների հաստատումը, նոր շուկայական հարաբերությունների ձևավորումը խթանեցին մշակույթի ոլորտում բազմաթիվ միությունների, ստեղծագործական խմբերի ձևավորմանը, անհատների մշակութային գործունեության ծավալմանը, միջազգային մշակութային կապերի ակտիվացմանը: Ստեղծագործական միությունների գոյության անհրաժեշտությունը սկսվեց քննարկման առարկա դառնալ թե° պետական, թե° մասնավոր հարթակներում[15]:

Ըստ կոմպոզիտորների միության նախագահ Ա. Սաթյանի. «... միությունները պահպանում են ազգային մշակույթը: Այն, ինչ որ բնորոշ չէ այլ կազմակերպություններին, որոնք այսօր և՛ ֆինանսավորվում են, և՛ կարողանում են իրենց քաղաքականությունն անցկացնել մեր այսօրվա իրականության մեջ: Ես կարծում եմ, որ միությունները պետք է ունենան որոշակի ֆոնդեր: Ստեղծագործական միությունները հասարակական կազմակերպություններ են և իրավունք չունեն ֆինանսներ աշխատել: Ու հանկարծակի այդ հասարակական կազմակերպությունները, որը ներկայացնում է մշակույթը, ներկայացնում է աշխարհին, փորձում է մտածել ազգային մշակույթի մասին, նա չի ֆինանսավորվում ընդհանրապես» [**5**]:

Խնդիր 6. Հաջորդ խնդիրը կապված է ստեղծագործական միություններում կապիտալների փոխակերպման, դրանց մոբիլության հետ. ժամանակակից պայմաններում ստեղծագործական միությունները դարձել են որոշ անհատների ամբիցիաների բախման վայր: Այսպես օրինակ՝ 2013 թ. գրողների միության նախագահի ընտրությունը բավականին աղմուկով ընթացավ, սրա հետևանքով միության անդամներից շատերը լքեցին այն: Նույնը կարող ենք տեսնել նաև այլ միությունների օրինակով:

Необходимость пенсионной реформы обусловлена общими и конкретными проблемами, с которыми сталкивается большинство стран мира. Изучая международный опыт, те страны, которые только что проводят пенсионные реформы (в частности, Армения), могут детально проанализировать все факторы, которые оказали положительное или отрицательное влияние на реформы, проводимые в этой стране, с учетом всех пробелов, недостатков которые не были приняты во внимание этими странами, а также многие другие важные факторы, которые имеют решающее значение для успеха этого процесса. Правительство Армении и другие государственные органы, осуществляющие реформы, с учетом уроков, извлеченных из международного опыта и особенностей нашей страны, ввели пенсионную систему в Армении. Он имеет как сходства, так и различия по сравнению с другими странами.

Был изучен опыт Чили. Чили является первой страной, претерпевшей радикальные изменения в пенсионной системе,где была введена накопительная пенсионная система,

Чили была первой страной, которая осуществила пенсионные реформы в 1980-х годах и заменила государственную пенсионную систему PAYG на обязательную частную пенсионную систему, основанную на индивидуальных счетах. Чилийская модель неоднократно изучалась как возможная модель реформирования государственной пенсионной системы.

В Чили возраст выхода на пенсию для мужчин составляет 65 лет, а для женщин - 60 лет.

Государственная пенсионная система Чили состоит из трех компонентов: компонент сокращения бедности, компонент индивидуальных счетов и компонент добровольных накопительных взносов.

В случае первого компонента государство предоставляет минимальные пенсии пенсионерам, которые не участвовали в государственной пенсионной системе.

В случае второго компонента государство обещает выплатить минимальную пенсию по возрасту всем участникам частных песнсионных фондов которые на момент выхода на пенсию имеют достаточные средства на своих индивидуальных счетах, чтобы получать пенсию, равную или превышающую минимальную пенсию, и которые соответствуют определенным законодательным требованиям. В этом случае сотрудники получают до 10% от своей зарплаты на своих индивидуальных счетах и выбирают управляющего пенсионного фонда частного сектора (Administradora de Fondos de Pensiones (AFP)). До 2008 года работодатели не были обязаны платить работникам AFP, но после реформ в 2008 году работодатели должны были выплачивать страховые выплаты в связи с потерей или нетрудоспособностью кормильца (примерно 1,49% от предполагаемой заработной платы), предоставляемой частной страховой компанией. После выхода на пенсию человек может получать средства, накопленные на его индивидуальных счетах в форме программных платежей, аннуитетов или единовременных платежей.

Третий компонент позволяет работникам пополнять свой пенсионный доход за счет добровольных накопительных взносов, к которым применяются налоговые льготы.

В 2008 году было принято решение о проведении пенсионной реформы второго поколения, целью которой является расширение участия в государственной пенсионной системе, усиление конкуренции среди управляющих частных секторов, сокращение бедности и ряд других целей. Была обеспокоенность тем, что из-за низкого уровня осведомленности и участия многие работники могут достичь пенсионного возраста, не имея возможности накопить достаточно денег на своих индивидуальных счетах для получения адекватных пенсионных аннуитетов. Реформы 2008 года помогли решить эти проблемы путем расширения компонента сокращения бедности, постепенного вовлечения самозанятых лиц и предоставления дополнительных добровольных накопительных льгот. Ряд других положений также нацелен на снижение высокого уровня управления инвестициями (административные расходы), тем самым повышая уровень конкуренции между AFP.

Сотрудники выбирают одного из менеджеров пенсионного фонда и производят пенсионные выплаты (10% от заработной платы). Деятельность AFP регулируется (со стороны Chile's Superintendent of Pensions), тем самым защищая средства участников, снижая риски, повышая эффективность и обеспечивая адекватную прибыль. AFP собирают платежи и производят платежи, ведут регистрацию индивидуальных учетных записей, предоставляют информацию регулирующим органам и членам системы, а также получают групповую страховку на случай смерти и инвалидности участника.

По состоянию на начало 2020 года шесть AFP развивали деятельность. Каждый AFP предлагает до пяти типов фондов (от A до E) с различной степенью риска. Например, фонд имеет высокий риск (большая часть активов инвестируется в акции), но также обеспечивает высокую доходность. Пять фондовых портфелей работают в соответствии с правилами, установленными для каждого из них, в качестве критерия их рейтинга, ликвидности инвестиций, диверсификации и других факторов. Чтобы оптимизировать инвестиции в каждый фонд, управляющий портфелем поддерживает следующие минимальные и максимальные лимиты.

Активы могут быть инвестированы только в инструменты, которые разрешены законом или Центральным банком Чили и надзорным органом AFP.

На ранних этапах реформы были применены следующие ограничения: 100% для государственных облигаций, 40% для срочных депозитов, 60% для корпоративных облигаций и 20% для других пенсионных фондов. В то время инвестиции в корпоративные акции, а также в иностранные активы не допускались.

Наряду с развитием местного рынка капитала в 1985 году было разрешено инвестировать в некоторые акции, применяя максимальный предел 30%, установленный законом. В 1989 году было разрешено инвестировать в акции недвижимости, продолжая применять 30%-ный лимит. Еще одно важное изменение произошло в 1989 году, когда пенсионным фондам было разрешено инвестировать в акции централизованных компаний. Кроме того, в 1990 году был представлен новый инструмент: Долевые акции с лимитом до 20%.

Иностранные инструменты были включены в список допустимых ценных бумаг в 1990 году, хотя соответствующие правила были опубликованы только в 1992 году. С тех пор был достигнут значительный прогресс в расширении сроков

Таблица 1. Максимальные и минимальные ограничения на инвестиции в активы в Чили в 2017 году

Тип фонда	Ограничение на инвестирование в акции (%)	
	Минимальные	Максимальные
A	40	80
B	25	60
C	15	40
D	5	20
E	0	0

Таблица 2. Структура активов Пенсионного фонда под управлением AFP по состоянию на 31 декабря 2018 года



инвестирования пенсионных фондов за рубежом. Наряду с созданием Системы многосторонних фондов (февраль 2002 г.), иностранные инвестиции были установлены на уровне 20% от общей стоимости Пенсионного фонда в течение 12-месячного периода после принятия закона, в пределах от 20% до 25% для последующих 12-месячных периодов; и с марта 2004 года он вырос с 20% до 30%.

Инвестиционные лимиты регулируют удельный вес инвестиций фонда на эмитента. Существуют различные ограничения на эмитента в зависимости от конкретных секторов экономики. Они могут включать финансовый сектор (банки и лизинговые компании), внешний сектор, инвестиционные и паевые инвестиционные фонды, правительство и компании. В то же время каждый из этих разделов имеет свои ограничения

В настоящее время в Чили работают шесть частных управляющих пенсионными фондами. Это Провиденс (AFP Provida), Хабитат (AFP Habitat),, Капитал (AFP Capital), Купрум (AFP Cuprum), Планвитал (AFP Planvital) и АФП Модело (AFP Modelo)

Чтобы проанализировать, какие из них являются лучшими торговыми AFP на чилийском рынке в 2019 году, нам необходимо оценить участие в управляемых активах, а также ежемесячную оплату каждого депозита. Ниже приведен график активов, управляемых АФП по состоянию на декабрь 2018 года. Как мы видим, AFP с самым высоким процентом активов - это AFP Provida (25,2%) и AFP Habitat (27,4%).

Наибольшая доля активов на 2018, находящихся под управлением AFP, - это AFP Habitat (27%), за которым следует AFP Provida (26,4%). Компания является дочерней компанией American Metlife с AFP Cuprum (20,6%) и AFP Capital (19,6%) (колумбийская Grupo Sura). Самыми низкими процентными ставками по управляемым активам были AFP Modelo (3%) и AFP Planvital (3,4%).

Объем активов под управлением AFP в течение 2007-2018 гг. можно представить в виде следующей диаграммы (табл. 3).

Таблица 3. Валовые активы Пенсионного фонда Чили в 2007-2018 гг., Млн долл. США



Таблица 4. Структура портфеля пенсионного фонда в Чили 2018



В 2014 году объем активов увеличился на 3% по сравнению с предыдущим годом и увеличился на 32% по сравнению с 2007 годом. Как видим, самый низкий уровень был зафиксирован в 2008 году, что было вызвано финансовым кризисом. В Чили самый рискованный пенсионный фонд зафиксировал 45-процентное падение за 12 месяцев. Денежный поток остается относительно стабильным, так как он обычно зависит от наемных работников. В условиях кризиса, однако, также произошло снижение занятости, особенно среди наемных работников, и это оказало глубокое влияние на доходы населения.

Развитие накопительной пенсионной системы показало необходимость использования новых инвестиционных инструментов для расширения альтернативных вариантов. Его цель – удовлетворить растущий спрос на различные виды финансовых инструментов. После первоначальных реформ три основные силы согласовали структуру портфеля пенсионных фондов.

Это:

- Развитие инвестиционных ограничений;
- увеличение объема пенсионных фондов;
- Развитие внутреннего рынка капитала.

Когда эта система была впервые введена, Центральный банк Чили осуществлял довольно строгое регулирование инвестиций малых и слаборазвитых рынков капитала и мелких фондов. В настоящее время инвестиционные ограничения применяются к государственным облигациям, ипотечным облигациям, облигациям

финансовых учреждений и ограниченному числу корпоративных облигаций. Вложения в иностранные ценные бумаги не допускаются.

Поскольку нынешняя система стала лучше, чем система изначально, Чили постепенно ослабила свои инвестиционные правила и ограничения на инвестиции в иностранные ценные бумаги.

С момента запуска системы структура инвестиций в консолидированные портфели AFP резко изменилась. Доля инвестиций в гособлигации стала неуклонно снижаться. По состоянию на конец 2013 года они составляют 7,8% от общего объема инвестиций. На момент запуска системы наибольшая доля была предназначена для облигаций финансовых учреждений (около 62%), но их объем в 2002 году снизился до 7,2%. Вложения в ипотечные облигации достигли максимума в 1983 году, составив 51%, но снизились до 3,6% в начале 1990-х годов. Акции, которые не были разрешены до середины 1980-х годов, составляли не более 4% в 1986 году и 32% с 1986 по 1994 год. Инвестиции в акции на конец 2018 года составляют всего 11%. Корпоративные облигации составляют 26% всех инвестиций. Объем инвестиций в иностранные ценные бумаги постепенно увеличивается, и в 2018 году он составляет около 29% инвестиций.

Таким образом, макроэкономические изменения, произошедшие в Чили в результате пенсионных реформ, следующие:

- Реформы увеличили уровень национальных сбережений за счет обязательных сбережений. Тот факт, что в настоящее время существуют индивидуальные фонды, означает, что люди четко осознают, что сегодня они экономят на своем процветающем будущем.
- Реформа привела к значительному дефициту пенсионного бюджета. Он состоял из так называемого «дефицита продукции» для старых членов PAYG, которые хотели изменить систему распределения на систему с индивидуальным финансированием. Операционный дефицит бюджета связан с тем, что правительство больше не получает пенсионные выплаты, собранные в бюджете до 1981 года, а также потому, что необходимо продолжать выплачивать пенсии тем, кто все еще находится в старой системе и не хочет менять ее на индивидуальную накопительную систему.
- Реформы увеличили спрос на долгосрочные финансовые инструменты. Наряду с реформами деньги, которые государство получает и платит за пенсии, в настоящее время расходуются в частном секторе и должны быть более прибыльными. Вот почему растет спрос на финансовые инструменты, особенно долгосрочные. Это способствует развитию рынка капитала, что является очень важным фактором.
- Реформы позволили управляющим пенсионных фондов (АФП) инвестировать в ценные бумаги с фиксированным доходом и акции на рынке. По этой причине система AFP привела к качественным изменениям на этом рынке. Эти качественные эффекты могут незначительно изменить темпы экономического роста в долгосрочной перспективе, но следует подчеркнуть, что измерить эти качественные эффекты довольно сложно, поэтому возможно, что влияние пенсионной реформы будет недооценено.
- В результате реформ вычеты из заработной платы были сокращены с 26% до 11% (для работников, которые изменили свою прежнюю пенсионную систему на накопительную). Это оказало положительное влияние на рынок труда и способствовало росту занятости. Сокращение этих выплат означает, что работодатели платят меньше за работников, а работники получают больше. Это увеличило спрос на рабочую силу. Это предполагает более широкое участие и занятость в рабочей силе, а также побуждает людей заниматься формальной деятельностью в неформальной экономике. Последнее способствует росту благосостояния и производительности, что также важно.

Однако в апреле 2017 года министр финансов Чили объявил, что он готов к новому плану пенсионной реформы, который однако не был использован решением президента Мишеля Бачелета. В прошлом году президент объявил о повышении на 5 процентных пунктов размера оплаты труда каждого работника со стороны работодателя до 15% и одобрил создание управляющего пенсионным фондом AFP. В настоящее время АФП управляет средствами работников, которые вычитаются из заработной платы и направляются в пенсионные фонды на сумму около 170 миллиардов долларов. Эти средства инвестируются в акционерный капитал или финансовые инструменты с фиксированным доходом, а убытки от операций покрываются участниками фонда.

Список использованной литературы

1. CHILE. REVIEW OF THE PRIVATE PENSIONS SYSTEM, OECD 2018
2. www.rankia.cl
3. Research Paper Chilean Pension System, August 2014
4. Research Paper Chilean Pension System
5. Individual Savings: Better Pensions Plus Economic Development: International Federation of Pension Fund Administrators (FIAP)

Сдана/Հանձնվել է 10.02.2020
Рецензирована/Գրախոսվել է 16.02.2020
Принята/Ընդունվել է 20.02.2020

Փոքր հիդրոէլեկտրակայանները ՀՀ-ում

Խալաթյան Ա. Ս.
Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի ասիստենտ, ԵՊՀ, (Հայաստան, Երևան)
ani_khalatyan@yahoo.com

Վճռորոշ բառեր՝ վերականգնվող էներգետիկա, փոքր հիդրոէլեկտրակայաններ, շրջակա միջավայր, արտանետումներ

Малые гидроэлектростанции в РА

Халатян А. С.
Кафедра математического моделирования в экономике, ЕГУ, (Армения, Ереван)
ani_khalatyan@yahoo.com

Резюме: Статья посвящена изучению проблем, которые касаются малых гидроэлектростанций в РА. Была проанализирована деятельность станций, а также оценено влияние производства электроэнергии малой гидроэлектростанцией на выбросы из энергетического сектора. На самом деле малые гидроэлектростанции могут повысить уровень выбросов.
Ключевые слова: возобновляемые источники энергии, малые гидроэлектростанции, окружающая среда, выбросы

Small hydropower plants in RA

Khalatyan A. S.
Department of the mathematical modeling in the economy, YSU, (Armenia, Yerevan)
ani_khalatyan@yahoo.com

Abstract: The article is devoted to the study of the problems which are concerned to the small hydropower plants in RA. The activity of the plants has been analyzed and the impact of the small hydropower electricity production on the emissions from the energy sector is assessed too. In fact, the small hydropower plants can increase the level of emissions.
Keywords: renewable energy, small hydropower plants, environment, emissions

Վերականգնվող էներգիայի զարգացումը կարելի է ասել, որ դանդաղ է ընթանում, քանի որ էկոլոգիապես մաքուր էներգիայի արտադրման տեխնոլոգիաների տեղադրման նպատակով բարենպաստ քաղաքականություններ են անհրաժեշտ ավանդական էներգիայի հետ հավասար պայմաններ ստեղծելու համար: Վերականգնող էներգիայի արտադրությունը դեռևս չի հասել զարգացման այն մակարդակին, ինչպիսին ավանդական էներգիայինն է: Վերականգնվող էներգիայի որոշ տեխնոլոգիաներ, ինչպիսիք են հիդրոն, կենսազանգվածը և հողմաէներգետիկան մոտ են առևտրայնացմանը և զանգվածային մասշտաբով տեղակայմանը: Վերականգնող էներգիայի այլ տեխնոլոգիաներ, որոնք ունեն մեծ անհրաժեշտություն, ավելի քիչ են մշակված և զարգացման համար պահանջում են երկարաժամկետ կանխատեսում և բարենպաստ օրենսդրություն: Շատ երկրներում քաղաքականության բարելավման հնարավորություն կա, որտեղ նաև կա վերականգնվող էներգիայի տարբեր աղբյուրների տեխնոլոգիաների կիրառման զգալի ներուժ:

ՀՀ-ում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների գերակշիռ մասը պատկանում է մեծ, այնուհետև մասնավոր փոքր հիդրոէլեկտրակայաններին, և վերջին տարիներին էլեկտրաէներգիա են սկսել արտադրել նաև արևային և հողմային կայանները: Վերականգնվող էներգետիկան մեծ ազդեցություն ունի նաև շրջակա միջավայրի վրա, հիմնականում այն կրճատում է վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների ծավալները: Ինչ վերաբերում է մասնավոր ՓՀԷԿ-երն, ապա, վերջիններս նպաստում են նաև էներգիայի տեղի աղբյուրների կիրառմանը, ինչու չէ, նաև փոքր և միջին բիզնեսի ծավալ-

մանը, սակայն, առկա են նաև բացասական ազդեցություններ ևս: ՓՀԷԿ-երի գործունեության արդյունքում խնդիրներ են առաջանում ջրային ռեսուրսների օգտագործման ոլորտում կարգավորող և վերահսկող մեխանիզմների հետ կապված: Գետային էկոհամակարգերը ենթարկվում են ջերմային տատանումների, բնակելի համայնքներից օտարվում են հողեր, խմելու և ոռոգման ջրի անբավարարություն է առաջանում գետի այն հատվածներում, որտեղ տեղադրված է օբյեկտը: Չորանում են ափամերձ անտառները և այլ կանաչ տարածքները, վերանում է ձուկը, խախտվում է գետի էկոհամակարգը:

Չնայած, որ հիդրոէլեկտրակայանների կողմից ջերմոցային գազերի և այլ վնասակար նյութերի արտանետումները շատ քիչ են, ամեն դեպքում որոշակի ծավալներով կարող են տեղի ունենալ [**5**, էջ 24]: Այս հարցը շատ արտադրողների համար անհանգստացնող է տարբեր երկրներում: Չինաստանում այս խնդրի շուրջ արված հետազոտության արդյունքում պարզվել է, որ հիդրոէներգետիկան դեռևս ամենամաքուր էներգիայի աղբյուրներից է [**7**, էջ 13]: Մեկ այլ լայնածավալ ուսումնասիրություն ցույց է տվել որ, իրոք, հիդրոէլեկտրակայանները հողմային և ատոմային էներգիայի աղբյուրներից հետո ամենամաքուր էներգիան են արտադրում [**8**]:

Հայաստանում այս խնդրին նույնպես անդրադարձ է կատարվել, մասնավորապես ՓՀԷԿ-երի տեսանկյունից, պարզաբանվել են մի շարք խմդիրներ: Շատ նախագծեր չեն համապատասխանում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներին, խախտում են բնապահպանական օրենսդրությունը: ՓՀԷԿ-երի շահագործման հետևանքով շատ գետեր աղետալի վիճակում են, որոշումներ կայացնելիս հաշվի չեն առնվում համայնքների բնակչության կարծիքները:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում գնահատել ՓՀԷԿ-երի և ընդհանրապես վերականգնվող էներգետիկայի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Փորձել ենք գնահատել ՓՀԷԿ-երի ազդեցությունը էներգետիկ ոլորտի կողմից շրջակա միջավայր արտանետումների վրա, իսկ տնտեսական զարգացման և ընդհանոր վերականգնվող էներգետիկայի փոխազդեցություններին անդրադարձել ենք նախորդ աշխատանքում [**4**, էջ 3-5]:

Էլեկտրաէներգիայի վերաբերյալ անհրաժեշտ ցուցանիշների տարեկան կտրվածքով տվյալները վերցվել են ՀԾԿՀ-ի պաշտոնական կայքից [**9**]: Մշակված մոդելներում կիրառվել են տարեկան պարբերականությամբ տվյալներ՝ կախված ստացված արդյունքների որակական գնահատականներից: Գծանկար 1-ում ներկայացվում է էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը 2009-2018թ.թ.-ին տարեկան կտրվածքով:

Ինչպես տեսնում ենք գծանկար 1-ից, էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը 2009-2015թթ-ին աճել է, իսկ 2016թ մի փոքր նվազել է, որից հետո նույնպես ավելացել է, սակայն 2018-ին մի փոքր կրճատվել է: Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության մեծամասնությունը կախված է էներգիայի հետևյալ աղբյուրներից՝ ատոմային, ջերմային և հիդրո: Ատոմային էլեկտրաէներգիան գլխավորապես օգտագործվում է բավարարելու բազիսային պահանջարկը: Ջերմային էլեկտրաէներգիան անհրաժեշտ է ոչ ջրառատ և ցուրտ սեզոնների ընթացքում՝ աշնանը և ձմռանը, պահանջարկի սեզոնային աճի բավարարման համար: Հիդրոէլեկտրակայանները ծածկում են բեռնվածության օրական տատանումները, սակայն ՀԷԿ-երի շահագործման համար հասանելի ջրային ռեսուրսները ձմռան ամիսներին նվազում են:

Ինչպես տեսնում ենք ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության 27 տոկոսը բաժին է ընկնում ատոմային էլեկտրակայանին, բավականին մեծ կշիռ է կազմում ՋԷԿ-երի արտադրությունը՝ 43 տոկոս, իսկ հիդրոէլեկ-

Գծանկար 1: ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը տարեկան կտրվածքով 2009-2018թ.թ.:



Գծանկար 2: ՀՀ-ում էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքը 2018 թ.



տրակայաններն արտադրում են էլեկտրաէներգիայի 30 տոկոսը՝ Գծանկար 2:

Գծանկար 3-ում տրված է մասնավոր փոքր հիդրոէլեկտրակայանների արտադրության դինամիկան 2003-2018թթ-ին: Ակնհայտ է, որ արտադրությունը դիտարկվող ժամանակաշրջանում աճի միտում ունի, ինչը պայմանավորված է ոլորտում արտադրողների համար ստեղծված բարենպաստ միջավայրով:

Էլեկտրաէներգիայի արտադրության հիմնական գործոններից է սակագնի ձևավորումը: Այն, որ մեր էներգետիկ համակարգում գործում է ծախսածածկման սկզբունքը վերջնական սպառողների համար սակագին սահմանելիս, միջին ինքնարժեքի ազդեցությունը կարող է մեծ դեր ունենալ: Հետևաբար, անհրաժեշտ վառելիքի գների բարձրացումը կնշանակի էլեկտրաէներգիայի արտադրության ավելի մեծ ծախսեր և էլեկտրաէներգիայի ավելի բարձր սակագներ: Արտադրության ոլորտը ամբողջությամբ կարգավորվում է, չունի մրցակցության պայմաններ: Կարգավորողը տրամադրում է մեկ լիցենզիա կառուցման և շահագործման համար և սահմանում սակագին: Վերականգնվող էներգիայի գները կարգավորվում են առավելագույն գնի հաշվարկման մեթոդոլոգիայով, տարեկան վերահաշվարկի բանաձևով, որը հաշվի է առնում գնաճը և փոխարժեքը:

Մասնավորապես, ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի 2019 թվականի վաճառքի մասին Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովը

Գծանկար 3: ՀՀ-ում ՓՀԷԿ-երի կողմից էլեկտրաէներգիայի արտադրությունը 2003-2018 թթ.



Գծանկար 4: ՀՀ-ում փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի վաճառքի սակագները 2011-2018 թթ.: [**10**]



	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
Բնական ջրահոսքերի վրա	19,28	19,55	20,29	21,06	21,17	23,63	23,75	23,81
Ոռոգման համակարգերի վրա	12,85	13,03	13,52	14,04	14,11	15,75	15,83	15,87
Խմելու ջրատարների վրա	8,57	8,69	9,02	9,36	9,41	10,50	10,56	10,58

մայիսի 2018 թվականի № Ն որոշմամբ սահմանել է [**1**, էջ 1] `

Արևային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ **42.845 դրամ/կՎտժ**՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Փոքր հիդրոէլեկտրակայանների համար սակագները տարբերվում են.

ա. բնական ջրահոսքերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ **23.805 դրամ/կՎտժ**՝ առանց ավելացված արժեքի հարկի,

բ. ոռոգման համակարգերի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ **15.867 դրամ/կՎտժ**՝ առանց ավելացված արժեքի հարկի,

գ. խմելու ջրատարների վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ **10.579** 165 **դրամ/կՎտժ**՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Հողմային էլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ **42.739 դրամ/կՎտժ**՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը՝ **42.739 դրամ/կՎտժ**՝ առանց ավելացված արժեքի հարկի:

Գծանկար 4-ում տեսնում ենք, որ 2011-2018 թթ ընթացքում ՓՀԿ-ից առաքվող էլեկտրաէներգիայի վաճառքի սակագները դինամիկ կերպով բարձրացել են: Հետևաբար, ևս մեկ անգամ կարևորվում է այն հանգամանքը, որ

շուկայի կառուցվածքը և սակագների մշակումը հետագա զարգացման ևս մեկ կարևորագույն մասն են ՀՀ էներգետիկ համակարգի համար:

Զարգացման միջնաժամկետ հեռանկարներով ենթադրվում է, որ Հայաստանի էլեկտրաէներգետիկական շուկայում արդյունավետության բարձրացմանը և ներդրումների խթանմանը կարող է նպաստել շուկայի ազատականացումը: Սակագների հաշվարկի մեթոդաբանության վերանայումը, որի արդյունքում կներկայացվեն առավել արդյունավետ սեզոնային և ժամային սակագնային կառուցվածքներ, նույնպես հանդիսանում է շուկայի զարգացման միջնաժամկետ բարեփոխումների մի մասը:

Արտադրողների կողմից էլեկտրաէներգիայի վաճառքի սակագները արտացոլվում են վերջնական սպառման համար սահմանվող սակագներում, ինչն էլ բնականաբար անդրադառնում է էլկտրաէներգիայի սպառման ծավալների վրա:

Էներգիայի սպառման փոփոխությունների, այդ թվում, նաև էներգետիկ աղբյուրների և կենսամակարդակի միջև գոյություն ունեցող ուղղակի կապը մարդկային զարգացման կարևորագույն հատկություններից է: Այստեղ, նշանակալի են վառելիքի և էլեկտրաէներգիայի այն տեսակները, որոնք մարդիկ օգտագործում են իրենց պահանջմունքները բավարարելու համար [**6**, էջ 25-51]: Մեկ այլ հեղինակի կարծիքով էներգիայի արդյունավետ սպառումը, որը մյուս կողմից, նաև վստահելի, մատչելի ու մաքուր է, նույնչափ կարևոր է, ինչքան կայուն զարգացման բաղադրիչները [**3**, էջ 711-71]:

Ժամանակակից աշխարհում տնտեսության կայուն զարգացումը լուրջ մարտահրավեր է հանդիսանում սեփական վառելիքաէներգետիկ պաշարներ չունեցող երկրների համար: Այս առումով ՀՀ-ն դիտարկում է կայուն էներգետիկայի զարգացումը որպես ազգային անվտանգության ապահովման բաղադրիչներից մեկը: ՀՀ կառավարությունը մեծ նշանակություն է տալիս կայուն էներգետիկ զարգացմանը, վերականգնվող էներգետիկ կարողությունների խթանմանը, տնտեսության բոլոր ճյուղերում էներգիայի արդյունավետ օգտագործմանը, ինչպես նաև տարածաշրջանային էներգետիկ շուկաների հետ ինտեգրմանը:

Ինչպես արդեն նշեցինք, նախորդ աշխատանքում արդեն դիտարկել ենք արտանետումների ծավալի վրա էներգատարության և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների ազդեցությունները: Համաձայն մոդելի էներգատարության մակարդակի մեկ միավորով ավելացումը 28.64-ով կրճատում է արտանետումների ծավալը: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մեր երկրում էլեկտրաէներգիայի արտադրության մեծ մասը դիտարկվող ժամանակահատվածում բաժին է ընկել ատոմային և ջերմային էներգետիկային: Ինչ վերաբերում է վերականգնվող էներգետիկայի արտադրությանը, ապա դրա միավոր ավելացումը նվազեցնում է արտանետումների ծավալը 1.04-ով: Տնտեսական զարգացման վրա փոխազդեցությունները նույնպես գնահատվել են, և հետաքրքիր արդյունքեր են ստացվել: Վերականգնվող էներգետիկայի ավելացումը կրճատում է ՀՆԱ-ն հաջորդ տարում 0.157-ով: Նման արդյունք է առկա նաև մի շարք այլ երկրներում, ինչպիսիք են Իտալիան, Թուրքիան [**2**, էջ 507-514]: Սակայն, նույնը չի կարելի ասել ԱՄՆ-ի և Գերմանիայի համար, սա խոսում է այն մասին, որ վերականգնվող էներեգետիկայի ավելացումը դրական է ազդում ՀՆԱ-ի վրա ավելի զարգացած երկրներում:

Մեր կողմից պարզապես գնահատվել է գծային ռեգրեսիոն մոդել էներգետիկ ոլորտի կողմից շրջակա միջավայր արտանետումների ծավալների վրա ՓՀԷԿ-երի արտադրության ծավալների ազդեցությունը պարզելու համար: Այս կերպ ուղղակի կարելի է տեսնել այս փոփոխականների միջև նախնական փոխազդեցությունները: Մոդելը ունի բավարար որակական գնահատականներ, դետերմինացիայի գործակիցը հավասար է 0.47, գործակիցները վիճակագրորեն նշանակալի են: Մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$CO_ENERGY = 2.242*SMALL_HYDRO + 5184.993$$

որտեղ CO_ENERGY-ն էներգետիկ ոլորտի արտանետումներն են՝ Գգ CO2 համ, SMALL_HYDRO-ն ՓՀԷԿ-երի կողմից էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը՝ մլն կվտ/ժ: Ստացվում է, որ ՓՀԷԿ-երի միավոր

արտադրության ավելացումը 2.242-ով կարող է մեծացնել արտանետումների ծավալը: Այս արդյունքը խոսում է այն մասին, որ այս ոլորտում վերոհիշյալ խնդիրների շարքում ևս մեկն է ավելանում, և ՓՀԷԿ-երի գործունեության հետևանքները գնահատելու համար անհրաժեշտ է ավելի մանրամասն հետազոտություն իրականացնել կապված օգտագործվող սարքավորումների տեսակների, տեղակայման և կլիմայական առանձնահատկությունների հետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագներր սահմանելու մասին և -180 որոշում, հծկի, 30 մայիս, 2018թ:
2. **Bozkurt C., Akif Destek M.**, Renewable Energy and Sustainable Development Nexus in Selected OECD Countries. International Journal of Energy Economics and Policy, 2015, 5(2).
3. **Goldemberg, J., and S. Teixeira Coelho** (2004). Renewable energy – Traditional biomass vs. modern biomass. Energy Policy, 32(6).
4. **Khalatyan A.**, The impact of renewable energy on the economic development in Armeni,, Рыночная трансформация экономики России: проблемы, перспективы, пути развития, Сборник статей по итогам Международной научно-практической конференции 10 ноября 2019г, стр. 3-5
5. **Steinhurst W., Knight P., Schultz M**., Hydropower Greenhouse Gas Emissions, State of the Research, Synapse Energy Economics, 2012, 24p.
6. **Smil,V**. Energy in the twentieth century: Resources, conversions, costs, uses, and consequences. Annual Review of Energy and the Environment, 25, 2000, pp. 21-5
7. **Xuerong Li, Faliang Gui, Qingpeng Li**, Can Hydropower Still Be Considered a Clean Energy Source? Compelling Evidence from Middle-Sized Hydropower Station in China, MDPI, Sustainability 2019, 13p.
8. https://www.hydropower.org/news/study-shows-hydropower%E2%80%99s-carbon-footprint
9. http://www.psrc.am
10. http://www.psrc.am/am/information-to-investors/tariffs

Сдана/Հանձնվել է՝ 15.01.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 22.01.2020
Принята/Ընդունվել է՝ 28.01.2020

Վերականգնվող էներգետիկայի հաղթարշավը աշխարհում և հեռանկարային ուղղությունները Հայաստանում

Մանուկյան Ս. Ֆ.
տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, (Հայաստան, Երևան)
sarkis.ar@gmail.com

Վճռորոշ բառեր՝ վերականգնվող էներգիայի աղբյուրներ (ՎԷԱ), արևային ՖՎ էլեկտրակայաններ, հողմնաէներգետիկա, հիդրոէներգետիկա, երկրաջերմային էներգիա, waste-to-energy

Триумф возобновляемой энергетики в мире и перспективы в Армении

Манукян С. Ф.
Национальный Политехнический Университет Армении (Ереван, Армения)
sarkis.ar@gmail.com

Резюме: Целесообразность и эффективность использования возобновляемых источников энергии в Армении не вызывает сомнений. Это подтверждается глобальными тенденциями последних 5 лет в этой области, которые наиболее очевидны в области солнечной фотоэлектрической и ветровой энергетики. Позитивные события также наблюдаются в Армении, но они не соответствуют глобальным тенденциям, а их качество и структурные изменения в энергетической системе еще не очевидны. Армения также может поставить перед собой амбициозные цели и добиться быстрого прогресса в области возобновляемых источников энергии. Статья представляет собой информационно-аналитическую работу, цель которой - представить современные процессы ВИЭ и помочь им определить наиболее перспективные направления для нашей страны и рассмотреть механизмы, которые помогут им быстрее расти в Армении. Особое внимание уделяется направлениям использования солнечной фотоэлектрической энергии, waste-to-energy, геотермальной энергии и энергии ветра, которые могут быть стратегически целесообразными для Армении в ближайшем и отдаленном будущем.
Ключевые слова: возобновляемые источники энергии (ВИЭ), солнечные фотоэлектрические электростанции, ветроэнергетика, гидроэнергетика, геотермальная энергия, waste-to-energy

The Triumph of renewable energy in the world and perspectives in Armenia

Manukyan S. F.
National Polytechnic University of Armenia (Yerevan, Armenia)
sarkis.ar@gmail.com

Abstract: The expediency and efficiency of the use of renewable energy sources in Armenia is beyond doubt. This is supported by the global trends of the last 5 years in this field, which are most evident in the fields of solar photovoltaic and wind energy. Positive developments are also observed in Armenia, but they are not in line with global trends, and their quality and structural changes in the energy system are not yet apparent. Armenia can also set ambitious goals and make rapid progress on renewable energy. The article is an informational-analytical work aimed at presenting modern RE processes and helping them to identify the most promising directions for our country and to look at mechanisms that will help them grow at a faster rate in Armenia. Particular emphasis is given to the directions of solar photovoltaic, waste-to-energy, geothermal and wind energy sources, which may be strategically feasible for Armenia in the near and far future.
Keywords: renewable energy sources (RES), solar PV power plants, wind power, hydropower, geothermal energy, waste-to-energy

Հայաստանում վերականգնվող էներգիայի աղբյուրների յուրացման նպատակահարմարությունը և արդյունավետությունը ներկայումս այլևս կասկած չի հարուցում: Դրան են նպաստում հատկապես վերջին 5 տարիների գլոբալ միտումները այս ոլորտում, որոնք առավել ակնհայտ երևում են արևային ֆոտովոլտային և հողմնային էներգիայի ոլորտներում: Չմոռանանք, որ ընդամենը մի քանի տարի առաջ ինչքան շատ էին հոռետեսական և բացասական կարծիքները վերականգնվող էներգետիկայի հեռանկարների վերաբերյալ:

Ներկայումս վերականգնվող էներգետիկայի (ՎԷ) աճի տեմպերը և տարածման մասշտաբները կարելի է ասել տպավորիչ են և ոգևորող: Հայաստանում դրական զարգա-

ցումներ նույնպես նկատվում են, սակայն դրանք համահունչ չեն գլոբալ միտումների հետ և առայժմ դրանց որակական և կառուցվածքային արդյունքները էներգետիկ համակարգում ակնհայտ չեն (առանց հիդրոէներգետիկայի): ՎԷ-ի զարգացման տեմպերը հուշում են, որ Հայաստանը նույնպես կարող է հավակնոտ նպատակներ դնել և արագ տեմպերով իրականացնել առաջընթաց, այն պետք է դառնա առանձին ենթաճյուղ էներգետիկ համակարգում: ՎԷ-ն պետք է լինի զարգացող և առաջնայնություն ունեցող ոլորտ, իր բոլոր փոխկապակցված՝ կրթական, նախագծային, արտադրության, նորարարական, սպասարկման ինստիտուտներով հանդերձ:

Հոդվածը տեղեկատվական-վերլուծական բնույթի աշխատանք է, որի նպատակը կայանում է ներկայացնել ժամանակակից ՎԷ-ի գործընթացները և դրանց օգնությամբ հստակեցնել ամենահեռանկարային ուղղությունները մեր երկրի համար: Հատկապես կարևորում ենք արևային ֆոտովոլտային, waste-to-energy, երկրաջերմային, հողմնային (քամու) էներգիայի աղբյուրներից էներգիա ստանալու ուղղությունները, որոնք մոտակա և հեռու ապագայում ռազմավարական առումով ամենանպատակահարմարը կարող են լինել Հայաստանի համար: Հոդվածում հպանցիկ դիտարկվում են նաև ՎԷ-ին աջակցության մեխանիզմները:

Հոդվածում օգտագործվել են IRENA, REN21, BLOOMBERG, DELOITEE, EUROSTAT, IEA, Enerdata և այդ ոլորտում այլ մասնագիտացված միջազգային կառույցների հրապարակված վիճակագրական ցուցանիշները, զեկույցները և հրապարակումները:

ՎԷ-ի միտումները աշխարհում՝ 2018-2019թ.-ին

Վերականգնվող էներգետիկայի 2016-2017 թթ. գլոբալ միտումների և դրանց աճին խթանող պատճառների մասին արդեն անդրադարձել ենք հետևյալ հոդվածներում [1, 2]: Այդ պատճառով կրկնություններից խուսափելու համար այս անգամ կդիտարկենք վերջին երկու տարիների՝ 2018-2019թթ.-ի միտումները: Կարող ենք ասել, որ ՎԷ-ի հզորությունները ավելի արագ են աճում, քան կանխատեսվում էր: 2016-2017թ.-ի ՎԷ-ի հիմնական խթանող միտումները շարունակվել են նաև 2018-2019 թթ.-ին: Դրական միտումները պայմանավորված են նախնառաջ ներդրումային ծախսերի և ընթացիկ ծախսերի շարունակական անկմամբ: Հետևյալ հիմնական միտումները կարելի է առանձնացնել ՎԷ-ի համար՝ զարգացնող քաղաքականություն, ներդրումների հետաքրքրության ընդլայնում և տեխնոլոգիաների զարգացում [3]: Դա նշանակում է, որ առաջին դեպքում պետությունների կողմից աջակցությունը ՎԷ-ին ամբողջ աշխարհում ավելի ընդգրկուն է դառնում, իսկ ներդրումների պահով՝ խոշոր ընկերություններից մինչև փոքր ընկերություններ նույնպես մեծ հետաքրքրություն ունեն ՎԷ-ի նկատմամբ, այդ թվում նաև՝ նավթի և գազի ոլորտի խոշոր ընկերությունները, ֆինանսական կորպորացիաները, ակտիվներ կառավարող ընկերությունները: Տեխնոլոգիաների զարգացումը նույնպես գների նվազման կարևորագույն խթան է: Գների անկումը, մրցակցության աճը և էներգիայի կուտակիչների զարգացումը հիմնական խթաններն են եղել վերջին տարիներին: Արդյունքը՝ աղտոտվածության նվազեցում, բնակչության առողջության բարելավում, էկոլոգիական կայունության ապահովում, նոր աշխատատեղերի ստեղծում ՎԷ-ն զարգացող տարածքներում: Եվրոպական մի քանի քաղաքներ նպատակ են դրել 2050 թ.-ին հասնել ածխաթթու գազով աղտոտման 0-ական մակարդակի:

2020թ.-ի համար կանխատեսվում է, որ վերականգնվող էներգիայի ստացման ծախսերը ավելի մրցունակ կլինեն ավանդական էներգիայի աղբյուրների հետ համեմատած: Ներկայումս էլ, դրանք համեմատելի են ավանդական աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի ծախսերի հետ, որոշ դեպքերում նույնիսկ ցածր են: Այսինքն, էլեկտրաէներգիայի արտադրության սեկտորում ՎԷ ավելի մրցունակ է դառնում, քան ավանդական աղբյուրներինը: ՎԷ-ի զարգացման համար մասնավոր սեկտորը խաղում է հանգուցային դեր՝ գնումների և ներդրումների տեսակետից: Միաժամանակ տնային տնտեսությունները ավելի մեծ հնարավորություններ ունեն մուտք գործել այդ համակարգեր՝ ստեղծելով լրացուցիչ հզորություններ:

Աղյուսակ 1

Վերականգնվող էներգետիկայի ցուցանիշները, 2018	**Չափողա-կանություն**	**2017**	**2018**
Ներդրումների ծավալը, նոր (տարեկան) ՎԷ հզորու-թյուններում	$ մլրդ.	326	**289**
ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱ, գումարային հզորությունները			
ՎԷ հզորությունները (ներառյալ հիդրոէներգետիկան)	ԳՎտ	2197	**2378**
ՎԷ հզորությունները (առանց հիդրոէներգետիկայի)	ԳՎտ	1081	**1246**
Հիդրոէներգետիկ հզորությունները	ԳՎտ	1112	**1132**
Հողմնային էներգակայանների տեղակայված հզորությունները	ԳՎտ	540	**591**
Արևային ՖՎ կայանների տեղակայված հզորությունները	ԳՎտ	405	**505**
Կենսաէներգետիկ կայանների տեղակայված հզորու-թյունները	ԳՎտ	121	**130**
Երկրաջերմային էներգիայի տեղակայված հզորությունները	ԳՎտ	12,8	**13,3**
Արևային կենտրոնացված էներգիայի տեղակայված հզորությունները	ԳՎտ	4,9	**5,5**
Օվկիանոսի էներգիայի յուրացման նպատակով տեղակայված հզորությունները	ԳՎտ	0,5	**0,5**
Կենսաէներգիայի (տարեկան) արտադրությունը	ՏՎտ ժ	532	**581**
ՋԵՐՄԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ			
Արևային ջրատաքացուցիչների տեղակայված հզորությունները	ԳՎտ տ.	472	**480**
ՏՐԱՆՍՊՈՐՏ			
Էթանոլի արտադրությունը (տարեկան)	մլրդ լիտր	104	**112**
Կենսադիզելի արտադրությունը FAME (տարեկան)	մլրդ լիտր	33	**34**
Կենսադիզելի արտադրությունը HVO (տարեկան)	մլրդ լիտր	6,2	**7,0**
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ			
ՎԷ-ի ազգային, տարածաշրջանային և համայնքային նպատակներ ունեցող երկրների քանակը	#	179	**169**
ՎԷ-ի սկզբնական և վերջնական էներգիայի 100% ապահովածության նպատակ ունեցող երկրների քանակը	#	1	**1**
ՎԷ-ի ջեռուցման և հովացման 100% ապահովածության նպատակ ունեցող երկրների քանակը	#	1	**1**
ՎԷ-ի տրանսպորտի էներգիայի 100% ապահովածության նպատակ ունեցող երկրների քանակը	#	1	**1**
ՎԷ-ի էլեկտրաէներգիայի 100% ապահովածության նպատակ ունեցող երկրների քանակը	#	57	**65**

Աղբյուր՝ Renewables 2019, Global Status Report, REN 21

Ասել, թե հիմնախնդիրներ և բացասական կողմեր չկան ՎԷ-ում, նույնպես ճիշտ չէ, սակայն դրանք այդքան սարսափելի չեն, որքան ներկայացվում էին: Հոռետեսների հիմնական փաստարկներն են՝ «կանաչ էներգետիկան» դեռևս մեծ արտադրողականություն չունի և մեծ ներդրումներ են պետք ենթակառուցվածքների համար կամ էժան էներգառեսուրսների առկայության դեպքում ավելի թանկ ՎԷ զարգացնելը նպատակահարմար չէ: Մեկ այլ փաստարկ էր նաև, որ ՎԷ-ի բարձր սակագները, որոնք հաստատվում են ոլորտի աջակցության համար, իր հերթին ազդում է բնակչության համար նախատեսված էլեկտրաէներգիայի սակագների վրա: ՎԷ-ի աղբյուրներից ստացվող էլեկտրաէներգիայի ինտեգրման տեխնիկական բարդությունները ընդհանուր էներգետիկ ցանցին, նույնպես բացասական գործոն են դիտարկվում: Առկա են նաև այլ՝ բնապահպանական, առողջապահական, տնտեսական և տեխնիկական բնույթի բացասական նկատառումներ: Կարելի է ասել, որ այս և այլ հիմնախնդիրները կամ լուծվել են, կամ հաջողությամբ լուծվում են:

Ավելի ու ավելի շատ երկրներ հավակնոտ ծրագրեր են կազմում ՎԷ-ի զարգացման համար: ՎԷ-ի նախագծերի արդյունավետության աճ, պետական ծրագրերի ընդլայնում, քաղաքների և գյուղական համայնքների կողմից նախաձեռնությունների աճ, զարգացող երկրների հետաքրքրությունների աճ, մասնավոր սեկտորի կողմից հետաքրքրությունների աճ, վերականգնվող էներգիայի պահանջարկի աճ, ահա ՎԷ-ի կամ «Կանաչ էներգետիկայի» հիմնական միտումները ըստ РБК-ի [**4**]: 169 երկիր հավակնոտ նպատակներ ունի ՎԷ ոլորտում՝ պետական և մարզային մակարդակներով (տես աղյուսակ 1): 90 երկիր ունի ամենաքիչը ՎԷ-ի 1 ԳՎտ գեներացնող հզորություններ, իսկ 30 երկիր ավելի քան 10 ԳՎտ գեներացնող հզորություններ: ՎԷ-ի ոլորտում ընդգրկված են 10,9 մլն. աշխատող (ներառյալ հիդրոէներգետիկան), որից 3,6 մլն.-ը արևային ֆոտովոլտային էներգետիկայի ենթաճյուղում:

Շուկան կայուն է եղել 2018թ.-ին՝ ավելի քան 180 ԳՎտ նոր հզորություններ են գործարկվել ամբողջ աշխարհում, որից 100 ԳՎտ միայն արևային ֆոտովոլտային էլեկտրակայանների կառուցումով: 2018թ.-ի դրությամբ ՎԷ-ի ընդհանուր հզորությունները աշխարհում ներառյալ հիդրոէներգետիկան կազմել է 2378 ԳՎտ, առանց հեդրոէներգետիկայի՝ 1246 ԳՎտ: Ամբողջ աշխարհում էլեկտրաէներգիայի արտադրության 1/3-ը ապահովում են ՎԷ-ի աղբյուրները, ներառյալ հիդրոէներգետիկան, իսկ առանց հիդրոէներգետիկայի մոտավորապես 12,9%-ը: Աշխարհում նոր կառուցվող էներգետիկ նշանակության հզորությունների 64%-ը կազմել են ՎԷԱ հզորությունները, դա նշանակում է, որ տարեկան կտրվածքով ավելի շատ ՎԷ-ի հզորություններ են կառուցվում, քան ավանդական, դեռևս սկսած 2012թ.-ից: Իր հերթին 2018թ.-ին կառուցվող ՎԷ-ի կառուցվող հզորությունների 55%-ը ՖՎ էլեկտրակայաններ են, 28%-ը հողմային էլեկտրակայաններ և 11%-ը հիդրոէլեկտրակայաններ են: Ավելացնենք նաև, որ 2019 թ.-ին էներգիայի կուտակիչների գլոբալ հզորությունները կազմել են 3 ԳՎտ [**5**]: Թվերով չծանրաբեռնելու համար, ստորև բերված աղյուսակում ներկայացված են վերականգնվող էներգիայի աղբյուրների ցուցանիշները ըստ REN21-ի:

2019 թ.-ի համար, տվյալները դեռևս հասանելի չեն, սակայն կարող ենք ասել, որ գրեթե նույն բարձր տեմպերով հզորությունների աճ է գրանցվել ՎԷ-ում: Ինչպես տեսնում ենք առաջընթացը ավելի շատ նկատվում է հիմնականում էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում, քիչ աճ է գրանցվել ջեռուցման և հովացման համակարգերում և տրանսպորտի համակարգում [**6**]: Վերջիններիս նկատմամբ ավելի պակաս քաղաքական աջակցություն կա և նոր տեխնոլոգիաներն ավելի դանդաղ են փոփոխվում:

Ջեռուցման և հովացման համակարգերի համար ՎԷ-ի հետաքրքրությունը դրսևորվում է տեղական և համայնքային մակարդակով: Ջեռուցման և հովացման համակարգերում ՎԷ-ի դերի մեծացումը պետք է իրականացնել նաև արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և բնակելի շենքերում դրանց կիրառման ընդլայնմամբ: Պետք է նվազեցնել շենքերում և կառույցներում ջերմության նկատմամբ պահանջարկը էներգախնա նյութերի և տեխնոլոգիաների օգտագործմամբ և մեծացնել նորագույն տեխնոլոգիաների կիրառումը ջեռուցման և հովացման նպատակներով: Այս-

տեղ հատկապես արդյունավետ են երկրաջերմային պոմպերի կիրառումը [**6**]:

Տրանսպորտի ոլորտում կենսավառելիքի կիրառումը ունի համեմատաբար մեծ ներկայություն հատկապես ավտոտրանսպորտային միջոցներում: Կենսադիզելի և էթանոլի արտադրությունը աճում է, թեև այն համեստ է իր ծավալներով: Սակայն ՎԷ-ն պետք է ավելի ընդգրկուն ներկայություն ունենա երկաթուղային, ջրային և օդային տրանսպորտում:

ՎԷ-ն էլեկտրամոբիլների ոլորտում աճ է գրանցում՝ էլեկտրամոբիլների թիվը զգալիորեն աճել է 2018-2019 թթ.-ին: Իսկ 2019թ.-ը էլեկտրամոբիլների նկատմամբ պահանջարկի առումով ավելի հաջող էր, նախորդ տարվա համեմատ: Շատ քաղաքներ են ձգտում էլեկտրական ավտոբուսային պարկերի ներդրմանը:

Ներդրումներ: 2018 թ.-ին ներդրումների ծավալը կազմել է՝ 289 միլիարդ դոլար, որը 37 միլիարդ դոլարով պակաս է եղել 2017թ.-ի համեմատ, սակայն դա բացատրվում է, ոչ թե հետաքրքրության նվազմամբ կամ կառուցվող հզորությունների աճի տեմպերի կրճատմամբ, այլ ներդրումային ծախսերի կամ այլ խոսքերով ասած՝ վերականգնվող էներգիայի տեխնոլոգիաների գների նվազմամբ: Ներդրումների կրճատումը նկատվել է հատկապես Չինաստանում: Միաժամանակ տեխնոլոգիաների գների նվազումը պայմանավորված է եղել հատկապես Չինաստանի կողմից միջազգային շուկան վերջին տարիներին էժան ՎԷ սարքավորումների հեղեղումով:

Ներդրումների ուղիղ կեսը ապահովում են զարգացող երկրները: Չինաստանը թեև հանդիսանում է ամենախոշոր աղտոտողը, միաժամանակ ամենախոշոր ինվեստորն է ՎԷ-ում: Ամեն դեպքում 2018թ.-ին Չինաստանին բաժին է ընկել ամբողջ ներդրումների 32%-ը, Եվրոպային 21%-ը, ԱՄՆ-ին 17 %-ը: Ըստ BloombergNEF-ի, 2010-2019թթ.-ի ընթացքում ՎԷ-ի ոլորտում ներդրումները կազմել են 2,8 տրիլիոն դոլար, որից կեսը ծախսվել է արևային էներգակայանների վրա: Վերջին տասնամյակի ընթացքում ՎԷ-ի ոլորտում Չինաստանի կողմից ներդրումները կազմել են մոտ 758 մլրդ. դոլար, Միացյալ Նահանգները՝ 356 միլիարդ դոլար, Ճապոնիան՝ 202 մլրդ. դոլար, Գերմանիան՝ 179 մլրդ. դոլար, որն ամենամեծն է ԵՄ-ում, իսկ ամբողջ ԵՄ-ի ներդրումները վերջին տասնամյակում կազմել են 698 մլրդ դոլար [**7**]:

Ծախսեր: 2018թ.-ին արևային ֆոտովոլտային էլեկտրաէներգիայի ստացման ծախսերը 2009թ.-ի համեմատ նվազել են 81%-ով, իսկ հողմնային էլեկտրաէներգիայինը՝ 44-46%-ով: Վերականգնվող էլեկտրաէներգիայի հավասարակշռված ծախսերի (LCOE) նվազումը արդյունք է մի քանի գործոնների՝ ճյուղում ուժեղ մրցակցության, մասշտաբի էֆեկտի, աճուրդների կազմակերպման, վերականգնվող տեխնոլոգիաների զարգացման, ֆինանսական միջոցների էժանացման և սարքավորումների արդյունավետության բարձրացման (The Global Trends in Renewable Energy Investment 2019, BNEF): Աղյուսակ 2-ում տրված են ՎԷԱ-ի էլեկտրաէներգիայի ստացման ծախսերի ցուցանիշները [**8**]:

Ծախսերը նվազում են նաև երկարաժամկետ պայմանագրերի (20-25 տարով) կնքման, մուտքը առաջնային ցանցեր հեշտացման, գնաճի պաշտպանության, արտադրողների համար արդար երկամուտներ ապահովող գների կիրառման հետևանքով:

Նվազում են նաև ներդրումային ծախսերը: Հողմնային տուրբինների կառուցման նոր նախագծերի իրականացումից հողմնային էլեկտրակայանների կառուցման ներդրումային ծախսերը շարունակ նվազում են: Տուրբինների ներդրումային ծախսերը կախված չափերից, միջինը կազմում է 790-900 ամերիկյան դոլար 1 ԿՎտ.-ի համար, 2017 թ.-ի 910-1050 դոլարի փոխարեն: Արևային ՖՎ էլեկտրակայանների համար ներդրումային ծախսերը կազմել են միջինը՝ 1210 դոլար 1 ԿՎտ.-ի համար՝ բարձր դիֆֆերենցված մոդուլների համար: Այսինքն, արևային կամ հողմնային էլեկտրակայանի կառուցման ներդրումները 1 ՄՎտ հզորության համար միջինը 1 միլիոն ամերիկյան դոլլար է:

Ինովացիաներ: Աստիճանաբար հաղթահարվում է եղանակային պայմանների և սեզոնայնության բացասական ազդեցությունը ՎԷ տեխնոլոգիաների արտադրած էլեկտրաէներգիայի ծավալների և արդյունավետության վրա: Զարգանում են նաև էներգիայի կուտակման տեխնոլոգիաները՝ ավելի արդյունավետ և հզոր կուտակիչներ են նախագծվում: Վերականգնվող էներգետիկան շուտով տեխնոլո-

Վերականգնվող էլեկտրաէներգիայի արտադրության ծախսերը

ՎԷ-ի աղբյուրները	Էլեկտրաէներգիայի գլոբալ միջին ինքնարժեքը, (ԱՄՆ դոլար/Կվտժ)	Էլեկտրաէներգիայի ինքնարժեքը, (ԱՄՆ դոլար/Կվտժ)	Էլեկտարէներգիայի ինքնարժեքի փոփոխությունը
	2018	**2018**	**2017–2018**
Կենսաէներգիա	0.062	0.048–0.243	−14%
Երկրաջերմային	0.072	0.060–0.143	−1%
Հիդրո	0.047	0.030–0.136	−11%
Արևային ֆոտովոլտային	0.085	0.058–0.219	−13%
Կենտրոնացված արևային էներգիա	0.185	0.109–0.272	−26%
Ափամերձ-ծովային (Offshore) հողմնային	0.127	0.102–0.198	−1%
Ցամաքային (Onshore) հողմնային	0.056	0.044–0.100	−13%

Աղբյուր՝ Renewable Power Generation Costs in 2018, International Renewable Energy Agency

գիաների կատարելագործման արդյունքում ամբողջ էներգետիկ համակարգի համար հավասարակշռող ազդեցություն կունենա՝ այն բերում է էներգետիկ համակարգի կայունության աճին: *Ընդ որում ՎԷ-ի զարգացման համար տեխնոլոգիաների զարգացումը դառնում է ավելի առաջնային, քան պետական աջակցությունը:* ՎԷ տեխնոլոգիաները արդեն այնքան տարածված են, որ էներգետիկ ցանցերին ինտեգրվելու համար քիչ ճշգրտումներ են անհրաժեշտ: Տեխնոլոգիաների զարգացումը ներառում է՝ ավտոմատացումը, ինտելեկտը, բլոկչեյնը, «խելացի» ցանցերը, որոնք խթանում են ՎԷ-ի տարածումը: Նոր կատարելագործված տեխնոլոգիաների՝ արևային պանելների և հողմնային տուրբինների նախագծումը և կիրառումը, օպտիմալացնում են էներգիայի արտադրությունը, օգնում են ավելի արդյունավետ օգտագործել ՎԷԱ-ի ռեսուրսները, առավել արդյունավետ դարձնել ՎԷԱ-ի շուկան՝ բլոկչեյնը: Արհեստական ինտելեկտի տեխնոլոգիաները օգնում են բարձրացնել մետեորոլոգիական կանխատեսումների ճշգրտությունը, որի միջոցով էլ օպտ-մալացնում են ռեսուրսների օգտագործումը [**9**]: Պերովսկիտ (Perovskit) միներալի օգնությամբ արևային պանելների արդյունավետությունը մեծացել է հասնելով՝ 27,3% -ի: Այն ավելի արդյունավետ է, քան կրեմնիումի կիրառումը: 3D տպագրման միջոցով իրականացվում է դետալների արտադրություն, որոնք հողմնային և արևային էներգիայի արտադրության համար ավելի լայն տարածում են ձեռք բերում, ինչը հանգեցնում է ծախսերի նվազմանը: Ինովավացիոն լուծումներից են նախագծերը, որոնք ուղղված են հիբրիդային սարքավորումների ստեղծմանը, որոնք օրինակ, աշխատում են երկրաջերմային էներգիայի և այլ վերականգնվող էներգիայի աղբյուրների հետ համատեղ: Առաջին երկրաջերմային և արևային ֆոտովոլտային հիբրիդային կայանները գործարկվել են Նեվադայում, որն իր մեջ ներառում է 48 ՄՎտ հզորության երկրաջերմային էլեկտրակայան և 26 ՄՎտ հզորության արևային ՖՎ էլեկտրակայան:

ՎԷ-ի հեռանկարները Հայաստանում

Պետական աջակցությունը վճռորոշ է, սակայն առավել կարևոր է այն, թե ինչ մոդելով է աջակցում պետությունը ՎԷ-ին: Այդ մոդելները սովորաբար ունենում են տնտեսական, քաղաքական և իրավական ասպեկտներ: Կարևոր է նաև ինովացիոն զարգացման համար խթանների ստեղծումը: Նույնիսկ միանման աջակցության մոդելները, տարբեր երկրներում կարող են տարբեր արդյունք ցույց տալ [**11**]:

Ինչպես նշեցինք, հաստատուն սակագները և երկարատև պայմանագրերը ամենարդյունավետ մեխանիզմներն են ՎԷ-ի զարգացման համար: Առավել տարածված են տնտեսական աջակցության մեխանիզմները, որոնք հիմնված են օբյեկտի վրա ազդեցության տեսակով, օրինակ առաջինը՝ գնի վրա ազդեցությամբ և երկրորդը՝ էլեկտրաէներգիայի ծավալների վրա ազդեցությամբ: Միջազգային պրակտիկայում կիրառվում են հիմնականում վերջնական գները՝ ծախս գումարած շահույթ բանաձևով, որոնք ապահովում են արտադրողների համար արդար երկամուտներ [**11**]: Այլ մեխանիզմներից են՝ լրացուցիչ վճարումների, քվոտաների և սերտիֆիկատների տեսքով աջակցությունը, որոնք ապահովում են արտադրության հստակ ծավալներ: Տարբեր երկրներում կիրառվող սուբսիդիաները և հարկային արտոնությունները ներդրողների համար նույնպես գրավիչ խթան են:

«Կանաչ սերտիֆիկատները» զարգացած երկրներում ավելի ու ավելի լայն կիրառություն են ձեռք բերում: Սովորաբար ամեն մի սերտիֆիկատը հաստատում է 1 ՄՎտ-ի էլեկտրաէներգիայի արտադրության փաստը, որը պետք է վաճառվի սպառողներին: Իսկ աճուրդների համակարգը թեև լայն թափ է հավաքում, սակայն ոչ մի երկրում այն չի օգտագործվում որպես հիմնական և միակ ճանապարհ, այն կարող է լինել ամբողջ համակարգի մի մաս:

Ընդհանրապես ածխաջրածինների բարձր գինը հանդիսանում է այն կարևոր մեխանիզմը, որը կարող է խթանել հետաքրքրությունը ՎԷ-ի նկատմամբ: «Ածխածնի» հարկերը և արտանետումների առևտրի մեխանիզմները նույնպես խթանում են աշխարհում հետաքրքրությունը վերականգնվող էներգիայի նկատմամբ:

Հայաստանում գործող աջակցության մոդելը, որի հիմնական առանցքը ՎԷԱ-ի համար ֆիքսված սակագներն են, իհարկե կարևոր և ճիշտ մոտեցում է, սակայն փորձը ցույց է տալիս, որ այն դեռևս բավարար չէ կտրուկ առաջընթացի համար, անհրաժեշտ են նոր մոտեցումներ և մոդելներ:

Կենսաէներգետիկայի նշանակությունը աշխարհում աճում է էլեկտաէներգիայի արտադրության և տրանսպորտային ոլորտներում, բայց հետ է մնում ջեռուցման և հովացման համակարգերում կիրառումից: Չինաստանը հանդիսանում է առաջատարը կենսաէներգետիկայի ոլորտում, ապա հաջորդում են՝ ԱՄՆ, Բրազիլիան և Հնդկաստանը, որոնք միասին 2018թ.-ին արտադրել են կենսավառելիքի 69%-ը: Ոլորտի զարգացումը ենթադրում է կենսավառելիքի նոր տեսակների արտադրություն և դրանց օգտագործում ավիացիայի և տրանսպորտի այլ ոլորտում: Մի շարք քաղաքներ ելնելով տնտեսական, էկոլոգիական և սոցիալական բնույթի նպատակներից, ՎԷ-ի զարգացման համար առաջատար դեր են իրենց վրա վերցրել, օրինակ՝ թափոնների և կոյուղաջրերի օգտահանման արդյունքում կենսագազի, կենսամեթանի և այլ պրոդուկտների արտադրության համար:

Հայաստանում ժամանակին կենսաէթանոլի՝ ստացման 2 ծրագրեր էին մշակվել, (գետնախնձորից և եգիպտացորենից), որոնք մի շարք պատճառներով չիրականացվեցին: Մի գուցե ապագայում դրանք և այլ նման գաղափարներ բիզնես նախագծեր դառնան, բայց ներկա պահին առավել արդիական և արդարացված են waste-to-energy տեխնոլոգիաների միջոցով թափոններից էներգիա ստանալու գաղափարները: Հայաստանի տարածքում խոշոր և միջին քաղաքների կենցաղային աղբավայրերի թափոնների օգտահանման նպատակով էներգիա ստանալու նախագծերը ունեն բնապահպանական, առողջապահական և տնտեսական նշանակություն: Այստեղ կիրառելի է Գերմանիայի փորձը, որտեղ տարածված են չոր աղբի այրումից էլեկտրաէներգիա ստանալու տեխնոլոգիաները: Այնտեղ խոշոր և միջին քաղաքների համար պարտադիր են աղբի այրումից էլեկտրաէներգիա արտադրող գործարանների գործունեությունը: Աղբավայրերում կուտակված աղբի խորը թաղումը, որի վերաբերյալ Հայաստանում ծրագիր է շրջանառվում, նպատակահարմար չէ, ավելի ճիշտ է կենցաղային աղբավայրերից (օրինակ՝ գերմանական և ճապոնական տեխնոլոգիաներով) կենսագազ կամ էլեկտրաէներգիա ստանալ, քան դրանք պարզապես թաղել: Հայաստանում անհրաժեշտ է բոլոր աղբավայրերի վերաբերյալ համալիր ուսումնասիրություններ և դրանց էկոլոգիատնտեսական գնահատման աշխատանքներ իրականացնել, հատկապես՝ waste-to-energy տեխնոլոգիաներով օգտահանման նպատակով: Անհրաժեշտ է նաև կրթական և միջազգային փորձի ձեռք բերման ծրագրեր իրականացնել այս տեխնոլոգիաների կիրառման նպատակով:

Հիդրոէներգետիկան՝ աշխարհում բնութագրվում է կայուն շուկայով, ճյուղում բարձր մրցակցությամբ և հիդրոէներգիայի կուտակման տեխնոլոգիաների նկատմամբ աճող պահանջարկով: 2018 թ.-ին 20 ԳՎտ ավելացվել է ընդհանուր հզորություններին, որի 35%-ը ապահովել է Չինաստանը, ապա հաջորդում են՝ Բրազիլիան, Պակիստանը և Թուրքիան: Օրակարգային են եղել գործող հին ՀԷԿ-ի

խնդիրները, որոնք պահանջում են վերանորոգում և արդիականացում:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա որպես ՎԷԱ-ի տեսակ, հիդրոէներգետիկան ունի զգալի տեսակարար կշիռ (էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 30%-ը, 2018թ.) մեր էներգետիկ համակարգում: Գործում են նաև փոքր հզորության ավելի քան 200 ՓՀԷԿ-եր, որոնք ապահովվում են էլեկտրաէներգիայի արտադրության մոտ 16%-ը: Սակայն ՓՀԷԿ-երի սեզոնային բնույթը բարձրացնում է էլեկտրաէներգիայի ստացման ծախսերը և դա որոշակի բեռ է հանդիսանում ամբողջ էներգետիկ համակարգի սակագների վրա, թեև այն ավելի էժան է, քան բնական գազից ստացվող էլեկտրաէներգիան: Առկա են բնապահպանական և գյուղատնտեսական բնույթի վիճահարույց խնդիրներ: ՓՀԷԿ-երի լիցենզիաների հետագա տրամադրումը պետք է սահմանափակել: Կարևորվում է փոքր ՀԷԿ-երի փոխարեն միջին հզորության հիդրոէլեկտրակայանների նախագծերի ավարտին հասցնելը, խոսքը վերաբերում է Մեղրիի, Շնողի և Լոռիբերդի ՀԷԿ-երի կառուցմանը:

Երկրաջերմային էներգետիկան աշխարհում աճում է կայուն, սակայն դանդաղ տեմպերով: Երկրաջերմային էլեկտրակայանների հզորությունները 2018 թ.-ին աճել է 0,5 ԳՎտ-ով, իսկ ընդհանուր հզորությունները հասել են՝ 13,3 ԳՎտ: Պետական աջակցությունը կայուն չի այս ոլորտի նկատմամբ: Երկրաջերմային էլեկտրաէներգիայի հզորությունները երկու երկրում կրկնակի աճ են ունեցել՝ Թուրքիայում և Ինդոնեզիայում: Բանկերը և միջազգային կազմակերպությունները ուսումնասիրում են ավելի մեծ ծավալով ներդրումներ անել և ֆինանսավորել այս ոլորտը:

Իր հերթին, երկրաջերմային պոմպերի կիրառումը ունի մեծ ճկունություն էներգոհամակարգերում: Չինաստանը առաջատար դիրքերն է պահում երկրաջերմային պոմպերի կիրառման առումով, դրանք օգտագործվում են հատկապես ջեռուցման և հովացման համակարգերում: Ջերմային պոմպերի կիրառումը պետք է ընդլայնվի նաև արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում:

Հայաստանի պարագայում երկրաջերմային էներգետիկայի զարգացման հեռանկարները արդեն դիտարկել ենք հետևյալ հոդվածներում [**11**; **12**]: Եթե ավելի համառոտ ներկայացնենք, ապա Հայաստանի տարածքում առկա են երկրաջերմային էներգիայի հսկայական կանխատեսումային ռեսուրսներ, սակայն դրանք հետազոտված չեն և պետք է պետության աջակցությամբ մեծածավալ հետազոտություններ իրականացնել դրանց երկրաբանատնտեսական գնահատման համար: Այդ հենքի վրա կարող է զարգանալ երկրաջերմային էներգետիկան՝ ջերմային և էլեկտրաէներգիայի ստացման կայանների միջոցով: Իսկ երկրորդ ասպեկտը, դա երկրաջերմային պոմպերի կիրառումն է, որը լայն տարածում է ստանում նաև ամբողջ աշխարհում՝ ջեռուցման և հովացման նպատակներով: Երկրաջերմային պոմպերի համար երկրաջերմային էներգիայի պաշարների հայտնաբերման և գնահատման խնդիրները այդքան ակտուալ և ծախսատար չեն, դրանք կարող են կիրառվել ամենուրեք և այս տեխնոլոգիաները ապագայում կարող են լայնածավալ կիրառություն ունենալ նաև Հայաստանում:

Արևային ՖՎ-ի էներգետիկայի համար նախորդ երկու տարիները հերթական հաջողված տարիներն էին: Հետաքրքրությունը դրանց նկատմամբ թեև բուռն աճում է, սակայն աջակցության մեխանիզմները դեռևս պետք են: Աճուրդների ռեկորդային ցածր գները, խիստ մրցակցությունը և պանելների ցածր գները բերում են արտադրական հզորությունների աճի: Եթե Եվրոպայում արևային տեխնոլոգիաների նկատմամբ պահանջարկը աճել է, ապա Չինաստանում այն նվազել է, այդ երկրի ՖՎ-ի նկատմամբ քաղաքականության փոփոխման պատճառով: Չինաստանը սահմանափակել է ներքին պահանջարկը, որն էլ ամբողջ համաշխարհային շուկայի վրա շոկային ազդեցություն գործեց նախորդ տարի:

Հայաստանում ՎԷ-ի ոլորտում ամենահեռանկարային և ամենաարդյունավետ ուղղությունը կարող է լինել արևային ՖՎ կայանների կառուցումը: Սակայն Հայաստանի համար պետք են աջակցության լրացուցիչ մեխանիզմներ և նոր մոդելներ: Այստեղ ավելորդ զգուշավորությունը և վախերը այնքան էլ արդարացված չեն: Կարծում եմ, պետք է հրաժարվել նոր ատոմակայանի կառուցման մտքից և կառուցել միջին և խոշոր հզորության արևային ՖՎ էլեկտրակայաններ՝ քանի որ թե՛ դրանց ներդրումային ծախսերն են զգալիորեն նվազել, թե՛ գեներացման ծախսերն են ցածր, թե՛ դրանց պանելների արդյունավետություն և կայանների հզորություններն են զգալիորեն աճել: Արևային ՖՎ էլեկտրակայանի հզորությունների կառուցումը ներկայումս կարող է զգալիորեն ավելի էժան լինել, քան համապատասխան հզորությամբ նոր ատոմակայանի կառուցումը [**1**]:

Կենտրոնացված արևային ջերմային էներգակայանների նոր հզորությունները աշխարհում աճել են 11%-ով՝ հասնելով ընդհանուր 5,5 ԳՎտ: Հիմնականում հետաքրքրված են զարգացող երկրներում, մասնավորապես Արաբական Միացյալ Էմիրություններում՝ 0,7 ԳՎտ և Չինաստանում՝

0,5 ԳՎտ հզորություններ են արդեն ստեղծվել: Այս տեխնոլոգիաները կարողանում են նաև կուտակել էներգիան: Հայաստանը կարող է նաև այս դաշտում որոշակի ծրագրեր իրականացնել:

Հողմնային (քամու) էներգիա: Այն բնութագրվում է աշխարհում կայուն և զարգացող տեխնոլոգիաներով և սարքավորումներով, ծախսերի կտրուկ նվազումով, ճյուղում բարձր մրցակցությամբ և օֆֆշորային (ափամերձ-ծովային) հողմնաէներգետիկայի նկատմամբ աճող հետաքրքրությամբ:

Հայաստանում կարելի է ներդրողների հետաքրքրության դեպքում կենտրոնացված համակարգով միջին հզորություններով հողմնային պարկերի (20-80 ՄՎտ) նախագծեր իրականացնել, երկու կամ երեք վայրերում: Մեծ բարձրությամբ աշտարակներով, հզոր տուրբիններով, մեծաքանակ և լայնածավալ մասշտաբներով դրա կիրառությունը նպատակահարմար չէ՝ բնական և լոգիստիկ առանձնահատկություններից ելնելով: Սակայն կարելի է փոքր չափերով և փոքր հզորություններով (1-ից մինչև 300 ԿՎտ) հողմնային սարքավորումների (տուրբինների) կիրառումը գյուղական պայմաններում, ինչպես նաև քաղաքային պայմաններում որոշ ենթակառուցվածքների՝ օրինակ փողոցային լուսավորության, լուսացույցերի և այլ տարաբնույթ գործողությունների համար:

Էներգաարդյունավետություն: Գլոբալ էներգատարությունը նվազում է, իսկ էներգաարդյունավետությունը դառնում է առաջատար գործոն: Համաշխարհային էներգահամակարգում 2012-2017թ.-երին տարեկան միջինը 2,2%-ով էներգատարողությունը նվազել է: Մեծանում է պետությունների կողմից աջակցությունը էներգաարդյունավետ և էներգախնայող նախագծերի նկատմամբ: Քաղաքները առավել խոշոր դեր են խաղում այս բնույթի ծրագրերի իրականացման համար:

Հայաստանում նույնպես տեղական և մարզային իշխանությունները պետք է ակտիվ մասնակցություն ունենան իրենց համայնքների համար ՎԷ և էներգաարդյունավետ ծրագրեր իրականացնելու գործում: Հայաստանում պետք է այս համակարգերի կիրառումը պարտադիր լինի նոր կառուցվող բնակելի, արդյունաբերական և գյուղատնտեսական նշանակության կառույցների համար:

Էներգախնայող տեխնոլոգիաների, երկրաջերմային պոմպերի և էլեկտրամոբիլների լայնորեն կիրառումը նոր ճկունություն և լրացուցիչ լիցքեր կարող են հաղորդել Հայաստանի էլեկտրաէներգիայի, տրանսպորտի և ջեռուցման-հովացման համակարգերի բարելավման վրա:

Ամփոփում

Հայաստանում էլեկտրաէներգիայի արտադրության համակարգում ՎԷ-ի տեսակարար կշիռը (առանց հիդրոէներգետիկայի) չափազանց փոքր է, 2018թ.-ին այն կազմել է 0,1%: Տրանսպորտային համակարգում, ջեռուցման և հովացման համակարգերում ՎԷ և էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառության մակարդակը նույնպես ցածր է և այն պետք է պարտադիր կիրառություն ունենա թե՛ մասնավոր, թե՛ պետական սեկտորում:

ՎԷ-ն առանձին զարգացող ենթաճյուղ պետք է դառնա էներգահամակարգում, որին էլ պետք է ուղղված լինի պետական քաղաքականությունը: Ինովացիոն լուծումներ պահանջող էներգետիկայի այս ճյուղը, որպես տեսլական, ոչ հեռու ապագայում կարող էր նաև լոկոմոտիվը դառնալ ամբողջ էներգետիկ համակարգի համար: Անհրաժեշտ է ամբողջապես ամրացնել տնտեսական մեխանիզմները նորմատիվային-իրավական ակտերով: Պետությունը ներկա փուլում մեծ աջակցություն, իսկ ավելի ուշ փուլերում պետք է մրցակցություն ապահովի այդ ենթաճյուղում, այլ ոչ թե առավելություն տա որևէ մեկին, մյուս մրցակիցների հաշվին:

Մեր երկրի համար կենտրոնացված համակարգով, միջին և խոշոր չափերի արևային ՖՎ էլեկտրակայանների զարգացումը կարող է դառնալ ամենահեռանկարային ոլորտը: Բնական պայմանները բարենպաստ են, իսկ ինվեստորները մեծ հետաքրքրություն ունեն 20 ՄՎտ-ից մինչև մի քանի հարյուր ՄՎտ հզորության արևային էլեկտրակայաններ կառուցելու և շահագործելու համար: Միաժամանակ, ապակենտրոնացված արևային ՖՎ պանելների և արևային ջրատաքացուցիչների ընդլայնումը լրացուցիչ նպաստ կբերի էներգետիկ համակարգին:

Փոքր հիդրոէներգետիկայի հետագա ընդլայնումը այլևս նպատակահարմար չէ, սակայն անհրաժեշտ է ավարտին հասցնել միջին հզորության հիդրոէլեկտրակայանների կառուցումը Արաքս, Ձորագետ և Դեբեդ գետերի վրա:

Հրատապ է երկրաջերմային էներգիայի ռեսուրսների ուսումնասիրումը և գնահատումը ջերմային էներգիայի և էլեկտրաէներգիայի արտադրության համար: Թեև Հայաստանը

նաև ջերմային պոմպերից էներգիա ստանալու փորձ չունի, սակայն մոտ ապագայում այն կարող է լայն կիրառություն ունենալ:

Իսկ հողմնային էներգետիկայի համար նպատակահարմար է միջին հզորություններով երկու կամ երեք կենտրոնացված հողմնային պարկերի կառուցումը: Միաժամանակ ապակենտրոն համակարգով, հողմնային էներգիա արտադրող փոքր չափսերով և փոքր հզորության սարքավորումների օգտագործումը կարող է արդարացված լինել:

Կենցաղային թափոնների աղբավայրերի օգտահանման լայնածավալ նախագծեր պետք իրականացվեն պետական և միջազգային կառույցների աջակցությամբ: Ճիշտ կազմակերպված մենեջմենթի դեպքում հնարավոր է դրանք նաև շահութաբեր լինեն: Այդ նախագծերը կարելի է սկսել Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Կապանի և քանի խոշոր քաղաքների կենցաղային թափոնների օգտահանումով:

Կարևոր է նաև մեր երկրի տեխնիկական և տնտեսագիտական համալսարանների կրթական ծրագրերում այլընտրանքային և ՎԷ ռեսուրսների յուրացման ուսուցման ծրագրերի ներդրումը և այդ ոլորտում ճարտարագետների և մենեջերների մասնագիտությամբ կադրերի պատրաստումը: Պետք է խթանել մարզերի և քաղաքների մակարդակով էներգախնայող, այլընտրանքային և ՎԷ կամ «Կանաչ էներգիայի» տեխնոլոգիաների կիրառումը: «Խելացի քաղաք» հայեցակարգը կարելի է Հայաստանի որևէ քաղաքներից մեկի համար փորձնական մակարդակով կիրառել: Արտոնություններ պետք է տրամադրվեն նաև ՎԷ-ի և էներգաարդյունավետ արտադրությունների կազմակերպման համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ս.Մանուկյան,** Վերականգնվող էներգետիկայի միտումները աշխարհում և Հայաստանի դիրքորոշումը, ԱՅԼԸՆՏՐԱՆՔ եռամսյա գիտական հանդես, հունվար-մարտ, 2018, էջ 429-444
2. **Ս.Մանուկյան,** Համաշխարհային էներգետիկայի ժամանակակից միտումները և զարգացումները, // Научно-аналитический журнал Регион и мир, Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, N2, 2018, էջ 42-52
3. 2020 Renewable Energy Industry Outlook, Exploring renewable energy policy, innovation, and market trends, Deloitte
4. Меньше денег, больше эффекта: 10 мировых трендов в «зеленой» энергетике, Подробнее на РБК: https://www.rbc.ru/trends/green/5d6557709a7947664284b3c0
5. Renewables 2019, Global Status Report, REN 21, www.ren21.net
6. https://www.ren21.net/gsr-2019/pages/summary/summary/
7. Frankfurt School-UNEP Centre/ Bloomberg NEF. 2019. Global Trends in Renewable Energy Investment 2019, http://www.fs-unep-centre.org (Frankfurt am Main)
8. Renewable Power Generation Costs in 2018, International Renewable Energy Agency, Abu Dhabi, IRENA (2019)
9. Международные тенденции в области возобновляемых источников энергии: Солнечно-ветровая энергия: больше чем мейнстрим, Deloitte Insights
10. **Шклярук М. С.,** Возобновляемая энергетика: экономические инструменты поддержки и оценка их нормативно-правового закрепления. Автор: СПб, 2015.
11. **Ս. Մանուկյան, Ս. Բաղդասարյան, Վ. Վեզիրյան**, Երկրաջերմային ռեսուրսների յուրացման տնտեսական ասպեկտները Հայաստանում, Регион и мир, Научно-аналитический журнал, Обшественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона,, N1, 2019, էջ 49-58
12. **Ս. Մանուկյան, Ս. Գ. Բաղդասարյան,** Երկրաջերմային (գեոթերմալ) ռեսուրսների յուրացման գերմանական փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում, ԱՅԼԸՆՏՐԱՆՔ եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր N4, 2018, էջ 75-88

Сдана/Հանձնվել է՝ 13.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 19.02.2020
Принята/Ընդունվել է՝ 22.02.2020

Эффективность монетарной политики Японии в период с 2012 по 2017 года

Симонян А. С.
Российско – Армянский университет, Институт экономики и бизнеса, магистрант (Ереван, Армения)
aleksandrsimonya1996@gmail.com

Ключевые слова: монетарная политика, Япония, экономика

Ճապոնիայի մոնետար քաղաքականության արդյունավետությունը 2012-2017 թթ. ժամանակահատվածում

Սիմոնյան Ս. Ս.
Ռուս-Հայկական Համալսարան, մագիստրոս,
Բիզնեսի և տնտեսագիտության ինստիտուտ (Հայաստան, Երևան)
aleksandrsimonyan1996@gmail.com

Ամփոփում: Տվյալ գիտական աշխատանքում դիտարկվել են Ճապոնիայի ճգնաժամի պատճառները, տվյալ ճգնաժամի հիմնական հետևանքները, գնահատվել է ճգնաժամի ընթացքում և դրա ավարտից հետո իրականացվող մոնետար քաղաքականության արդյունավետությունը:
Վճռորոշ բառեր՝ մոնետար քաղաքականություն, Ճապոնիա, տնտեսություն

Effectiveness of Japan's Monetary Policy in The Period from 2012 to 2017

Simonyan A. S.
Russian – Armenian University
The institute of economics and business (Yerevan, Armenia)
aleksandrsimonyan1996gmail.com

Abstract: In this scientific work was considered the main reasons behind economic crisis in Japan, main consequences of that crisis, was evaluated the effectiveness of monetary policy that took place during and after the crisis.
Keywords: Monetary Policy, Japan, ecnonomy

Введение

Ситуация в Японии за последние 20 лет складывалась крайне неблагоприятна: рынок капитала и цены на недвижимость в начале 1990-х резко устремились вниз, обесценение активов, нанесли огромный ущерб банковской системе, мировой финансовый кризис 2008 года, землетрясение и цунами на северо-востоке страны крайне затруднили экономическое положение. В 2010 году дефицит бюджета к ВВП в Японии составил 200%, кроме всех выше перечисленных факторов, огромное влияние на данное отношение повлияли огромные пенсионные выплаты стареющему населению. Эффективность руководства была поставлена под вопрос. В декабре 2012 года Либерально-демократическая партия выиграла всеобщие выборы, сделав Синдзо Абэ премьер-министром. Премьер-министром начал проводить политику “трех стрел”: фискальной консолидации, более агрессивного монетарного стимулирования со стороны Банка Японии и структурных реформ для стимулирования экономики. Банк Японии, проводя политику количественного облегчения, обосновался на целевом показатели инфляции в 2%, начиная с 2012. [1] Для оценки эффективности деятельности правительства Японии необходимо проанализировать причины возникновения дефляции, влияние политики количественного облегчения на экономику Японии, существование и влияние эндогенных причин на ИПЦ. На основе анализа будет оценена деятельность правительства относительно стимулирования экономики.

Материал и Методы

Материалом для данной работы послужили различные статьи, электронные ресурсы и статистические данные. В процессе исследования проблемы использовались методы логического, сравнительного и статистического анализа.

[1] Bank of Japan: Common features of monetary Policy. Year 2012 URL https://www.boj.or.jp/en/announcements/press/koen_2014/data/ko140724a2.pdf Дата обращения: (08.12.2017)

Обсуждение

Для эффективной борьбы с дефляций необходимо прежде всего рассмотреть причины ее возникновения. Одной из таких причин в Японии является стареющее население.



Рисунок 1 Структура населения Японии в период 1980-2017 года.[2]

На рис. 1 ясно видно, что трудоспособное население резко сокращается, и пожилое население, верхняя часть, растет очень быстро. Старение населения и сокращение трудоспособного населения являются одной из основных причин долгосрочной рецессии Японии.

Кроме того, японская система ставок заработной платы основана на стаже. Системы оплаты труда на основе пенсионного возраста затрудняют для компаний найм пожилых людей. Пожилые люди вынуждены выходить на пенсию, хотя многие из них хотят и могут продолжать работу. Из-за старения населения расходы на социальное обеспечение начали увеличиваться, и в настоящее время треть государственных расходов выделяется на социальное обеспечение, в то время как дефицит государственного бюджета растет с каждым годом.

Еще одним препятствием в экономики Японии являются требования к капиталу Базеля. Положения Базеля I заставили банки удерживать 8% капитала, независимо от экономических условий. Японские банки начали сокращать свои кредиты, чтобы избежать нехватки капитала, что создало кредитный кризис в Японии. МСП и начинающим предприятиям, основам японской экономики, стало сложно брать деньги у банков.



Рисунок 2 Доступ к финансированию японских компаний в период 1997-2017 года.[3]

На рисунке 2 показаны результаты опроса, проведенного Банком Японии (BOJ). Столбцы показывают, насколько сложно или как легко собирать деньги с финансовых рынков. Синие столбцы показывают трудности, с которыми сталкиваются малые предприятия, а оранжевые трудности для крупных предприятий. Точки данных ниже нуля указывают на то, что компаниям трудно собрать деньги у банков или на рынках капитала. Таким образом малым предприятиям приходилось сталкиваться с большими трудностями в получении денег по сравнению с крупными фирмами. Однако, следует учесть, что положение намного улучшилось в настоящее время.

Большой ущерб японской экономике нанесла фискальная политика Премьер-министра Миядзавы, который надеялся что государственные расходы и низкие процентные позволят стимулировать экономический рост. Однако Государственные инвестиции привели к низкому стимулирующему воздействию на валовой национальный продукт, поскольку он был распределен неэффективно. Основная часть государственных инвестиций была сконцентрирована в сельских районах, но государственные инвестиции не оказали должного влияния. Это увеличивающееся сельское и сельскохозяйственное предвзятое отношение к распределению государственных инвестиций привело к тому, что множитель для государственных инвестиций резко снизился.

Долгосрочная дефляция в Японии часто объясняется как ловушка ликвидности. Значительное внимание было уделено денежно-кредитной политике, а не структурным

[2] Ministry of Internal Affairs and Communications: Basic Survey of employment structure in Japan. URL http://www.stat.go.jp/english/data/roudou/index.htm 08.12.2017)

[3] ETI.Ministry of Economy Japan: Small and Medium Enterprise Agency SMEA. Year 2015 URL http://www.chusho.meti.go.jp/pamflet/hakusyo/H26/download/2014hakusho_eng.pdf Дата обращения: (08.12.2017)

вопросам. Частные инвестиции не выросли, несмотря на очень низкие процентные ставки. Ожидаемые будущие показатели рентабельности были низкими, и поэтому в Японии не было достигнуто значительного прогресса в области новых технологий. Несмотря на то, что краткосрочная процентная ставка центрального банка была установлена на ноль, инвестиции в реальный сектор экономики не поступали по следующим причинам:

- избыток мощностей был создан в период пузыря, когда компании инвестировали значительные средства в различные сектора, но спрос неожиданно замедлился.
- японские предприниматели отдали предпочтение инвестициям в другие страны, из-за высокой оценки иена и высокой ставки заработной платы в Японии. В результате чего инновационные компании начали покидать страну, в то время как более слабые компании оставались в стране.
- Технический прогресс замедлился, так как банки неохотно выдавали кредит малым предприятиям из-за жестких требований Базельского соглашения.

Тем не менее, начиная с 2012 года ИПЦ в Японии начал заметно повышаться, нельзя не отметить эффект цен на нефть на данное явление. В марте 2011 года землетрясение силой 9 баллов, удаленное от побережья Сендай, Япония, вызвало большое цунами. Ущерб Японии привел к немедленному отключению около 10 гигаватт (ГВт) ядерных электрогенерирующих мощностей. Между катастрофой в Фукусиме в 2011 году и май 2012 года Япония потеряла все свои ядерные мощности в результате планового технического обслуживания и отсутствия правительственных разрешений для возвращения в эксплуатацию. Япония заменила эту значительную потерю ядерной энергии на производство из импортного природного газа, нефти с низким содержанием серы, мазута и угля. Это привело к росту цен на электроэнергию для правительства, коммунальных предприятий и потребителей и привело к инфляции. Увеличение стоимости импорта топлива привело к тому, что 10 крупнейших компаний Японии потеряли более 30 миллиардов долларов США за последние 2 года. Япония потратила 250 миллиардов долларов на общий импорт топлива в 2012 году, что составляет треть от общей стоимости импорта в стране. В 2012 году Япония потребляла более 4,7 млн. Баррелей в день (баррель / д) нефти.[4] Увеличение стоимости импортируемой энергии оказало значительное негативное влияние на японскую экономику.

Рост цен на нефть в первом квартале 1994 года до 1 квартала 2014 года имел различные причины. В первой части периода это было связано с более высоким спросом на сырую нефть, особенно из стран с развивающейся экономикой, таких как Китайская Народная Республика, Индия, Бразилия и Ближний Восток, что неуклонно привело к повышению мировых цен на нефть.[5] Совсем недавно, особенно после того, как BOJ осуществил смягчение денежно-кредитной политики, импортные цены выросли в иенах из-за обесценения валюты, что повлияло на инфляцию.

Однако влияние цен на нефть далеко не определяющий фактор в Японской экономики.

Результаты

Как уже было отмечено, с 2012 года Банк Японии проводил политику количественного смягчения. Многие экономисты критиковали данный метод стимулирования, утверждая, что ловушка ликвидности в которой оказалась Япония не позволит стимулировать экономику, а только усугубит ее. Часто, сложившуюся ситуацию в Японии, связывают с теории большого камня на склоне, который блокирует путь. Если кто-то попытается отодвинуть камень с пути он непременно должен постоянно его толкать, а иначе камень покатится назад и раздавит. Мораль утверждает, что лучше не пытаться сдвинуть камень с дороги. Возвращаясь к денежно-кредитной политике в Японии, согласно мнению оппозиционеров данной политики, стимулированию экономику произойдет через некоторое время, но в какой-то момент данная политика вызовет гиперинфляцию, всплеск процентных ставок и обвал иены. По этой причине, денежно-кредитное смягчение не должно продолжаться. На мой взгляд, такие опасения не являются обоснованными для японской экономики, так как параллельно с количественном смягчением в Японии произошли важные структурные изменения, которые позволят экономики восстановить свои позиции. К таким изменениям относится улучшения на рынке труда.

Из рисунка 3 видно, что в период количественного смягчения безработица в Японии заметно снизилась, несмотря на увеличение стареющего населения (рисунок 1). Значительно уменьшилось количество безработных в возрасте от 15 до 24

[4] EIA. *Japan's Energy Report*. U.S. Energy Information Administration. Year 2015. URL https://www.eia.gov/beta/international/analysis.cfm?iso=JPN Дата обращения: (08.12.2017)

[5] Naoyuki Yoshino: Response of macro variables of emerging and developed oil importers to oil price movements. Year 2015 URL http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/13547860.2015.1057955 Дата обращения: (08.12.2017)

лет, которые во основном работают на полставки. Данная тенденция крайне положительна влияет не только на уровень безработных в целом, но и на квалификационную подготовленность молодого населения. Перейдя на полную ставку, заработная плата молодого населения повысится, повышая при это налоговые поступления, что положительно отразится на экономике Японии.



Рисунок 3 Количество работников в Японии в период с 2012 по 2017 года.[6]

Как мы видим, увеличение объема выкупа государственных облигаций и сверхмягкая монетарная дала свой результат, однако возникает почему запланированный уровень инфляции в 2% не был достигнут. Объяснением является повышение налога на добавленную стоимость в 2014 году, который повлиял на инфляционные ожидания в стране.



Рисунок 4 Динамика изменения индекса потребительских цен в Японии и в мире в период с 2012 по 2017 года.[7]

Как видно из рисунка 4, ИПЦ в Японии рост до 2014 года, однако после увеличения НДС с 5% до 8% дефляция продолжилась. Необходимо обратить внимание, что план дальнейшего повышения налога на потребление до 10 процентов повысил склонность населения к сбережению, что также отразилось на ИПЦ. Так как население уже отреагировало на ожидаемый 10-процентный рост налога на потребление, следующее повышение налога не окажет сильного воздействия на потребление.

Еще одним фактором, который следует отметить, являются тенденции в мировой экономике. Стагнация мировой торговли с 2015 года охладила настроения потребителей за счет снижения экспорта и цен на акции, также задержала восстановление экономики Японии. Однако структурные изменения рынка труда, наблюдаемое в снижении уровня безработицы, показанные на рисунке у должно привести к росту заработной платы и, в конечном счете, учитывая все выше перечисленные факторы, к росту цен.

Таким образом, несмотря на то что индекс цен не дошел до желаемой отметки в 2%, предпринятые меры Банком Японии в период с 2012 по 2017 года, оказали положительный эффект на Японскую экономику. Политика количественного смягчения способствовала росту занятости, стимулировав экономический рост. При сохранении данной тенденции совокупное потребление населения Японии непременно увеличится, и желаемая отметка ИПЦ будет достигнута.

Список использованной литературы (Электронные Ресурсы):

1. https://www.boj.or.jp/en/announcements/press/koen_2014/data/ko140724a2.pdf
2. https://www.boj.or.jp/en/announcements/press/koen_2017/data/ko170925a2.pdf
3. https://www.eia.gov/beta/international/analysis.cfm?iso=JPN
4. http://www.tandfonline.com/doi/abs/10.1080/13547860.2015.1057955
5. https://www.eia.gov/beta/international/analysis.cfm?iso=JPN
6. http://www.stat.go.jp/english/data/roudou/index.htm
7. http://www.stat.go.jp/english/data/roudou/index.htm

Сдана/Հանձնվել է՝ 16.02.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 21.02.2020
Принята/Ընդունվել է՝ 24.02.2020

[6] Inernational analyse: Japan Year 2017. URL https://www.eia.gov/beta/international/analysis.cfm?iso=JPN Дата обращения: (08.12.2017)

[7] Bank of Japan: Japan's Economy and Monetary Policy. Year 2017 https://www.boj.or.jp/en/announcements/press/koen_2017/data/ko170925a2.pdf Дата обращения: (08.12.2017)

Վարքագծային ֆինանսների և ֆինանսների ավանդական տեսության համեմատական վերլուծությունը

Գրիգորյան Է. Մ.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
ֆինանսների ամբիոնի ասպիրանտ (Երևան, Հայաստան)
grigoryanerik@hotmail.com
Պետրոսյան Ս. Մ.
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
կառավարման ամբիոնի ասպիրանտ, (Երևան, Հայաստան)
samsonpetrosyan95@gmail.com

Վճռորոշ բառեր՝ վարքագծային ֆինանսներ, ֆինանսների ավանդական տեսություններ, արդյունավետ շուկայի վարկած, օգտակարության հայեցակարգ

Сравнительный анализ поведенческих финансов и традиционной теории финансов

Григорян Э. М.
Аспирант кафедры финансов,
Армянский госсударственный экономический университет (Ереван, Армения)
grigoryanerik@hotmail.com
Петросян С. М.
Аспирант кафедры менеджмента,
Армянский госсударственный экономический университет (Ереван, Армения)
samsonpetrosyan95@gmail.com

Резюме: В данной статье рассматривается развитие поведенческих финансов в контексте теории финансов. Она начинается с описания традиционного подхода к финансам и с представления упоминаний различных авторов о первых поведенческих аномалиях, и продолжается сравнением поведенческих финансов и традиционных финансовых теорий. Подчеркивается необходимость изучения поведенческих финансов как наиболее реалистичное и актуальное направление финансовой теории.
Ключевые слова: поведенческие финансы, традиционные теории финансов, гипотеза эффективного рынка, концепция полезности

Comparative analysis of behavioral finance and tradition finance

Grigoryan E. M.
PhD student at finance department,
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
grigoryanerik@hotmail.com
Petrosyan S. M.
PhD student at management department,
Armenian State University of Economics (Yerevan, Armenia)
samsonpetrosyan95@gmail.com

Abstract: This article discusses the development of behavioral finance within the framework of finance theory. It begins with the description of traditional finance, with the demonstration of first records of behavioral anomalies by different authors, which is followed by the comparison of behavioral finance and traditional finance. In this article, the necessity of the investigation of behavioral finance as more realistic and up-to-date branch of finance is stressed.
Keywords: behavioral finance, traditional theory of finance, efficient market hypothesis, utility concept

Այս հոդվածում քննարկվում է վարքագծային ֆինանսների զարգացման ընթացքը ֆինանսների տեսության շրջանակում: Այն սկսվում է ֆինանսների մասին ավանդական տեսության մոտեցման նկարագրությամբ, տարբեր հեղինակների կողմից առաջին վարքագծային անկանոնությունների (անոմալիաների) հիշատակումների ներկայացմամբ, որը շարունակվում է վարքագծային ֆինանսների և ֆինանսների ավանդական տեսությունների

համեմատությամբ: Առաջ է քաշվում վարքագծային ֆինանսների ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ որպես ֆինանսների տեսության առավել իրական և արդիական ուղղություն:

Վարքագծային ֆինանսները ֆինանսների տեսության մեջ համեմատաբար նոր զարգացող ուղղություններից է, որն ուսումնասիրում է անձանց, հատկապես ներդրողների հոգեբանությունն ու դրա դերը ֆինանսական և ներդրումային որոշումներ կայացնելիս: Քանզի նման որոշումները կայացվում են հուզականության որոշակի մակարդակում, ապա դրանց ռացիոնալությունը կասկածի տակ է դրվում: Եթե ֆինանսական տեսության մեջ կարևոր տեղ են գրավել փաթեթի կառավարման տեսությունն ու արդյունավետ շուկայի վարկածը, ապա հատկապես վերջին երկու տասնամյակներում սրընթաց զարգացող վարքագծային ֆինանսների տեսությունը ուշադրության է արժանանում ֆինանսների, հոգեբանության և հասարակագիտության միջև փոխկապակցվածության խնդիրների ուսումնասիրության և հետաքրքիր բացահայտումների շնորհիվ: Այնուամենայնիվ, 1800-ականների վերջին և 1900-ականների սկզբին վարքագծային ֆինանսների վերաբերյալ հրատարակված մի շարք գրքեր վկայում են վարքագծային ֆինանսների դպրոցի հիմնադրումը [**7**, էջ 4-9]: Հատկապես հիշարժան իրադարձություններին է անդրադարձել Չարլզ Մակքեյը իր «Բացառիկ ժողովրդական մոլորություններ և ամբոխների մոլեգնությունը» աշխատությունում, որտեղ հիշատակում է 1630-ականներին ստեղծված «Կակաչի», 1710-1720-ական թվականների «Հարավծովյան» և «Միսիսիփի» ընկերությունների պղպջակների մասին՝ դրանք մատնանշելով որպես արդյունավետ շուկայի անկանոնության դրսևորումներ [**6**, էջ 4-74]: Արդյունավետ շուկայի մասին վարկածը ակադեմիական շրջանում գերակայության գագաթնակետին հասավ 1970-ական թվականներին, երբ գերակշռում էր այն գաղափարը, թե սպեկուլյատիվ ակտիվների գները, ինչպիսիք են արժեթղթերի գները, իրենց մեջ ներառում են ներքին արժեքի (intrinsic value) մասին լավագույն տեղեկատվությունը և փոփոխվում՝ միայն տեղեկատվության շնորհիվ [**8**, էջ 83-104]: Եթե ներդրողները նախկինում հիմնվում էին ավանդական ֆինանսների տեսությունների վրա, այն է՝ առկա վիճակագրական տվյալների հիման վրա փորձում էին հաշվարկել կոռելյացիան, ստանդարտ շեղումն ու ակնկալվող եկամուտը, ապա վերջին երկու տասնամյակի ընթացքում գործնականում նրանք սկսել են մեծ ուշադրություն դարձնել նաև այլ գործոններին, ինչի արդյունքում նրանց ներդրումային որոշումների կայացման գործընթացը փոփոխվել է: Սակայն դեռևս 1998 թվականին արդյունավետ շուկայի վարկածի ջատագովներից Եվգեն Ֆաման նշում է, որ օրինակ՝ արժեթղթերի շուկայում բաժնետոմսերի գները կարող են դառնալ որոշակիորեն իռացիոնալ կամ հանգեցնել տարբեր արդյունքների [**4**, էջ 283-306]: Դա շատ վարքագծային տեսության կողմնակիցների գոհացրեց այնպես, ինչպես 2005 թ.-ի նոյեմբերի 19-ին «Մադրիդի Ռեալի» երկրպագուների՝ Ռոնալդինյոյին ուղղված ծափահարությունները «Բարսելոնայի» երկրպագուներին: Քանի որ վարքագծային ֆինանսներն ուսումնասիրում է հենց ներդրողների կայացրած ֆինանսական որոշումները հասարակագիտության (սոցիոլոգիայի) և հոգեբանության տեսանկյունից, հաճախ հարց է առաջանում, թե արդյոք վարքագծային ֆինանսները առավելապես ֆինանսների՞, սոցիոլոգիայի՞, թե՞ հոգեբանության ուսումնասիրության ոլորտն են: Զարգանալով որպես դասական ֆինանսական տեսություններին «հակակշռող» ուղղություն՝ վարքագծային ֆինանսներն իր մեջ պարունակում է թե՛ սոցիոլոգիային, թե՛ հոգեբանությանը, թե՛ ֆինանսներին վերագրվող տարրեր: Որպեսզի վարքագծային ֆինանսներն ընկալվի լիարժեքորեն, անհրաժեշտ են հիմնային գիտելիքներ վերը նշված գիտությունների վերաբերյալ, քանի որ հաճախ վարքագծային ֆինանսները, ըստ էության, ընկալվում է որպես ֆինանսների դասական տեսության հակադիր ուղղություն, որը ոչ միայն բացառում է ռացիոնալ մարդու գոյությունը, այլև ժխտում է արդյունավետ շուկայի առկայությունը: Վերջինիս մասին նշում է նաև Եվգեն Ֆաման [**4**, էջ 1467-1485]: Փոխարենը՝ վարքագծային ֆինանսները, վկայելով հոգեբանությունում և սոցիոլոգիայում նոր ձեռքբերումները, մատնանշում է

այն գաղափարը, որ մարդիկ վարվում են ոչ այնպես, ինչպես դասական ֆինանսներում «Հոմո Էկոնոմիկուսը»: Դրա հիմքում ընկած է այն փաստը, որ մարդիկ սխալական են, հետևաբար մարդկանց ռացիոնալության, ինքնակառավարման ու սեփական շահերով առաջնորդվելու ենթադրությունները վավեր չեն: Սակայն դրանից չի կարելի եզրակացնել, որ վարքագծային ֆինանսները, ծագելով ֆինանսների մասին գիտությունից, շարժվում է դրան հակառակ: Այն ֆինանսների համեմատաբար նոր ուղղություն է, որն առավել բաց է՝ նոր զարգացումներն ու մոտեցումներն ընկալելու [**9**]: Ընդհանուր առմամբ, վարքագծային ֆինանսները հիմնված է այն նույն սկզբունքների վրա, ինչ ստանդարտ ֆինանսները, ինչը ևս պնդում է, որ առաջինը վերջինի հակադարձ մոտեցումը չէ: Բացի այդ, վարքագծային ֆինանսների տեսությունը չի պնդում, որ մարդիկ ոչ ռացիոնալ են, այլ ընդգծում է մարդկանց սխալվելու մեծ հավանականությունը: Ավելին, այն մատնանշում է ներդրողների որոշումների կայացման ճանաչական սահմանափակումների և ոչ կատարյալ գիտելիքների առկայությունը:

Աղյուսակ 1. ֆինանսների ավանդական տեսությունները [2]

Հեղինակ	Տարի	Բովանդակություն
Ջոն Սթյուարթ Միլ	1844	Homo Economicus-ի Հայեցակարգ
Դանիել Բեռնուլի	1738, 1954	Ակնկալվող օգտակարության տեսություն
Ֆոն Նյուման և Մորգենսթերն	1944	
Հարի Մարկովից	1952	Մարկովիցի փաթեթի տեսություն
Թրեյնոր, Շարփ, Լինթներ	1962, 1964, 1965	Ակտիվների գնահատման մոդել (CAMP)
Իեն Մոսսին	1966	
Եվգեն Ֆամա	1970	Արդյունավետ շուկայի վարկած

Այս տեսանկյունից ֆինանսական վարքագիծն ուսումնասիրող այս համեմատաբար նոր տեսությունը առանձնանում է նաև նրանով, որ առավել մոտ է իրականությանը, քան ֆինանսների կամ տնտեսագիտության ավանդական տեսությունները:

Աղյուսակ 1–ում արտացոլված են ֆինանսների հիմնական ավանդական տեսությունները, որոնք բավականին արդիական են եղել մինչև նախորդ դարի 70-80-ական թվականները և դարձել են վարքագծային ֆինանսների առաջացման հիմնաքարերից: Չնայած վերջինս ծագել է հենց ֆինանսների ավանդական տեսություններից՝ հարկ է նշել, որ վարքագծային ֆինանսների որոշ առանցքային հայեցակարգեր ձևավորվել են որպես ավանդական ֆինանսներում արդեն իսկ առկա հայեցակարգերին այլընտրանքներ: Այդպիսի հայեցակարգերից է վարքագծային ֆինանսներում կարևորագույն նշանակություն ունեցող «հեռանկարի տեսությունը» (prospect theory), որն առաջ են քաշել հոգեբաններ Քանեմանը և Տվերսկին՝ ռիսկային որոշումների կայացման վերլուծության համար [**5**, էջ 263-292]: Այդ հայեցակարգը հայտնի է որպես այլընտրանք օգտակարության հայեցակարգին. վերջինս չափում է ապրանքների և ծառայությունների սպառումից մարդկանց բավարարվածությունը [**1**, էջ 23-26]: Եթե ավանդական տեսությունն ընդգծում է մարդկանց ռիսկախույս լինելն ու բավարարվածության մաքսիմալացմանը ձգտումը, ապա վարքագծային ֆինանսները պնդում է, որ մարդիկ ձգտում են հասնել բավարարվածության մակարդակի՝ միաժամանակ կարևորելով շահ/կորուստ գաղափարը ռիսկ/եկամուտ հարաբերակցության նկատմամբ: Այսինքն, մարդիկ/ներդրողները առավել զգայուն են կորուստների նկատմամբ:

Իհարկե, ինչպես նշվեց, հաճախ է հանդիպում նաև արդյունավետ շուկայի վարկածի և վարքագծային ֆինանսների տեսության հակադիր բևեռներում ներկայացումը, ինչի ճշմարտացիությունը միանշանակ չէ: Երկու տեսություններն էլ փորձում են նպաստել առավել շահավետ ներդրումային որոշումների կայացմանը, բացատրել ֆինանսական որոշումների դրդապատճառները, տրամաբանությունը, եթե առկա է: Այս ամենը, անշուշտ, հրատապ է տնտեսության զարգացումը խթանելու տեսանկյունից, քանի որ ֆինանսական և ներդրումային որոշումներ կայացնելիս առավել քիչ սխալվող տնտեսավարող սուբյեկտներ ունեցող երկիրը զարգացման ավելի մեծ ներուժ ունի, քան ցածր ֆինանսական գրագի-

տության մակարդակ և համեմատաբար ոչ ռացիոնալ ֆինանսական վարքագիծ ունեցող երկրները: Այս առումով մեր երկիրը դանդաղում է, քանի որ չկան ներդրումային որոշումների կայացման ուսումնասիրման վերաբերյալ հետազոտություններ, անգամ քիչ են տեսության վերլուծության մակարդակում (հատկապես ֆինանսների տեսանկյունից): Մինչդեռ արևմտյան երկրներում դրանք իրականացվում են դեռևս նախորդ դարի վերջերից և նոր թափ ստացել վերջին տարիներին, որի մասին վկայում է 2017 թ.-ին վարքագծային ֆինանսների տեսության հայր Ռիչարդ Թեյլերին Նոբելյան մրցանակի շնորհումը՝ վարքագծային տնտեսագիտությունը նշանակալիորեն զարգացնելու համար [10]: Վարքագծային ֆինանսներին անդրադարձել են նաև ռուս հեղինակներ և հետազոտողներ: Օրինակ՝ Կոսորուկովան բիզնեսի արժեքը գնահատելիս հաշվի է առել նաև ֆինանսական վարքագծի որոշակի ասպեկտներ [11, էջ 52-58], Մորդաշկինան անդրադարձ է կատարել հոգեբանության տեսանկյունից [13, էջ 49-54], իսկ Գորեցկայան՝ հեռանկարի տեսության կիրառման վերաբերյալ [12, էջ 104-110]: Սրանք ևս փաստեր են, որոնք վկայում են մեր երկրում ֆինանսական վարքագծի ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ տեսական և գործնական մակարդակներում:

Եզրակացություններ

Վարքագծային ֆինանսների ծագման ուսումնասիրության և ավանդական ֆինանսների տեսության հետ համեմատական վերլուծության արդյունքում կարելի է կատարել հետևյալ եզրակացություններին.

1. Ի հակադրություն տարածված թյուր կարծիքի՝ վարքագծային ֆինանսները զարգացել է ֆինանսների ավանդական տեսությունների հիման վրա՝ միաժամանակ լինելով առավել իրատեսական և արդիական՝ որպես ֆինանսների տեսություն:

2. Վարքագծային ֆինանսները շեղվում է ավանդական տեսություն առաջ քաշված ռացիոնալ մարդու գաղափարից և ընդունում, որ ներդրողները ունակ չեն տիրապետել ողջ շուկայական տեղեկատվությանն ու ենթակա են հուզական ազդեցության,

3. ՀՀ-ում դեռևս հետազոտություններ գրեթե չեն իրականացվել այս ոլորտում, իսկ արտասահմանում ֆինանսական վարքագծի վերաբերյալ հետազոտություններն արձանագրում են ՀՀ-ում դրանց իրականացման անհրաժեշտությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Bernoulli D.**, "Exposition of a new theory on the measurement of risk," *Econometrica,* vol. 22, no. 1, 1954.
2. **Copur Z.**, Handbook of Behavioral Finance and Investment Strategies: Decision Making in the Financial Industry, Z. Copur, Ed., USA: IGI Global, 2015, p. 3.
3. **Fama E.**, "Market Efficiency, LongTerm Returns, and Behavioral Finance," *Journal of Financial Economics,* 1998.
4. **Fama E. F.**, "Two pillars of asset pricing," *American Economic Review,* vol. 47, no. 2, 2014.
5. **Kahneman D. and A. Tversky**, "Prospect Theory: An analysis of decision under risk," *Econometrica,* vol. 47, no. 2, 1979.
6. **Mackay C.**, "Extraordinary Popular Delusions And The Madness Of Crowds," in *Extraordinary Popular Delusions And The Madness Of Crowds*, New York, Dover Publication Inc., 2003
7. **Ricciardi V. and H. K. Simon**, "What is Behavioral Finance?," *Business, Education and Technology Journal,* 2000.
8. **Shiller R. J.**, "From Efficient Markets Theory to Behavioral Finance," *Journal of Economic Perspectives,* vol. 17, no. 1, 2003.
9. **Thaler R.**, Advances in Behavioral Finance, New York: Russel Sage foundation, 1993.
10. "The Nobel Prize," Nobel Media AB, [Online]. Available: https://www.nobelprize.org/prizes/economic-sciences/.
11. **Косорукова И.**, «Некоторые аспекты применения поведенческих финансов в оценке бизнеса,» *Имущественные отношения в Российской Федерации,* т. 143, № 8, 2013.
12. **Горецкая В. А.**, «Поведенческие финансы: использование теории перспектив в процессе принятия инвестиционных решений,» *Российское предпринимательство,* т. 235, № 13, 2013.
13. **Мордашкина Ю.**, «Психологические аспекты формирования механизма принятия инвестиционных решений,» *Российское предпринимательство,* т. 231, № 9, 2013.

Сдана/Հանձնվել է՝ 10.03.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 13.03.2020
Принята/Ընդունվել է՝ 15.03.2020

Содержание

ПОЛИТИКА

Бардакчян О. Х.
Конгломераты и чеболи в КНДР и Республике Корея: сравнение через призму влияния на политические процессы……..... 5

Норикян Н. Г.
Организация обороны в системе правления Республики Армения……. 10

Ружанский В. Г.
“Устойчивость и национальная безопасность". История формирования израильской стратегической культуры……. 16

Овсепян А. А.
Индийско-армянские политические, экономические и культурные отношения…… 26

Григорян Н. Г.
Обоснование эффективности системы парламентского правления в контексте консоциональной демократии……. 31

Варданян Л. Г., Погосян В. В.
Некоторые наблюдения по поводу экспликации содержания понятия «политическая манипуляция» ……. 36

Ованнисян А. Ю.
Страны Центральной Азии на современном этапе: основные факторы распространения экстремизма в молодёжной среде …… 44

Саакян Г. С.
Позиция ИРИ по правовому статусу Каспийского моря и его будущая политическая перспектива…….. 48

ПРАВО

Налчаджян Р.Г.
Некоторые вопросы финансового контроля за принятием и исполнением государственного бюджета со стороны Национального Собрания в контексте конституционных изменений 2015 года …… 57

Казарян А. А.
Обвинение, осуществляемое частным лицом, в континентальной уголовно-процессуальной системе (Германия, Франция)……. 64

Петросян В.А.
Практика Европейского суда по правам человека по делам искусственного прерывания беременности…… 71

ИСТОРИЯ

Погосян /Хахбакян/ Г. Г.
Памятники армянской архитектуры и топонимики в странах Юго-Западной Азии. *ОАЭ, Кувейт, Ирак, Иордания* …….. 76

Саргсян С.Т.
Газета “Зартонк” ……. 113

Погосян Л. А.
Католикос Вазген I и армянская диаспора ……..... 123

КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Мурадян А. М.
«Творческие союзы»: формирование, деятельность и трансформация в советской и постсоветской Армении ……..... 126

ЭКОНОМИКА

Асланян Г. С.
Анализ численности пенсионеров и среднего размера пенсий в Республике Армения …….. 135

Казарян Р.А., Левонян С.Р.
Доходы и расходы населения Республики Армения …… 142

Каримян Д. В.
Анализ опыта пенсионной реформы и структуры портфелей накопительных пенсионных фондов в Чили …… 150

Халатян А. С.
Малые гидроэлектростанции в РА …… 155

Манукян С.Ф.
Триумф возобновляемой энергетики в мире и перспективы в Армении …… 161

Симонян А.С.
Эффективность монетарной политики Японии в период с 2012 по 2017 года…… 171

Григорян Э. М., Петросян С. М.
Сравнительный анализ поведенческих финансов и традиционной теории финансов……..... 175

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բարդակչյան Հ. Խ.
Կոնգլոմերատները և չեբոլները ԿԺԴՀ-ում և Կորեայի Հանրապետությունում:
համեմատություն քաղաքական գործընթացների վրա ազդեցության հիման վրա ……. 5
Նորիկյան Ն.Գ.
Պաշտպանության կազմակերպումը ՀՀ կառավարման համակարգում …….. 10
Ռուժանսկի Վ. Գ.
«Կայունություն և ազգային անվտանգություն»: Իսրայելական ռազմավարական
մշակույթի ձևավորման պատմությունը …….. 16
Հովսեփյան Ա. Ա.
Հնդկաստան-Հայաստան քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները ……. 26
Գրիգորյան Ն.Հ.
Խորհրդարանական կառավարման համակարգի
արդյունավետության հիմնավորումը կոնսոցիատիվ ժողովրդավարության համատեքստում ……. 31
Վարդանյան Լ.Գ., Պողոսյան Վ.Ռ.
Դիտարկումներ «քաղաքական մանիպուլյացիա» հասկացության
բովանդակության էքսպլիկացիայի վերաբերյալ ……. 36
Հովհաննիսյան Ա. Յու.
Կենտրոնական Ասիայի երկրները ներկայիս փուլում. երիտասարդական
միջավայրում ծայրահեղականության տարածման հիմնական գործոնները …….. 44
Սահակյան Հ.Ս.
Իրանի Իսլամական Հանրապետության դիրքորոշումը Կասպից ծովի
կարգավիճակի վերաբերյալ և դրա հետագա քաղաքական հեռանկարը …… 48

ԻՐԱՎՈՒՆՔ

Նալչաջյան Ռ. Գ.
Ազգային Ժողովի կողմից պետական բյուջեի ընդունման և կատարման նկատմամբ իրականացվող
ֆինանսական վերահսկողության որոշ խնդիրներ
2015 թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում …… 57
Ղազարյան Ա.Ա.
Մասնավոր անձի կողմից իրականցվող մեղադրանքը մայրցամաքային
քրեադատավարական համակարգի երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա) ……. 64
Պետրոսյան Վ.Ա.
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկան հղիության
արհեստական ընդհատման գործերով ……. 71

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պողոսյան (Խաղբակյան) Գ.Հ.
Հայկական ճարտարապետական եւ տեղանվանական հուշարձանները Հարավարևմտյան Ասիայի երկրներում.
Արաբական Միացյալ Էմիրություններ, Քուվեյթ, Իրաք, Հորդանան …… 76
Սարգսյան Ս. Թ.
«Զարթօնք» օրաթերթը …….. 113
Պողոսյան Լ.Ա.
Վազգեն Ա Վեհափառը և հայկական սփյուռքը ……. 123

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

Մուրադյան Հ. Մ.
«Ստեղծագործական միությունների» ձևավորումը, գործունեությունը և փոխակերպումները
Հայաստանի խորհրդային և անկախության շրջանում …….. 126

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ասլանյան Գ. Ս.
ՀՀ կենսաթոշակառուների թվաքանակի և կենսաթոշակների միջին չափի վերլուծություն …….. 135
Ղազարյան Ռ. Ա., Լևոնյան Ս. Ռ.
ՀՀ բնակչության եկամուտները և ծախսերը …….. 142
Քարիմյան Դ. Վ.
Չիլիի Կենսաթոշակային բարեփոխումների և կուտակային կենսաթոշակային
ֆոնդերի պորտֆելների կառուցվածքի վերլուծությունը …….. 150
Խալաթյան Ա. Ս.
Փոքր հիդրոէլեկտրակայանները ՀՀ-ում …….. 155
Մանուկյան Ս.Ֆ.
Վերականգնվող էներգետիկայի հաղթարշավը աշխարհում
և հեռանկարային ուղղությունները Հայաստանում…… 161
Սիմոնյան Ա.Ս.
Ճապոնիայի մոնետար քաղաքականության արդյունավետությունը 2012-2017 թթ. Ժամանակահատվածում.. 171
Գրիգորյան Է. Մ., Պետրոսյան Ս. Մ.
Վարքագծային ֆինանսների և ֆինանսների ավանդական տեսության համեմատական վերլուծությունը …… 175

Content

POLICY

Bardakchyan H.Kh.
Conglomerates and chaebols in the DPRK and the Republic of Korea: a comparison through the prism of influence on political processes……. 5
Norikyan N.G.
Organization of defense in the system of government of the Republic of Armenia……. 10
Ruzhansky V. G.
"Sustainability and National Security." The History of the Israeli strategic culture……. 16
Hovsepyan A. A.
India-Armenia political, economic and cultural relations …… 26
Grigoryan N.H.
Reasonong the Efficiency of the Parliamentary Government System in the Context of Consociational Democracy…… 31
Vardanyan L. G., Poghosyan V. V.
Observations on Explication of Content of "Political Manipulation" Notion……... 36
Hovhannisyan A. Yu.
The Central Asian countries at the modern stage: main factors of the extremism distribution in the youth environment …….. 44
Sahakyan H.S.
IRI Position on the Legalstatus of the Caspian Sea and its Future Political Prospects …… 48

LAW

Nalchajyan R.G.
Some Issues On Pariamentary Financial Control Over Adoption And Implemnetation Of State Budget In The Context Of The 2015 Constitutional Amendments …….. 57
Ghazaryan A. A.
Prosecution Carried Out by a Private Person in the Continental Criminal Procedure System (Germany, France)…….. 64
Petrosyan V.A.
Practice of the European court of human rights in cases of artificial termination of pregnancy……. 71

HISTORY

Poghosyan (Khaghbakyan) G.H.
The Monuments of Armenian Architectures and Toponymy in Countries of Southwestern Asia. *United Arab Emirates, Kuwait, Iraq, Jordan* ……. 76
Sargsyan S.T.
Newspaper "Zartonk" ……. 113
Poghosyan L. A.
The Activity of Vazgen A Catholicos in the Armenian Communities …… 123

CULTURE AND RELIGION

Muradyan H.M.
"Creative Unions": formation, activity and transformation in Soviet and post-Soviet Armenia ……. 126

ECONOMY

Aslanyan G. S.
Analysis of the number of pensioners and the average size of pensions in Republic of Armenia…….. 135
Ghazaryan R.A., Levonyan S.R.
Incomes and expenses of the population of the Republic of Armenia……..... 142
Karimyan D. V.
Analysis of the experience of pension reform and the structure of portfolios of accumulative pension funds in Chile ……. 150
Khalatyan A. S.
Small hydropower plants in RA ……. 155
Manukyan S.F.
The Triumph of renewable energy in the world and perspectives in Armenia …….. 161
Simonyan A.S.
Effectiveness of Japan's Monetary Policy in The Period from 2012 to 2017……. 171
Grigoryan E. M., Petrosyan S. M.
Comparative analysis of behavioral finance and tradition finance …… 175

Научно-аналитический журнал

РЕГИОН И МИР

2020, том XI, № 2

(Регистрационный номер 211.200.00757)

Учредитель: «Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона» ОО
Регистрационное удостоверение 03 Ա 090670
от 16.02.2011 г.
Адрес редакции: Ереван, 3-ий пр. Тиграна Меца, д. 9
Website**:** geopolitika.am; E-mail: blacksea-caspian@mail.ru
Тел: (+37410) 23-71-95, 093944440, 093868797

Ответственный за номер: *Г. Погосян /Хахбакян/*
Редактор: *Л. Андриасян*
Компьютерная верстка и оформление: *А. Меликсетян*

Подписано к печати 06.04.2020
Бумага офсетная, формат А4
Усл.п.листов 11,375
Шрифты: Times New Roman, Sylfaen, Estrangelo Edessa
Тираж 200 экз.
Издательство: Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона
Отпечатано в типографии “Time to print”